

ԷԶՄԻԱԾԻՆ




ԺԲ
2001



ՅՄԿ 196

1019 17




ԾԷ ՏԱՐԻ

ՀԱՄԱԾՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
 ԱՄՍԱԳԻՐ
 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
 ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
 ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ
 ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

Դ Ե Կ Դ Ե Դ Բ Ե Դ n/2
 2001



ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ՄԱՐԿԱՆԻՍԻ

ԳՐԱԴԱՐԱՆ

ՅՈՒՆԻՍԿՈՒՆԻ

ՄԱՐԿԱՆԻՍԻ

ՅՈՒՆԻՍԿՈՒՆԻ

ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՐԿԱՆԻՍԻ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԹՈՒՐ ՄՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի հայրապետական անդրանիկ այցելությունը Ֆրանսիա	3
--	---

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	38
Հայրապետական գնահատություն	40

ԿՐՈՆԱԿԱՆ

Տ. Հովհաննես արքեպ Մայիլյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում	41
Տ. Հովակիմ արքեպ Մանուկյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ս. Հռիփսիմն եկեղեցում	45
Տ. Միքայել քահանա Շաղոյանի անդրանիկ քարոզը՝ խոսված Ս. Գայանե եկեղեցում	48

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՆՆԱԶԱՐՅԱՆ - Վանական վարդապետ Տավուշեցի	51
---	-----------

Նվիրվում է Մայր Աթոռի տպարանի
հիմնադրման 230-ամյակին

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ - Նորահայր նյութեր Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսավորչի անվան տպարանի վերաբերյալ (18-րդ դարի 80-90-ական թթ.)	63
---	-----------

ՌԻՄԱ ԱՐՏԱՎԱԶԳԻ ՄԻՐՈՒՄՅԱՆ - Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հարաբերակցության ըմբռնումը Հովհաննես Տերոյենցի պարմալիկիառքայության մեջ	75
--	-----------

ՌԱՖԱՅԵԼ ՀԱՄԱՅՐՉՈՒՄԵԱՆ - Գարեգին Նժդեհի գործունեության պարունակները եւ զաղափարախօսության մեկնակէտը	85
ՀՈՎՍԵՓՅԱՆ Մ. Մ. - Սփյուռքի համար փոքր հաղորդումները Հայաստանի Հանրապետության (հանրային) ռադիոյում	96
ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ	

ԱՆՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ - Արցախի հոգևոր թեմի պատմությունը վավերագրերում	102
--	-----

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԳՈՒՄՐՈՒՅԱՆ - Սարկավագական ձեռնադրություն Ս. Սյրեփաննոս Նախավկայի փոխին	109
ԱՐԹՈՐ ՍՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ - Օծվեց Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին	120
ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ղզիլիսա գյուղում օծվեց Ս. Աստվածածին եկեղեցին	125
Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի քահանայական ձեռնադրության 45-ամյակը նշվեց ԱՄՆ Արևմտյան թեմում ...	127

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպեց կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների հետ	128
Ֆրանսիայի դեսպանը հրաժեշտ արվեց Ամենայն Հայոց Հայրապետին	129

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԶԵՅԹՈՒՆՅԱՆ - «Էջմիածին» ամսագրի մատենագիտություն (1984-2000 թթ.)	130
---	-----

Հօրեղյան

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ - Լավ գործի ու բարի անվան լույսը ...	141
Հայ եկեղեցաշինության ավանդների շարունակողը	143
Եկեղեցական բեմ. լուրեր	145

Ցանկ «Էջմիածին» ամսագրում 2001 թվականի ընթացքում սրբազորված նյութերի	147
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата ..	166
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	169
“Etchmiadzine” organe officiel du Saint-siège d’Etchmiadzine	171

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐՂԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"

Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԹՐԱՆՍԻԱ

6 դեկտեմբերի 2001 թ.

Սույն թվականի դեկտեմբերի 6-ին հայրապետական անդրանիկ այցելությամբ, Հայաստանի Հանրապետության Նախագահի հատուկ ինքնաթիռով, Երևանի «Զվարթնոց» օդանավակայանից Ֆրանսիա մեկնեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Օդանավակայանում Նորին Սրբությանը ճանապարհելու էին եկել Մայր Աթոռի միաբաններ, պետական պաշտոնավար անձինք, ինչպես նաև Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության դեսպան պրն Միշել Լեգրան։ Վեհափառ Հայրապետին այս այցելության ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններից ընկերակցում էին՝ Աստվածաբանական Ֆակուլտետի դեկան Տ. Շահին արքեպս. Աճառյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճույանը և գավազանակիր Վազգեն արք. Նանյանը, ՀՀ նախագահին առընթեր կրոնի գործոց նախարար Ռազմիկ Մարկոսյանը, ինչպես նաև «Շողակաթ» հեռուստատուղիայի օպերատոր Սուրեն Տեր-Գրիգորյանը։

Առավոտյան ժամը 10.20-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Փարիզ, Շառլ դը Գոլ միջազգային օդանավակայան, ուր Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Տ. Գյուր արքեպիսկոպոս Նազգաշյանը, Լիոնի շրջանի Հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը, Ֆրանսիայում ՀՀ դեսպան Էդուարդ Նալբանդյանը, որը ողջ ուղևորության ընթացքում ընկերակցեց Նորին Սրբությանը, Ֆրանսիայի Արքեպիսկոպոսության ներկայացուցիչներ, ինչպես նաև համայնքային տարբեր կառույցներից և մամուլից մեծաթիվ հայեր։ Օդանավակայանում Նորին Սրբությունը դիմավորվեց ամենաբարձր մակարդակով՝ զինվորական պարվո ընդունելության այնպիսի արարողակարգով, որով Ֆրանսիական պետությունը պարվում է երկրների ղեկավարներին։

Հանդիսավոր այս ընդունելությունից հետո Վեհափառ Հայրապետն իրեն ընկերակցող պատվիրակության հետ առաջնորդվեց օդանավակայանում գտնվող Պատվո հյուրերի հատուկ սրահ, ուր Նորին Սրբությանը ողջունեցին Ֆրանսիայի կառավարության պաշտոնական և հայ համայնքի ներկայացուցիչները։ Այս ընդունելությանը ներկա էին նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը օդանավակայանից պարվո շքախմբով առաջնորդվեց Ֆրան-

սիական կառավարության կողմից հարկացված «Մեն Ռաֆայել» հյուրանոց: Մի փոքր հանգստից հետո Նորին Սրբությունը հյուրընկալվեց Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան փար Հրապարդ Նալբանդյանի տանը:

Երեկոյան ժամը 18.00-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ Մայր եկեղեցի և «Հրաշափառ»-ով մուտք գործեց այնտեղ, ուր հայրապետական օրհնությանը արժանանալու էին եկել ֆրանսահայեր, ինչպես նաև ներկայացուցիչներ քույր Եկեղեցիներից: Եկեղեցում Նորին Սրբությանը ողջույնի խոսքով դիմեց Գյուլտ արքեպիսկոպոս Նազգաշյանը, ապա ներկա մեծաթիվ հայ հավատացյալներին ողջույնի և օրհնության խոսք ուղղեց Նորին Սրբությունը, որից հետո տեղի ունեցավ աջիամբույր:

Հովհաննես Մկրտիչ եկեղեցուց Վեհափառ Հայրապետը հոգևորականց դասի, ինչպես նաև Վարչական և Հոգաբարձության մարմինների ուղեկցությամբ ուղղվեց դեպի Առաջնորդարան, ուր Նուրբան Ֆրենկյան սրահում փրվեց ոչ պաշտոնական ճաշկերույթ:

7 դեկտեմբերի 2001 թ.

Այսօր, ժամը 11.00-ին, Նորին Սրբությունը Փարիզի Առաջնորդարանից ֆրանսահայ «Այբ» ռադիոկայանով ողջույնի և ապա 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժի փարեկիցի առիթով ոգեկոչման խոսք հղեց ֆրանսահայությանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԽՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍԶԸ ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԽՐԺԻ 13-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

«Լուսնգնի՜ր, անկյալ ժողովուրդ,
Եվ հավաքա՜ւ, և փոկա՜,
Կա քո վշտում վեհ խորհուրդ,
Եվ խաղվածին մահ չկա»:

Վ. Տերյան

Միոնի բարեպաշտ ժողովուրդ.

Այսօր լրանում է 1988 թվականին Հայաստանի հողը ցնցած աղեկալի երկրաշարժի 13-րդ տարին: Աշխարհի բոլոր կողմերում ապրող համայն հայությունը վերստին ապրում է ծանրագին կորուստների ցավը, և վերջապես հայոց եկեղեցիներից Տիրոջ ամենառաջ ողորմության ու գթության հայցով խնկահոտ աղոթք է բարձրանում առ Աստված՝ երկրաշարժի բազմահազար զոհերի հոգիների եամար:

Տասներեք տարի առաջ մեր Հայրենիքի հյուսիսային շրջանում տարերթի ամենակույ ուժով բազմաթիվ բնակավայրեր՝ քաղաքներ ու գյուղեր քարորանդ եղան, փլատակների ներքո մնացին տասնյակ հազար մարդիկ,



ՓԱՐԻՋԻ Ս. ՀՈԿԿԱՆՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ



ԺԱՐՈՋՈՒՄԷ ՎԵՂԱԹԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ

իսկ հարյուր հազարներ՝ անօթեան և վշտակոտոր: Հայ ժողովուրդն ապրեց 20-րդ դարի իր երկրորդ մեծ ողբերգությունը: Մակայն այդ դառնագին օրերին մեր ժողովուրդը միայնակ ջննաց իր վշտի մեջ: Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում օր ու գիշեր աշխարհի փարբեր դրոշներով վայրէջք էին կատարում մարդասիրական օգնությամբ բեռնված ինքնաթիռներ:

Միմյանց հանդեպ սիրո և զթաարության աստվածային պատգամը հոգիներում՝ բազմաթիվ պեղություններ ու ժողովուրդներ իրենց աջակից ձեռքերը մեկնեցին մեզ: Հայոց բիբլիական հողում այդ ազնիվ ձեռքերը միավորվեցին՝ իրենց ափերում կրելով մարդկության բարի կամքի վկայությունը: Ցավի առթև ևսահանքեցին զաղափարական հակաառություններն ու քաղաքական անհաշտությունները: Զնքվեցին խորհրդային սահմանային արգելքներն ու անջրպետները: Հայաստանը դարձավ էպիկենտրոն՝ գութի, հաշտության և մարդասիրության:

Միռնի բարեպաշտ հավատազրայներ, աշխարհասփյուռ հայ հոգիներում ամբարոված երախտագիտությունն այսօր, երկրաշարժի 13-րդ տարելիցին, վերադին որպես աղոթք է բարձրանում առ Աստված:

Մեր ժողովուրդը երախտագիտությամբ է հիշում ևս Ֆրանսիայի պետության ու աստվածասեր ժողովրդի օգնությունը: Դիշում է ձեր՝ Ֆրանսահայ համայնքի փութաբան աջակցությունը աղեկբայ ձեր եղբայրներին և քույրերին, հայ ժողովրդի մեծանուն զավակ Շառլ Ազնավուրին, ով իր միջոցներով և բազմակի այցերով Հայաստան, լույս ու ջերմություն իր սերն է պարզելում Մայր Հայրենիքին:

Այսօր վիշտն ու սուգը չէ, որ գերակշռում են մեր հոգիներում, ինչպես այն աղելույի և տհավոթ օրերին: Այսօր մեր հոգիներում առավել տեղ ունեն լավատեսությունն ու հավատը, թեև Հայաստանի հյուսիսային շրջանները տնթացող վերքի պես դեռ կրում են երկրաշարժի ավերիչ հեղքերը, որ պիտի սրբվեն ու վերանան մեր ժողովրդի՝ Հայոց Պետության և Միյուռքի համընդհանուր հոգածությամբ ու ջանքերով:

Միռնիներ

Մնննող տարի Մենք հովվապետական այցելությամբ եղանք Աղելի Գտում: Ականատեսը եղանք և՛ երկրաշարժից մնացած փալատկների գոյության, և՛ ետրակառույցների ու ընթացող շինարարության, տեսանք ևս բնակիչների ծանր կացությունը, բայց ոչ երբեք հուսալքությունն ու թեւաթափությունը:

Երկրաշարժի վիշտն ու սրտաբեկությունը մեր ժողովուրդը հաղթահարեց հոգևոր և ազգային վերագարթոնքի ուժով: 1988-ի ամեն արշալույս հայության համար բացվում էր արդարության հաղթանակի լավատեսությամբ՝ խորհրդային բռնադիտությամբ Հայրենիքից զատված հայոց հողի՝ Ղարաբաղի վերամիավորման տեսլականով: Տասնամյակներով խեղդված ազգային ոգու պոռթկումը, հանուն ազատության պայքարի համազգա-

յին հանձնառությունը և համախմբման անհախադեպ վերելքը դարձան այն անխորպուկ հենարանը, որի վրա բարձրացավ ու հավաքով գորացավ քաղաքային մահաափյոռ աղետին դիմակայելու հայոց կամքը, համագրային կենսատուժը: Այո՛,

«Ասեցնի՛ր, անկյալ ժողովուրդ,
Եվ հավաքա՛ւ, և փոկա՛ւ,
Կա քո վշտում վեհ խորհուրդ,
Եվ խաչվածին մահ չկա»:

Մեր հույսն Աստված է: Եվ հավատում ենք, որ հենու չէ այն ցանկալի ժամանակը, երբ մեր ժողովուրդը միասնական ջանքերով իր ինքնիշխան Հայրենիքում նոր շուքով բարձրացնելու է խորտակված ամեն փուն, խռնագիված ամեն եկեղեցի: Նոր ծնունդներով միխթարված ու երջանիկ՝ բազմապարկվելու և առավել ամուր եւ դառնալու հայ ընտանիքները: Հավատում ենք, որ վերաբծնորած հարանց մեր սուրբ հավատը, հայ ժողովուրդը քրիստոնեական արժեքներով կերտելու է իր նոր Հայրենիքը՝ առհավել աւվանդ որպես պահպանելով 88-յան դժնդակ, բայց նաև հերոսական օրերին նորոգած իր միաբանությունը:

Այո, անվարան է մեր հավատը, դարերի մեք բազում հոգս ու փորձություն հաղթահարած, բազում մահեր ուրնակոխած և միշտ կառուցող մեր ժողովուրդը կերտելու է իր վաղվա լուսատու օրը, հայոց գալիքը:

Մեր աղոթքն է առ Ամենախնամ Աստված, որ Երկիր մոլորակի հավերժ պտույտը բոլոր ժողովուրդներին բերի խաղաղ, երջանիկ ու ապահով կեցություն: Մեր աղոթքն է որ մարդիկ ու ժողովուրդները մեկտեղվեն միայն ուրախ ու բերկրալի առիթներով: Աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ Տերը Իր օրհնության մեք պահպանի Ֆրանսիան և Ֆրանսիացի ժողովրդին, համայն հայոց ի սփյուռս աշխարհի և Հայաստան աշխարհը մեր:


Խունկ, մշտախնչ աղոթք և օրհնություն երկրաշարժի բյուրավոր գոհերի անմեռ հիշարակին:

«Ողջ լըրուք ի Տէր, գօրացեալք շնորհօք Սուրբ Հոգոյն եւ յաւեր օրհնեալք ի Մենք. ամեն»:

Առավույան Վեհափառ Հայրապետն այցելեց Փարիզի Ռուս Ուղղափառ «Մեն Մերժ» Աստվածաբանական համալսարան, ուր հանդիսավորապես ընդունվեց Հայր Բորիս Բոբրինսկու, համալսարանի պաշտոնեության, դասախոսական կազմի և աշակերտության կողմից, որին ներկա էր նաև Տիեզերական Պարբերաբությանը ենթակա Ֆրանսիայի Ռուսաց Եկեղեցու առաջնորդ Ժորժ Կոնովալովը: Նորին Սրբությանն առաջնորդվեց համալսարանի մարտ, ուր փեղի ունեցավ բարիգալստյան հանդիսավոր եկեղեցական արարողություն, հավարդ որի համալսարանի ռեկտոր



ՓԱՐԻԶԻ ԸՈՒՄ ՈՒՂԱՓԱՐԵ ԵԿԵՂԵՑՈՒ «ՍԵՆ ՍԵՐԺ»
ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ





Փարիզի առաքյալաբարձ ՏԱԳԼԱՐՈՒՄ ՓԼՈՒԳՔԻ ԱՐԺԵՊԻՍԿՈՍՈՍ ԿԱՐԴԻՆԱԼ ՔԵՆ ՄԱՐԻ
ԼԵՍՈՒՄՈՒՄԸ ԶԵՐԿՈՒՄ ԿԵՂԵՂՈՒՄԻ ԿԵՂԵՂՈՒՄԻ ՄԱՐԿԱՐԿԱՆԻ ԼՆԹՈՒՄՈՒՄ

Հայր Բորիս Բորիսովին բարեգալարյան խոսք ուղղեց Նորին Վեհափառությանը, որին ծաղրողեց Հայոց Հայրապետի օրենության և բարեմաղթանաց խոսքը: Նորին Սրբությունը համալսարանին նվիրեց Ջրիստոսի խաչելությունը պատկերող մի մանրանկար:

«ՄԵՆ ՄԵՐԺ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԵԿԱՆ ՀԱՅՐ ԲՈՐԻՍ ԲՈՐԻՍՆՍԿՈՒ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Զերդ Սրբություն

Մեծ պատիվ է և մեծ ուրախություն՝ այսօր Ձեզ ընդունելու «Մեն Մերժ» ինստիտուտում, ուր 75 տարի ուղղափառ աստվածաբանություն է դասավանդվում: Զեր նախորդ՝ Գարեգին Ա Կաթողիկոսը մեզ այցելեց 1997 թվականին, և ջախազանց երջանիկ ենք, որ մեր միջև հաստատված կապերը շարունակվում են:

1987 թ. ինստիտուտը Արևելյան Եկեղեցիներից (Եթովպական, Ղպրի, Հայ) բազմաթիվ ուսանողներ է ընդունել՝ ստացողներ և երկու դպրի ուսանող՝ հեռակա ուսուցմամբ: Այս շփումները կարևոր են, և հուսով ենք, որ դրանք պրոդարեր կլինեն, և որ մենք կշարունակենք երկու եկեղեցական ընտանիքների միջև տարբեր մակարդակներում փոխանակումներ կատարել: Բոլոր այս միջոցառումները նպարակ ունեն կյանքի կոչել Պաշտոնական Աստվածաբանական Երկիտություն հանդիպումների ժամանակ աստվածաբանների կողմից ընդունած որոշումները:

Թույլ տվեք մեզ, շնորհավորել Ձեզ և ողջ հայությանը՝ Հայաստանում քրիստոնեության հաստատման 1700-ամյակի կապակցությամբ, որը տունվել է ողջ աշխարհով սփռված Ձեր բոլոր թեմերում:

Անհրաժեշտ է, որ թե՛ հարևան և թե՛ հեռավոր երկրներից ուղղափառ քրիստոնյաները իրենց մասնակցությունը բերեն այդ իրադարձությանը, որի առիթով Կ. Պոլսի, Մոսկվայի, Ռումինիայի, Ալեքսանդրիայի Պապրի-աթեքները և բազմաթիվ ուղղափառ առաքնորդներ այցելել են Հայաստան՝ Ձեր Եկեղեցի:

Այսօր, դեկտեմբերի 7-ին, ժամը 11.45-ին, հոգեհանգստյան աղոթքով Դուք հիշատակում եք սարսափելի երկրաշարժի օրը, որը 1988 թ. Հայաստանում այնքան մարդու կյանք խլեց:

Իրենց պարտության ընթացքում հայերը շատ փորձություններ են կրել, այդ թվում՝ 20-րդ դարի Յեղասպանությունը: Բայց Ամենակարող Աստված շարունակ հարության ուժ է տվել նրանց, ինչն այժմ վատ երևում է Հայաստանում Եկեղեցու վերադարձությամբ և իր երեք աստվածաբանական ճեմարաններում կատարված աշխատանքով:

Մենք գնահատում ենք, որ ֆրանսերեն և այլ լեզուներով թարգմանությունների շնորհիվ աստվածաբանական, հայրաբանական (եկեղեցու հայ-

րների (Բ-Ե դդ.) արեղծած քրիստոնեական աստվածաբանությունը, «Պապա-
րագի և հոգևոր ուսումնասիրությունների ժամանակ կարող ենք ասելի լավ
նախաձեռն Ձեր Եկեղեցու հարուստ և խորը ավանդույթները, որոնք մեզ
մարդկի են դարձնում կարևոր բնագրերը, ինչպես օրինակ՝ ԺԲ դարի մեծ
Կաթողիկոս Ներսես Շնորհալու, որը հսկայական կերպով իր բյուզանդացի
գրողակիցներին բացատրում է, որ իրենց հավատքը մեկ է։ Այդ ժամանակ
գրեթե մի միություն էր կայացել նրանց միջև։

Նինա Գարսույանի վերջերս հրատարակած մի գիրք (Նայ Եկեղեցին և Ա-
րևելքի մեծ բաժանումը, Louvain, 1999) նույնպես պարզաբանական հավաստի
վնասակարներ է փայխ մեր այժմյան աստվածաբանական նրկիստության
ուսումնասիրության համար։

Ինչ վերաբերում է հայ մեծանուն միստիկ և բունաստեղծ Գրիգոր Նարե-
կացու գրքին, վերահրատարակված ֆրանսերեն լիզվով 2000 թ. (Sources
Chretiennes-ում, № 78), հոգևոր ուղեկից է մնում բոլորի համար, որը, ինչպես
ևս առում է իր «Մարտան ողբերգության» գրքում (ավարտել է 1002 թ.), դի-
մում է «Ողբ աշխարհի քրիստոնեականներին»։ Աղոթքներից յուրաքանչյուրը ու-
նի հեղինակ գեղեցիկ վերնագիրը, «Ի խորոց սրտի խառն ընդ Աստուծոյ»։
Նայ ընդամենը սրբությունը էին պահում այն իրենց տներում գրքի
գլուխներն ընթերցվում էին հիվանդների և մահամերձների համար։ Երբ
միստիկական Բրիստոսակենսություն է (christocentrique) «... Պեպոք է գործունայ,
կազդարարել ու կանգնել, հառնել կորստից անկենդանական, օգնություն ա-
ռած Բրիստոսի ձեռքով, որ գաթ է տալով բոլորի հանդեպ...», «Ով որ քսե-
լի Տիրոջ անունը, նա պիտի ապրի... Ոչ թե գալիս եմ խեղդելու նրա պարզե-
կները ես, այլ նույնիսկ իրեն, որ կենդանությունն է ճշմարտապես, շնչառու-
թյունն իսկ, առանց որի չի՞ք շարժում և ընթացք։ Ո՛չ այնքան հույսի հանգույ-
ցով, որքան սիրտ կապով եմ ես կապվում Երան...»։

Մեկ անգամ ես, Ձերդ Սրբություն, գիտցեք, որ մենք մաղթում ենք Ձեզ և
Ձերոնց բարի գալուստ մեզ մոտ։

Նրաժեշտ փառով «Մեն Սերժ» համալսարանին, Վեհափառ Նայրապետի գլխա-
վորած շքախմբին ուղղվեց դեպի Փարիզի արվարձաններից մեկը՝ Լը Ռենսի, ուր
գտնվում է «Կաթողիկոսական Երկրորդական վարժարան»-ը։ Նայրապետա-
կան թափառը քաղաք հասավ ժամը 12.30-ին, դիմավորվելով Լը Ռենսիի քաղաքա-
պետի փոխ Առնո Ռաուլի կողմից, որը Վեհափառ Նայրապետի այցելության ա-
ռիթմով, Քաղաքապետարանի խորհրդի ժողովականների համաձայնությամբ, որո-
շում էր կայացրել՝ այն երապարակը, ուր գտնվում էր այս վարժարանը, վերանվանել
Քարեճուր Արմենի (Նայաստան խաչմերուկ)։ Նորին Սրբությունը հանդիսապետե-
լով այս արարողությանը, որին ներկա էին բազմաթիվ հայ եպիսկոպոսներ ու քա-
ղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, կրթից փողոցի անվանաբեղը նշա-
նավորող ժապավենը, որից հետո քաղաքապետի հետ մեծ շուքով առաջնորդվեց դե-



«ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԾԵՐՈՓՆ»։ ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՂԱՓԱՆ՝ ՀԱՅՐԱՊԵՏԵ ՍՈՆՄԱՐՏՆԱԻ
ՀԱՅԿԱԿՆՆ «ՀԱՆԳԱՏՏԱՆ ՏՆՆԸ»





ԱՂՈՒՀԱՅՈՎ ԳԻՄՆԱՎՈՐՈՒՄՍ. ՍԱՀԱՆԿ - Ա. ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏԱՔԻՆ

այի վարժարան՝ դպրոցի տնօրինության և աշակերտության հետ համախառմ: Դպրոցի հանդիսությունների սրահում Վեհափառ Հայրապետի գալուստը ողջունեց նախ տնօրենը, ապա ողջույնի խոսքով հանդես եկավ քաղաքապետը:

Վերջում բոլոր ներկաներին օրհնության խոսք ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ ի մասնավոր իր շնորհակալությունը հայտնելով քաղաքապետի՝ նման ընդունելության և հյուրընկալության համար: Նորին Սրբությունը շրջեց շենքում, ծանոթացավ պայմաններին, որից հետո դպրոցի տնօրինությունը, ի հիշատակ այս հանդիպման, եվրոնեց վարժարանի ողջ աշակերտությանը պատկերոտ մի նկար:

Ժամը 3.00-ին Նորին Սրբությունը, երաժեշտ փայլով Լը Ռինսիին, ուղևորվեց դեպի Աննուվիլ Լե Գոնես, ուր գտնվում է հայկական Վարագա Ս. հաչ եկեղեցին: Նորին Վեհափառությունը նախ հյուրընկալվեց քաղաքապետարանում, ուր նրան ողջունեց քաղաքագլուխ փառ Միշել Օմստը, ուրախությամբ ասելով, որ քաղաքն իրեն մեծապես պատվված է համարում նման հոգևոր բարձրաստիճան հյուրի ընդունելով: Վեհափառ Հայրապետը նվերներ փոխանակեց քաղաքապետի հետ և ուղևորվեց Վարագա Ս. հաչ եկեղեցի, ուր մեծ ցնծությամբ դիմավորվեց հավաքված մեծաթիվ հայտնողների կողմից, որի արտահայտությունը երկինք բաց թողնված բազմաթիվ աղավանդներն էին: Եկեղեցուց Հայոց Հայրապետն առաջնորդվեց Մարի Մանուկյան սրահ, ուր օրհնության խոսք ուղղեց ներկա հայտնողներին և քաղաքային իշխանություններին:

Ժամը 4.30-ին Վեհափառ Հայրապետն այցելեց Մոնմորանսի հայկական «Հանգըստյան փուն», ուր իրենց կյանքի մայրամուտն են անցկացնում այդ շրջանի մեր փարեց հայրենակիցները: Նորին Սրբությանն ընդունեցին և առաջնորդեցին դեպի ձերանոց Մոնմորանս քաղաքի և շրջանի պետական և պաշտոնական անձինք, երեսփոխաններ: Այսպես Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ փեղի ունեցավ «Հանգստյան փուն» համալիրի նոր մասնաշենքի բացումը: Համալիրի «Լևոն Գրիգորյան» սրահում Վեհափառը հանդիպեց ձերանոցում բնակվող փարեցների հետ օրհնության խոսք ասելով հայազգի մեր ավագ սերնդակիցներին: Ի նշանավորումն այս այցելության, սրահի պարին փակցվեց մի հուշատախտակ:

Նորին Սրբությունը, վերադառնալով Փարիզ, երեկոյան ժամը 7.30-ին Մենարի նախագահական պալատում հանդիպեց Ֆրանսիայի Մենարի նախագահ փառ Զրիստիան Բոնսլեի հետ: Կազմակերպված հանդիսավոր ընդունելության ընթացքում Նորին Սրբությունն ու Մենարի նախագահը նվերներ փոխանակեցին:

Երեկոյան ժամը 8.30-ին Նորին Սրբությունը ներկա գտնվեց «Կավո» սրահում կազմակերպված համերգին, որին իր մասնակցությունը բերեց ճանաչված ջութակահար Վլադիմիր Մայիվսկովը: Համերգը կազմակերպվել էր ֆրանսոսահայ «Կապույտ խաչ»-ի կողմից՝ գործակցությամբ հայկական ընկերակցության, որին հովանավորում է Հայաստանի Հանրապետության առաջին փրկյին Բելլա Ջոզադյանը: Այս համերգի ողջ հասույթը պիտի փրամադրվի ոսկրածուծային եիվանդությանը փառապող երեխաների բուժմանը:

8 դեկտեմբերի 2001 թ.

Առավոտյան ժամը 10.00-ին Ամենայն Հայոց Հայրապետն այցելեց Ալֆորվիլ քաղաք, ուր քաղաքապետարանում հանդիսավորապես ընդունվեց քաղաքագլուխ-ներսփոխան տիար Ռոնե Ռուբեի կողմից: Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց քաղաքապետարանի հանդիսությունների սրահ, ուր քաղաքապետը Նորին Սրբությանը հանձնեց «Պատվո մեդալ»: Այսպես Նորին Սրբությունը քաղաքագլխի և այլ պաշտոնատար անձանց ընկերակցությամբ ծաղկեպսակ զետեղեց «Անհայտ զինվորի հուշարձան»-ին, ապա շքախմբով ուղևորվեց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված խաչքար-հուշարձան, ուր այս կապակցությամբ հավաքվել էր տեղի և շրջակա քաղաքների հայ ազգաբնակչությունը: Խաչքարի առաջ Նորին Սրբությունը «Հոգվոց» ասաց Հայոց Եղեռնի բազմաթիւր նահապտակների հոգիների հանգստության համար:

Այա թափոն ուղղվեց դեպի Ալֆորվիլ քաղաքի հայկական Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի, որին կից գործում է հայկական մանկապարտեզ, նախակրթարան և վարժարան: Ս. Մեսրոպ կրթարանում Նորին Սրբությունը ներկա գտնվեց աշակերտության կողմից կազմակերպված հանդիսությանը, օրհնության խոսք ուղղելով ներկաներին: Ժամը 12.00-ին քաղաքապետի կողմից քաղաքապետարանի էյուրասրահում ի պատիվ Նորին Սրբությանը ճաշկերույթ տրվեց:

Ալֆորվիլից վերադառնալով, ժամը 14.00-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Իսի Լե Մուլինո, ուր հանդիսավորապես ընդունվեց քաղաքապետ տիար Անդրե Մանթինի, պաշտոնատար անձանց և տեղի հայ համայնքի ներկայացուցիչների կողմից: Քաղաքապետը ողջունեց Նորին Սրբության գալուստը՝ այն անվանելով կարևոր իրադարձություն քաղաքի կյանքում: Իր օրհնության և ողջույնի խոսքն ասաց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Քաղաքապետարանից Վեհափառ Հայրապետը քաղաքագլխի և ներկաների ընկերակցությամբ գնաց Ս. Մարիամ Աստվածածին հայկական եկեղեցի, ուր դիմավորվեց այդ և շրջակա քաղաքների հայտղիների, ինչպես նաև հայկական բոլոր Միությունների պատասխանատուների կողմից: Եկեղեցում նրանց գալուստը ողջունեց Մյոստեմ վրդ. Գրվիզյանը, որից հետո Նորին Սրբությունն իր օրհնության խոսքն ուղղեց ներկա հավատացյալ բազմությանը, որին հաջորդեց աջամբույր:

Ժամը 4.30-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Շավիլ քաղաք, տեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցում դիմավորվելով ավանդական «ազ ու հաց»-ով: «Հրաշափառ»-ով եկեղեցի մուտք գործելուց հետո, Վեհափառ Հայրապետը օրհնեց և ողջույնի խոսք ուղղեց ներկաներին: Երեկոյան Նորին Սրբությունը Փարիզի Արքեպիսկոպոսարանում հյուրընկալվեց Փարիզի Արքեպիսկոպոս կարդինալ Ժան Մարի Լյուսթիժեի կողմից:

9 դեկտեմբերի 2001 թ.

Առավոտյան ժամը 10-ին Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսը հայրապետական Ս. Պատարագ մատուցեց Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր Տաճարում: Հայրապետական Ս. Պատարագին ներկա էին քույր Եկեղեցիների Ֆրանսիայի բոլոր հոգևոր առաջնորդները, ինչպես նաև Ֆրանսիայի կաթավարության անդամներ՝ երեսփոխաններ, քաղաքապետը և մեծ թվով հայ հավաքագյալներ: Նորին Սրբությունը եկեղեցուն նվիրեց Ս. Սկիե, իսկ Գուր Սրբազանին՝ մի հորեղանական պանակե: «Հայր մեր»-ից առաջ Նորին Սրբությունն իր հայրապետական օրհնության խոսքն ուղղեց ներկաներին, ապա Առաջնորդարանի Նուրհան Ֆրենկյան սրահում փեղի ունեցավ հափուկ ընդունելություն, որի ընթացքում ներկաներին դարձյալ օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈՋԸ ՓԱՐԻԶԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Միրելի եղբայրներ և քույրեր

Ուրախ ենք ողջունելու բոլորիդ սիրո ողջույնով և բերելու ձեզ Աստվածային օրհնություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Խոր Վիրապի վանքից, հայաստան և Արցախ աշխարհի սրբավայրերից, հայոց վերականգնված և նորակառույց եկեղեցիներից, Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուց և այնպեղ ամփոփված հավաքի մեր հոր շնորհաբեր մասունքներից:

Ողջուն բոլորիդ՝ Եդեսիի հուշարձանի անմար բոցից:

Ողջուն՝ հայաստանի և Արցախի մեր ժողովրդից, ձեր եղբայրներից ու քույրերից, հայոց Ազգային բանակի ուխտյալ զինվորներից՝ մեր հայրենիքի սահմանների խաղաղության պահապաններից:

Եղբայրական սիրով ողջունում ենք այսօրեղ ներկայությունը քույր Եկեղեցիների հոգևոր մեր եղբայրների, պետական իշխանությանը պատվաբաժան ներկայացուցիչների: Հույսով եմ համակվում մեր հոգիները՝ տեսնելով քրիստոնեական Եկեղեցիների ու պետությունների համագործակցությունը, որ վկայում է համամարդկային կյանքում հոգևոր արժեքների կարևորման մասին այսօր, երբ աշխարհը, կանգնած ահաբեկչության, իրավունքի ուրանահարման, առվի և աղքատության հրամայականների առջև, հաշտության ու խաղաղության, միջազգային փոխըմբռնման նոր ուղիներ է փնտրում:

Միրելի ժողովուրդ հայոց.

Ուրախ է ձեր Կաթողիկոսը, քանզի Աստուծո այս տան՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու մեջ զգում է որ կանգնած է մայր հողի վրա: Չկա ավելի մեծ ուրախություն, քան այս պահը, երբ մենք՝ զավակներս Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, Հայրենիքից այսքան հեռու զգում ենք ներկայությունը Հայոց հողի՝ մեր սրբությունը, որի համար բազում մարդեր հնք մղել, բազմիցս նահապետակվել, և որի մի հատվածի վրա, կամոքն Աստուծո, այսօր վերահասարարել ենք մեր անկախ պետականությունը:

Փառք տանք Աստուծո Իր բարիքների համար և աղոթենք ի սրտե, որ ոչ մի սև ամպ չծածկի այլևս մեր Մայր Հայրենիքի երկինքը:

Միեւելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, մենք, իբրև Հայ Առաքելական Եկեղեցի, հոբելյանական տարի ենք ապրում՝ հիշատակելով Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը: Գիտե՞ք, որ Փարիզի մեջ նույնպես, ինչպես բազմաթիվ մայրաքաղաքներում, այդ մեծ հոբելյանը նշվեց ցուցահանդեսներով, քայր Եկեղեցիների հեղու միասնական աղոթքներով, բազմաթիվ համալսարաններում կազմակերպվեցին հայ արվեստին, մատենագրությանը, պատմությանն ու Եկեղեցուն նվիրված գիտաժողովներ և ամեն առիթով շնչովեց, որ Հայ Առաքելական Եկեղեցին այն հոգևոր անդամատանն է, ուր ծաղկեցին հայ գիրն ու գրականությունը, արվեստներն ու մշակույթը, և կենդանի է քրիստոնյա հայի հոգին: Ղշկեց անցյալը՝ իբրև ճանապարհ, որ պիտի առաջնորդի մեզ դեպի ապագա:

301 թվականին Հայոց թագավորության մայրաքաղաք Վաղարշապատից գծվեց այդ ճանապարհը: Մեր ժողովրդի նորընթաց ուղու առաքին քայլը առաջնորդվեց Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, երբ Միածինը երևաց և լույսով գծագրեց հայության Մայր Տաճարը, որը Տիրոջ Էջրի խորհրդով կոչվեց «Էջմիածին»: Մեր պատմության բոլոր արհամիրքների մեջ Մայր Աթոռը հայոց հաղթանակող ու կանգուն մնաց՝ իբրև խորհրդանիշը հայ ժողովրդի միության: Էջմիածինն է պարմառը, որ դուք այսօր ունեք այս լույս եկեղեցին: Միևուրեք մեջ ամեն հայ համայնք որ կառուցում է իր եկեղեցին, կառուցում է իր Սուրբ Էջմիածինը և նրա խորանի առջև Լուսավորչի Դանթեղ է կախում՝ խորհրդանիշը իր կենդանի հավատքի: Հայոց Եկեղեցին երաշխիքն է մեր հայ գոյության՝ իբրև Քրիստոսի հավատավոր ժողովուրդ: Դուք եք այդ ժողովուրդը: Ձեր մասին է, որ մեր Տերը ասաց «Մի երկնյի, հօր փոքրիկ, զի հանեցաւ Հայր ձեր տա՛ ձեզ զարթայութիւն» (Ղուկ. ԺԲ 32): Ձեզ տրված արքայությունը ձեր սրտերը լուսավորող և ուրախացնող Դանթեղն է Լուսավորչի: Երբ առաքյալները հարցրեցին Պետրոսին խոստացված արքայության մասին, մեր Տերը պատասխանեց «Արքայութիւն Աստուծոյ ի ներքս ձեզ է» (Ղուկ. ԺԷ 21): Այսինքն՝ այն սրտերի մեջ է, ուր տիրում է սերն առ Աստված և սերն ընկերոջ հանդեպ: Աստուծո և միմ-

յանց հանդեպ սիրով է ամուր ու զորավոր մեր կյանքը՝ յի երջանկությամբ ու արարումով:

Առանց այդ սիրո անզոր են մարդկային օրենքները, քանզի ի վերջո, փակուղի են առաքնորդում, առանց այդ սիրո ծանր են թվում մեզ մեր պարտականությունները, մենք չենք տեսնում քարին և չգիտենք կյանքը գնահատել, առանց այդ սիրո ունայն են մեր բոլոր ձգտումներն ու հույսերը:

Մնուր պահեր ձեր սերը քարաշեն այս տաճարի նկատմամբ, ավելի ամուր պահեր ձեր սերը Փառաց Լույսին, որ իջավ երկնքից և լուսավորեց ու կենդանացրեց ամեն հայի հոգի:

Հայոց Մեծ Դարձի խորհրդով հայոց եկեղեցիների լուսո խորաններից Հայաստանի ձեր քույրերին և եղբայրներին վերստին քարոզեցինք Քրիստոսը՝ Լույսն Աշխարհի: Մեր ժողովուրդը լսեց Մեր ձայնը և վերադարձավ իր երկնավոր Հոր տունը՝ առաքելահաստատ իր սուրբ Եկեղեցին: Հազարավոր ծնողներ մկրտության առաքնորդեցին իրենց երեխաներին, հազարավոր երիտասարդների խմբեր՝ քայլելով Երևանից մինչև Խոյր Վիրապ, տարեմուտի գիշերը վառեցին իրենց մոմերի և կանթեղների լույսը Վիրապի մեջ վառվող կանթեղից և շարունակեցին իրենց ուխտագնացությունը դեպի Սուրբ Էջմիածին: Վանքի մուտքին նրանք ծնրադիր երգեցին Դոնքացեքի շարականը՝ «Բաց մեզ, Տէր, գոյուն ողորմութեան», և Մայր Տաճար մտան երգելով.

«Էջ Միածինն ի Տօրէ եւ յոյս փառաց ընդ ևնա,
 Զայնք հնչեցին սանդարամեւրք անդնդոց:
 Տեսնալ զյոյս մեծ Հայրապետին Գրիգորի,
 Պարմէր ցնծութեամբ հաւարացեալ արքային:
 Եկայք շինեցցուք սուրբ զխորանն լուսոյ,
 Զանգի ի սնա ծագեաց մեզ յոյս ի Հայաստան
 աշխարհի»:

Նրանց բոլորին և հայրենաբնակ ուխտավոր մեր ժողովրդին, աշխարհի չորս ծագերից Հայաստան եկած մեր երիտասարդությանն ուղղած Մեր պատգամը հորեւրանական այս տարվա ընթացքում նույնը եղավ՝ «զորացրեք եկեղեցին և զորավոր կլինեք, ամուր պահեցեք ձեր հավատը, և այն պիտի փրկի մեզ»:

Սիրելիներ

Թող հրճվի ձեր հոգին ամեն անգամ, երբ մտնեք այս տաճարի դռնից: Երբ վառեք ձեր մոմը, աղոթեք և մաղթեք, որ գա այն օրը, երբ իբրև ուխտավորներ պիտի ծնրադրեք Սուրբ Էջմիածնի դռանը, պիտի վառեք ձեր մոմը Իջման Սուրբ Սեդանի առջև և ի սրտե պիտի հայցեք, որ ամեն հայի պար-

գնվի ուրախությունը՝ տեսնելու Արարարը իր վեհության մեջ և Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը՝ դեպի երկինք խոյացող իր գմբեթով, որ կամարում է Տիրոջ Էջրի խորհուրդը հավերժահայաց: Սուրբ այդ խորանի առջև պիտի խոնարհվի ձեր նայվածքը, և դուք պիտի վերականգնվեք ձեր ուխտը առ Աստված՝ մնալու հավատարիմ մեր հայրերի երազին, որ է՝ բարգավաճ, շին ու բարձր և ամբողջական Հայրենիքի մեջ Հայրենյաց սիրով շինել մեր տունը և հայրանք հավատով այնպեղ վառել Լուսավորչի անմար Կանթեղը:

Թող Աստված խաղաղ պահի աշխարհը համայն, բարգավաճ ու շին՝ Ֆրանսիան, բարձր, ապրահով ու անվտոյով՝ Հայաստան Հայրենիքը մեր լուսն խորան Սուրբ Էջմիածնով:

«Շնորհք, սէր և սրբաբար զօրութիւն եղիցի ընդ ձեզ ամենեւեանդ, ամէն»:

Ժամը 16.00-ին Նորին Սրբությունն ուղղորդվեց Փարիզի Աստվածամոր տաճար, ուր հանդիսավոր կերպով ընդունվեց կարդինալ Ժան Մարի Լյուսթիժեի կողմից: Այսպեղ կատարվեց միասնական էկումենիկ աղոթք, երեթացս որի ողջույնի խոսքերով հանդես եկան Արքեպիսկոպոսն առ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ինչպես նաև նվերներ փոխանակեցին:

Ժամը 19.30-ին Նորին Սրբությունն այցելեց Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Էդուարդ Նալբանդյանին, որից հետո Վեհափառ Հայրապետը ներկա գտնվեց և օրհնության խոսք ասաց ի պատիվ իր այցելության կազմակերպված համայնքային-ժողովրդական ընթերիքին:

10 դեկտեմբերի 2001 թ.

Առավոտյան Վեհափառ Հայրապետն այցելեց Ժանսեմյի (Հովհաննես Սեմերճյան) պատկերասրահ, ուր հեղինակը Նորին Սրբությանը նվիրեց նաչելությունը պատկերող մի նկար:

Ժամը 12.00-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը կուրընկալվեց Ֆրանսիայի Արքեպրծնախարարությունում, ուր արքեպրծնախարարի երկրից բացակայելու պատճառով՝ նրան ընդունեց փոխարքեպրծնախարարը: Հանդիպման ընթացքում երկուստեք նվերներ փոխանակվեցին, և տրվեց պաշտոնական ճաշկերույթ: Այնուհետև Նորին Սրբությունն ուղևորվեց ՀԲԸ Միության փարիզյան մասնաճյուղի գրասենյակ:

Երեկոյան ժամը 18.00-ին Ամենայն Հայոց Հայրապետն այցելեց Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժակ Շիրակին: Նորին Սրբությունը մեծ պատիվներով ընդունվեց Ելիսեյան պալատում և զինվորական պատվով շքերթով առաջնորդվեց դեպի նախագահի նստավայր: Վեհափառ Հայրապետը կես ժամ տևողությամբ առանձնագրույց ունեցավ Ֆրանսիայի նախագահի հետ, հավաքր որի, ի պատիվ Նորին Սրբության, Ժակ Շիրակի կողմից կազմակերպվեց հարուկ ընդունելություն:

Ֆրանսիայի նախագահը Ամենայն Հայոց Հայրապետին և Գլուխ արքեպս. Նազգաշանին պարգևատրեց «Պատվո լեգեոնի Կոմանդոր» Ֆրանսիայի բարձրագույն շքանշանով: Ողջույնի խոսքերով հանդես եկան նախ Գլուխ արքեպս. Նազգաշանը, ապա Ֆրանսիայի նախագահը, որին հաջորդեց Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության խոսքը:

ԹՐԱՆՍԻՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԺԱԿ ՇԻՐԱԿԻ ԽՈՍԲԸ

Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԵՎ

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱԿ ԵՎ ՓԱՐԻՋԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐԿ

Տ. ԳՅՈՒՏ ԱՐԺԵՊՄ. ՆԱԳԱՇԱՆԻՆ

«ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆԻ ԿՈՄԱՆԴՈՐ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ

ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՐ

Մորազնագույն Հայր.

Աշխարհի տանիքին մոտիկ բիրյիսկան այն վայրերում, ուր կանգ է առել Նոյան տապանը, դաշտերն այնքան բարեբեր էին, մարգագետիններն այնքան գեղեցիկ, հողն այնքան հարուստ էր, որ Հայկյան որդիք կարծեցին՝ գտել են Աստծո Պարտեզը: Բայց, ցավոք, պարբերաբար կրկնվող ասպա-տակությունները, երկրաշարժերն ու կտրորածները բաժին ընկան նրանց:

Ոչինչ սակայն չի կարողացել խաթարել հայ ժողովրդի ինքնությունը. «Ես այնպիսի ամուր քար եմ, որ ինձ վրա մուրճը կկոտրվի...», գրում է Զույակը:

Այն գորեղ ակունքը, որը Զույակին և իր եղբայրներին հեղ պահեց հուսահատությունից, ծնունդ է առել 1700 տարի առաջ մի խորունկ բանտում: 301 թ. Գրիգոր Լուսավորիչը, որին Տրդատ թագավորը նետել էր պարժախոս, դարձի է բերում իր «դահմին». վերջինս Հայոց թագավորությունը դարձնում է առաջին քրիստոնյա պետությունը՝ իր զոհին ճանաչելով նոր Եկեղեցու հովիվ:

Մորազնագույն Հայր, Հայաստանի քրիստոնեացման կարևորագույն տարեդարձը մեծ շուրջով նշվեց Մուրթ Գրիգորին նվիրված Երևանի նորա-կառույց տաճարում, որը Դուր օձեցիք սեպտեմբեր առնաին:

Հայրերի որդեգրած այդ հավատարմությունն ու աննկուն հաստատա-կամությունը վճռեցին երկրի ճակատագիրը: Եկեղեցին է, որ ողջ խորդո-րդող պատմության ընթացքում աղթուն կերպով պահպանել է հայ ժողո-վրդի միությունն ու ընթացքը: Եկեղեցին է եղել Բարձր Դռան կամ պար-

սից շահերի կողմից ճանաչված միակ ներկայացուցիչը: Եկեղեցին «Բացա-
կա հայրենիքի փեսաների հողին» է...

Հոգևոր պոռթկումները միշտ հաջորդում են ամենասարսափելի ավե-
րածություններին «Երգ մեր քարերի մասին»-ում քանաստեղծուհի Սիրվա
Կապուրիկյանն ասում է

«Մարտիների քարեր, քարեր վանքի
Դուք՝ ծնկաջուր հայի աղոթքներից մաշված...»,
«Ծաղիկների՝ գույնի, ծաղիկների՝ նման
Բարի ժպտում եք դուք լույսին»:

«Երգ մեր քարերի մասին»-ում ուրևահարված, գրկանքներ կրած այս
երկիրը վերապրելու ուժ ու կարողություն է գտել:

Քրիստոնեության շնորհիվ ծաղկեց Չեր նահապետի ժողովրդի հանճա-
րը: Այն ծաղկեց Ս. Գրիգորի շնորհիվ, նաև Ս. Մեսրոպի շնորհիվ, որը Ս.
Սահակ Հայրապետի օգնությամբ ստեղծեց Այրուքները և հայերեն թարգմա-
նեց Աստվածաշունչը: Ծաղկեց առաջին պարմագիրների շնորհիվ, ավեր
միաժամանակ եղել են ժամանակագիրներ և քանաստեղծներ, շնորհիվ
աննման միաբնիկ Գրիգոր Լարենկացու, Սայաթ Նովա աշուղի և բոլոր
նրանց, ովքեր ծաղկել են այդ Աստվածաշունչ մարյանները և երկրով մեկ
հազարավոր եկեղեցիներ կառուցել:

Այդ եկեղեցիներից՝ քրիստոնյա Հայաստանի ամենահոյակերտ և ամե-
նահրաշալի կառույցներից մեկի՝ Անիի տաճարի ձակարագիրն ինձ առանձ-
նահատուկ կերպով հոգեհարազատ է: Ֆրանսիայի, ինչպես նաև Ինսուրի-
տուրի ցանքերը, սիրելի Պիեր Մասմեր, արդեն ակներև են, և թուրք հա-
մալադանական այրերի մոտ դրանք համագործակցության խրախուսելի
արձագանք են գտնում: Ես ակնկեղծորեն ուրախ եմ դրա համար:

Սրբազնագույն Հայր, Ֆրանսիայի աջակցությունը սկիզբ է առել շնորհիվ
մեր երկու ժողովուրդների միջև շատ վաղ ժամանակներում հաստատված
կապերի՝ դեռևս հաջակությամբ արշավանքներից: Ժամանակի ընթացքում և
քաղում գործերով այդ կապերն ամրապնդվել են:

Բազմաթիվ ֆրանսիացիներ հիշում են, որ իրենց նախնիները հայեր են
եղել: Նրանք հիշում են վերքերն իրենց ծնողների, որոնց մեր երկիրը պա-
րիվ է արել ապաստանելու: Վերջերս ֆրանսիացի ժողովրդը ցանկացավ
իր հարգանքի տուրքը մատուցել հայ նահապետների հիշատակին: Յուրա-
քանչյուր ֆրանսիացի յուրովի է հարգանք մատուցում գոհների հիշատակին,
յուրաքանչյուրն իր բառերով, քայք բոլորն էլ միևնույն հուզմունքով, միե-
նույն ակնածանքով:

Ծագումով հայ այդ ֆրանսիացիների պարմությունը ուսանելի օրինակ
է: Հասնելով մեր երկիր որքերգական ապրումներից դեռ ահասարսափ

ՅԳԻԱՅԵՍԻՍՏԻԱՆԻ ԴԱՐԱՆԻ ԶԵՆՈՒՄԻ
ԿԱԳԼՆԵՐԻՆ Զ «ԿՐԱԳԵԴՆԱՆԻՍ» ԴԿԻՆՈՒԹԵՐԻ ՈՒՍԱՏԻՈՎԱԶՄԻ ՏՆՍԵՆ
ԽԱՐԾԻՄԻ ՎԵՐՔ ՏՍԵՐԻ ԿԵՆԿՐԱԴԱՆԻ ԻՎ ԳՅԱՏԱԽԵՐԻ ՍՈՓՈԼԳԻ Մ ԴՎԵԳԱՌԻ ԶՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱՐԻ ԿԱԳԼՆԵՐԻ
ԶԵՆՈՒՄԻ Զ «ԿՐԱԳԵԴՆԱՆԻՍ» ԴԿԻՆՈՒԹԵՐԻ
ՈՒՍԱՏԻՈՎԱԶՄԻ ՏՆՍԵՆ

საგარეო ურთიერთობების მინისტრი



նրանք Ֆրանսիային բերեցին իրենց քաջությունն ու կորույդը, իրենց տաղանդն ու մեծահոգությունը: Նրանք որոնց թիվն այսօր շուրջ 400.000-ի է հասնում, փայլում են բոլոր բնագավառներում՝ արվեստ, հնարագորտություններ, սպորտ, տնտեսություն: Շարերն այս երկրո աշխարհ է: Թույլ տվեք ինձ մի մաղթանք ասել:


Ֆրանսիացիները գնահատում են իրենց մշակույթն ու քաղաքակրթությունը հարստացնող այդ տաղանդների համաստեղությունը: Նրանք է՛լ ափնի կգնահատեն հայ մշակույթը, եթե կարողանան հիսակալ այն ամենով, ինչ տվել է տալիս է այդ մշակույթը աշխարհին: Այդ իսկ պարզապես շատ օգտակար կլինի քաջայերեկ հայ մշակույթին, արվեստին և պատմությանը նվիրված կենտրոնի բացումը մեր երկրում՝ ի նպաստ փոխադարձ կապերի ամրապնդման: Այս զաղափարը կարիք ունի հայկական հաստատությունների, կազմակերպությունների և բոլոր խմբակցությունների միասնական աջակցությանը: Ես ամբողջությամբ կսատարեմ այդ գործին:

Սրբազնագույն Հայր, Ֆրանսիան, ինչպես Դուք զիտեք, առանձնահատուկ սեր է տածում Հայաստանի հանդեպ և ցանկանում է օգնել նրան: Մենք դա արել ենք 1988 թ. ահալոր երկրաշարժից հետո մեր երկրի վերակառուցման ժամանակ, այդ ենք արել նաև հորհրդային Միությանը հաջորդած տնտեսական ճգնաժամի ժամանակ: Անկախության տասը տարիների ընթացքում բարելավվեց երիտասարդ Հայաստանի Հանրապետության վիճակը: Այսօր կամաց-կամաց ջնջվում են մտայլ օրերի հնարքերը: Եվ յուրաքանչյուրը ցանկանում է, որ վճռական լուծում գտնվի այն հակամարտության համար, որ արդեն երկար ժամանակ է ինչ մտահոգություն է պարճառում Հայաստանին և Ադրբեջանին: Ես ցանկում եմ Միևսկի խմբում նպաստավոր դարձնել կողմերի միջև հանդիպումները, որպեսզի վերջապես երևա խաղաղ և բարեբեր ապագան, որին ամբողջ հոյսով ձգվում է հայ ժողովուրդը:

Այդպիսով, բոլոր հավատացյալները կարող են եկեղեցի հաճախել իրենց նախնիների հողում, ինչպես հաճախում են սփյուռքի 400.000 ֆրանսահայերը իրենց եկեղեցիները, որոնց Ձերդ Սրբությունն այսօր այցելում է:

Տիեզ տարի առաջ ես պարփով ունեցա հյուրընկալելու Նորին Սրբություն Գարեգին ԼԻ-ին՝ Ֆրանսիա կատարած իր անդրանիկ հովվապետական այցի առիթով: Եվ ես անցաի երջանիկ եմ: Սրբազնագույն Հայր, Ֆրանսիա կատարած Ձեր առաջին հովվապետական այցի առիթով թույլ տվեք վկայելու Ձեր նկատմամբ ունեցած իմ մեծ գնահատանքն ու հարգանքը:

Դուք ծնվել եք Հայաստանում՝ Էջմիածնի մոտ գտնվող մի փոքրիկ գյուղում: 14 տարեկանում Դուք ընդունվում եք Էջմիածնի հոգևոր ճեմարան՝ կաթողիկոսական այդ հոյակապ նստավայրում սովորելով մինչև 1972 թ. ձեռնադրությունը: Այնուհետև ուսանում եք Վիեննայի /Վիստրիա/ Աստվածաբանական ինստիտուտում, ապա Բոննում /Գերմանիա/: Մի քանի տարի



անց Դուք կրկին մեկնում եք հայրենիքից՝ ուսումնական շրջանում Մոսկվայի մոտ գտնվող Ս. Մերգին ուղղափառ վանքի հոգևոր ակադեմիայում:

1980 թ. վերադառնալով Հայաստան՝ Դուք նշանակվում եք Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի օգնական: Առաջնորդական փոխանորդ եք նշանակվում 1983 թ. ապրիլին և նույն տարվա հոկտեմբերին օծվում եք եպիսկոպոս: Հաջորդ տարի նշանակվում եք Գեղարքունիքի հոգևոր խորհրդի անդամ: 1992 թ. Դուք ստանում եք արքեպիսկոպոսական կոչում, անկախությունից փոքր-ինչ առաջ է, որ սփյուռքի կենտրոնների շնորհիվ Ձեզ հաջողվում է վերաբացել Սևանա լճի մոտ գտնվող դպրանոցը: Այնտեղ են պատրաստվելու ապագա քահանաները, որոնց խիստ կարիքն է զգում Հայաստանի 70 տարվա հալածանքներից և գրեթե ողջ հոգևորականության վերացումից հետո: 1998 թ. նոյեմբերին Գարեգին Ա Ամենայն հայոց Կաթողիկոսի կողմից նշանակվում եք կաթողիկոսական փոխանորդ:

Շուրջ մեկ տարի անց Դուք էիք կոչված փոխարինելու Նրան որպես Ծաղուկյան Պարտիզան: Լինելով Ամենայն հայոց Կաթողիկոս՝ Դուք ստանձնեցիք Ձեր նախորդների կողմից հաստատված էկոմենիկ հարաբերության բարձր առաքելությունը՝ ջանալով առաջնորդել Հայ Եկեղեցուն այդ կարևոր ճանապարհով: Առկա հարաբերությունները բոլոր քայլեր Եկեղեցիների հետ ամրապնդելու նպատակով և բազմապարկելով Ձեր ուղևորությունները արտասահման՝ 2000 թ. հունվարի 6-ին Դուք Պարտիզան մարտից հեռացնում, նույն տարվա օգոստոսին Միացյալ Նահանգներում մասնակցեցիք նոր հազարամյակի խաղաղությանը նվիրված զազաթաժողովին, որին ներկա էին շուրջ 1000 կրոնականներ: Այնուհետև նոյեմբերին Դուք այցելեցիք Վարդիկան՝ Հովհաննես Պողոս Բ Պապին, որը Ս. Պողոս բազիլիկայում Միասնության համար մարտցվող արարողության վերջում, Ձեզ հանձնեց Նեապոլում պահվող Ս. Գրիգոր Լուսավորչի մատենքները, որոնք պետք է դրվեին Երևանի տաճարում:

Սրբազնազույն հայր, Ձեր նախորդների նման Դուք ակտիվորեն հանձն եք առել մի այնպիսի վիթխարի առաքելություն, որն է թույլացած Եկեղեցու վերակառուցումն ու վերակազմավորումը, մի գործ, որին մասնակից է նաև Ձեր երիտասարդ եղբայրը, նույնպես կուսակրոն քահանա, և ողջ միաբանությունը: Նվիրվելով Հայաստանի սոցիալական, հոգևոր և մանկավարժական վերագարթոնքին, ինչպես նաև հոգևոր հաստատությունների փրկմանն ու վերականգնմանը՝ Դուք նվիրված եք ջանասիրաբար շարունակելու և ամրապնդելու այդ աշխատանքները:

2001 թ. ընթացքում, Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված միջոցառումների ժամանակ, մենք կարողացանք արժևորել այդ վերագարթոնքը: Երևանի նորակառույց աշխարհի հայոց ամենամեծ տաճարում, որն օձեցիք սևալուսնի 23-ին,

Դուք ընդունեցիք քրիստոնյա Եկեղեցիների բազմաթիվ առաքնորդների նրանց թվում էին Ռուս Ուղղափառ Եկեղեցու գահակալ Նորին Սրբություն Ալեքսի Բ Պատրիարքը, Նորին Սրբություն Նովիանենս-Պոդոս Բ Պապը, Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարք Ամենապատիվ Տեր Բարդուղիմեոս Առաջինը:

Թող Ձեր Եկեղեցին նշի 1700-ամյակը Հայաստանի Հանրապետության տասը տարվա անկախության տոնի հետ միասին: Թող Ձեր բարձր հեղինակությունը, Ձեր համբավը, Ձեր հոգաբարձությունը ուղեկից լինեն Ձեր երկրի վերածննդին, որն այսօր տեղ է գտել Եվրասիոնորդում: Նրա առաջին քայլերն արդի դար, իբրև լիարժեք ինքնիշխան ազգ, մեծ հույս ներշնչեցին աշխարհին: Ֆրանսիան ճանաչում է հայ ժողովրդի քաջությունն ու ինքնորոշումը: Նա կրթունակի օգնել Հայաստանին:

«Պարվո լեզեռնի կոմսնդոր» շքանշանը, որը ես մեծ ուրախությամբ հանձնում եմ Ձեզ, Սրբազնագույն Հայր, Ձեր հանդեպ Ֆրանսիայի բարձր գնահատանքի և խորը ակնածանքի վկայությունն է:

Ինձ նաև հաճելի է այս շքանշանին արժանացնել Փարիզի հայոց առաքնորդ, Եվրոպայում Ամենայն Հայոց Կաթողիկոսության պարմիրակ Գյուր արքեպս Լազգաշյանին:

Սրբազան Հայր, ես իմ սրտի խորքում, իբրև թանկ հիշատակ, մտապահում եմ այն պահը, երբ Դուք ինձ հանձնեցիք «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը: Այսօր Ձեզ այս աստիճանը շնորհելը արդյունք է Ձեր արժանիքների և Ֆրանսիայի հայ համայնքին նրկար տարիներ ի վեր Ձեր մարտաշունչ նվիրական ծառայությունների:

Դուք ծնվել եք Սիրիայի Հալեպ քաղաքում: Ընդունվել եք Անթիոխիայի /Լիբանան/ Կիլիկիո Կաթողիկոսարանի դպրեվանք, մի նրկիր, որին Դուք շատ եք կապված: 1954 թ. Դուք դարձել եք սարկավագ, ապա ձեռնադրվել կուսակրոն քահանա այն վանքում, ուր մյուս պարտականությունների հետ մեկտեղ արանձնելով դպրապետի պաշտոնը՝ հեջեցել եք «չարականներ» կոչվող արտասովոր սուրբ նրգերը, որոնց գեղեցկությունը Եվրոպային հայրնի է դարձել: Կոմիտաս վարդապետի միջոցով և ընկալելի է ողջ աշխարհին: 25 տարեկանում Էքմիածնում սրանում եք վարդապետական կոչում և Եվրոպայի Հայրապետական պարմիրակ Տ. Մերովրե արքեպս Մանուկյանը Ձեզ հրավիրում է Փարիզ: 1961 թ. դառնալով Նովիանենս Մկրտիչ Մայր եկեղեցու հոգևոր հովիվ և 1965 թ. ծայրագույն վարդապետ՝ Դուք նշանակվում եք Եվրոպայի Հայրապետական պարմիրակի փոխանորդ՝ չղադարելով հոգևոր դաստիարակություն ծավալել Ռենսի դպրոցում և աստվածաբանություն ուսանել կաթոլիկ ինստիտուտում:

1973 թ. Նորին Սրբություն Վազգեն Ա-ն Էքմիածնում Ձեզ օծում է եպիսկոպոս, իսկ 1984 թ., Տ. Մերովրե արքեպս Մանուկյանի մահից հետո, Դուք միաձայն ընտրվում եք Փարիզի առաքնորդ, ծառայություն, որի մեջ հաստատ

տում է Չեզ Նորին Սրբությունը և դարձնում Եվրոպայի Հայրապետական պապիիական նախքան 1988 թ. արքեպիսկոպոսի շնորհելը:

Սրբազան Հայր, Դուք նվիրումով քանում եք զարգացնել Չեզ Եկեղեցու հարաբերությունները Ֆրանսիայի քրիստոնյա Եկեղեցիների առաջնորդների հետ, որի համար ես ողջունում եմ նրանց ներկայացուցիչներին ի դեպ Դուք դարձել եք այդ Եկեղեցիների հորհրդի անդամ: Դուք զարգացնում եք նաև կապերը մյուս կրոնապետների և մեր երկրի քաղաքական բարձրագույն իշխանությունների հետ: Դուք որպես դիպլոմատ, մասնակցել եք նաև Եկեղեցիների Էկումենիկ հորհրդի նիստերին: Կազմակերպել և համանախագահել եք մի գիտաժողով, որը տեղի է ունեցել 1993 թ. ապրիլին Փարիզում, որին մասնակցել է Նորին Սրբություն Քարեզին Ա-ն: 1995 թ. նա Չեզ նշանակում է Եկեղեցու Փերագույն Նոգևոր հորհրդի անդամ և Չեզ ուղարկում մասնակցելու աշխարհում տեղի ունեցող տարրեր վեհաժողովների և համաժողովների:

Չեզ բոլոր այս գործերում, Սրբազան Հայր, Դուք ցուցաբերել եք լայնահոսություն, մեծ հեղինակություն, եռանդ ու մարդկայնություն՝ մերձեցնելով բոլոր միասնավաճային կրոնների հավատացյալներին, ինչպես նաև տարբեր դավանանքի պարկանող մարդկանց: Չեզ համբավը, մարդկանց նկատմամբ ունեցած Չեզ մեծ և քերն հոգատարությունը Չեզ այսօր արժանացնում են «Պատվո լեգեոն» շքանշանի կոմանդորի աստիճանին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԺԱԿ ՇԻՐԱԿԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՂՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Մեծարգո Նախագահ

Մեզաի հուզիչ է Մեզ համար այս սրահը: Մեծապես զգացված ենք: Մենք թանկ ենք գնահատում Չեզ սիրայի ընդունելությունը և ազնիվ ուշադրությունը Մեր նկատմամբ՝ Ֆրանսիայի հայոց թեմ հովվապետական Մեր անդրանիկ այդի աղիքով:

Եկել ենք 1700-ամյա Մուրը Էքսիաժնի օրհնությունը քերելու մեր զավակներին և իրենց հայրենիքին՝ Ֆրանսիային: Եկել ենք մեր հարգանքը ընծայելու Ֆրանսիայի պետությանը և նրա արժանավոր Նախագահին միասնաբար աղոթելու, որ Աստված Իր խնամքի ներքո պահպանի այս երկիրը և հավաքի կենալու Լույսով անսայթաք առաջնորդի նրա ժողովրդին:

Խորապես շնորհակալ ենք Ֆրանսիայի Հանրապետության «Պատվո լեգեոն» բարձր պարգևը Մեզ շնորհելու համար: Պատվո շքանշանը Չեզ ձեռքից այսօր ընդունում ենք իբրև Ֆրանսիայի Նախագահի և Ֆրանսիական Հանրապետության մեծ գնահատանք այս օրհնյալ երկրում ապրող մեր ժողովրդի զավակների հանդեպ և իբրև արտահայտություն Ֆրանսիա-

საქართველოს მართლმადიდებელი ეკლესიის მეთაურები: მამია კახიძე (მარჯვნივ) და მამია კახიძე (მარჯვნივ)



საქართველოს მართლმადიდებელი ეკლესიის მეთაურები: მამია კახიძე (მარჯვნივ) და მამია კახიძე (მარჯვნივ)

საქართველოს ეკლესიის მეთაურის, მთავარეპისკოპოსის, ილია II-ის, (მარჯვნივ) და
საგარეო ურთიერთობების მინისტრის, გიორგი გარეშვილის (მარჯვნივ) შეხვედრა.



յի և հայրասրանի բարեկամության: Մեկտարակույս, Մեզ շնորհված այս բարձր պարգևը Ֆրանսիայի հանդեպ սիրո ու ծառայության մեջ քաջակերելու է հայ համայնքի բոլոր անդամներին, որոնք ազնիվ ու հարգված քաղաքացիներն են ժողովրդավարական արժեքներով ծնունդ առած Ֆրանսիական հանրապետության և համեմատյանի օժանդակելու են Ձեզ՝ Ֆրանսիայի բարօրությանը, նրա վարկին ևսխանձախնդիր Նախագահիդ:

Մեծարգո Նախագահ, ուրախ ենք, որ այսօր առիթն ունենք վերստին, հանուն համայն հայության, Մեր երախտագիտությունը հայրենելու Ձեզ և Ֆրանսիական պետությանը՝ հայոց Յեղասպանությունը ճանաչելու և օրհնքի լիարժեք ուժով դատապարտելու համար: Մեզ համար խորհրդանշական է, որ հայոց Մեծ Եղեռնը իր անունով՝ «ցեղասպանություն» կոչվեց սահմանադիր այն բեմից, որտեղից հնչել են մարդու և ազգի իրավունքների սկզբունքները ու պաշտպանվել Ֆրանսիացի ժողովրդի զոհողությունների ու արյան գնով՝ այսօր գրանցված արդեն միջազգային իրավունքի կոդեքսում:

Մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում, որ, նույն արժեքները ելակետ ունենալով, Ֆրանսիան հանձինս Ձեզ, քանքն է գործադրում, որպեսզի Ղարաբաղյան խնդիրը գլխի իր արդար ու խաղաղ լուծումը: Արդարն ազատ ապրելու իրավունքը շնորհ է Աստվածապարզն: Երախտապարտ մեր ժողովուրդը իր հոգում ամսնձևակի սիրով միշտ կրելու է Ֆրանսիան և Ֆրանսիացի ժողովրդին, որի սրբում լսելի եղավ Ղարաբաղի հայության ազատագրական պայքարի ձայնը, որի հոգում փազնապով արձագանքեց Սպիտակի երկրաշարժի աղեկության լուրը:

Բյուր շնորհակալություն Ֆրանսիայի մարդասեր ժողովրդին, Ֆրանսիո օրինահարգ, հզոր պետությանը:

Թող Աստծո օրհնությունը անպակաս լինի այս հողից ու նրա հյուրընկալ ժողովրդից: Թող Տիրոջ Աջը միշտ պահապան և ողնկից լինի Ձեզ, մեծարգո Նախագահ: Թող Տերը պահպանի Ֆրանսիայի հայոց և արգասավորի հաջ-Ֆրանսիական դարավոր հարաբերությունները: Թող համայն աշխարհում, բոլոր ժողովուրդների միջև զոդանա սիրո ու նշքայրության ոգին և նրանց համագործակցությունը ծառայի համընդհանուր բարօրությանը:

11 դեկտեմբերի 2001 թ.

Նորին Սրբությունն առավուրյան առաջնորդարանում հանդիպեց ինչպես ֆրանսահայ, այնպես էլ ֆրանսիական լրավամիջոցների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում Նորին Սրբությունը պարասխանեց լրագրողներին եուզող բոլոր հարցերին, ինչպես նաև հանգամանորեն լուսաբանեց հայաստանյայց Եկեղեցու այսօրվա ծավալած գործունեությունը թե՛ սփյուռքում և թե՛ Մայր հայրենիքում, ներկայացրեց

Մայր Եկեղեցու առաջ ծառացած դժվարությունները և դրանց հաղթահարման միջոցները:

Ժամը 13.30-ին Նորին Սրբությունն ուղևորվեց դեպի Օռլիի օդանավակայան. որպեղից մեկնեց Մարսել՝ շարունակելու իր եռօրյա պատվարական այցելությունը Ֆրանսիայի Հարավային շրջանում: Ժամը 15.00-ին Նորին Սրբությունը ժամանեց Մարսել քաղաքի օդանավակայան, ուր հանդիսավորապես ընդունվեց քաղաքի պաշտոնապարհի անձանց և հայ եամայնքային ներկայացուցիչների կողմից՝ օդանավակայանի ընդունելությունների հյուրասրահում: Վեհափառ Հայրապետին հանդիսավորապես դիմավորելու էին եկել նաև բազմաթիվ ներկայացուցիչներ թույր Եկեղեցիներից: Վեհափառ Հայրապետը նշխարեց մատուցված ավանդական հայկական աղն ու հացը և օրհնեց ներկաներին, ապա Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք ասաց Տարոն եպ. Ծերեճյանը, որից հետո Նորին Սրբությունն իր ողջույնի և օրհնության խոսքն ասաց ներկաներին և ճանապարհ ընկավ դեպի Մարսելի Ս. Թարգմանչաց Մայր եկեղեցի և «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո մուտք գործեց Մարսելի Մայր եկեղեցի, ուր ողջույնի խոսք ասաց նախ Տ. Տարոն եպ. Ծերեճյանը, ապա Նորին Սրբությունը, որից հետո Վեհափառ Հայրապետը ծաղկեպսակ գեղեղեց Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված խաչքարին: Այնուհետև Վեհափառ Հայրապետը Մարսելի քաղաքապետարանում հանդիպեց քաղաքապետին, որի ընթացքում նվերներ փոխանակեց և ողջույնի խոսք ասաց նրան և ներկա պաշտոնապար մյուս անձանց:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳՍԵԴԳԻՆ Ե ՄՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍԹԸ ՄԱՐՍԵԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՀԵՏ ՀԱՆՐԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

*Մեծարգո Քաղաքապետ,
Հարգարժան ներկաներ.*

Միտով ողջունում ենք բոլորիդ և Մեր ուրախությունը հայտնում Մարսել քաղաքում գրեկվելու և այսօր ձեզ հետ հանդիպման առիթով:

Մարսելը առանձնակի նշանակություն ունի յուրաքանչյուր հայի համար: Մեր սրտերում այս նավահանգիստն արթնացնում է հիշատակը Մուսա լեռան քաջերի, ովքեր դիմադրեցին քաղաքապետ թուրքական բանակին, մինչև ֆրանսիական լափը երևաց հորիզոնում, դուրս բերեց նրանց շրջափակման օղակից ու փոխադրեց Մարսելի փրկարար նավահանգիստ: Այդ նավին հեղինակն այլ լափեր ևս, որոնք փոխադրեցին 1915 թվականի և հաջորդող տարիների ցեղասպան ջարդերից հազարավոր վերապրողների: Մարսելցիներն ընդունեցին և օգնեցին զաղթական հայերին, ովքեր իրենց հետ բերել էին միայն ապրում ողբերգության վիշտն ու տառապանքը և իրենց կորցրած հարազատների ահավոր նահապետության պատմություններ:

Այսպես լ ապրել իր ժողովրդի վիշտը կհասն Գրիգորիս Պարսբյան և սկսկուպուր՝ հեղինակը «Նայոց գողգոթան» նշանակվող գրքի:

Նայոց պարունության ավելի վաղ էքերում Մարսելի անունը կապվում է 17-րդ դարի հայ ազատագրական պայքարի սկզբնավորության հետ, երբ Ֆրանսիան հռչակվեց իրեն պաշտպան օսմանյան լծի տակ տառապող քրիստոնյաների: Մարսելում հավաքվեցին Նայոց Կաթողիկոսի և Պոլսո Պատրիարքի պատգամավորները, ովքեր պիտի ներկայանային Լյուդովիկոս 14-րդ «Արև թագավորին»՝ նրա փրկարար միջամտությունը ապահովելու հույսով:

1673-ից Մարսելում հաստատվեց Ֆրանսիայում հայկական առաջին տպարանը, որը այսպես իր գործունեության շուրջ 40 տարիների ընթացքում հրատարակեց 30 անուն հայերեն գրքեր:

16-րդ դարից Մարսելում զարգացավ հայ վաճառականների հիմնած գաղութը, որը գորանալով 17-18-րդ դարերում, հովանավորեց ծաղկուն մշակութային կյանք:

Այսօր Ֆրանսիայի հարավի հայ համայնքները, որոնց այցելության ենք եկել, կառուցել են իրենց եկեղեցիները, ունեն դպրոցներ, որոնցով ամուր են պահում իրենց հավատը, հայրենական ավանդները, հավատարմությունը հայկական մշակութին: Մենք եկել ենք մեր Եկեղեցու զավակներին քերելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը և միասին աղոթելու, որ մեր հայրերի Աստված օրհնի Ֆրանսիան՝ իրենց նոր հայրենիքը, հավաքի լույսով առաջնորդելով՝ անվտանգ ու բարօր պահի այս երկիրը ու նրա ժողովրդին:

Հարգարժան ներկաներ, մեր հանդիպման այս առիթով չենք կարող չիշխել, որ ամեն հայի սիրտ խաղաղվեց, երբ արդարության ձայնը խոսեց Ֆրանսիան և համայն աշխարհին հայրենեց, որ երբ մի ողջ ազգ կառավարության կողմից տեղահան է արվում իր հայրերի հողից ու կոտորվում, մարդկության դեմ կատարված այդօրինակ ոճիրը կոչվում է ցեղասպանություն: Նայաստանում և աշխարհի բոլոր երկրներում ապրող յուրաքանչյուր հայի անունով ողջունում ենք այդ բառն արտասանող մարդկային սիրտը և ասում «Ձեր բերանով խոսեց ողջ քաղաքակիրթ աշխարհը և, ինչպես միշտ, Ֆրանսիան է որ բանաձևեց մշակութային խոսքը»:

Պարոն Քաղաքապետ

Նանուն Նայաստանի ժողովրդի և Նայ Առաքելական Եկեղեցու շնորհակալություն ենք հայրենում Ձերդ Վսեմությանն այս առիթի համար, որ ընծայեցիք Մեզ, ընդունելության, որով պատվեցիք, և ազնիվ խոսքերի համար, որոնք լսեցինք Ձեզնից:

Աստծո օրհնությունն անպակաս լինի ձեր ժողովրդից, բարգավաճեց, զարգանաք ու գորանաք ի Տեր: Ամեն:

Ժամը 18.30-ին Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Մարսելի շրջանի եկեղեցիների հոգևոր հովիվների և թաղական խորհուրդների անդամների հետ, որից հետո, մի փոքր դադար առնելով, Նորին Սրբությունը ներկա գտնվեց համագաղութային գեղարվեստական հանդեսին, որը կազմակերպվել էր «Սեն Միշել» կաթոլիկ եկեղեցում: Հանդես եկան Ֆրանսիայում ձևավորված և Հայաստանից գնացած երաժիշտներից կազմված ինքնագործ խմբեր, որոնք իրենց կատարումներով մեծ հիացմունք պատճառեցին բոլոր ներկաներին: Ապա իր օրհնության խոսքն ասաց Նորին Սրբությունը՝ գոծունակություն հայտնելով, որ Հայաստանից այդքան հեռու, բայց և իրենց անձնվոր հայրենասիրությանից մղված, այդ երիտասարդները արվեստի նման կատարումներով վառ են պահում հայադուխների սրտերում հայրենիքի սերն ու կայություն:

12 դեկտեմբերի 2001 թ.

Առավոտյան ժամը 9.00-ին Վեհափառ Հայրապետը մեկնեց Սեն Ռաֆայել և Նիս քաղաքներ: Ժամանելով Սեն Ռաֆայել, «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Հովհաննես եկեղեցի, ուր Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ: Այսպես Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց ներկա հավաքագյալներին:

Նիսում Վեհափառն այցելեց քաղաքապետին, որը հայ ժողովրդի լավ բարեկամներից է և հայ իրականության մեջ առավել հայտնի Սեննապոլս գեղասպանությունը դատապարտող իր նշանավոր ելույթով: Պետք է ասել, որ պատմական արդարությունը վերականգնելու նրա ազնիվ մտառությամբ և անմիջական ջանքերով է նաև, որ Ֆրանսիայի Սեննապոլս ընդունել է հայերի գեղասպանությունը դատապարտող նշանավոր որոշումը: Ձեռամբ Հայոց Հայրապետի կատարվեց քաղաքապետարանի շրջափակում տեղադրված նոր խաչքարի օրհնությունն ու բացումը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՄՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԽԱՉՔԱՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՄԵԻԹՈՎ

«Սա է զէն յաղթութեան հաւարացելոց»:
(Շարական)

Միտնի բարեպաշտ ժողովուրդ.

Այսօր խաչքար ենք օրհնում աղոթքով ու շարականերգությամբ, խաչքար, որ մշակութային ինքնաւրիպ հորինվածքում կնքաւարում է մեր ժողովրդի հավատքը, սերը առ Մարովա: Փառք Երկնավորին, որ ազգային մեր մշակույթը անանց իր արժեքներով, հրաշակներս կոթողներով գովքն է հյուսում Բարձրալի Մարծո:

Միտնի հավատաւոր նղբայրներ և քույրեր

Այսօր քարեղեն զեղեցկահյուս այս խաչի օրհնությամբ վերստին հոյակուն ենք Տերունի հաջր որպես մեր փրկության սուրբ նշան:

Մենք նրջանկությունն ենք ունեցել կալարելու խաչքարի օրհնության արարողություններ տարբեր երկրներում՝ Միացյալ Նահանգներում, Ռուսաստանում, Ավստրիայում, և ամենուր ունեցել ենք մեծագույն շնորհանքի զգացում, թե ևս մի խաչ է հատնել մարդկանց հայացքի առջև, որը հիշեցնում է Քրիստոսի ու Նրա Փրկչական առաքելության մասին:

Այսօր Մեզ համար քացառիկ ուրախություն է, որ մեր ժողովրդի հավաքով հոգի առած խաչքար է զեղեղվում Ֆրանսիո օրհնյալ հողում, մի երկրում, ուր այնքան ստրեր ու հոգիներ են ուրախակից ու վշտակից եղել մեր ժողովրդին՝ մեր ցնծության ու տխրության օրերին, երկիր, որի քաղաքացին լինելու բարձր կոչումը արժանապատվորեն ու հպարտությամբ են կրում բազմահազար մեր հայ զավակներ: Օրհնում ենք այս խաչքարը, որպեսզի օրհնության նոր աղբյուր դառնա Ֆրանսիայի և ֆրանսախայության կյանքում, քանզի հավատում ենք, որ մարդկային մեր տկար բարբառի աղոթքով Բարեգութ ու Մարդասերն Աստված Իր երկնային յոթնադիվյա շնորհներն է հեղում քարակներս այս Սուրբ Նշանի վրա:

Ազգին ու Եկեղեցուս կյանքի կարևորագույն իրադարձության՝ Նախապանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության շնորհաբաշխ վերջալույսին, նկեք, սիրելիներ, խաչքարի այս օրհնությամբ վերստին հռչակենք հոգևոր անանց արժեքներին ու նվիրական սրբություններին մեր հավատարմությունը, քանզի խաչը մեր պարմությունն է, մեր անցյալն ու ներկան և գալիքի վստահությունը: Խաչի հեպ անցել ենք բազում նեղությունների ու տառապանքների, ցարդների ու կոտորածների միջով, սակայն Սուրբ Խաչի զորությամբ երբեք չենք վհարվել, և չի լքել մեզ հատնելու կամքը, ապրելու սերը: Արդ, մեր կենսագրությունը վկան է խաչի ու մեր ժողովրդի անբաժանելիության: Եվ այսօր, որպես ազգ ու Եկեղեցի, հրավիրված ենք հոգևոր զարթոնքով, հոգու արիության նոր սխրանքներով և համազգային միասնականության նոր վկայությամբ նշանավորելու Նայոց Մեծ Դարձի 1700-ամյա հոբելյանը, քանզի խաչի խորհուրդը միասնականության խորհուրդ է, խաչի խորհուրդը ներայրության ու մարդասիրության խորհուրդ է: Խաչի խորհուրդը ազատությունն ինքն է՝ մերժելու չարը, ընկրելու բարին: Եվ մեզ «քա լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...» (Գաղ. Ե 14):

Թող Մարդասերն Աստված Իր ամենահաղթ Սուրբ Խաչի զորությամբ պսի-պսիպանի Առաքելական մեր Եկեղեցին, մեր աշխարհացրիվ զավակաց ու մեր հայրենին: Թող ցկյաևս մեր հոգիներում կենդանի մնա Նախության շունչը, և մենք ամենեւրան ծուկր խոնարհեցնենք ի նրկապագություն Նշանին Տիրոջ, որ «է զէն յաղթութեան հաւաքացելոց»:

Թող այս նորահասարակ խաչքարը, որպես հայ և ֆրանսիացի ժողովուրդների հավերժ եղբայրության ուխտի խորհրդանիշ, թնադարում Ամենափրկիչ Սուրբ Խաչի զորությանը օրհնություն խառնի Ֆրանսիայի հյուրընկալ, հինավուրց ու ավանդաշատ հողին:

«Մեր Աստուծոյ հոյեցի ընդ մեզ եւ ամենահեռան ամէն»:

Այսօրեւից Հայրապետական շքախումբը մեկնեց Նիս: Ժամը 12.45-ին Նորին Սրբությունն իր շքախմբով մուտք գործեց Նիսի Ս. Աստվածածին եկեղեցի, ուր օրհնեց ներկա մեծաթիվ հավատացյալներին: Այա Վեհափառն առաջնորդվեց քաղաքի «Պարսամյան» համալիր: Նորին Սրբությանը այստեղ ծաղկեփնջերով դիմավորեցին նախակրթարանի սաները և «Ամեն հայի սրտից բխած» Հայրապետական մաղթանքի ենցունների ներքո առաջնորդվեցին համալիր: Այստեղ Նորին Սրբությանը մարմնիկ զրույցներ ունեցավ հայրենիքից հեռու, բաց հայրենյաց սերը սրտերում վառ պահած այս մանուկների հետ: Հորդորեց նրանց, որ դառնան հայրենիքին արժանի զավակներ, ապրեն Մայր Աթոռի օրհնությունը միշտ իրենց սրտերում, ինչպես նաև օրհնեց մանկավարժներին՝ հորդորելով, որ անասան մնան իրենց հայրենակներ և օրհնաբեր դժվարին այս առաքելության մեջ:

Ժամը 15.00-ին Վեհափառ Հայրապետին ընդունեց քաղաքապետ պրն Ժան Փեքան և ողջունեց Նորին Սրբության այցելությունը Նիս քաղաք: Այնուհետև Վեհափառն ուղղվեց դեպի Նիս քաղաքի Նոթր Դամ եկեղեցի, ուր տեղի ունեցավ միասնական էկումենիկ աղոթք՝ քայր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ համարելով: Այս առիթով Նիս էր եկել նաև Մոնակոյի եպիսկոպոս Ժոզեֆ-Նարի Մարդուն: Նորին Սրբությունն այստեղ օրհնեց եկեղեցում տեղադրվելիք նոր հայկական խաչքարը, որը հետպայու մշտապես կանգուն պիտի մնա Նոթր Դամի եկեղեցում՝ ի վկայություն Հայոց Հայրապետի այցելության և երկու քայր Եկեղեցիների բարեկամության: Վեհափառը նվերներ փոխանակեց Նիսի եպիսկոպոս Ժան Բոնֆիսի հետ, որից հետո իր ողջույնի խոսքն ուղղեց ներկաներին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ՉԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՓԱՐԻՋԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Միտնի եղբայր ի Զրիստոս, Կարդինալ Ժան Մարի Լուսթիժեր, եկեղեցական եղբայրներ, սիրելի բարեպաշտ հավատացյալներ

Մենք օրհնում ենք մեր հանդիպման ու միասնական աղոթքի այս պահը Փարիզի պահապան Սուրբ Աստվածամորը նվիրված ոգեղեն այս Տաճարում և ի հարկիս այս սրբության, ի տեղվորս փառաբանության, հրեշտակաց ընակարանիս և մարդկանց այս քաղաքանիս՝ բարձրացնում ենք հայ հավատացյալի խնկարույր աղոթքը Տիրամոր մեծարման և բարեխոսության հայցը առ ամենօրինակ Սրբոսին:

«Աստուածածին անհարսնացեալ
 Յերկրէ յերկինս հարս ընծայեալ,
 Յորժամ ծագիս լուսոյ նման,
 ԶՍիւսիսի սքանչելեան,
 Յայնժամ մաղթեա ընդ մեր զնոյն
 Փրկել զմեզ յահեղ բոցոյն
 Նամաղաւիլ ընդ արդարոց
 Երգել զփառս ընդ երկնայնոցն»:

Այսօր շարաք երեկոյան մենք միասնաբար բարեխոսությունն ենք խնդրում Սուրբ Կոյսի, ում անեղծ շուրթերով մարդկությունը փակց իր համաձայնությունը՝ կանգնելու փրկության ճանապարհին՝ «թող քո խոսքի համաձայն լինի ինձ»։ Մենք բարեխոսությունն ենք խնդրում Տիրամոր, ով սրբի ներքո կրեց Լույսն Աշխարհի ու սրբի վրա՝ յոթ վերքերը Սիւսիսի Որդու խաչելության, ով մայրական զթառառ իր սիրով միշտ բարեխոս է Տիրոջ մոտ ու Նաբության Լույս է հայցում ողջ մարդկության համար։

Շարաք երեկոյան հայ ընդհանրությունը հնավանդ գեղեցիկ սովորություն ունեն հավաքվել սեղանների շուրջ ընթերցել, մոմ վառել, խունկ ծխել սրբապարկների առջև, հիշել նախնիներին և նրանց հավատքի խորքում՝ տեսնել Նաբության Լույսը ու միաբերան երգել։

«Եկեալքս ի միտանել արեգական, տեսաք զլոյս երեկոյի,
 Օրհնեմք զՆայր եւ զՈրդի եւ զՍուրբ Նոգին Ամէն»:

Միեւնի բարեպաշտ եղբայրներ և քույրեր

Նայոց ամեն եկեղեցու Ավագ խորանի կենտրոնում փայլում է Աստվածամոր սուրբ պարկերը՝ մանուկ Ռուսուով, ձեռքին Ավետարանը՝ Լույսը Աշխարհի։ Այդ սրբանկարի առջև Նորին Սրբություն Նոմի Սրբազան Բահանայապետի, Ողղափառ Եկեղեցիների Ամենապատիվ Պապիարքների հետ Երևանի նորակառույց Մայր եկեղեցում, որ Նաղթականաբն է Նայոց Մեծ Դարձի 1700-ամյակի, օրհնեցինք Նայաստան աշխարհը ու հավատացյալ մեր ժողովրդին։

Այսօր, սիրելիներ Մեր, մեծ ուրախություն է Մեզ համար Փարիզի Սուրբ Աստվածամոր Մայր Տաճարի մեջ հոգևոր Մեր եղբոր՝ Կարդինալ Ժան Մարի Լուսթիժերի հետ նայել շարաք երեկոյան լույսին, նայել Աստվածամոր արձանին և օրհնաբանել Սուրբ Երրորդության անունը, օրհնություն հայցել Ֆրանսիայի հողին և նրա աստվածասեր ժողովրդին։

Եկել ենք Սուրբգրային Արարար լնտան փեշերին տաքածվող հետափոր Նայաստանից և բերել ենք ձեզ օրհնություն Ս Էջմիածնից, որը կառուցված է համաձայն տեսիլքի հավաքի մեր հոր՝ առաջին Կաթողիկոս Սուրբ Գրի-

գոր Լուսավորիչ: Նա տեսավ Միածին Արարարի զաշտից վեր, որ լուսնի մեջ իջնում էր երկնից: Զրիստոս Վաղարշապատ հնագույն մայրաքաղաքի կենտրոնում, արքայական պալատի դիմաց, ոսկե մուրճով ցույց տվեց այն տեղը, ուր 301 թվականից մինչ օրս կանգնած է հայ հոգու Սրբություն Սրբոց: Հայոց նորադարձ արքան, արքունիքն ու ժողովուրդը այն կառուցեցին Արարարի քնդված քարերով ու կոնցեցին Էջմիածին՝ Միածնի Իրման վայր: Դարեր են անցել, Հայաստանը տեսել է և՛ փառքի օրեր, և՛ ապերազում, սակայն անասան է արսեն, քրիստոնեական հավատը, որն առաքինը աշխարհում հոգակեց պետական կրոն ու դարձավ քրիստոնեության անխոտորակ պարզարև Արևելքի առաջնականը: Մահվան գութն առնել անգամ, ցեղասպանության վշտի մեջ մեր ժողովուրդը չտրացավ Զրիստոսին: Չուրացանք Զրիստոսին նաև անհավատության մամլիսի ներքո, երբ հոգևորականներ աքսորվեցին ու նահապետվեցին, եկեղեցիները լեցին հավատքի փոխարեն քարոզվեցին անաստվածության անհույս ու անգոր գաղափարներ: Զրիստոս փարիսյված մնաց մեր ժողովրդի սրտի մեջ, ինչպես զավակը մոր որովայնում: Խոնարհված թե փակված՝ եկեղեցիները մնացին մեր հավատքի մայրը, և ժողովուրդը մնաց հավատարիմ իր ուխտավայրերին, մինչև ազատություն ստացավ քայլերու ուխտավորի ճանապարհներով:

Տասը տարեկան է հայոց նորանկախ պետությունը, և չնայած դժվարին օրեր է ապրում, բայց քաղաքներում ու գյուղերում վերանորոգվում են եկեղեցիները, կառուցվում նորերը: Մեր ժողովուրդը ուխտել է կառուցել իր ազատ երկրներ, կառուցել իր երկիրը, նոր շուքով բարձրացնել աշխարհում վանքերն ու տաճարները, կառուցել Զրիստոսի Հարության Լույսով Աստվածաբնակ իր հոգու Տաճարը: Հարության հավատով ենք ապրել ու աշխարհում, Հարության հույսով նահապետություն հանձն առել, Հարության գործունեություն է մեր կյանքի ճանապարհը: Աղոթենք միասին, որ ամեն շաբաթի հաջորդի Հարության լուսավոր կիրակին և բոլոր ազգերը, ովքեր ճաշակեցին բռնության, հալածանքի և մարտիրոսության դառնություն, տեսնեն կյանքի ու հավատքի առավորը:

Միռնիկ հավատացյալներ

2001 թվականին մեր ժողովուրդը տոնախմբում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-րդ տարեդարձը: Այսօր միութարված և ուրախ հոգով ենք անդրադառնում, որ Առաքելական մեր Եկեղեցուն խնդակից եղան մեր եղբայրները: Տոնախմբություններին մասնակցեցին Արևելյան Եկեղեցիների Պատրիարքները, Ուղղափառ Եկեղեցիների պետերը, Բողոքական Եկեղեցիների ներկայացուցիչները: Հայաստան, Մուրթ Էջմիածին այցելեց նաև Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան Զահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապ՝ իբրև առաքին գահակալ Մուրթ Պետրոսի Աթոռի, որ այցելում է Մուրթ Եղեղնու և Բարդուղիմեոս ա-

ուսթյալների և ատաքելապատիվ Մուրթ Գրիգոր Լուսավորչի Աթոռ: Մենք բոլորի հետ ադոքեցիներ առ Աստված, որ եղբայրական սերը գործի քրիստոնեական բոլոր Եկեղեցիների և բոլոր կրոնների միջև, որպեսզի հավատը դառնա մարդը մարդուն միացնող, մարդը մարդով զորացնող հոգևոր ուժը, որպեսզի լո՛ւն պատերազմները, և թագավորի Աստծո Աջը ամենայն երկրի վրա:

Հայաստան այցելած քրիստոնեական Եկեղեցիների պետերի ու ներկայացուցիչների հետ գլխի խոնարհեցիներ Հայոց Եղևոնի մեկ ու կես միլիոն հայ նահապետների հուշարձանի առջև, ծաղկեփնջեր դրեցինք անմար կրակի շուրջ և ադոքեցիներ առ Աստված, որ ոչ մի ժողովուրդ չկրի ցեղասպանության վիշտ և վիրավորանք, որ չկրկնվեն երբեք Ամերիկայում վերջերս բազում անմեղ մարդկանց կյանք խլած ոճրագործությունները:

Այսօր, սիրելի եղբայրներ և քույրեր, երբ մեզ առիթ է ընծայվել խոսք ուղղելու ձեզ Փարիզի Մայր Տաճարի բեմից, խղճի պարտքն ենք նկատում մեկ անգամ ևս հանուն մեր ժողովրդի նրախաբազիություն հայրենի Ֆրանսիայի պետությանն ու նրա ժողովրդին, որ դառնազին այն օրերին ապաստան փնջին եղևոնից փրկվածներին, իսկ այսօր դառապարտեցին այդ իրողությունը օրենքի լիարժեք ուժով: Մեր նրախաբազիությունն ենք բերում Կաթոլիկ Եկեղեցուն, Սրբազան Պապին, ով անցնող դարասկզբին Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի դեմ իրականացված ոճիրը կոչեց իր անունով՝ ցեղասպանություն:

Սիրելի հավաքակից եղբայրներ և քույրեր,

85 տարիներ ի վեր ամեն հայ ապաստում էր, որ խոսի արդարությունը և դառապարտիվի հայերի ցեղասպանությունը: Ինչպես շեշտեցիք Փարիզի հայոց Մայր եկեղեցում, Մեզ համար խորհրդանշական է որ արդարության ձայնը խոսեց Ֆրանսերեն, այն բարձր ամբիոնից, որտեղից շուրջ 200 տարի առաջ հնչել են մարդու իրավունքների պահանջները, որոնք ժողովրդավարական արժեքներով վերափոխեցին պարտության ընթացքը ու այսօր ամրագրված են միջազգային օրենքներում: Մենք հավատում ենք, որ հաշտություն փնդրող մարդկությունը պիտի սիրի ճշմարտություն և արդարություն: Մենք հավատում ենք, որ խաղաղություն փնդրող ժողովուրդներն ու պետությունները իրենց քայլերով պիտի հեղափոխեն լինեն մարդու և ազգերի իրավունքների հարգմանը:

Մուրթ Աստվածածինն նվիրված խորախորհուրդ այս տաճարի մեջ, Աստվածամոր հայացքի առջև, այսօր հիշենք խաչին զամված Փրկչի «Ահա մայր քոյ», «Ահա որդի քոյ» խոսքերը՝ ուղղված Իր մորը և սիրեցյալ ատաքային: Դիշենք, որ ատաքելական բոլոր Եկեղեցիների մայրն է խորաններից մեզ նայող Աստվածամայրը, և մենք որդիներն ենք Զրիստոսի մեկ Եկեղեցու: Եսյն հավատն ունենք առ Աստված, եսյն հույսը փրկության,

Աստիճանային և մարդկության առջև նույն պարտականությունն ու պատասխանատվությունը:

Ցեղասպանություն վերապրած, համազգային մկրտության 1700-ամյակով հոգեհորոգ ժողովրդի Հայրապետիս աղոթքն ու մաղթանքն է, որ հավատի լույսով, առ Աստված սիրով և առ մարդիկն եղբայրությամբ նոր ընթացք ունենա երրորդ հազարամյակը՝ բոլոր ժողովուրդներին բերելով բարոյ ու երջանիկ կյանք:

Չեղադրություն, շնորհակալ ենք կիրակնամուտի երեկոյան այս պաշտամունքը միասին կատարելու Ձեր հրավերի համար: Աղոթքով ներշնչուն այս հարկից ներս Սուրբ Տիրամոր խորհրդավոր ներկայությամբ միահյուսենք մեր հայցն առ Աստված, որ նոր դարը աշխարհին բացվի հավատի լույսով, և մարդկությունը ընթանա հաշտության ու խաղաղության առաքելներով: Հայցենք Բարձրյալից, որ զորացնի եղբայրական սերը բրիստոնեական Եկեղեցիների միջև և արգասավորի մեր համագործակցությունը՝ հանուն Տիրավանդ նույն առաքելության:

Թող Տերը իր խնամքի ներքո շեն ու բարգավաճ պահի Ֆրանսիան և նրա բարեպաշտ ժողովուրդը:

«Շնորհք, սեր և խաղաղություն Տեսնե մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ մեզ, ընդ ամենեկեան Ամեն»:

13 դեկտեմբերի 2001 թ.

Առավոտյան ժամը 8.00-ին Վեհափառ Հայրապետն իր շքախմբով վերադարձավ Մարսել և այցելեց նախանգապեղ Ժան Նոել Գերիկին, որի կողմից հանդիսավորապես ընդունվեց նախանգապեղարանում, որտեղից այնուհետև Հայրապետական շքախումբը ուղևորվեց դեպի Լա Միոթայի Ս. Փրկիչ եկեղեցի: Նորին Սրբությունը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի, ուր նրան բարիգալության խոսք ուղղեց Տ. Մակար քեն. Նաճարյանը: Նորին Սրբությունը իր օրհնության խոսքն ասաց ներկա հավաքույցով բազմությանը:

Ժամը 13.30-ին Վեհափառ մասնակցեց ՀԲԸ Միության սրահի մեջ կազմակերպված ընդունելությանը, որից հետո այցելեց Համազգային կրթական կենտրոն, ուր մրերմիկ գրույցներ ունեցավ փոքրիկների հետ, ինչպես նաև խրախուսեց մանկավարժներին՝ հաստատուն մնալ ուսուցչի իրենց կոչման դժվարին, բայց շնորհաբեր գործում:

Ժամը 17.00-ին Վեհափառ Հայրապետն այցելեց Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցի, որտեղից ուղևորվեց դեպի ԺԱՅԻ մշակութային կենտրոն: Այստեղ ֆրանսահայ երիտասարդական միությունը մեծ հաղիություն էր կազմակերպել ի պատիվ Նորին Սրբության: Հայ ազգային երգն ու պարը, որ լավագույն կերպով հանդիսականներին ներկայացրեցին հայազգի փոքրիկները, Նորին Սրբության գնահատականին

արժանացավ: Վեհափառ Հայրապետն օրենքն ներկա հայորդիներին՝ հորդորելով ամուր կառչած մալ հայրենի ավանդույթներին:

Երեկոյան ժամը 19.00-ին Վեհափառ Հայրապետը մասնակցեց միասնական Էկումենիկ աղոթքի, որը փեղի ռոնեցավ Մարտելի Մեն Վիկտոր կաթոլիկ եկեղեցում: Այցելելով եկեղեցի՝ Նորին Սրբությունը գրառում կատարեց եկեղեցու հուշամատյանում, որից հետո կաթոլիկ հոգևոր երգերի և շարականների հնչյունների ներքո մուրք գործեց եկեղեցի, ուր կատարվեց հանդիսավոր արարողություն, որի ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկան նախ Բեռնար արքեպիսկոպոս Պանաֆիոն, ապա Նորին Սրբությունը՝ ի հիշատակ այս այցելության փոխանակելով նվերներ:

14 դեկտեմբերի 2001 թ.

Ժամը 9.00-ին Վեհափառն այցելեց Մարտելի Մեն Ժերոմ թաղամասի Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցի՝ դիմավորվելով ծաղիկներով և ավանդական աղոթացով, որը Նորին Սրբությունը նշխարելով, «Հրաշափառ»-ով մուրք գործեց եկեղեցի, ուր իր օրհնության խոսքով դիմեց ներկա հավաքագյալ ժողովրդին:

Ժամը 10.00-ին Վեհափառ Հայրապետը քաղաքապետարանում հանդիպեց քաղաքապետ Ժան Կոլդ Գոդենին, որը մեծ ընդունելություն էր կազմակերպել ի պատիվ այս այցելության: Ընդունելությունից հետո, որի կազմակերպմանը իր կարևոր նպաստը էր բերել նաև փեղի հայ համայնքը, ժամը 12.00-ին, Նորին Սրբությունն այցելեց Ս. Գևորգ եկեղեցի:

Այնուհետև ժամը 13.30-ին Վեհափառը մասնակցեց Հայ Մշակույթի փանը կազմակերպված ընդունելությանը, շրջեց այս հաստատության դահլիճներում, որի ընթացքում միության նախագահը, որ նաև փեղի թաղապետն է, հանգամանորեն ներկայացրեց իրենց ծավալած գործունեությունը: Այսփեղից Նորին Սրբությունը այցելեց քաղաքի Ս. Հակոբ եկեղեցի, ուր դարձյալ մեծ ուրախությամբ ու ոգևորությամբ ընդունվեց և վերստին իր օրհնությունը բաշխեց ներկաներին և հորդորեց ամուր պահել մեր հայրենի ավանդները:

15 դեկտեմբերի 2001 թ.

Առավոտյան ժամը 9.00-ին Նորին Սրբությունը Հայրապետական Ս. Պատարագ մատուցեց Մարտելի Ս. Թարգմանչաց եկեղեցում, ուր իր օրհնության խոսքն ուղղեց ներկա հավաքագյալ բազմությանը: Ս. Պատարագին ներկա էին ինչպես շրջանում պաշտոնավարող հայ հոգևորականները, այնպես էլ լայն Եկեղեցիների բազմաթիվ ներկայացուցիչներ: Ս. Պատարագից հետո, ժամը 16.30-ին, Նորին Սրբությունը մեկնեց Լիոն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՍԷԸ ՄԱՐՍԵԼԻ ՍՐԱՌՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«... այլ բարիով խաղթիր չարին»:
(Պոմ ժԲ 21)

Միտե՛լի ժողովուրդ հայոց

Մեծ խնդրությամբ է համակված հոգիս Ֆրանսիայի հայ համայնք Հայրապետական Մեր անդրանիկ այցելության և այսօր ձեզ հեղ հանդիպման առիթով: Այս սուրբ եկեղեցուց ներս ձեր ներկայության և Մեզ ուղղված խանդավառ հարգանքների մեջ Մենք զգում ենք աշխարհասփյուռ մեր ժողովրդի միասնականության ոգին՝ իբրև Հայ Առաքելական Եկեղեցի, իբրև Զրիստոսի հավատարիմ ժողովուրդ, որ նորոգյալ է հավատով, քոնսիսլեկով համազգային մկրտության 1700-ամյակը:

Փառք Զեզ, Աստված, որ Զո Սուրբ Անունը տարածեցիր նաև ազգիս վրա և Բեթղեհեմյան լույսից վառված Կանթեղ պարզեցեցիր՝ Լուսավորչի աղոթքով անմար, որպեսզի չկորցնենք ճանապարհը դեպի Զեզ:

Փառք Զեզ, Աստված, որ նոր հազարամյակի արշալույսին նոր հույանք բերեցիր մեզ Հայոց Պետականության վերահաստատմամբ, Արցախի ազատագրությամբ, ի սփյուռս աշխարհի հայոց հոգևոր վերագարթոնքով ու միասնականությամբ:

Միտե՛լինք, առ Աստված փառաբանական այս աղոթքով է որ եկել ենք դեպի ձեզ, Աստվածաբարզ Մայր Հայրենիքի սիրով ու ողորպելով: Միաճանկատույց Սուրբ Էջմիածնի օրհնությունն ենք բերել ձեզ՝ Ֆրանսիայի օրհնյալ հողում ապրող հարազատ զավակներիդ մեր Եկեղեցու: Եկել ենք միախառվելու և գոյեկեղվելու մեր Սուրբ Եկեղեցուն և հայրենական ավանդներին ձեր հավատարմությամբ, եկել ենք ձեզ հեղ, իբրև Հովվապետ և հուր, հայրների մեր ուխտը հաստատելու առ Աստված, որ կնքվեց հայոց համազգային մկրտությամբ և Հայաստանում՝ աշխարհում առաջինը քրիստոնեությունը պետական կրոն հռչակմամբ: Կնքվեց այն հողում, ուր Նոյը, փրկության տապանից դուրս գալուց հեղ, զոհասեղան կանգնեցրեց Աստծուն, ուր Հայկը մեծածն բռնությունը և բռնավորի իշխանությունը Արարադի երկրում այն հողում, որ սուրբ է առաքյալների նահատակությամբ, վկայված՝ քաղում արքոց արյունով, և որից վեր երկինքը բացվեց, ու Տեղը իջավ երկնային զորքերի և Իր Փառքի լուսապսակով: 301 թվականին նորոգվեցին ժամանակները հայ կրակի: Նորոգվեցին պաշտոնական ճանաչում գրած Հայ Առաքելական Եկեղեցու սուրբ խորաններից քարոզվող հավատով, հույսով ու սիրով, ճարը բարիով հաղթելու պատգամով, զորացան սրեղծագործ ուժով, արարման բերկրանքով, լցվեցին կրակի քաղցրությամբ ու սիրով և բազում ավերների ու մահերի միջով միշտ առաջնորդվեցին դեպի

վերածնունդ, դեպի Հարություն: Արդ, ո՞վ է Աստված, որ այսքան շնորհների արժանացրեց մեզ, ո՞վ է Աստված, որ փրկեց մեզ: Այս հարցի պատասխանը մեր նախնիները գիտեին իրենց հոգու և մարքի ողջ համոզումով, իրենց էությունն էր այդ պատասխանի մեջ, որը նրանք իբրև ամենամեծ զանձ ժառանգություն են թողել մեզ: «Ո՞վ է Աստված, որ փրկե զմեզ» (Դանիել 4 15), և բազմադեմ բռնավորների շորթերով պատմությունը հաճախ է առաջադրել մեր ժողովրդին այս հարցը և սրացել նահապետությանը վախճարականացված պատասխանը մեր հայրերի՝ երանելի Գարեգին իշխանի շորթերով 5-րդ դարից հայոց բոլոր ժամանակների համար ավանդված: «Կարդա և կրեսնես, որ Հարություն է առնել»: 301 թվականից ի վեր Հարության այս վստահությանը, Հարուցյալ Բրիսարոսին որդեգրությանը նորոգվեցին հայ կյանքի ժամանակները ու գրվեցին որպես չարք բարիով, մահը կյանքով հաղթելու կենսագրություն: Այսօր իրավացի ենք ասելու, նայիր հայոց պատմությանը և կրեսնես, որ հարություն է առնել:

Միրեյիներ, մեր ժողովրդի քրիստոսանվեր ու կենսահասարար կենսագրության բազում գեղեցիկ էջեր կան գրված Եվրոպայի հնագույն ու հզոր այս երկրի՝ Ֆրանսիայի հողում: Հայրկապես Ֆրանսիայի հարավում դեռ պահպանվում են հիշատակները այն առաջին հայ վաճառականների, ովքեր քաջակեր ֆրանսիական կառավարության վերաբերմունքից, Ֆրանսիայի անդնությունը գորացնելու մեջ նախանձախնդիր այնպիսի գործիչների քաղաքականությունից, ինչպես Կարդինալներ Ռիշելյեն և Մազարինին, Կոլբերը, հասարարվել են այստեղ դարեր առաջ և հովանավորել եկեղեցանվեր ու մշակութասեր հայ կյանքի գորացումը: Մակայն ձեզ հայրեհ է, որ արդի Ֆրանսահայ համայնքը առավելապես ձևավորվել է անցնող դարասկզբին, երբ Ֆրանսիան փրկության ափ դարձավ Եղեռնից փրկված հայերի: Չեզանից շարերը որդիներն ու թոռներն են այդ հայորդիների, ովքեր ամեն ինչ կորցրած, վիշտը սրելերում, բայց կյանքի սիրով, հույսով ու հավարով կրկին ծխեցին ծուխը ծխանի, դիմացան ամենաքաղաքաշահատանների, հոգսերի ու ուրքի կանգնեցին՝ ի վկայություն չարք մերժելու, մահը որևակոխելու հայ ժողովրդի կամքի:

Մենք, որպես Հայրապետ Հայոց, այսօր հարար ու գուրեպիդ ենք ձեզանով, որ լիարժեք և վստահելի ու հարգված քաղաքացիներն եք ավանդույթներով հարուստ այս երկրի՝ ձեր ազնիվ ներդրումը բերելով նրա հասարակական կյանքին, ձեր նվիրումն ու սերը այս երկրին, որը պարզապես հյուրընկալ հարկ չէ ձեզ համար, այլ Հայրենիք: Դուք ունեք երկու Հայրենիք և կրկնակի պատասխանատվություն, բայց ձեր սերը բավարարում է լինելու հարազար գավախը և՛ Ֆրանսիայի, և՛ Հայաստանի: Հայրկապես այսօր, երբ ազատ է Մայր Հայրենիքը և կանգնած է վերափոխումների բարեհույս ճանապարհին, երբ զարգանում են դիվանագիտական հարաբերությունները, բարեկամական համագործակցությունը մեր երկու երկրների:

Այսօր համայն հայությունը հոյս ունի, որ Ֆրանսիայի համահամագործակցության Եվրախորհրդի Միևակի հանձնախումբը կզբնի Արցախի հարցի խաղաղ կարգավորման վերջնական լուծումը: Մեր ժողովուրդը մեծապես խանդավառված է որ Ֆրանսիան պետական բոլոր մակարդակներով վերջերս ճանաչեց հայոց ցեղասպանության իրողությունը՝ ևս մեկ անգամ հաստատելով ժողովրդավար պետության իր հեղինակությունը և ֆրանսիացի ժողովրդի կամքը՝ մերժելու աշխարհում ամեն բռնություն և ոճիր: Մենք հավատում ենք որ Ֆրանսիայի օրինակը դառնալու է բոլոր ժողովուրդների կամքի դրսևորում՝ որպես արդարության հաղթանակ, հանուն մարդկության խաղաղ ու ապահով գալիքի:

Սիբնի հայորդիներ, նոր օր է բացվում աշխարհի վրա, նորոգվում են ժամանակները: Այսօր պետություններն ու ժողովուրդները համախմբվում են, որպեսզի ամենուր կանխվեն բռնությունն ու անարևելությունը, որպեսզի մարդկությունն ընթանա ազատության և իրավունքի հարգման, խաղաղության, բարի կամեցողության ու համագործակցության սարվածահան ճանապարհներով: Լորոգվում են ժամանակները հայոց բարձրիկ հայրենիքում, ուր ազատության ջունքն է թևածում, ուր Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ավազանից հոգևոր նոր ծնունդ են առնում հազարավոր հայորդիներ: Իրական է մեր հայրերի դարավոր երազը, որի համար մեր ժողովրդի հազարավոր երախարարժան զավակներ կյանքով են վճարել: Ժամն է, որ հավաքի լույսը մեր հոգիներում՝ համագլխին միասնությամբ զինվորագրվենք հայրենական կյանքի վերաշինությանը, մեր սիրով ու մեր գործերով ծառայենք հայաստանի և Արցախի վերածննդի ու հզորության առաքելությանը, հայ Եկեղեցու պայծառությանը, ազգային կյանքի վերազարթոնքին:

Մենք գիտենք այն մեծ աջակցության մասին, որ վերջին տասնամյակի դժվարությունների մեջ դուք ցուցաբերել եք հայաստանին ու Արցախին՝ պարտաւարականորեն սատար կանգնելով հայրենաբնակ ձեր եղբայրներին ու ցույրերին: Մենք գիտենք, թե որքան ջանքեր եք ներդրել՝ ֆրանսիական հասարակությանը լիարժեքորեն ներկայացնելու համար անցյալ դարակզբին մեր ժողովրդի հանդեպ Թուրքիայի իրականացրած ցեղասպանության իրողությունը և այն կարևորությունը, որ կունենա այսօր այդ մեծ ոճիրի համընդհանուր դատապարտումը: Մենք գնահատում ենք ազգանվեր ձեր բոլոր ջանքերը, ձեր նախանձախնդրությունն ու արիասիրտ եռանդը և ուրախ ենք որ Բարձրյալի Կամքով այսօր անձամբ կարող ենք տեսնել ձեզ և հայրենի հայրապետական Մեր բարձր գնահատանքը Մարտիկ շրջանի հայոց հոգևոր առաջնորդին, ուխտապահ հոգևորականներին, եկեղեցական կառույցների անդամներին, բարերարներին, կրթական ու մշակութային ասպարեզներում, ազգային կյանքում մասնակցություն բերող հայորդյաց: Մեր օրհնությունը ձեզ ամենքիդ ու ձեր ընտանիքներին:

Մեր մասնավոր գնահատանքն ու երախտագիտությունն ենք հայտնում Մարսելի քաղաքային և նահանգային իշխանություններին մեր ժողովրդի զավակների հանդեպ ունեցած եղբայրական սիրտ համար: Առ Միաձին Փրկիչն Աշխարհի նույն սերն է մեր հոգում, փրկության նույն հույսը, նույն հավատն է գոյություն պարզելում մեր մարջին և ուժ տալիս մեր ձեռքերին: Չարք բարիով հաղթելու նույն պարզամե է ողորդողում կյանքի մեր ընթացքը:

Այսօր աղոթենք միասնաբար և հայցենք, որ Տերը, Ույ Աստվածային Իր Սիրով և որոգեց ժամանակները, մարդկանց ու ժողովուրդների ընթացքը, միշտ մեզ հետ լինի Իր օրհնությամբ: Ապահով ու բարձր պահի Ֆրանսիան ու նրա եղբայրասեր ժողովրդին, հայաստան աշխարհն ու համայն հայոց ի սփյուռս աշխարհի:

Թող Տիրոջ խաղաղությունը սփռվի ամենուր այսօր և միշտ և հավիտյան: Ամեն:

Մարսելից Նորին Սրբությունը իր շքախմբի հետ մեկտեղ հատուկ օգանակով ժամանեց Լիոնի Պրոն օգանակալայան և այնպեղից ուղղվեց դեպի Լիոնի Ս. Հակոբ Մայր եկեղեցի, ուր ընդունվեց ավանդական աղ ու հացով և զանգերի դողանքների ու «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո մութք գործեց եկեղեցի: Այստեղ Նորին Սրբությանը բարիգալստյան ողջույնի խոսք ասաց Նորվան Սրբազանը, որից հետո Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց ներկա հավաքացյալ բազմությանը:

Նորին Սրբության Լիոն այցելության կապակցությամբ հայրապետական շքախմբին էր միացել նաև շրջանում պաշտոնավարող ողջ հոգևորականաց դասը: Եկեղեցուց Նորին Վեհափառությունն առաջնորդվեց «Նարայիս Մանուկյան» սրահ, ուր դիմավորվեց Մարգարյան-Փափազյան և հայկական զույգ դպրոցների աշակերտության կողմից: Այստեղ կազմակերպված հանդիսությունը մեծ ոգևորությամբ ընդունվեց ներկաների կողմից և արժանացավ Վեհափառ Հոր բարձր գնահատանքին, քանզի համեմված էր ազգային ավանդական երգ ու պարով և գնահատելի հարկապես մանուկ հայորդիների կողմից նման գեղարվեստական բարձր կատարման համար:

Երեկոյան ժամը 19.00-ին Վեհափառ Հայրապետը «Սոֆիթել»-ում հանդիպում ունեցավ հայ և ֆրանսիացի լրագրողների հետ:

16 դեկտեմբերի 2001 թ.

Հաջորդ օրը փեղի ունեցավ հայրապետական Ս. Պատարագ, որին ներկա էին Լիոնի Ծիրանավոր արքեպս. Լուի-Մարի Պիյեն, ՀՀ դեսպան Էդուարդ Նալբանդյանը, Կաթոլիկ և Ավետարանական Եկեղեցիների հոգևոր և աշխարհական ներկայացուցիչներ, շրջանային խորհրդի նախագահ փեկին Աննա-Մարի Գամփարինին, Լի-

ոնի և նրա արվարձանների քաղաքացիներն ու նրանց ներկայացուցիչները, ինչպես նաև բազմաթիվ հայ հավատացյալներ: Պատարագի ընթացքում Նորին Սրբությունը եկեղեցուն նվիրեց արծաթյա մի սկյն, իսկ Լիոնի արքեպիսկոպոսին՝ հորեկյանական մի լանդախաչ:

Նույն օրը, երեկոյան ժամը 17.00-ին, Նորին Սրբությունն այցելեց Վալանս և հանդիսավորապես մուտք գործեց քաղաքի Ս. Մահակ հայկական եկեղեցի, ուր տեղի ունեցավ հանդիսավոր ժամերգություն՝ հանդիսապետությամբ Վեհապատ Տայրապետի: Այնուհետև Տայոց Տայրապետը Եղեռնի Նահապակների հուշարձանի մոտ կարարեց հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշարակ 1915 թ. հայ նահապակների, որից հետո Նորին Սրբությունն ընդունվեց քաղաքապետ Պատրիկ Լապունի, իսկ քիչ ուշ՝ նաև Տրամի նահանգապետի կողմից, ապա հանդիպում ունեցավ քաղաքի հայ բնակչության հետ: Այս հանդիպման ընթացքում բարիգալստյան ողջույնի խոսքով հանդես եկան եկեղեցական վարչության արքեմապետը, Տ. Գյուր արքեպս. Նազգաշյանը, ինչպես նաև Ռոն Ալփի շրջանի Տայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Նորվան եպս. Զաքարյանը և Արարադյան Տայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

17 դեկտեմբերի 2001 թ.

Առավոտյան Վեհապատ Տայրապետն իր շքախմբի հետ ընդունվեց Ծիրանավոր արքեպիսկոպոս Լուի-Մարի Պիյեի կողմից՝ նրա նստավայրում: Այս հանդիպմանը ներկա էին նաև քույր Եկեղեցիների Ֆրանսիայի առաջնորդները: Հանդիպման վերջում Նորին Սրբությունն իր շքախմբով առաջնորդվեց Սուրբ Իրենիոս Լուկոնացու անունը կրող եկեղեցին, ուր պառնասկոսում է վաղ քրիստոնեական Եկեղեցու այս Մեծ Տայրապետի դամբարանը, ապա եկեղեցում տեղի ունեցավ միասնական էկումենիկ աղոթք, որին ներկա էին ինչպես Տայ, այնպես էլ բազմաթիվ քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Ժամը 11.00-ին Վեհապատ Տայրապետը հյուրընկալվեց Ռոն Ալփի նահանգապետարանում, ուր մեկ ժամ տևող հանդիպում ունեցավ նահանգապետ Միշել Պեսի հետ: Այս հանդիպմանը հաջորդեց պաշտոնական այցը քաղաքապետարան, ուր Վեհապատին դիմավորեցին քաղաքապետ ծերակուրական Ժերար Գոյոն, թաղային խորհրդի անդամներ և պաշտոնական այլ անձինք: Դիմավորման հանդիսավոր արարողությունից հետո Նորին Սրբությունը առաջնորդվեց քաղաքապետարանի պատվո դահլիճը, ուր հաջորդաբար ներկաներին իրենց խոսքերն ուղղեցին նախ քաղաքապետը, ապա Ամենայն Տայոց Կաթողիկոսը:

Կեսօրից հետո Նորին Սրբությունն ուղևորվեց Մենթ Էթինե՝ Լուսա նահանգի հայ ազգաբնակչությանը ևս բաշխելու հայրապետական իր օրհնությունը: Չյունապատ քաղաքի հայորդիները ծափոջույններով ընդունեցին իրենց Տայրապետին և առաջնորդեցին դեպի տեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ուր Նորին Սրբությանը էին սպասում քույր Եկեղեցիների հոգևորականներ: Այստեղ ներկա էին նաև

Սննթ էթիկենի քաղաքացիները և քաղաքի հայկական բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները:

Այսպիսով Վեհափառ Հայրապետը վերադարձավ Լիոն, ուր նախագահեց Լիոնի եկեղեցական վարչության նիստին, իսկ երեկոյան Վիկտորյանի «Էսփաս թեթ դՕռ»-ի ընդարձակ սրահի մեջ ներկա գտնվեց ժողովրդական ճաշկերույթի, որին մասնակցում էին շուրջ 350 հոգի: Այսպես ողջույնի իրենց խոսքերով հանդես եկան Տ. Նարեկ և Տ. Տարոն եպիսկոպոսները, որից հետո Նորին Սրբությունն իր օրհնության խոսքն ասաց ներկաներին:

Ֆրանսիա և Ռոն Ալփ հովվապետական այցելության վերջին օրը Ամենայն Հայոց Հայրապետը եղավ Տեսինի և Ֆոն դը Շերյուի հայ համայնքներում, այս քաղաքներում նախ այցելելով տեղի հայկական Ս. Աստվածածին և Ս. Նշան եկեղեցիներ, ապա Մեծ Եղեռնի հուշարձաններ, ուր աղոթք մատուցեց անմեղ զոհերի հիշատակին: Նորին Սրբությունն այսպես ևս այցելություններ կատարեց քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներին: Կեսօրին Վեհափառ Հայրապետը հյուրընկալվեց «Լեա և Նապոլեոն Պյուլուջան» հաստատության խնամակալության և ալբեմապետի կողմից: Երեկոյան ժամը 4.00-ին Հայրապետական թափոքը վերադարձավ Լիոնի Ս. Հակոբ եկեղեցի, որին հետևեց այցելությունը «Մարգարյան-Փափագյան» ամենօրյա վարժարան, որտեղից և Վեհափառ Հայրապետն ուղևորվեց դեպի օդանավակայան: Նորին Սրբությանը ճանապարհելու էր եկել նախանգապետական պատվիրակությունը: Օդանավակայանի պարտի դահլիճի մեջ տեղի ունեցավ հրաժեշտի հատուկ արարողություն և ժամը 19.45-ին Նորին Սրբությունը վերադարձավ Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ԱՐԹՈՒՐ ՍՐԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԳՐԵՍՈՒ ՄԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԽ
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐԺԵՂԻՄԿՈՂՈՍ
ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎԱՐԻՉ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ԵՂԲԱՅՐՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ
ՄՊԱՍՄԻՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐԺԵՂԻՄԿՈՂՈՍ
ՄԱՆՈՒԿԵԱՆ,
ՈՐ ՅԵՐՈՒՄԱՂԵՄ, ԻՄՐԱՅԵԼ**

Ձերդ Ամենապարտաւթիւն, սիրելի Պապրիհարք եղբայր,

Համագային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ եղբայրական Մեր ջերմ զգացումներն ու բարեմաղթանքները եւ խնդագին գոհունակութեամբ անդրադառնում Ձեր արդիւնաշատ ծառայութեանը:

Միեւ Վարժուն, ծառայել հարազատ ժողովրդին եւ ամենայն ջանք ներդնել ի փառս Առաքելաւաստաւոր եւ Լուսաւորչապսակ մեր Սուրբ Եկեղեցու, - այս է եղել նուիրեալ եկեղեցականիդ եւ Երուսաղէմի Սուրբ Աթոռի շնորհազարդ գահակալիդ 60-ամեայ սպասաւորութիւնը, որ Բարձրեալի օրհնութեամբ շարունակուում է աննուազ նախանձախնդրութեամբ ու եռանդով: Հովուից մինչ Առաջնորդ ու Երուսաղէմի Սուրբ Աթոռի Պապրիհարք անցած Ձեր ուղին լեցում է եկեղեցաշէն ձեռքբերումներով ու յաջողութիւններով: Հաւաքաւոր Ձեր խօսքը, եեղինակած եկեղեցագիտական գրքերը, Ձեր ձեռքով էիմնուած ու օծուած եկեղեցիները, օրհնուած դպրոցներն ու ազգային այլ հաստատութիւնները արտայայտութիւնն են Ձեր բոլորանուէր ծառա-

յութեան՝ մեր ժողովրդի կեանքից ներս յաւելելով հաւատ, իմացութեան լոյս եւ միաբանութեան սէր: Ձեր նկատմամբ մեր ժողովրդի զաւակների անկեղծ սէրն ու յարգանքը ինչպէս Միացեալ Նահանգներում, այնպէս եւ Երուսաղէմում, լաւագոյն վկայութիւններն են Տիրոջ սպասատրի սուրբ առաքելութեան հանդէպ դրսեւորած Ձեր անձնուիրութեան:

Մենք միշտ սիրով պիտի յիշենք Հայրապետութեան առաջին տարում Մեր անդրանիկ այցը Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւն: Սուրբ Ծննդեան հոգեւորագութիւնն ու խնդութիւնը Մեր հոգում յաւելուեց գինուորեալ միաբանութեան հետ աղօթքով եւ Սրբոց Յակոբեանց Ուխտի ժառանգութեան հետ հաղորդակցութեամբ: Վըստահ ենք, որ դժուարին այս ժամանակներում Ձերդ Ամենապաւտոսութեան ետրուստ փորձառութեան եւ նախանձախնդրութեան շնորհիւ Սուրբ Աթոռը պիտի շարունակի շէնանալ ու պայծառանալ՝ ի մխիթարութիւն բարեպաշտ մեր ողջ ժողովրդի:

Գոհութիւն Աստուծոյ, որ մեր Եկեղեցուն պարգեւել է Ձեզ պէս նուիրեալ սպասատր, ում անսակարկ ծառայութիւնը եւ աննուագ սէրը եանդէպ Մայր Եկեղեցին ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը լաւագոյն օրինակ է երիտասարդ մեր հոգեւորականաց համար:

Սիրելի Պատրիարք եղբայր, Ձեր ծառայութեան ու վաստակի ամենաբարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով ուրախութիւն ունենք շնորհելու Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Ր Բ Գ Ը Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ս Է Ի Ո Ր Ի Չ

պապուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի հայցում ենք, որ Բարին Աստուած եաւապտյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջատուջ երկար գահակալութիւն՝ ի բարօրութիւն Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Մայր Եկեղեցու:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեան. Ամէն»:

Եղբայրական սիրոյ ողջունիւ,

Աղօթակից՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Տուա Կոնդակս ի 23-ն սեպտեմբերի

յամի Տեառն 2001 եւ ի թուին հայոց ՌՆԾ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 84

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2001 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ
Ամենայն Հայոց Հայրապետի Հանդակով

«Մ. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Ջիմ Բոյաջյան (ԱՄՆ Արևելյան թեմ)
Հովհաննես Հեքիմյան (ԱՄՆ Արևելյան թեմ)
Սթիվ Մեքմենյան (ԱՄՆ Արևելյան թեմ)
Էլեն Ուայթ (ԱՄՆ Արևելյան թեմ)

Օրհնության գրի են արժանացել.

Դիվիդ Գիլ (Ավստրալիայի թեմ)
Սուրեն Աբրահամյան (Արարատյան Հայրապետական թեմ)
Էդիկ Բարսեղյան (Սյունյաց թեմ)
Ժիրայր սարկավազ Հովակիմյան (Շվեյցարիայի թեմ)
Դրո Փիլիկյան (ԱՄՆ Արևելյան թեմ):

Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԵՂԱ ՄԱՅԻՆՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (23 դեկտեմբերի 2001 թ.)

«Յանուն Հոր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

*«Առ զյուժ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
զի լուծ նորա քաղցր է և բեռն նորա փոքրոգի»:*

*«Վերցրու մեր Տէր Կիսուս Քրիստոսի լուծը,
որովհետեւ նրա լուծը քաղցր է և բեռը՝ թեթեւ»:
(Չեռնադրության Մաշտոց)*

Սիրելիներ,

Մեր Տէր Կիսուս Քրիստոս հավիտենական պապգամ փվեց իր 12 առաքյալներին և նրանց միջոցով՝ ամբողջ աշխարհին, որ վերցնենք իր լուծը մեր ուսերին, որովհետեւ այն կրելով, դառնում ենք Աստծո զավակ, Աստծո որդեգիր՝ մկրտության ատրք ավագանով. Տիրոջ պարգևած քաղցր ու թեթեւ լուծը մեզ արժանացնում է մեծամեծ շնորհների և հավիտենական երջանկության:

Արդեն մի քառասունը անցավ այն օրից, երբ Մարդաջայ Աստծո խոնարհման և երկյորդ էջքի այս Սուրբ Տաճարում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երեք միաբան սարկավագներու ծնկի եկանք և մեր ուխտը կնքեցինք՝ հավիտենապես ծառայելու հավիտենական Տիրոջը: Չեռնադրող Սրբազանը դրեց իր ձեռքերը երեքիցս յուրաքանչյուրի գլխին, և դուք բոլորդ աղոթեցիք, որ արժանի լինենք քառանայական աստիճանը անարափ պառելու Տիրոջ սեղանի առաջ:

Դուք աղոթեցիք, Աստված փնփնեց, Սուրբ Հոգին Իր մաքրագործող և սրբագործող գործությամբ լցրեց մեզ, Սրբալույս Մյուռտնով դրոշմվեցին և օծվեցին մեր ճակատներն ու ձեռքերը, և Աստված մեզ նոր մարդ դարձրեց, Սուրբ Հոգին նոր անուններով կոչեց մեզ:

«Գոհանամք զքէն Տէր, որ արժանի արարնր կալ ի տեղւոջս փառաբանութեան եւ երգել գնրգս հոգեւորս», «Փառք քեզ Աստուած, փառք քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:

Ահա, սիրելիներ, 40-օրյա պապրապարտութեանից հետո անարժանիս ձեռքերը բարձրանում են պապարագելու և բաշխելու Տիրոջ փրկարար Մարմինն ու Արյունը:

Կրկին փառք և գոհություն մեր Երկնավոր Թագավորի պարգևած մեծ շնորհի համար:

Այս պարեմ առիթով իմ երախտագիտությունն եմ հայտնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրեղին Բ Վեհափառ Հայրապետին, որ օրհնեց ու արարեց իմ և երկու օծակից եղբայրներիս քահանայական ձեռնադրությունն ու օծումը Քրիստոսաւէջ այս Տաճարում:

Իմ որդիական սերը նաև Հունահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանին, որի օծյալ Առաք Աջը բարձրացավ մեզ վրա և եղավ փոխանցող Սուրբ Հոգու շնորհների:

Գևորգյան Հոգևոր Ծննդարանն այն կրթարանն է, որ մեզ հասցրեց այս օրվան: Ուխտի այս անդրանիկ Պատարագով ես աղոթում եմ նախկին և ներկայիս փեսայության, դասախոսական կազմի համար և իմ խոնարհումը բերում նրանց:

Իմ խորին խոնարհումը և երկրպագությունը Միածնաւէջ այս Տաճարին, որտեղ իբրև լուսարար իմ համեստ ծառայությունը կապարեցի, տարիներ, որոնք ինձ համար եղևոր անբացադրելի ուրախության, ցնծության, միտքաբանության շրջան եղան:

Իմ շնորհակալությունը նաև Մայր Աթոռիս Լուսարարապետությանը՝ հանձին լուսարարապետի պաշտոնակատար Հոգեշնորհ Տ. Արտակ վրդ. Տիգրանյանի:

Իմ երախտագիտությունը և սերը նաև Մայր Աթոռի ողջ միաբանությանը, ճեմարանական իմ եղբայրներին և ձեզ, իմ սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, որ մշտապես ձեր արտասովորից աղոթքներով, ձեր բարի խորհուրդներով եղաք մեր կողքին և իբրև հայր, մայր, եղբայր և բույր ծառայեցիք մեզ:

Միրելիներ, աղոթում եմ բոլորիդ համար և խնդրում ձեր աղոթքը ինձ և իմ օծակից եղբայրներին, որ ուխտյալ զավակները մնանք մեր Երկնավոր Տիրոջ և հավատարիմ սպասավորները Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Այսօր մեր հայրերը մեզ համար ճաշու ընթերցվածք են ստանանել Ղուկասի Ավետարանի ԺԸ գլխի 9-14 համարները: Ընթերցված առակն իր բովանդակությամբ շատ պարզ է, հստակ, սակայն իմաստը խորն է, որի մասին երկարաշունչ մեկնություններ են եկեղեցական հայրերը գրել:

Չմոռանա՛նք, որ այս առակը տրամաբանական շարունակությունն է այն առակի, որն ընթերցվում է Մեծ Պահքի 5-րդ կիրակիին, որը մեզ համար հայտնի է «Անիրավ դատավորի և այրի կնոջ առակը» անունով: Երկու առակներն էլ սովորեցնում են ճշմարիտ աղոթքի ճանապարհը. առաջինը փանում է աղոթքի հարապետությանը, առանց որի քրիստոնյան կզուլվի իր եղևոր վիճակից, իսկ երկրորդը՝ աղոթքի կերպին, ձևին:

Փարիսեցին և մաքսավորը մեզ համար, մեր քրիստոնեական ըմբռնմամբ, երկու բացասական, բայց և իրար հակադրվող անձինք են:

Բուն առակը պարամետից առաջ Քրիստոս այն նախաբանով է սկսում, թե առակը վերաբերում է նրանց, ովքեր իրենց իրենցով պարծենում են, թե արդար են և արհամարհում են մյուսներին: Այս խոսքը վստահաբար փարիսեցիներին էր ուղղված, որ օրհնեք պահպանելու ծայրահեղ բծախնդրությունից, նույն օրերը կյանքից անջա-

դեղով և չոր կանոնի վերածելով, ամեն քայլի հեղուկում էին հիատսին և երբեմն էլ հանդիմանում:

Առակում պարկերված փարիսեցին, որն անշուշտ անգիր գիրքեր օրենքը և գուցե օրվա մեծ մասն էլ հենց տաճարում էր անցկացնում, իր աղոթքն է ուղղում առ Աստված՝ ասելով. «Աստված իմ, շնորհակալ եմ քեզանից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպիսիք են հափշտակողները, անիրավներն ու շնացողները և կամ ինչպես այս մաքսավորը, այլ շաբաթը երկու անգամ ծով եմ պահում և տասանորդ եմ տալիս իմ ամբողջ եկամտից»: Ահա մի ամբողջ ինքնագովություն՝ և՛ ինքնարդարացում, և՛ հպարտություն, որը թերևս պետք էր սկզբում կարգել, քանզի սրանից են ծնվում մնացած բոլոր մեղքերը՝ մարդու կորստյան պատճառը դառնալով:

Այն նույն տաճարում, ուր փարիսեցին էր աղոթում, այնտեղ նույն պառնիս աղոթում էր մի մաքսավոր: Շեշտենք, որ հրեաների մեջ մաքսավորները չհարգված և անցանկալի խավ էին համարվում: Մաքսավորը՝ տաճարում կանգնած, լալիս էր, ողբում, ծեծում կուրծքը և միշտ նույն բառերը կրկնում. «Աստուած, քառեա՛ գիս՝ զմեղաւորաւ», (Աստված, ների՛ր ինձ՝ մեղավորիս):

Սա է առակի ամբողջ բովանդակությունը, որ Տերը պարմեց իր աշակերտներին ու այնտեղ հավաքվածներին՝ վերջում ասելով. «Ասում եմ ձեզ, սա՛, այսինքն՝ մաքսավորը, իջավ իր տունը արդարացած, ոչ թե մյուսը, որովհետև ով բարձրացնում է իր անձը, կիսնարեմի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրանա»:

Փարիսեցին բարձրացրեց իրեն մինչև երկինք և ոչինչ չշահեց, ընդհակառակը, նոր մեղքեր ավելացրեց հեերին, թեև նա օրենքի ներկայացուցիչ էր և բոլորից լավ գիրքը՝ ինչ կա այնտեղ գրված, իսկ մաքսավորը, որն իրականության մեջ անխափա՝ ինչպես էր գործում, զոջաց իր արածների համար, սիրտը կտրվեց, ցավ ապրեց, ամաչեց, որովհետև, ինչպես առակում է ասվում, «Կանգնած էր առանձին և չէր իսկ կամենում աչքերը երկինք բարձրացնել»:

Միքելիննի, եթե Բրիստոս ուրիշ առիթով աղոթել սովորեցրեց՝ մեզ ավանդելով «Հայր մեր»-ը՝ Տերունական աղոթքը, ապա վերոհիշյալ առակով մեզ խոնարհաբար, կտրված սրտով, երկյուղած հայացքով աղոթելու իսկական օրինակ տվեց: Թող այնպես չլինի, որ մենք տաճար մտնենք, աղոթենք և փարիսեցուն նմանվենք, մեզ ճանաչելու, մեզ շտկելու, մեր միտքն ու հոգին, էությունը դնալի Տերը դարձնելու փոխարեն սկսենք դադել ու դարավիտել մեր նմանին՝ թե՛ ծանոթին, թե՛ անծանոթին: Աստված է միայն սրտերը բնում, Տիրոջ իրավունքը չհամարձակվենք մեր ձեռքն առնել, այլ թող մաքսավորի նման մշտապես արտասուքով այսպես դիմենք Փրկչին. «Աստուած, քառեա՛ գիս՝ զմեղաւորաւ»:

Մաքսավորն աղոթեց ամոթով ու խոնարհությամբ և դրանով իսկ Աստծուն խոնարհեցրեց դեպի իրեն ու լսելի եղավ: Գողգոթայի բարձունքին Տիրոջ կողքին խաչված ավագակը ևս խոնարհեցրեց իր անձը և ընդամենը մեկ նախադասություն մրմնջաց՝ զոջալով իր ապրած մեղսալից կյանքի համար. «Տն՛ր, հիշի՛ր ինձ, երբ գաւք ըտ Արքայությամբ», որի համար Աստվածորդու Հրաշափառ Հառության օրը՝ նույնիսկ առաքյալներից շատ վաղ, Տիրոջ հետ միասին դրախտ մուտք գործեց:

Այսպիսով՝ ճշմարիտ աղոթքի սրբարար գործությունը, որ մաքսավորներին արդարացնում է, պոռնիկներին ներում, բորոպներին սրբում, մեղքի պարճառով գլորված մեկին կանգնեցնում, դարձնում ճշմարիտ մարդ, քրիստոնյա՝ բառիս բուն իմաստով։

Անդրանիկ այս Պատարագով ես իմ աղոթքն եմ ամսված ուղղում սրբազնասուրբ Նարեկի եկեղեցիական բառերով.

«Թող որ անվաստակ չմնամ փոքր իմ այս աշխարհներից,
Ինչպես զբաջան սերմնացան՝ ամառ, անբերրի հողի,
Թող չպատահի ինձ հանկարծ՝ հրկնել, սակայն չծնել,
Ողբալ՝ չարտասովել, խորհել՝ չհատաչել, ամպել՝ չանձրևել, գնալ՝ չհասնել,
Քեզ ձայնել, և դու ձայնս չլսես, պաղարել, սակայն անտեսված մնալ,
Նողկողել, սակայն դու չողորմես, աղաչել քեզ, բայց չլսես ոչինչ,
Չռեկը մատուցել, բայց չճանաչել, քեզ տեսնել, սակայն ձեռնառնայն դուրս գալ»:

Թող Տերն անդադրում աղոթքի շնորհ պարգևի մեզ՝ քրիստոնյաներիս, և առաքյալների կայլակնառն արտասուքը մեր աղերսներում, որպեսզի խոնարհ սրբով հանապազ փառավորենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Տ. ՆՈՎԱԿԻՄ ԱՐԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՆՈՒՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(23 դեկտեմբերի 2001 թ.)

«Ցանկուն Նոր և Որդույն և Նոգույն Սրբոյ. ամեն»:

«Մի՛ մերձենար այսր. յոյժ զկօշիկս քոյ յոտից քոց,
զի քեզից յորում կաս դոյ ի դմա՝ երկիր սուրբ է»:

(ԵԼԻՑ Գ 5)

Սիրեցյալ հարք և նղբարք.

Բարեպաշտ հավատացյալ ժողովուրդ ի Տեր Աստված մեր Հիսուս Քրիստոս.

Նոգևոր բերկրանքով և ամենադուրմ Աստծո շնորհը հայցելով, կանգնած այս Սուրբ Խորանին, գոեություն ու փառք եմ մատուցում Աստծուն, Որն ինձ արժանի դարձրեց այս շնորհին:

40 օրեր առաջ, Աստծո կամքով, Ամենայն Հայոց Հայրապետի օրենությամբ և Հունսեպոյց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանի ձեռամբ, ծուր դրեցինք և ուխտ կնքեցինք Սուրբ Խորանին՝ շնորհնելով կրոնավորության պատասխանատու կարգը՝ որպես կուսակրոն քահանա և միաբան Ս. Էջմիածնի սուրբ ուխտի:

Այսօր, քառասնօրյա աղոթքի, պահեցողության և խոկման հոգեպարար շրջանն անցկացնելուց հետո, որպես նորընծա արեղա մատուցում ենք մեր անդրանիկ Պատարագը և հաստատում ուխտը՝ Հայոց 1700-ամյա Մեծ Դարձը պատրաստողներից Ս. Նոսիսիմյանց կույսերի այս փաճարում:

Առաջին խոսքը, որ կամենում եմ արտաբերել, աղոթք է՝ ուղղված բազմագույն Աստծուն՝ խնդրելով և աղերսելով. «Աստված իմ, օգնի՛ր ինձ իրականացնել իմ ծրագրած բարի գործերը և սրբությամբ ծառայել Զեզ: Տուր ինձ բոլոր գործերս լավ կատարելու շնորհը, որովհետք մինչ այժմ արածս ոչինչ էր» (Ս. Թովմաս Գեմբացի, Նմանություն Հիսուս Քրիստոսի, Երևան, 1996, էջ 42)

Որդիական խոնարհությամբ կամենում եմ իմ սրվաբուխ հարգանքի զգացմունքներն արտահայտել և երախտագիտությունը հայտնել Արարադյան Նախամեծար Աթոռի՝ Ս. Էջմիածնի գաեակալին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս և Մայրազույն Պատրիարք, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին, Նորին Սրբության հայրական հոգաբարության, հոգևոր դաստիարակության ու խնամքի համար. ինչպես նաև կամենում եմ երախտագիտությունս հայտնել հոգևոր ծնողիս՝ Հունսեպոյց թեմի առաջնորդ Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանին:

Երախտապարտ եմ և աղոթում եմ Սևանի Վազգենյան Դպրանոցի ու Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության համար, իմ միաբանակից եղբայրների և գործընկերների ու ձեզ համար, սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայր, հայցելով ձեր աղոթքները նաև իմ օժակից եղբայրների համար, որոնք այսօր աղոթում և իրենց անդրանիկ Պապարսյան են մատուցում մեր սրբազնասուրբ Եկեղեցում:

«Տեր իմ և Աստուած իմ» (Նովի. Ի 28), օրհնիր մեզ և առաջնորդիր արդարության ճանապարհով՝ Զո սուրբ անվան համար:

Սիրելի հավատացյալներ, կրկնելով Եկեղեցու յոթնալույս վարդապետներից Ս. Կյուրեղ Ալեքսանդրացի Հայրապետի խոսքերը, պիտի դիմեն ձեզ՝ ասելով. «Ովքեր սիրում են ուսուցումը և ժրջան են լսելու, մեկ անգամ ե՛ն ունկնդիր եղեք Սրբազան Խոսքին և բավականություն ու հաճույք ստացեք իմաստության մեղրից, քանի որ «Բարի Խոսքը մեղրի խորիսխ է, և հոգու բժշկություն է՝ նրա քաղցրությունը» (Առաքյալ ԺԶ 24):

Այսօր ընթերցվեց Ս. Ղուկասի Ավետարանից «Փարիսեցու և մաքսավորի» (Ղուկ. ԺԸ 9-14) ձեզ լուրիդ, քաջ հայրնի առակը: Այնպեղ ասվում է. «Երկու մարդ տաճար ելան աղոթքի կանգնելու. մեկը՝ փարիսեցի, մյուսը՝ մաքսավոր: Փարիսեցին կանգնած էր մեկուսի և ինքն իրեն այս աղոթքն էր ասում. «Աստված իմ, շնորհակալ եմ քեզին, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպես հափշտակողները, անիրավներն ու շնացողները և կամ ինչպես այս մաքսավորը, այլ շաբաթը երկու անգամ ծում եմ պահում և տաճարում եմ տալիս իմ ամբողջ եկամտից»: Իսկ մաքսավորը կանգնած էր մեկուսի և չէր իսկ կամենում իր աչքերը երկինք բարձրացնել, այլ ծնծում էր կուրծքը և ասում. «Աստված, ների՛ր ինձ՝ մեղավորիս»: Քրիստոս առաքի վերջում ավելացնում է. «Ասում եմ ձեզ, սա՛ իջավ իր տունն արդարացած, ոչ թե մյուսը. որովհետեւ ով բարձրացնում է իր անձը, կիտնարիվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի»:

Մաքսավորը մեկնեց արդարացված, քանի որ նա չէր հավակնում իր անձը համեմատել ո՛չ փարիսեցիների, ո՛չ հափշտակողների, ո՛չ անիրավների, ո՛չ էլ շնացողների հետ, այլ՝ աղոթում էր՝ ասելով. «Աստված, ների՛ր ինձ՝ մեղավորիս»: Նա կանգնած էր մեկուսի՝ չկամենալով նույնիսկ իր աչքերը վեր բարձրացնել: Կարծես նա աղոթում էր՝ իր վերքերը ցույց տալով դարմանող բժշկին: Նա ծնծում էր կուրծքը, որպեսզի ողորմություն ստանար: Նա հայցում էր Աստուծո գթությանն իր անձի և իր գործերի համար: Նա չէր կամենում իր անձը փառաբանել, քանի որ Մոզոմոն Իմաստունը գրում է. «Թող քեզ քո ընկերը գովի և ոչ թե քո բերանը» (Առաքյալ ԻԷ 2): Դավիթ Մարգարեն սաղմոսում է. «Պաշտպան դիր, Տեր, իմ բերանին, և ամուր դուռ՝ իմ շրթներին, որ սիրտս չհակվի ճարության խոսքին» (Մատթ. ՃՏ 3): Հիսուս ասում է. «Մի՛ դադարեք, որ Աստուծոց չդատվեք» (Ղուկ. Զ 37): Հակոբոս առաքյալն ավելացնում է. «Կա մեկ օրենսդիր և դատավոր» (Հակ. Դ 12):

Հիսուս Քրիստոս, գալով աշխարհ ու մարդկանց հետ ապրելով, բարոզեց և ուսուցանեց և իր սովորեցրածն իր կյանքով վկայեց՝ համեստության և հեզության օրինա-

կը թողնելով: Աստծուն սիրելու և խոնարհությամբ միմյանց ծառայելու պատվիրան տրվեց: Առաքինությամբ ապրելու և պատվիրանները սիրով կատարելու պատգամը թողեց: Երբ Զրիստոսին հարց եե տալիս, թե որն է ամենամեծ պատվիրանը, Փրկիչը պատասխանում է. «Լսիր, Իսրայել, մեր Տեր Աստվածը միակ Տերն է: Եվ դու պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մարդով և քո ամբողջ զորությամբ»: Սա է առաջին պատվիրանը: Եվ երկրորդը նման է սրան. «Դու պիտի սիրես քո ընկերոջը քո անձի պես», չկա ուրիշ պատվիրան ավելի մեծ, քան սրանք» (Մարկ. ԺԲ 29-31, Կոնս Նաև Մատթ. ԻԲ 39-40, Ղուկ. Ժ 27):

Այսօր առավել քան երբևէ այս առակը այժմեական է: Մենք պետք է գիտակցենք, որ անկախ մեր դիրքից և մեր հանգամանքից՝ Աստծո առջև բոլորս հավասար ենք: Մեր պսակն ու ծոմն ընդունելի է Աստծուն, երբ դրանք չեն կատարվում «ի ցույց մարդկանց»: Աստված ընդունում է մեր ողորմությունը, երբ մենք այն չենք տալիս ընթրիքների ժամանակ պատվո փողերը զբաղեցնելու, ժողովարաններում՝ նախապատիվ աթոռներին բազմելու, հրապարակներում՝ ողջույններ առնելու ու մարդկանցից տաքքի՝ ուսուցիչ, կոչվելու (Կոնս Մատթ. ԻԳ 5-7) նպատակով:

Պետք է հստակ ըմբռնենք, որ Աստծուն հաճելի է, երբ հնազանդությամբ և հեզությամբ ենք կատարում մեր պարտականությունները, ողորմությամբ ենք մոտենում մեր եղբայրներին և սիրով ենք լծվում ծառայության գործին: Եկեք, ուրեմն, անդադար աղոթենք (Ա Թեաղ. Ե 17) Պողոս առաքյալի խոսքերի համաձայն: Եվ Հիսուսի խոսքերին հետևելով ասենք. «Անալիտան ծառաներ ենք, ինչ որ պարտավոր էինք անել, այն արեցինք» (Ղուկ. ԺԷ 10): Եվ մաքսավորի հատաչանքներով դիմենք Աստծուն ասելով՝ «Աստված, ներիր ինձ՝ մեղավորիս»:

Թող Աստծո անսահման սերը և ողորմությունը լինի ձեզ բոլորիդ հետ. ամեն:

Տ. ՄԻՔԱՅԵԼ ՔԱՎԱՐԱ ՇԱՂՈՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՄՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(23 դեկտեմբերի 2001 թ.)

«Յամուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ,

Աստուծո ռդարմությամբ և Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ, ձեռամբ Հունահայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան արքեպս. Գալիաքյանի, ցատաաւուն օրեր առաջ Միածնաւէջ խնկյալ Տաճարի սրբազան կամարների ներքո իմ հոգևոր երկու եղբայրների հետ միասին սպասա քահանայական օծում: Ընդունելով Քրիստոսի ծանր և քաղցր լուծը՝ լծվեցի մի վեհ գործի, այն է՝ անմնացորդ կերպով ծառայել հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն:

Այն օրվանից, երբ Գրիգոր Լուսավորիչը հայ ժողովրդին Արածանիի ջրերում մկրտեց Քրիստոսի խաղաղության լույսով, մեր ժողովուրդը մինչև այսօր հավատարիմ մնաց կենդանաչարչար նահատակի պատվիրանին, որին հետևելով է, որ ես՝ համեստ սպասավորս Հայ Առաքելական Ս. Եկեղեցու, ի լուսն այս ցատաաւուն օրերի, մեր հայրերի աստվածաշնորհ տնօրինությամբ, այսօր իմ քահանայական անդրանիկ ուխտի Պատարագն եմ մատուցում այս Սուրբ Տաճարում՝ առ Աստված կանչելով. «Ձքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»:

Այսօր իմ ձեռքերն ու աչքերը վեր են բարձրանում առ Աստված, և գոհությամբ ու փառք եմ մատուցում մեր Տիրոջը, որ Իր անսասնաման գթասրտությամբ և առատ ողորմությամբ ինձ արժանի դարձրեց Իր Ս. Մեղանի սպասավորը լինելու:

Խորհրդավոր այս պահին որդիական ու մկիրական իմ պարտքն եմ համարում շնորհակալության և երախտագիտության խոսք ուղղել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ արժանի գտավ ինձ կոչելու քահանայության իմ երկու ընկերների հետ՝ մկիրվելու մեր Եկեղեցու և ժողովրդի ծառայության սուրբ գործին:

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել հոգևոր ծնողիս՝ Տ. Ոսկան արքեպս. Գալիաքյանին, որ իր հայրական աջով և Սուրբ Մյուտմով մեզ նոր՝ հոգևոր ծնունդ և կյանք պարգևեց:

Ավելի քան մթ տարիներ ես սնվեցի, աճեցի և դաստիարակվեցի Ս. Էջմիածնի հոգեպարար մթնոլորտում, որի համար իմ երախտագիտությունն եմ հայտնում Ս. Էջմիածնի միաբանությանը, թուր այն ազնիվ հոգիներին, որոնք անցած տարիներին ընթացքում մպատեցին իմ հոգևոր ու ստավոր դաստիարակության գործին:

Խորին երախտագիտություն և շնորհակալություն Ա. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Դննարանի նախնին և մերկայիս տեսչությանը, ինչպես նաև դասախոսական

կազմին, որ իրենց անդուլ և նվիրական աշխատանքով իրենց նպաստը բերեցին իմ՝ որպես հազարակամի հոգեկերտման և զարգացման գործում:

Իմ շնորհակալությունը մաս Ա. Գայանն վանքի վանահայր Տ. Ներսես արդ. հալաթյանին ու հոգևոր դասին, որ սիրով ընդառաջեցին փափագիս՝ անդրանիկ և ուխտի Պատարագս մատուցելու այս սուրբ կամարների ներքո:

Ինչպես մաս իմ խորին շնորհակալությունը ձեզ, սիրելի հավատացյալներ, որ այսօր այստեղ եք և ձեր աղոթքներն եք առաջում առ Աստված և աղոթակից լինում ինձ՝ իմ անդրանիկ Պատարագի ընթացքին:

Անավասիկ մի ծանր, քայց միաժամանակ քաղցր պարտականություն է դրվում մեր ուսերին: Յուրաքանչյուրս երբ լծվում ենք մի գործի, պետք է քաջ գիտակցենք, որ այդ գործի հաջողությունն ու փառավորումը մեզանից պահանջում է ամենից առաջ նվիրում: Նվիրվածությամբ է, որ կարող ենք արդյունքի հասնել: Այն ամձը, ով իր ծառայությունը չի սկսում, չի կարող հաջողություն ունենալ: Ուրեմն, նվիրվածությունը յուրաքանչյուր գործում մեծագույն գրավականն է այդ գործի հաջողության: Նույնքան կարևոր է ծառայության ոգին: Իր գործին նվիրված մարդը ամպայմանորեն ծառայասեր կլինի: Ծառայությունը ուրիշ բան չէ, եթե ոչ Աստծո փառքի ի հայտ բերումը մեր անձերի միջից և, ինչպես Ա. Իրենիմս Հայրապետն է ասում՝ Ասածո փառքը կենդանի մարդն է: Ուրեմն նվիրաբերում, ծառայություն և վկայություն, երեք կարևոր գեները այսօրվա յուրաքանչյուր հավատավոր անհատի համար:

Սիրելի հավատացյալներ, աղոթեցեք մեզ համար, որ մենք արժանի սպասավորները լինենք մեր Եկեղեցու, արժանի լինենք մեր ամարժան գլուխները դնելու մի գոհասեղանի վրա, որը սրբազործվել է մեր լուսապսակյալ նահատակ նախահայրերի արյունով:

Շարունակելով խոսքս, ցանկանում եմ անդրադառնալ այսօրվա Պատարագին ընթերցված Դուկասի Ավետարանի ԺԸ 13-ում ասկա՝ փարիսեցու և մաքսավորի առակին, որից իբրև բնաբան վերցրել ենք «Աստուած, քառեա՛ զիս՝ զմեղաւորս» (Աստված, ներիր ինձ՝ մեղավորին) խոսքերը:

Հիսուս Բրիստոս մի առակ պատմեց, որով ցանկացավ խրատել և հանդիմանել բոլոր նրանց, ովքեր պարծենում են և իրենցից բացի բոլորին ամարգում և ամարժան համարում:

Առակն ընթերցելիս առաջին հայացքից թվում է, թե Աստված գոհ պիտի լիներ օրինապահ փարիսեցուց և երես պիտի դարձներ գողացող մաքսավորից: Սակայն այլ կերպ է մեկնաբանում Հիսուս առակը և ասում, որ Աստծո առաջ մաքսավորն արդարացավ և, թողություն ստանալով, դուրս եկավ տաճարից՝ ներված և սրբված, իսկ փարիսեցին ոչ միայն չսրբվեց, այլև կրկնակի մեղք վերցրեց իր վրա և տաճարից դուրս եկավ ավելի մեղավոր դարձած:

Այստեղ շեշտը պետք է դնենք աղոթքի բովանդակության վրա, աղոթքում հայտնված հոգու դրսևորման մեջ: Փարիսեցին պարծենում էր իր արդարությամբ, պարծենում էր իր բարեպաշտությամբ և բարերարությամբ, որովհետև տասանորդ էր տալիս, սակայն այս բոլորով հանդերձ, ինքն իր մեջ սեր չուներ: Առանց սիրո թե՛

բարեպաշտությունը և թե՛ բարերարությունը ունայն են: Այդ սիրտ չգոյություն պատճառով փարիսեցին իր հոգում սպանեց իր կողքին կանգնած և արտասովալից աղոթող մաքսավորին: Սա եղբայրաստասիրություն էր: Եթե նա սեր չունենար, խիղճ և սրտացավություն ունենար, ապա իր կեղծ բարեպաշտությամբ չէր համդիմանի մաքսավորին:

Սիրելի բանբասաշառ ժողովուրդ, այս առակում հիշվում են երկու անձներ՝ երկու իրարամերժ նկարագրերով: Քրիստոս այս առակով ցույց է տալիս աղոթքի հոգին և եւթյունը: Մեզանից պահանջվում է, որ աղոթքներում մենք զուսպ լինենք, զգուշանանք մեր անձերը արդար նկատելուց: Մաքսավորը վերադարձավ աղոթարացած և ներված, իսկ փարիսեցին՝ ոչ, որովհետև վստահ էր, թե ինքն արդար է և չէր ակնկալում Աստծո ռդոքությունը, որը մաքու ստանում է՝ ի պատասխան հավատո և արտասովալից աղոթքի: Որովհետև Աստված չի նայում աղոթողի ոչ պաշտոնին, ոչ աստիճանին և ոչ էլ աղոթքի երկարությանը, այլ նայում է աղոթողի սրտին: Հաճախ աղոթեցեք, սիրելի հավատացյալներ, և դրանով իսկ կմխիթարվեք, որովհետև ոչ մի բան չի կարող համեմատության մեջ դրվել այն հոգեպարար երանության հետ, որը տալիս է մեզ աղոթքը: Անկեղծ աղոթքը մաքուր սրտի և հոգու վերացումն է դեպի Աստված, Աստծո հետ ներքին զրույցը, ինչպես ասում է Նարեկացին՝ «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ», այսինքն՝ սրտի խորքերից խոսք Աստծո հետ:

Սիրելի հավատացյալներ, մենք ևս միացնենք մեր աղոթքները այժմ առ Աստված ու մեկս մյուսին ցանկանք խաղաղություն: Այսօրվա Պատարագի խորհուրդը թող բոլորիս հոգիների և գիտակցության մեջ իրապես բարությանը ապրելու ուժականությունը պարգևի, արդարությանը հարաբերվելու մարդկանց հետ և միշտ ճշմարտությունը որոնելու ուժը տա մեզ: Առեք ձեզ հետ բարություն, արդարություն և ճշմարտություն, տարեք ձեր տները, որպեսզի Հիսուս Քրիստոսով կյանք ունենաք ի փառս Ամենասուրբ Երրորդության այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

ՊԱՏՄԱՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԾԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Պարմական գիտությունների թեկնածու

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԱՎՈՒՇԵՑԻ

(Մահվան 750-ամյակի առթիվ)

750 տարի առաջ, 1251 թ. մարտի 18-ին, վախճանվեց¹ միջնադարյան հայոց գիտամշակութային, հոգևոր ու հասարակական կյանքի խոշորագույն գործիչներից մեկը՝ Վանական վարդապետ Տավուշեցին:

Նա ծնվել է 1181 թ.² Տավուշ գավառում³: Բուն ծննդավայրը հայտնի չէ: Պարզ չէ նաև նրա սոցիալական ծագումը: Իր մարմինը խորանաշատի աղքատների գերեզմանոցում ամփոփելու մասին Վանականի պատվիրանը նրա աղքատ խավից սերված լինելու հիմք չէ, այլ ամենայն հավանականությամբ պայմանավորված է աղքատասիրության մասին քրիստոնեական բարոյականության ըմբռնումներով: Սակայն, անվիճելի է, որ Վանականը ծնվել է ուսման հարգն իմացող ընտանիքում, որի օգտին են խոսում Վանականի Պողոս անունով եղբոր քառանա լինելը և վաղ մանկուց նրան ուսման տալը⁴: Թե՛ իր ինքնագիր հիշատակարանում⁵, թե՛ իր աշակերտների աշխատություններում, թե՛ խորանաշատի վիժագրերում և թե՛ այնտեղ գրչագրված բոլոր ձեռագրերի հիշատակարաններում ու Հայսմավուրքներում Վանական վարդապետը հիշատակվում է միմիայն այդ ժամանակ տարածված Վանական անվամբ: Սակայն, հետագա շրջանի հայ մատենագրության մեջ Վանական վարդապետը համառորեն կոչվել է Հովհաննես, իսկ բուն անունը վերածվել է մականվան: Ավելին, «Նոր հայկազյան քառարանի» հեղինակները նրա Վանական անձնանունը մականուն դիտելով ստուգաբանել են «որպես Վանահայր. հայր Վանից. արքայ»⁶: Ինչպես ճիշտ նշել է Մ. Արեղյանը, պատճառը Վանական վարդապետին Հովհաննես վարդապետ Տավուշեցու հետ շփոթելն է⁷: Դրա հիմքում ընկած է նրանց վարդապետ և տավուշեցի լինելը, ինչպես նաև Մխիթար Գոշի հետ

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 347-348:

² Մատուլի ջառհանյի Անեցւոյ հաւաքմութե ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ. 1893, էջ 150, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 7433, Մամր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հտ. I, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 346:

³ Մատենադարան, ձեռ. № 7433, ք. 263 և այլն:

⁴ Նույն տեղում, ք. 263:

⁵ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 203:

⁶ Նոր քաղցիրը հայկազեան լեզուի, հտ. երկրորդ, Վենետիկ, 1837, էջ 781:

⁷ Մանուկ Արեղյան, Երկեր. Բ. Դ, Երևան, 1970, էջ 293:

ունեցած առնչությունները: Բաճն այն է, որ Մխիթար Գոշը Հովհաննես Տավուշեցու սաճն էր⁸ և վաճական վարդապետի ուսուցիչը:

Զնայած վաճականի մախմական կրթավայրի հարցում աղյուսների տարա-
սիտվելուն⁹, նրանց համադրումից պարզվում է, որ մա սկզբնական կրթությունը
ստացել է իր Պողոս անունով եղբոր մոտ և քահանայական գիտելիքներ ձեռք բերե-
լուց հետո՝ 20-ամյա հասակում, այսինքն 1201 թ., օծվել քահանա: Այնուհետև ուսու-
մըն անմիջապես շարունակել է Նոր Գետիկի վարդապետարանում՝ աշակերտելով
Մխիթար Գոշին: «Միտքն ծնունդական և առատաբան»¹⁰ վաճականն ուսումնառու-
թյան տարիներին դրսևորում է մաև իրեն բնորոշ անխոնջ աշխատասիրություն,
դառնալով Մխիթար Գոշի սիրելին և նրա առավել երևելի երկու սաներից մեկը¹¹:
Այս առումով ուշագրավ է, որ Մխիթար Գոշը նրան մասնակից է դարձրել Լոռիի
(1204 թ.) և Ամիի (1205 թ.) քաղաքական ենթատեքստ ունեցող եկեղեցական հայտ-
մի ժողովներին, որոնցում արծարծվեցին Հայ եկեղեցու դավանությանն ու ծեսին
առնչվող որոշ կարևոր խնդիրներ: Այդ ժողովներում վաճական վարդապետի՝ ան-
տարբեր դիտողի կարգավիճակում չգտնվելը վկայում է հետազայում իր «Պատմու-
թյան» մեջ հանգամանորեն դրանց «զբովանդակ իրս եւ քան եւ զգործ» շարադրե-
լը¹²:

Այս ժողովներից որոշ ժամանակ անց, ամենայն հավանականությամբ 1207/8 թ.,
վաճականը Մխիթար Գոշից վարդապետական աստիճան ստանալով վերադառ-
նում է 1203 թ. վահրամյանների կողմից սելջուկյան լծից ազատագրված հայրենի
Տավուշ գավառ¹³: Ըստ երևույթի՝ մպատակ ունենալով հայրենի Տավուշում վաճը
կառուցել և այնտեղ վարդապետարան հիմնելով ինքնուրույն գիտամանկավարժա-
կան ու հասարակական գործունեություն ծավալել: Իր առջև դրված դժվարին այս
խնդիրն իրագործելիս մա ստացավ վահրամյանների աջակցությունը: Այն, դատե-
լով խորամաշատի Սուրբ Աստվածածին եկեղեցու արձանագրություններից, վաճ-
քի դրսի արևելյան պատին վահրամյանների զինամշանի առկայությունից և վահ-
րամ Գազնեցի իշխանի հետ վաճական վարդապետի սերտ կապերից, աստիճանա-
բար վերածվեց վահրամյանների հովանավորության:

1208/9 թ. վաճական վարդապետն այժմյան ՀՀ Տավուշի մարզի 2իմարի գյու-
ղից 2 կմ արևելք ընկած լեռնալանջին հիմնարկեց հայ ճարտարապետության զե-
ղաշուր հուշարձան խորամաշատի վաճական համալիրը, որի ամբողջացմամբ

⁸ Կիրակոս Գամձակեցի, էջ 208:

⁹ Մատեմադարան, ձեռ. № 7433, թ. 263, Ղ. Ալիշան, Հայապատում, Վեներիկ, 1901, էջ 462, Լ. Տաշ-
յան, Ցուցակ ձեռագրաց Մատեմադարանի՝ Մխիթարեանց ի Վիեմա, Վիեմա, 1895, էջ 39, Գիրք որ
կոչի Յայմատուրք, Կոստանդնուպոլիս, 1730, էջ Գ.ԸԽԸ:

¹⁰ Ղ. Ալիշան, Օշվ. աշխ., էջ 463:

¹¹ Կիրակոս Գամձակեցի, էջ 218:

¹² Նույն տեղում, էջ 178:

¹³ Մանրամասն տես Ա. Ի. Շահմազարյան, վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990, էջ

յութարայն ստիպողական ընդմիջմամբ զբաղվեց իր հետագա բազմազբաղ և արա-
րումներով ու արհավիրքներով լի ամբողջ կյանքի ընթացքում: Խորանաշատի կա-
ռուցմանն ու վանահայրությանը զուգընթաց, ամենայն հավանականությամբ 1210-
ական թվականների վերջին, նա այնտեղ բացեց վարդապետարան՝ բարձրագույն
դպրոց, որի գոյության մասին մեզ հասած հնագույն հիշատակությունը թվագրվում
է 1223-ով¹⁴: Բացի այդ, նա հիմնեց գրչատուն և «ժողովեալ բազում գրեանս»,¹⁵
ստեղծեց հարուստ գրադարան: Սակայն վանական վարդապետին վիճակված չէր
շարունակելու խաղաղ շինարարական ու գիտամանկավարժական գործունեություն-
ը: 1229 թ. կիսակառույց Խորանաշատը դարձավ խորեզմշահ Ջալալ ադ-Դինի
հրոսակախմբերի ավերածությունների զոհը¹⁶, և վանականը ստիպված եղավ իր
աշակերտների հետ ապաստանել Տավուշ բերդի հարավակողմում՝ Լորուտ գյուղի
հանդիպակաց ժայռի կատարին «խլովք աշխատութեամբ փորեալ» քարայրում, որ-
տեղ նաև փոքրիկ եկեղեցի էր շինել¹⁷: Նման պայմաններում անգամ նա շարունա-
կում էր իր շահեկան գործունեությունը և սաներին «աղբիւրաբար արքուցանէր ...
զբանց վարդապետական»¹⁸: 1231 թ. Ջալալ ադ-Դինի անփառունակ անկումից հե-
տո էլ, հավանաբար իր նոր բնակատեղին ավելի ապահով համարելով, նա Խորա-
նաշատ չի վերադառնում: Սակայն 1235 թ. վանականն իր աշակերտների ու նրա
քարայրում ապաստանած խաղաղ բնակչության հետ միասին պաշարվում է մոն-
ղոլական զորքերի կողմից¹⁹: Տեսնելով, որ քարայրում գտնվող մանուկները ծարա-
վից մերժիմաճ են, նա կյանքը վտանգելով, Մարկոս ու Սոսթենես անունով քահա-
նաների ուղեկցությամբ թոթոյան խնդրանքով գնում է մոնղոլ զորապետ Մուլար
Նոյիմի մոտ և նրան իմաստուն խոսքերով դիմելով՝ փրկում քարայրում ապաստա-
նածների կյանքը: Ընչաքաղցությամբ հայտնի մոնղոլները, սակայն, նրան զերում
են՝ քաջ գիտակցելով, որ ժողովուրդը չի հապաղի փրկագնել մեծաբնույթ և բոլորի
կողմից սիրված ու հարգված վանական վարդապետին: Եվ, իսկապես, նրան այդ
դժվարին ժամանակների համար բավականին մեծ գումարով՝ 80 դահեկանով,
փրկագնում են վահրամյանների իշխանության կենտրոն Գագ բերդի բնակիչնե-
րը²⁰:

Դրանից անմիջապես հետո վանական վարդապետը գնում է Խորանաշատ և
համեմատաբար խաղաղ պայմաններում շարունակում վանական համալիրի ամ-
բողջացումն ու գիտամանկավարժական գործունեությունը: 1238 թ. նա գնում է
Տփլիս և ետ բերում մոնղոլներից գերվելիս նրանց խլած երկու արծաթակազմ Ա-

¹⁴ Մատենադարան, ձեռ. № 2101, ք. 204 ա:

¹⁵ Կիրակոս Գանձակեցի, էջ 244:

¹⁶ Նույն տեղում: Հմմտ. Մատենադարան, ձեռ. № 7433, ք. 264:

¹⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 244:

¹⁸ Նույն տեղում, էջ 218-219: Հմմտ. էջ 244:

¹⁹ Նույն տեղում, էջ 244:

²⁰ Կիրակոս Գանձակեցի, էջ 252, Հաւաքումն պատմութեան վարդանայ վարդապետի լուսաբան-
եալ, Վնենտիկ, 1862, էջ 146:

վետարաններից մեկը, որն այն վաճառքի համաձայնագրերից մեծ ծախսով ու ջանքերով փրկագնել էին տեղաբնակ հայերը²¹: 1240 թ. հուլիսի 22-ին՝ վարդապետի տոճին, Ներքին խաչենի իշխան Հասան-Ջալալի հրավերով մասնակցել է Գանձասարի վաճքի տաճարի օծմանը՝ մեծ շուք հաղորդելով այդ սուրբ արարողությանը²²:

Հռոմում գրված հայերեն ձեռագրերի հիշատակարանների քննությանը մվիրված ուշագրավ հոդվածում Պ. Չոբանյանը զարգացրել է այն միտքը, որ վաճառված վարդապետը նախքան Գանձասար գնալը հայ գործիչների մի խմբի հետ 1239 թվականից մինչև 1240 թ. կեսերը եղել է Հռոմում: Նպատակը եղել է, ամենայն հավանականությամբ, 1239 թ. Հռոմի Պապ Գրիգոր IX-ին վրաց Ռուստդան թագուհու և նրա որդի Դավթի գրած մամակը հասցեատիրոջը հասցնելը: Այդ մամակում վրաց զառակալն ու իր որդին ընդդեմ մոնղոլների Պապից օգնություն էին հայցում²³: Պ. Չոբանյանին այդ մտքին են համոզեցրել 1239 և 1240 թթ. Հռոմում գրված երկու ձեռագրերի հիշատակարանները: Դրանցից առաջինում գրիչը՝ վարդան խաչենցի, ի մասնավորի, Աստծո ռդորմությունն է հայցում ումն վաճառվածի և նրա սրախողխող մեջեջյալների համար²⁴: Երկրորդում, որի գրիչը նույն վաճառվածն է, նա ևս Աստծո ռդորմությունն է հայցում աշխարհից սրով հեռացածների, այդ թվում՝ իր ծնողների համար²⁵:

Քանի որ երկու դեպքում էլ խոսքը գրիչ վաճառվածի՝ մոնղոլական սրի զոհը դարձած ծնողների մասին է, նրա և վաճառված վարդապետի նույնացումը հավանական չէ: Բանն այն է, որ 1180 թ. ծնված և իրենից առնվազն 10 տարով մեծ եղբայր ունեցող վաճառվածի ծնողները հագիվ թե այդ ժամանակ (1236 թ.) կենդանի լինեին: Բացի այդ, իրենց ուսուցչի կյանքի բոլոր կարևոր իրադարձություններն արձանագրած աշակերտներն անպայման չէին ամտեսի նրա ծնողների եղբրական մահը, Հռոմ գնալը և մահն բազմազբաղ մարդու՝ ավելի քան մեկ տարի Հայաստանից բացակայելը: Այս փաստարկների հավաստիությունն ապացուցում է նաև գրիչ վաճառվածի և վաճառված վարդապետի²⁶ ձեռագրերի համեմատությունը: Պարզվում է, որ դրանք, չնայած գրչության ոճի նույնությանը (եղկաթագիր), տարբեր մարդկանց ձեռագրեր են: Մեսրոպ Պատրիարք Մութաֆյանն իր հերթին վաճառված վարդապետի «Բան հավատալի» երկին մվիրված շահեկան հոդվածում²⁷ դրա հեղինակային պատկանելության հարցը ճշտելով համոզե՞րձ, վաճառության ուժով վաճառվածի բուն անունը Հովհաննես դիտելով, վարդան վարդապետի «Ժղյանքի»

²¹ Մատենադարան, ձեռ. № 4823, թ. 155 ա:

²² Կիրակոս Գանձակեցի, էջ 270:

²³ Հայաստանը և քրիստոնյա Արևելքը, Երևան, 2000, էջ 127-129:

²⁴ Գարեգին Հովսեփյան, Հիշատակարանը ձեռագրաց. Ամթիլիաս, 1951, էջ 938:

²⁵ Մատենադարան, ձեռ. № 218, թ. 266 ա:

²⁶ Նույն տեղում, ձեռ. № 4823, թ. 155 ա:

²⁷ Օղակաթ, Ստամբուլ, 1995, էջ 156-161:

մի հատվածում²⁸ Ռիշատակված Հովհաննես Տուեցուն՝ Վահրամյանցների իշխանության եպիսկոպոսին և մշահավոր հոգևոր ու հասարակական գործչին, որին քաջ գիտեր ման Կիրակոս Գանձակեցին²⁹, նույնացրել է մրա հետ³⁰։ Դրանցից հետևում է, որ Վանականը Տիրոջ գերեզմանին այցելելու մպատակով եղել է Երուսաղեմում։ Որ իրոք, «Ժղյանքում» խոսքը Հովհաննես Տուեցու և ոչ թե Վանական վարդապետի մասին է, անվիճելի է «Ժղյանքի» այդ հատվածի և Վարդան վարդապետի «Պատմության»՝ Հովհաննես Տուեցուն նվիրված՝ ՂԵ գլխի ակնհայտ նույնությունից³¹։

Չմայած Կիրակոս Գանձակեցին պնդում է, որ Վանականը մինչև Կյանքի վերջը եղել է Խորանաշատի վանահայրը, վանքի 1224 թվակիր վիմագիրը հավաստի վկայում է, որ առնվազն այդ թվականից Խորանաշատի վանահայրն է եղել Վանականի եղբորորդի Պողոսը³², որը մրա հետ բաժանել էր մոնղոլական գերության դառնությունը³³։ Ըստ երևույթին, նկատի ունենալով իր առաջացած տարիքը և Խորանաշատի վանական համալիրի ամբողջացումը հիմնականում ավարտին մոտ լինելը, Վանականն իբրև վանահայր պաշտոնակից էր դարձել եղբորորդուն՝ նպատակ ունենալով հիմնականում նվիրվել ուսուցչապետական, գիտական ու հասարակական գործունեությանը։ Ինչպես արդեն նշվեց, հավանաբար 1210-ական թվականների վերջին Վանականի ստեղծած Խորանաշատի վարդապետարանը շուտով դարձավ ժամանակի հայտնի բարձրագույն կրթօջախներից մեկը, եթե ոչ՝ ամենահեղինակավորը։ Արդեն Ջալալ ադ-Դինի կողմից Խորանաշատի ավերման մախորյակին Վանական վարդապետի և մրա վարդապետարանի հռչակը տարածվել էր ամբողջ Հայաստանում «և ցային առ մա յամենայն կողմանց եւ ուսանէին ... զգիտութեան աստուածեղեն գրոց»³⁴։ Խորանաշատի վարդապետարանի գործունեությունը չընդհատվեց անգամ այն տարիներին, երբ Վանականն ու իր տաներն ապաստանել էին Լորուս գյուղի դիմաց գտնվող ժայռի կատարին փորված քարայրում³⁵։ Վանականի՝ Խորանաշատ վերադառնալուց հետո վարդապետարանի սաները ևս տեղափոխվեցին այնտեղ և անհամեմատ բարենպաստ պայմաններում շարունակեցին ուսումը։ Դրանց թվում էին, օրինակ, Մարկոս և Սոսթենես քահանաները, որոնք ուսումնառությունն ավարտելուց հետո Վանականից վարդապետական աստիճան ստացան³⁶։

²⁸ Նույն տեղում, էջ 150։

²⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 153, 310, 348։

³⁰ Օողակաթ, էջ 159-160։

³¹ Վարդան վարդապետ, էջ 153-155։

³² Արմֆամի Տեղեկագիր, 1940, № 4-5, էջ 177։

³³ Մատենադարան, ձեռ. № 2101, 85բ-86ա։

³⁴ Նույն տեղում, ձեռ. № 7433, ր. 263-264։

³⁵ Կիրակոս Գանձակեցի, էջ 218-219, 244։

³⁶ Նույն տեղում, էջ 245։

Հոչակավոր ուսուցչապետը մի՞նչ և կյանքի վերջը «գրամ վարդապետութեանն ուսուցանէր այնոցիկ, որ ժողովեալ էին ու ճաշամեմայն զաւտաց»³⁷։ Արդյունքում վաճառականը «լցոյց երկիրս աշակերտեալ»³⁸, որոնք «լուսաւորեալք զմային յիւրաքանչիւր տեղիս և լինէին լոյսք աշխարհաց»³⁹։ Իր ուսուցիչ Մխիթար Գոշի մահից հետո «վարդապետական բանի քան զամենեւին, որ ի ժամանակին էին, գերազանցեալ»⁴⁰, «համբաւատեց ի արդիւնական ... առաջ ի փառաւոր վարդապետ»⁴¹, իր սաների համար «փառաւորեալ հայր»⁴² վաճառականի գլխավորած կրթօջախի համբավը համեմատական լինելով իբրև գիտնականի և ուսուցչապետի նրա մեծությամբ, հետագայում քաղմապատկվեց հայ միջնադարյան գիտության ու մշակույթի զանձարանում նրա աշակերտների ներդրած, հիրավի, դժվար գերազնահատելի ավանդով։

Խորանաշատի բարձրագույն դպրոցի ուսումնական գործընթացի և ուսումնական ծրագրի մասին մեզ հասած հաճախ անուղղակի և կցկտոր տեղեկություններին պարզվում է, որ այն առանց վճարի ուսուցմամբ⁴³ պատմագիտական թեքումով վարդապետարան է եղել։ Պարապմունքներն անցկացվել են վաճառականի գավթում,⁴⁴ ուսման տևողությունը եղել է 7-8 տարի։ Վաճառականն աշակերտել ցանկացողները օժտված են եղել համապատասխան անհրաժեշտ գիտելիքներով։ Ընդ որում, նրանք սկզբում ուսանել են մախնական ծրագրով, ապա՝ բարձրագույն։ Խորանաշատի վարդապետարանում դասավանդել են աստվածաբանություն, պատմություն, իմաստասիրություն, մատենագիտություն, կենսաբանություն, անատոմիա, քերականագիտություն, աստղաբաշխություն, տոմարագիտություն, բառագիտություն, բնագիտություն, նրաժշտագիտություն և այլն⁴⁵։

Ինչպես տեսնում ենք, վաճառականը կազմել էր ժամանակի ոգուց բխող ուսումնական ծրագիր։ Այն արտացոլում էր ժամանակի հայ իրականությունում մշակույթի ու գիտության աշխարհիկացման միտումը և առաջադրում ուսուցումը ժողովրդին մոտեցնելու կյանքի կոչվող գաղափարը։ Եվ ամենևին պատահական չէ, որ դասական գրաքարին հրաշալի տիրապետող վաճառականն իր աշխատությունների մեծ մասը, հատկապես ուսուցողականները, շարադրել է ժողովրդին հեշտ ըմբռնելի միջին հայերենով։

Վարդապետարանի պատմագիտական թեքումը պայմանավորված էր ուսուցչապետի հիմնական մախասիրությամբ՝ պատմությամբ։ Ուստի, օրինաչափորեն

³⁷ Երկրմ տեղում, էջ 347։

³⁸ Մամր ժամանակագրություններ, հ. I, էջ 41։

³⁹ Մատենադարան, ձեռ. № 7433, ք. 264։

⁴⁰ Կիրակոս Գանձակեցի, էջ 218։

⁴¹ Գրիգոր Ակմերցի, Պատմութիւն թաթարաց, Երուսաղեմ, 1974, էջ 36։

⁴² Վարդան վարդապետ, էջ 146։

⁴³ Գրիգոր Ակմերցի, էջ 27։ Հմմտ. էջ 28։

⁴⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 347։

⁴⁵ Մատենադարան, ձեռ. № 2101, 2273, 6101։

XIII դ. հայ պատմագրական մտքի երեք խոշոր ներկայացուցիչներ՝ Կիրակոս Գանձակեցի, Վարդան վարդապետն ու Գրիգոր Ակնեքցի, եղել են Վանական վարդապետի սաները: Ընդ որում, նրանցից երկուսի՝ Կիրակոս Գանձակեցու և Վարդան վարդապետի գիտական հետաքրքրությունները միայն պատմությամբ չէ, որ սահմանափակվել են: Դա օրինաչափ էր, քանի որ ուսումնառության տարիներից նրանք խոր ու քաղմակողմանի գիտելիքներ էին ստացել: Խորանաշատի վարդապետարանի սաներից են նաև նշանավոր եկեղեցական գործիչ Առաքելը⁴⁶, Արտազ զավառի հայտնի թեմակալ Հովսեփ եպիսկոպոսը⁴⁷: Խաչենի մշակութային ու քաղաքական կյանքում զգալի դեր խաղացած Մարկոս վարդապետը⁴⁸, իր փիլիսոփայական գիտելիքներով Վահրամ Բարունու հետ համեմատվող Սոսենես վարդապետը⁴⁹, Հայսմավուրդներից մեկի խմբագիր Տեր Իսրայել եպիսկոպոս Խաչենցի⁵⁰, Ստեփաննոս Աղթմարեցի⁵¹, իր եղբորորդի Պողոս քահանան և ազգական Գրիգորիս վարդապետը⁵²:

Հատկանշական է, որ Վանականի աշակերտներն իրենց շատ երկասիրությունների ստեղծմանը ձեռնառնուխ էին լինում նրա հանձնարարությամբ կամ էլ լայնորեն օգտվում էին իրենց ուսուցչի աշխատություններից՝ ձգտելով հավատարիմ մնալ դրանց ոգուն: Այսպես, օրինակ, Տեր Իսրայել եպիսկոպոսը Հայսմավուրդը խմբագրել է Վանական վարդապետի հանձնարարականով⁵³: Վարդան վարդապետը իր «Ժղյաճքը» երկասիրելիս նախօրինակ և սկզբնաղբյուր է դիտել իր ուսուցչի «Հարցմունք և պատասխանիքը»: Բացի այդ, Վարդան վարդապետն ու Կիրակոս Գանձակեցին իրենց պատմությունները շարադրելիս ոչ միայն իբրև սկզբնաղբյուր են ունեցել իրենց վարդապետի պատմությունը⁵⁴, այլև, տարբեր բնույթի պատմողական երկեր շարադրելով հանդերձ, երկուստեք հիմք են ընդունել նրա պատմագրական մեթոդը⁵⁵: Ինչպես գրում է Փ. Անթապյանը, «Վանականի իր աշակերտներին ամփիջական ցուցում է տված եղել՝ հատուկ զբաղվելու «Յայսմաւուրք»-ների, «Տոնապատճառ»-ների, հավանաբար նաև մյուս ծիսական ժողովածուների կազմության ու խմբագրման աշխատանքներով»⁵⁶:

⁴⁶ Մամր ժամանակագրություններ. Բ. 1, էջ 41, Գրիգոր Ակնեքցի, էջ 28:

⁴⁷ Գրիգոր Ակնեքցի, էջ 28, Կիրակոս Գանձակեցի, էջ 31, 328, 330:

⁴⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 245, 359:

⁴⁹ Կոյուն տեղում. էջ 245:

⁵⁰ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն II (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիյան, Երևան, 1995, էջ 369:

⁵¹ Մատենադարան, ձեռ. № 2101, ք. 86 ա, 204 ա:

⁵² Կիրակոս Գանձակեցի, էջ 248, 348:

⁵³ Մատենադարան, ձեռ. № 2189, ք. 211 ա:

⁵⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 8, 178, Վարդան վարդապետ, էջ 146-147:

⁵⁵ Մանրամասն տե՛ս ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2001 թ. № 1, էջ 51:

⁵⁶ Փ. Փ. Անթապյան, Վարդան Արևելի, գիրք Ա. Երևան, 1987, էջ 244:

Վաճակաճի աշակերտները, հետևելով իրենց ուսուցչին, ոչ թե իրական կյանքից կտրված հոգևոր հայրեր կամ գիտամշակութային գործիչներ էին, այլ՝ հասարակական, միաժամանակ՝ իրենց մայր ժողովրդի կյանքով ապրող ու նրա ճակատագրով խորապես մտահոգ մտավորականներ։ Այս առումով հատկանշական է, որ նրա աշակերտներ Տեր Իսրայել եպիսկոպոսին և Կիրակոս Արևելցուն (Գանձակեցուն) է պատկանում համաքրիստոնեական սրբախոսական գրականության նրևելի հուշարձան հայտնվողքային ժողովածուի հայացման, նրան ազգային մկարագիր տալու պատիվը։ Հստ որում, եթե Տեր Իսրայելի խմբագրած Հայսմավորքը ազգապահպանման խնդիր ունեցող, «ազգային կյանքն արտացոլող և պատմաքաղաքական նպատակներ հետապնդող մի ժողովածու»⁵⁷ էր, ապա դրանից հետո Կիրակոս Արևելցու (Գանձակեցու) խմբագրածը հարևան ժողովուրդների հետ «քաղաքական գործակցման ծրագիր էր, որը նպաստելու էր հայ ժողովրդի հարաբերական խաղաղ կյանքի ու պատմական գոյատևման ընթացքին»⁵⁸։

Ժամանակի նշանավոր աշխարհիկ ու հոգևոր գործիչների հետ սերտ ծանոթությունն ու համագործակցությունն իր հերթին Վաճակաճ վարդապետին օգնում էին ոչ միայն ավելի խորն ու մոտիկից հասու լինել պատմական այդ բարդ ու դժվարին ժամանակաշրջանի արագ փոփոխվող իրադարձությունների իմաստին, այլև լինել դրանց կիզակետում և նպաստել դրանց՝ մեր ժողովրդի համար կա՛մ նպատակավոր ընթացք տալուն, կա՛մ էլ փորձություններին դիմագրավելու ուղիներ մատնաճել։ Վաճակաճ վարդապետը սերտ գործնական կապեր է ունեցել ժամանակի նշանավոր քաղաքական գործիչներ Վահրամյան իշխան Վահրամ Գագեցու և Ներքին խաչենի իշխան Հասան-Ջալալի հետ։ Տեր Իսրայելի կողմից Հայսմավորքի խմբագրումը և Վաճակաճ վարդապետի «Հարցմունք և պատասխանիք»-ի շարադրումն այդ կապերի արդյունքն են։ Վաճակաճը Տեր Իսրայելին հրահանգել է Հայսմավորքը խմբագրել Հասան-Ջալալի խնդրանքով⁵⁹, իսկ «Հարցմունք և պատասխանիքը» գրվել է Վահրամ Գագեցու և Հասան-Ջալալի առաջարկով⁶⁰։

Վաճակաճ վարդապետը սերտ կապեր է ունեցել նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցու (1221-1267) և Աղվանից Կաթողիկոս Ներսեսի (1235-1262) հետ։ Ռեա վկայությունն են՝ խորանաշատի 1246 թվակիր երկու արձանագրությունները, որոնց համաձայն Հայոց և Աղվանից եկեղեցիների հովվապետերը միաբանել են խորանաշատի վանքին⁶¹։ Անկասկած, Կոստանդին Բարձրբերդցին խորանաշատին միաբանելու ցանկությունը հայտնել է Վարդան վարդապետի միջոցով 1246 թ. Հայաստանի աշխարհիկ և հոգևոր գործիչներին ստո-

⁵⁷ Մայիս Ավդայրեկյան, «Յայսմատուր» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, Երևան, 1982, էջ 67։

⁵⁸ Նույն տեղում, էջ 68։

⁵⁹ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա (1401-1450 թթ.), էջ 369։

⁶⁰ Մատենադարան, ձեռ. № 2189, ք. 211 ա։

⁶¹ Արմֆամի Տեղեկագիր, 1940, № 4-5, էջ 177։

րագրելու ուղարկած իր «Օրջաքերական թղթին» կից Վանականին գրավոր կամ բանավոր հայտնած ցանկությամբ, կամ գուցե «թղթի» առթիվ Վանականին ուղղած հատուկ նամակում: Որ մա 1246 թ. Հայաստանում չի եղել, կասկածից վեր է. քանի որ պատճառ բերելով ժամանակի «կասկածոտ և սխալական»⁶² լինելը, մա իր թուղթը ուղարկել էր Վարդան վարդապետի միջոցով:

Անհավանական չէ, որ Ներսես Կաթողիկոսն այդ թվականին խորանաշատ է եկել ոչ միայն այդ վանքին միաբանելու, այլև Կոստանդինոպոլիսում «Օրջաքերական թղթին» հավանություն տալու շուրջ կրոնադավաբանական խնդիրներում անառարկելի հեղինակություն Վանական վարդապետի հետ խորհրդակցելու համար: Բայց այն է, որ մոնղոլական տիրապետության ծանր պայմաններում գտնվող Հայաստանում հասարակական կյանքի առողջացմանը և Եկեղեցու ու հոգևորականության սասանվող վարկը վերականգնելուն ու ամրապնդելուն հետամուտ լինելով հանդերձ, այդ փաստաթուղթը իր ԻԴ և ԻԵ կանոններով կաթողիկոսյանը որոշ գիշումներ էր անում⁶³: Այդուհանդերձ, Հայ Առաքելական Եկեղեցու դավանության ու արարողակարգի նվիրյալ պաշտպան⁶⁴ Վանականը ստորագրում է այդ փաստաթղթի տակ: Դա բացատրվում է ոչ միայն հայ հասարակական կյանքն առողջացած և պետականության բացակայության պայմաններում ժողովրդի կազմակերպիչ ու համախմբող ուժի դերը ստանձնած Եկեղեցուն ու հոգևորականությանն իրենց պատշաճ բարձրության վրա տեսնելու Վանականի ցանկությամբ, այլև կաթոլիկ Արևմուտքին արված որոշ գիշումների դիմաց մրանից օգնության ակնկալիքով:

Վանական վարդապետն ու մրա աշակերտները, մասնավորապես Վարդան վարդապետը, Կիրակոս Գանձակեցիին և Հովսեփ Եպիսկոպոսը, այդպես վարվեցին նաև Սուրբ Հոգու թխման վարդապետության շուրջ Հոռմի Ինդեկնտիոս IV Պապի 1251 թ. թղթին հետո ձևակերպված միջառահման պատասխան տալով⁶⁵: Դրանից մի տարի առաջ, 1250 թ., «ուղղիչ ստահակաց եւ խրատիչ անգգամաց, յանդիմանիչ հերձուածողաց եւ դարձուցիչ մեղատրաց»⁶⁶ Վանականը ոչ միայն Դավիթ Մարեցու զխավորած աղանդավորական շարժման մասնակիցներին բանադրանքի ենթարկեց, այլև «գրեաց զիր սաստից եւ մեղադրանաց»⁶⁷ ապացուցելով Հայ Առաքելական Եկեղեցու դավանությանն անհարիր այդ հերձվածության զաղափարական սնանկությունը: Այդ թուղթը, սակայն, չի պահպանվել: Վանականը Հայ Եկեղեցու հավատարիմ զավակն ու պաշտպանը մնաց մինչև վերջին շունչը: Արդեն մահամերձ, մա իր մոտ կանչելով «եղբարսն, քաղցր ու ախորժ բանի մխիթարէր

⁶² Կիրակոս Գանձակեցի, էջ 298:

⁶³ Նույն տեղում էջ 309:

⁶⁴ Պատմության մահաճգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Աիւնեաց. Թիֆլիս, 1910, էջ 462:

⁶⁵ Կիրակոս Գանձակեցի, էջ 320-333. Ռմմտ. Մամր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., Բ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 140:

⁶⁶ Ղ. Ալիշան, Օշվ. աշխ., էջ 463:

⁶⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 326:

զնոսա եւ աղաչէր կալ Քաստատում ի կարգս եւ ի կրօնս ուղղափառութեան եւ աստուածապաշտութեան»⁶⁸:

Վաճակաճի մարմինը հողին հանձնվեց մեծաթիվ սգացող քաղմության, Սարգիս եպիսկոպոսի, բազմաթիվ վարդապետների ու քահանաների մասնակցությամբ: Հաջորդ օրը նրա գերեզմանին այցելելու և հիշատակը հարգելու նպատակով խորանաշատ եկան Ներսես կաթողիկոսն ու Հովհաննես Տուեցի եպիսկոպոսը: Խորանաշատի վաճառարությունը միայնակ շարունակեց Պողոս քահանան, իսկ վարդապետարանի ուսուցչապետությունը ստանձնեց Գրիգորիս վարդապետը⁶⁹, որի օրոք խորանաշատի հռչակավոր կրթօջախի փառքը սկսեց աստիճանաբար խամրել: Դրա պատճառը ոչ միայն պայմանների վատթարացումն էր, այլև այն, որ գիտամանկավարժական ու կազմակերպչական կարողություններով և հրեշակով Գրիգորիսն իր հռչակավոր մախրոդի հետ համեմատվել չէր կարող: Այս առումով միանգամայն ճիշտ է կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը՝ մկատելով, որ «մեծ վարդապետի հմտությունից ու վայելած հռչակից մեծապես կախում ուներ հարկավայն դպրոցի հռչակն ու դիրքը, որ նա դեկավարում էր»⁷⁰:

Խորանաշատի վարդապետարանի փոխարեն մեծ ճանաչում ստացան նրա ծնունդը այն ուսումնագիտական կենտրոնները, որոնցում գործում էին Վաճակաճի աշակերտները: Նրանք «փայլեին գիտությամբ, որպէս զաստեղս» և «խաչանման բաժանեալ աշխարհս արեւելից, լուսաւորեցին կենսարար վարդապետութեամբ», գործով ապացուցելով, որ «համբաւատենչ եւ արդիւնական ... աւագ եւ փառաւոր վարդապետ»⁷¹, «փառաւորեալ հայր»⁷², և «վարդապետական բանի քան զամենեւին, որ ի ժամանակին էին գերազանցեալ»⁷³ Վաճակաճի արժանի սաներն են:

Չնայած դեռևս իր կենդանության օրոք նման գնահատանքի ու մեծարանքի արժանանալուն, առ այսօր Վաճակաճի տարաբնույթ՝ զխավորապես մեկնողական բնույթի մատենագրական ժառանգությունը կարոտ է պատշաճ քննության: Նրա երկասիրությունների զարդը կազմել է առ այսօր կորած համարվող «Պատմություն» աշխատությունը: Այն, ինչպես կարելի է մակաբերել մեզ հասած տեղեկություններից, ընդգրկել է հայոց ամբողջական պատմությունը՝ առավել մանրամասն ներառելով XIII դարի առաջին կեսի իրադարձությունները:

Վաճակաճի պահպանված աշխատություններից ամենաարժեքավորը գիտական պատշաճ քննության և հրատարակության կարոտ «Հարցմունք և պատասխանիք» է: Եթե վախում այդ երկն իր ժամանակի գիտության տարբեր ճյուղերի հանրա-

⁶⁸ Նույն տեղում, էջ 347:

⁶⁹ Նույն տեղում:

⁷⁰ Կարապետ եպիսկոպոս, Մահմեդական լուծը և նրա քրոնության մեղքը ծաղկող հայ վարդապետարանները, էջմիածին, 1913, էջ 10:

⁷¹ Գրիգոր Ավետիքի, էջ 36:

⁷² Վարդան վարդապետ, էջ 146:

⁷³ Կիրակոս Գամառակեցի, էջ 218:

գիտական բառարանը և մտավոր կյանքի անդրադարձը լիցելուց բացի, խորանաշատի վարդապետարանի ուսումնական նախնական ծրագրի համառոտ ամփոփումըն է: Ընդգրկում է բոլոր այն գիտելիքները, որ ուսումնառության նախնական փուլում պարտավոր էին ձեռք բերել Վանականի աշակերտները: Նրա տասնյակ ընդօրինակություններից հնագույնը՝ խորանաշատյանը, թվագրվում է 1255-ով⁷⁴:

Վանականի գիտական ժառանգության մեջ առանձնանում են մեկնողական բնույթի երկերը, որոնցում նա «կենդանացա իր ուսուցչական բեմի վրա: Հավանորեն գրած է ինքն այս երկասիրությունները իր դասախոսությունների առթիվ աշակերտաց ձեռքը համառոտ ուղեցույց մը տալու համար»⁷⁵: Դրանցից ամենածավալունը Հոթի գրքի մեկնությունն է, որը ներառում է քաղաքություններ՝ արված Հիսիքիոսի, Ստեփաննոս Սյունեցու, Դավիթ Քոթայրեցու և ուրիշների երկերից: «Բացատրութիւն աղաթից Ամբակումայ մարգարէի» ուշագրավ գործում Վանականը կատարել է բառական մեկնություններ, բերել հետաքրքիր այլաբանություններ:⁷⁶ Հոթմի Պապ Ինոկենտիոս IV-ի թղթի առթիվ 1251 թ. գրել է «Խրատ դաւանութեան» երկը:⁷⁷ Զգալի արժեք ունեն Տակ «Համեմատութիւն Հին Կտակարանաց ի Նորս», «Տեսութիւն շարականին», «Ուրախացիր պսակ կուսից», «Բան հաւատալի», «Մեկնութիւն սաղմոսին այս ծով մեծ» փոքրածավալ մեկնությունները:

Վանականի երկերից «Պատճառք վասն առաջաւորաց պահոցն» հետաքրքիր է իր պարունակած միջնադարյան գրույցներով: Ամանորին եկեղեցիներում կարդալու համար նախատեսված «Ժաղագս տարեմտին» ճառը⁷⁸ ժողովրդին մատչելի գիտելիքներ է տվել աստղաբաշխության և տոմարագիտության մասին: Անանիա Օիրակացու հետևողությամբ Վանականը ճիշտ է բացատրել արեգակի ու լուսնի խավարումները: Հայկական ամսանունների ստուգաբանման փորձ կատարած այդ ճառում պահպանվել է Տակ Արտավազդ I-ի մասին գրույցի մի տարբերակը: Մեծ մտածողի մեզ հասած երկերի գերակշիռ մասը գործնական նպատակներով գրված լիցելով գրեթե խոսակցական միջին հայերենով՝ այդ շրջանի հայոց լեզվի ուսումնասիրման կարևոր աղբյուր է:

Հայ գիտամշակութային գանձարան Վանական վարդապետի ներդրած պատկառելի ավանդի անբաժան մասն է նրա ստեղծած խորանաշատի գրչության հայտնի դպրոցը: Այնտեղ ստեղծվել են բազմաթիվ մեծարժեք ձեռագրեր, որոնցից երեքը Վանականի գործունեության շրջանից են: Խորանաշատում ընթրինակված ձեռագրերը պարունակում են ոչ միայն Վանականի «Հարցմունք և պատասխանիքի», այլև՝ «Բարոյախոսի» մեզ հասած հնագույն ընդօրինակությունը:⁷⁹ Գրիգոր

⁷⁴ Մատենադարան, ձեռ. № 6106:

⁷⁵ Համազասպ Ոսկյան, Հովհաննես Վանական եւ իւր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 25-26:

⁷⁶ Ըոռացաղ. 1858:

⁷⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 338-344:

⁷⁸ Գիտական նյութերի ժողովածու, № 1, Երևան, 1941:

⁷⁹ Մատենադարան, ձեռ. № 2101:

Նադեկացու «Մատյան հղբերգության»՝ հյուսիսային Հայաստանում հնագույն ընդօրինակությունը ևս կատարվել է խորանաշատում:⁸⁰ Այն մեծապես նպաստել է այդ հանճարեղ քերթության քննական բնագրի պատրաստմանը:

Խորանաշատի հռչակերտ համալիրն իր հերթին վաճառականի ներդրումն է հայ միջնադարյան ճարտարապետության զարգացման ու հարստացման գործում:

Խորանաշատում նաև մանրանկարչությունն էր ծաղկում, որի զարդն է 1224 թ. իշխանուհի վանեճու պատվերով ընդօրինակված Ավետարանը:⁸¹

Հայսմավուրքների համաձայն «ամձավբն չափահասակ, մեծերես եւ փոքրաքիթ, լայնամօրուս եւ փառահեղ»⁸² վաճառական վարդապետը հիրավի մեծ ու փառահեղ է նաև անբասիր կյանքով և գործով: Առանց նրա դժվար է պատկերացնել հայ մշակույթի արծաթե դարը:



⁸⁰ Նույն տեղում, ձեռ. № 1563:

⁸¹ Նույն տեղում, ձեռ. № 4823:

⁸² Ղ. Ալիշան, Եզվ. աշխ., էջ 463:

ՆՎԻՐՎՈՒՄԷ ՄԱՅՐ ԱԹՈՈՒ ՏՊԱՐԱՆԻ

ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 230-ԱՄՅԱԿԻՆ

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՆՈՐԱՀԱՅՏ ՆՅՈՒԹԵՐ ԷԶՄԻԱԾՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ ԱՆՎԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (18-ԲԴ ԴԱՐԻ 80-90-ԱԿԱՆ ԹԹ.)

Հայ մշակույթի և, մասնավորապես, հայկական տպագրության պատմությամբ զբաղվողներին, անտարակույս, կհետաքրքրեն Ղուկաս Կարմեցի Կաթողիկոսի (1780-1799 թթ.) անտիպ մամականու մեջ էջմիածնի Ս. Գրիգոր Լուսավորչի անվան տպարանի գործունեությանը վերաբերող տեղեկությունները: Դրանցից երևում է, որ Կաթողիկոսը մշտապես իր ուշադրության կենտրոնում է ունեցել տպարանը, որի համար ժամանակին ձեռք է բերել տպագրական թուղթ, ցերկեր և զանազան անհրաժեշտ գործիքներ: Իր զառակալության տարիներին մա հրատարակել է մի շարք գրքեր և լրջորեն զբաղվել մրանց տարածման գործով: Ղուկաս Կարմեցին քաջ հասկանում էր գրքի նշանակությունը, և այս ասպարեզում մրա ծավալած գործունեությունը արժանի է ամենաբարձր գնահատականի:

Առաջին գիրքը, որը լույս ընծայվեց Ղուկաս Կարմեցու զառակալության տարիներին, տպարանի հիմնադիր Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի (1763-1780 թթ.) «Գիրք որ կոչի Պարտավճարն» էր (383 էջ): Դրա տպագրությունը սկսվել էր դեռևս 1779 թ., քայք քաղաքական անկայուն պայմանների և Կաթողիկոսի մահվան պատճառով ընդհատվել էր: Ղուկաս Կարմեցին կարգադրում է շարունակել գրքի տպագրությունը: «Եւ Սրբազան Վեհապետս մեր հրամայեաց թարց այլես յապաղման տպեցուցանել: Որ եւ ահա տպագրեցաւ քազմաւ զգուշութեամբ եւ հարազատօրէն ... ի մերում թուականս ՌՄԼԲ (1783), եւ յամսեանն փետրվարի», գրված է գրքի հիշատակարանում: Հետագա տարիներին Ս. Գրիգոր Լուսավորչի տպարանում լույս են ընծայվել ներքոհիշյալ գրքերը՝ «Ատենի ժամագիրքը», 426 էջ (1785 թ.), «Գիրք պատմութեանց Յովսէփոսի Եբրայեցոյ արարեալ յաղագս պատերազմի հրէից ընդ հռովմայեցիս, եւ անքմանն Երուսաղէմի», 496 էջ (1787 թ.), «Սաղմոս Դաւթի: Որ եւ կոչի Սաղմոսարան», 418 էջ (1787 թ.), «Խորհրդատետր սրբազան պատարագի ըստ արարողութեան սրբոյ Եկեղեցոյս Հայաստանեայց», 35 էջ (1788 թ.), «Շարակնոց. երածշտական երգեցմունք հոգեւորականք աստուածայնոց եւ երջանկաց սրբոց վարդապետաց մերոց թարգմանչաց, զկարգաւորութիւնս Եկեղեցոյ վայել-

չացուցանողաց», 895 էջ (1789 թ.): Եվ վերջինը՝ Սիմեոն Երևանցու «Տաղարան փոքրիկ»-ը, 45 էջ (1793 թ.):

Զնայած նամակներում «Ատենի ժամագիրք» կամ ուղղակի «Ատենի» համարված գրքի¹ հիշատակարանում հրատարակության թվականը նշված է 1785-ը՝ «Ահա գտաեցումս Սուրբ Գրոցս թագում զգուշութեամբ աւարտեցաք ի թուականութեանս վերում ՌՄԼԳ (1784), եւ ի Դեկտեմբերի ամսեանս վերջնում» (էջ 425), բայց բոլոր տվյալները կան ասելու, որ տպագրությունն ավարտվել է ավելի ուշ: 1786 թ. հունվարի 7-ին Կ. Պոլսի նվիրակ իսաֆակ վարդապետին Ղուկասը գրել է, որ «Ատենի»-ի տպագրությունը թեպետ քաղաքական վրդովմունքների պատճառով հետաձգվեց, բայց հիմա ավարտվել է. «Այժմ զԳ (3) մեծ պատկերսն տպեմ եւ մեք յայս աւուրսս զվերջաբանութիւնն շինեցուցեալ տպել տալոց եմք»²: Կարելի է կարծել, որ այստեղ «վերջաբանութիւն»-ը նշանակում էր հիշատակարանի վերջին մասը, որտեղ կոչ է արվում հիշելու տպարանի հիմնադիր, հանգուցյալ ջուղայեցի խոջաքանյան Զակիկեց Գրիգոր աղային, գրքի տպագրության մեկնմաս, ջուղայեցի մահտեսի խաչիկ աղային ու այս երկուսի հարազատներին, ինչպես նաև «զկերտողն ճորայօրէն գրոցս, եւ պատկերաց, եւ խորանաց եւ համայն ծաղկանջից», վարպետ Հարություն վաղարշապատցուն, նրա աշակերտ տիրացու խաչատուրին, գրաշար Մաղաքիային, Ալեքսանդր սարկավագին և «գործարանիս» այլ աշխատողներին (էջ 426):

Սա մի մեծադիր (չափսն է 21x28 սմ), մեծ խնամքով տպագրված հատոր է, որն այն ժամանակվա համար, անջուշտ, եղել է խիստ տպավորիչ ու արժեքավոր գիրք, ուստի քարձր գին է ունեցել: Ըստ նամակների մեջ եղած մի քանի հիշատակությունների, այդ գիրքը էջմիածնում վաճառվում էր 7000 դիանով: Շատ թանկ էր, որովհետև այն ժամանակ 10.000 դիանը հավասար էր մեկ թումանի, որով կարելի էր գնել մեկ գոմեշ:

«Ժամագիրք առնենի»-ի պահանջարկը քիչ չէր: Հենց միայն մեկեւեասը՝ խաչիկ աղան, պահանջել էր 40 օրինակ ուղարկել Բասրա և Նոր Ջուղա: Գրքերի մի մասն ուղարկել էր, իսկ մյուսները՝ դեռ ոչ, քանի որ ցրտերի պատճառով «նորատիպքն ուշ չորանան» (նույն տեղում):

«Ատենի»-ի տպագրական աշխատանքներն ավարտվել են հունվարին, իսկ կազմելը ավելի երկար է տևել: Նույն թվականի մայիս ամսին Կ. Պոլսի նվիրակ իսաֆակ վարդապետին կաթողիկոսի գրած նամակում կարդում ենք. «Եւ վասն Ատենում, որ գրեալ էր, ահա կազմեմ, յետ աւուրց յղելոց եմք ի դուրս գալն ի ձեռաց կազմչաց»³: Տպաքանակի մասին ոչինչ չգիտենք, բայց 1786 թ. մայիսի 8-ին նույն

¹ Լրիվ վերնագիրն է՝ «Գիրք ժամակարգութեանց սրբոյ Եկեղեցոյն Հայաստանեայց. եւ կարգաւորութեան տաղմոսացն Դպրոթի Մարգարէի», իսկ երկրորդ տիտղոսաթերթին՝ «Ժամագիրք Ատենի, յորում պարունակիմ երեք գիրք սրբոյ Եկեղեցոյն մերոյ ժամակարգութեանցն»:

² Մաշտոցի ամված Մատենադարան, ձեռ. 4501, էջ 1040:

³ Ձեռ. 4501, էջ 962:

իսաթափ վարդապետին գրած նամակից երևում է, որ արդեն քաղաքացիական օրինակներ էին տալիս. «Իսկ յԱտենայն, թող ի Հնդիկս յղեցեալսն, ԱՃ (100) ես պատրաստեցաք առ ի կազմել եւ յղել ի յարկատու տեղիս, այլ մորիկ ի վերոյ մորիկ պատահեալ, ոչ եղաք ձեռնհաս, եթէ խաղաղութիւն լիցի, յղեոց եմք ի հարկէ...»⁴:

Հարկ է նշել, որ այս տարիներին Էջմիածնի տպարանի հրատարակած բոլոր գրքերի տառերն ու պատկերները (փորագրությունները) կատարել է վաղարշապատցի տիրացու Հարությունը իր աշակերտ տիրացու խաչատուրի հետ: Գրքի սկզբում, երկրորդ տիտղոսաթերթից անմիջապես հետո, ամբողջ էջի վրա նկարներ են, որոնց կատարումը, ամտարակույս, վկայում է նկարչի հասունությանն ու վարպետության մասին: Վաղի էլից մատչանում կատարված մի գրանցումից իմանում ենք, թե ի՞նչ է վճարվել Հարությունը նկարչին այս փորագրության համար. «Տպագիր Յարութիւնին ետուք այս ինչ, մինչ պատկերն Դաիթ մարգարէին նորապէս փորեալ տպեաց եւ ընծայեաց Վեհապետին, Բ (2) գազ և Ա (1) կարմիր ֆիլամանկ չուխայ, Դ (4) գազ ծիրանի շալ, Ա (1) թօփ դուրձի եւ Ա (1) Պաղտատի մորթով ֆիլամանկ գլխակ, ի փետրվարի Ե (5)»⁵:

Այս գրանցումը կատարվել է 1785 թ., իսկ երբ գիրքն ամբողջովին հրատարակվում է, նվերներ են տրվում Հարությունին և մյուս տպագրիչներին՝ տիրացու խաչատուրին, Մաղաքիա գրաշարին, Գևորգ և Աղեքսանդր «տպացան»: Նշվում է, որ «թէպէտ անցեալ թուին ասարտ հասուցին Ատենին, քայց մեք այժմ ետուք, վասն այնորիկ այժմ գրեցաք»⁶:

Տպագրիչների մեջ հիշվում է նաև Եսայի քահանան, որին ևս նվեր է տրվել. «Տէր Եսայուն՝ Ա (1) թօսեայու շալ փիլոն ձգեցաք վասն այն, զի վասն Ատենայն պատկեր տպեցուցեալ էաք՝ ի փետր. 18»⁷: Այս գրանցումը ևս կատարվել է 1786 թ., ուրեմն կարելի է կարծել, որ տպագրական աշխատանքներն ավարտվել էին դեռևս 1785 թ., քայց այդուհանդերձ, գիրքը լիովին ավարտված չէր և լույս տեսավ 1786 թ. սկզբներին:

Երբ գիրքն արդեն տպագրված ու կազմված էր, Ղուկաս Կարնեցին սկսում է մտածել նրա տարածման մասին: 1786 թ. հունիսին Կ. Պոլսի և այլ քաղաքների հայությանն ուղղած կոնդակում նա նշում է, թե ավարտել է նորատիպ «Ատենին», «գորատ տպեցաւ ընդ նոր Տօնացուցին եւ ի Նոցունց իրաքանչիւր եկեղեցւոյն իրեանց զմի մի հատ յղելն, եւ յաղագս այնց զպատուէր գրելն, զի ընդունիցեն սիրով»⁸: Հաջորդ նամակում, որ հասցեագրված է «առ իշխանապետսն եւ իշխանսն համայն», նա հորդորում է այդ գիրքն «ընդունիցեն սիրով եւ առ մոյն ընդունեցումն հա-

⁴ Նույն տեղում, էջ 953:

⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 114:

⁶ Նույն տեղում, էջ 118:

⁷ Նույն տեղում:

⁸ Ձեռ. 4481, էջ 181ա:

մոգէ սցանքն եւ զայլս, որով եւ իսկ վարձատրեցեան⁹: Նոյն խնդրանքով մա դիմում է նաև Հարություն ամիրային, Արևելքի Տրճանենց մահտեսի Կարապետ աղային ու նրա որդի՝ Մահտեսի Հայրապետին, տիրացու Գևորգին, պրն Աստվածատուրին և ուրիշների:

Նամակներից իմանում ենք, որ «Ատենի»-ի տպագրությունն ավարտելուց հետո լույս է տեսնում Հովսեփոսի «Պատմությունը»: «Տպարանն մեր ամխափան ի բանի է, գրել է Ղուկասը 1787 թ. օգոստոսի 25-ին Շահամիր Շահամիրյանին, - որում յառաջագոյն զՊարտավճար գիրքն հոգեղոյս հայրապետին եւ զԱտենի ժամագիրքն տպագրեալ, առաքեցաք ընդ մտիրակին ի վայելս ձեր, եւ յետ այնոցիկ զՅովսեփոս տպագրեալ եւս տպագրեալ աւարտեցաք, եւ տուեալ եմք ի կազմել, յորմէ եւս յառաջիկայ ատուքս յղելոց եմք առ յարկեղ սիրելիոյ եւ առ այլս, զի վայելեալ գրօսնուցուք»¹⁰:

Հովսեփոսի գրքի հրատարակությունը կարևոր իրադարձություն էր Էջմիածնի տպարանի կյանքում: «Ատենի» պահպանված օրինակները վկայում են այն մեծ վարպետության մասին, որին հասել էին Էջմիածնի տպագրիչները, փորագրիչ-նկարիչներն ու կազմարարները, քայց Հովսեփոսի գրքի պարագայում զարմացնում է այն լրջությունը, որով մոտենել են հրատարակիչները ձեռագիրը տպագրության պատրաստելիս: Ընդարձակ միջատակարարում, որ զբաղեցնում է 492-496 էջերը, բնութագրվում է Հովսեփոսի գիրքը և խոսվում նրա հայերեն թարգմանությունների մասին, որոնցից օգտվել են մի շարք գիտուններ, այդ թվում նաև Գրիգոր Տաթևացին, քայց Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքների ժամանակ այս գիրքն էլ «ընդ այլ շահաւէտ եւ օգտակար գրեանց մերոց» անհետացել էր: Ուստի Փիլիպպոս Կաթողիկոսի օրոք նրա թարգմանությանը ձեռնամուկ է եղել Ստեփաննոս Լեհացի «աւստուածաբան վարդապետն», որ Լեհաստանից եկել էր Էջմիածին և ավարտին հասցրել այն Հակոբ Զուղայեցի Կաթողիկոսի ժամանակ: Իսկ ջողայեցի Պողոսյան մահտեսի պրն խաչիկը Ղուկաս Կաթողիկոսից խնդրել էր իր միջոցներով հրատարակել դա: Եվ Ղուկասը «տեսանելով եւս, թէ հագուագիտ է այս գիրք յազգս մեր, եւ եղելոց շատքն եւս բազմախալ ի գրչացն անմտութենէ, վասն որոյ հրամայեաց ի տպագրել»: Հրատարակման համար իմք է ծառայել այն ձեռագիրը, «զոր նոյն ինքն իովսփի Տէր Ստեփաննոս վարդապետն իւր ձեռամբն էր գրեալ, որ եւ մոյնն եղեալ կայր ի գրատանն սրբոյ Աթոռոյս Էջմիածնի»:

Հետո, ինչպես կարգն էր, կոչ է արվում միջել տպարանի հիմնադրին, գրքի հրատարակության մեկեմասին, Ղուկաս Կաթողիկոսին, «որ ի վերայ այլ քիւրազան հոգոցն ջանալ եւս զօգտատր գրեանս ի լոյս ածել, որպէս եւ զայս էած», Էջմիածնի միաբան Միմաս արքեպիսկոպոսին, որ ձեռագիրը պատրաստեց հրատարակության, արագորիչ Թեոդորոս մորընծա վարդապետին, «զկեբրտօղն գրոցս եւ կանոնաց եւ ծաղկանշից» Հարություն Վաղարշապատցուն, նրա աշակերտ խաչատու-

⁹ Նոյն տեղում:

¹⁰ Նոյն տեղում, էջ 217բ:

րիճ, գրաշար Մաղաքիայիճ, տիրացու Աղեքսանդրիճ «եւ զայլ աշխատատուրս գործարանիս»:

Ղուկասի նամակներում տեղեկություններ կան Էջմիածնի տպարանում լույս ընծայված մի քանի գրքերի արժեքի մասին: 1788 թ. դեկտեմբերի 31-ին Հ. Արղդությանցին ուղարկված նամակում նա գրում է. «Ծախքն ի վերայ մեր ծանր են նստեալ, ըստ որում զամենայն պիտոյսն դժուարութեամբ առ ձեռն բերեմք, որպէս եւ դու գիտես, այլ ի տեղս ԷՒՐ (7000) դեանի գԱտեմին տամք եւ ԳՒՐ (3000) դեանի զԹովսեպոս պատմագիրքն: Իսկ ի տեղդ դու գիտես զորպէս տալն եւ առնուլն ըստ յաջողելոյն՝ ըստ դիպմանն»¹¹:

Վաճառքի համար, ըստ նույն նամակի, նա Հ. Արղդությանցին էր ուղարկել «Ատեմի ժամագրքի» 22 և Հովսեպոսի Պատմության 20 օրինակ:

Հ. Արղդությանցին հասցեագրված վերը հիշված նամակում տեղեկություն կա Էջմիածնի տպարանում լույս ընծայված հաջորդ գրքի մասին՝ «ԶԽորհրդատետրն ևս նորապէս տպագրեցաք, այլ դեռես տետերքն ոչ են ցամաքեցեալ, առ այն եւ ոչ են կազմեցեալք տակաւին: Վասն որոյ այժմ ոչ եղեւ յղել յայնմանէ»¹²:

Գրքի հիշատակարանում նշված է ոչ միայն տպագրության թվականը, այլև ամիսը. «Ի թուականս մերում ՌՄԼԷ (1788), եւ ի սեպտեմբերի վերջն»: Նրա չափսն է 20x28 սմ: Կաշեկազմ է, նկարազարդ, տառերի չափն ավելի մեծ է, քան նախորդ գրքերինը: Նկարիչ ձևավորողը դարձյալ նույն Վաղարշապատցի Հարությունն է, որն իր անունը փորագրել է տիտղոսաթերթի նկարների ներքևում՝ «ձեռամբ Յարութիւնի»: Ի տարբերություն նախորդ գրքերի, հիշատակարանում հիշված են նաև Կ. Պոլսի և Երուսաղեմի Պատրիարքները:

Այս գրքի մեկեմասը դարձյալ հետավոր երկրում ապրող հայ է, որի հետ Ղուկասը նամակագրություն ուներ. «Մանառանդ՝ յիշեսցիք զԶուղայու Երեւանցի եւ ի Սուրաթ քաղաքի բնակեալ Բրիստոսասէր եւ մեծահարուստ Պարոն Աւետիսն, եւ զհանգուցեալ հայրն իւր զԱԷթ աղայն, եւ զմայրն բարեպաշտութի. նաեւ զկենակիցն իւր զԼյույրլուռն, եւ զդուստրն Մարիամն, եւ զվաղաթառսն զառակունսն. եւ զայլ ամենայն մերձատուր եւ հեռատուր ազգականսն նորին՝ զկենդանիսն եւ զմեջեցեալսն»:

1789 թ. փետրվարին Ղուկաս Կարմեցին նամակ է գրել Սուրաթի բնակիչ Սեթի որդի Կրն Ավետին, «որ խնդրեալ էր խորհրդատետր տալել ի յիշատակ իւր ծանուցումն, թէ կատարեցաք եւ զքանիսն յղեցաք առ քեզ»¹³:

Մյուս հրատարակությունների մասն, այս գիրքն էլ ուղարկվում է այլևայլ վայրեր: Բաղդադում Էջմիածնի գործակալ Կրն Փառսիմ հասցեագրված նամակից (1789 թ. փետրվար) տեղեկանում ենք, որ վաճառականական նպատակներով Երեւան ժամանած քաղդայդցի խանքաքյանց Կրն Հակոբի միջոցով նրան ուղարկել է 1 հալ նորատիպ գրքեր, որոնց թվում՝ 25 Ատեմի ժամագիրք, 20 խորհրդատետր, 20

¹¹ Ձեռ. 4501, էջ 1194:

¹² Ձեռ. 4501, էջ 1194:

¹³ Նույն տեղում, էջ 1292:

Սաղմոս և մեկ Հովսեփոս պատմագիրք: Կաթողիկոսը համձնարարում է հավատառնիմ մարդու ձեռքով ուղարկել դրանք Բասրա՝ Էջմիածնի գործակալ պրն Հովհաննեսին: Միաժամանակ կարգադրություն է անում հակը տեղափոխելու վարձը վճարելու վերաբերյալ. «Այլև ի կողմանէ հակի քիրայիմ ասացաք Յակոբին, թէ գրեալուք պարոն Փանոսին, որ տացէ»¹⁴:

Վերոհիշյալ գրքերի մասին 1789 թ. մայիսի 5-ին Ղուկասը գրում է Բասրա պրն Հովհաննես Բեթղեհեմյանին և յսնդրում գրքերը հասցնել ըստ պատկանելուն. «Խորհրդատետերից մինն յղեա առ Յոհաննէան աղայն, որ վարադով զարդարեալ է, եւ անուն ես ի վերայ պահարանին գրեցեալ, եւ երեքն, որոց ես մինն վարադով է, յղեա առ Մատրասու Օահամիրն աղայն եւ հինգն յղեա առ Նուիրակ վարդապետըն, եւ մինն ես յղեա առ Կալկաթայու Խաչիկ աղայն Առաքելեան, եւ զմինն ես շնկալ վասն եկեղեցւոյդ ձերոյ: Եւ զմնացեալն, որ լինի ուր հատ, վաճառեա եւ գորպէսն գրեա մեզ»¹⁵:

«Վարադով զարդարեալ» նշանակում էր ոսկեթերթով պատել գրքերի եզրերը, որ անում էին բարերարներին կամ պատվավոր անձանց միիրելու համար: Այդպիսիք էին հրատարակության մեկեմաս Հոհաննէան աղան և Օահամիր Օահամիրյանը:

Ինչպես տեսնում ենք, Ղուկաս Կարնեցին, մեծ կարևորություն տալով գրքերի հրատարակությանը, բժախնդրորեն կարգավորում էր նրանց տարածման գործը՝ միաժամանակ չմոռանալով վաճառքի միջոցով նյութական շահույթ ապահովել վանքին:

Վանքի ծախսերի մատյաններից մեկում 1788 թ. փետրվարի 27-ին արված մի գրանցումից իմանում ենք, որ «Խորհրդատետերը» տպագրելու համար վարպետ Հարությունը նոր տառեր է պատրաստել, բացի այդ փորագրել է կաթողիկոսի գերեզմանաքարի մարմարե ծաղիկները, որոնց համար նա վարձատրվել է. «Տպագիր Յարութիւնն մինչ Խորհրդատետրի գիրն նոր շիմեաց եւ սրբազան Վեհապետի մատնառ քարի ծաղիկն նկարեաց, որոյ ետուք Ա. (1) կիսամաշ ֆիլամանկ չուխայ, որ էր մահուեսի Յակոբջանինն, Դ. (4) գազ եւ կէս ֆրանկի շալ, Ա. (1) ցթակի երեսք՝ ֆիլամանկ եւ Ա. (1) դութնի, բացի մաղտեն ի փետր. 27»¹⁶:

Այս նույն 1787 թ. հրատարակվում է այն ժամանակվա համար շատ անհրաժեշտ և կարևոր մի գիրք՝ «Սաղմոսարանը» (լրիվ վերնագիրն է՝ «Սաղմոս Դատի: Որ եւ կոչի Սաղմոսարան»): Այն ևս կաշեկազմ էր, բայց համեմատաբար ավելի փոքր չափսի՝ 10x16 սմ, 418 էջ: Վերջում, հավելվածի ձևով տպված էին նաև հետևյալ գործերը. «Մաղթանք զօրաւորք ընդդէմ արհաւիրաց գիշերայնոց սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ է» (388-394), «Աղօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոց ի

¹⁴ Ձեռ. 4501, էջ 1302:

¹⁵ Նույն տեղում, էջ 1204:

¹⁶ Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 130:

«Քրիստոս, արարեալ Տեառն Ներսէսի Օգորհալոյ՝ Հայոց Կաթողիկոսին» (Էջ 395-402) եւ «Խրատ վասն առաջիկայ տօմարական աղիւսականց» (Էջ 403-415):

Գրքի հիշատակարանում (Էջ 416-419) դարձյալ հիշելու կոչ է արվում «գիաստատօղն Տպարանիս զՏէր Սիմէօն սրբազան եւ յոգնաշխատ Կաթողիկոսն» և նրա հաջորդ Ղուկաս Կաթողիկոսին «Որոյ հրամանաւ եւ հոգաբարձութեամբ տպագրեցաւ Սուրբ Գիրքս», սրբագրիչ Թադէոս վարդապետին, տպարանի հիմնադրման ծախսը կատարած խոջաջանյան Գրիգոր աղային ու նրա հարազատներին. «Մանաւանդ՝ յիշեցիք զծերունազարդ եւ զբարեպաշտօն Յօհաննէան Աղայն Յակոբեան որ ի Սուրաթ քաղաքն բնակի... Քանզի մոյն օրհնածառանց եւ բարեսէր անձին արդարավաստակ արդեամբն տպագրեցաւ Սուրբ Գիրքս, առ ի լինիլ բարի յիշատակ մօին եւ իւրացոցն»:

Հիշատակարանից երևում է, որ ցրքի մկարիչը, գրաշարն ու տպագրիչը մոյն անձինք են, որոնք հիշվում են մախորդ գրքերի հիշատակարաններում:

«Սաղմոսարանի» տպագրության մասին հետաքրքրական տեղեկություն կա 1787 թ. դեկտեմբերի 30-ին ցրքի մեկեմաս Հոհաննէան աղային (նա Էջմիածնի գործակալն էր Սուրաթում) հասցեագրված Ղուկասի մի նամակում¹⁷, որտեղ ուղղակի նշվում է ցրքի տպաքանակը. «Եւ թիւն որքանութեան է ուր հարիւր»: Այն ժամանակների համար դա փոքր թիվ չէր և վկայում է ցրքի մեծ պահանջարկի, հետևապես և ընթերցողների լայն շրջանակի մասին: Ղուկասը գիտեր, որ այդ գիրքը տպագրվում է ոչ միայն հոգևոր անձանց, այլև աշխարհականների համար. «եւ թէ այնքան անձինք կարգաւորք եւ աշխարհականք ի սաղմոսելն յիշեցեն զքեզ առ Աստուած, մեր վարձս եւ ընդունելոց», գրել է նաև մոյն նամակում Հոհաննէան աղային:

Երբ ցիրքն արդեն լիովին պատրաստ էր, նրանից 13 հատ և Հովսեփոսի «Պատմագրքից» 6 հատ մոմապատած արկղի մեջ դրած ուղարկում են Բասրա՝ գործակալ Հովհ. Բեթղեմեմյանին, որ նա նամակի հետ միասին ուղարկի Հոհաննէան աղային: Նշված է այն մասին, թե ո՞ւմ պետք է հաճնվեն այդ գրքերը: Նրանցից 2-ական «Սաղմոսարան» և պատմագիրք ուղարկվելու էին Մադրաս՝ Ծ. Շահամիրյանին¹⁸:

Տպարանի հաջող աշխատանքի երաշխիքը նյութական միջոցների առկայությունն էր, որը հնարավոր էր լինում ապահովել նաև նամակագրական կապի միջոցով: Մեծահարուստ մեկեմասները Էջմիածնի մվիրակների միջոցով կապ էին հաստատում կաթողիկոսի հետ, և վերջինս համոզում էր նրանց՝ իրենց ամուսնները հավերժացնել խոշոր մվիրատվությամբ, որով նա կա՛մ շինարարական-վերանորոգչական աշխատանքներ էր անում, կա՛մ էլ ցիրք տպագրում: Եթե զուտարը մեծ էր, հնարավոր էր լինում անել երկուսը միաժամանակ: Իհարկե, չպետք է մոռանալ մվիրակի և հոգևոր առաջնորդի, ինչպես և տեղական հոգևորականների դերը, որոնք մեծապես նպաստում էին վերոհիշյալ օգտաշատ գործերի իրականացմանը:

¹⁷ ՁԵՆ. 4501, էջ 1346-1348:

¹⁸ ՁԵՆ 4501, էջ 1347:

տակ, զորս փոփոխվող ենք ընդ հաւատարմի»²²։ Մի քանի օր անց, ապրիլի 16-ին, նույն Գևորգ աղային հասցեագրված նամակից իմանում ենք, որ ստացվել են պատվիրված տախտակներից 35-ը և սպասում են մնացածին²³։

Մեկ այլ նամակով (Կ. Պոլսի նվիրակ Միմաս վարդապետին, 1787 թ. 20 դեկտ.) Ղուկասը հաճեցաբարել է Էջմիածնի վանքի կարիքների համար գնել ոչ միայն սանր, հեռադիտակ և ակնոցներ, այլև «մորթ գազանի ի պետս մրազարկութեան»²⁴։

Էջմիածնի տպարանում հրատարակված գրքերը տարածելու դյուրին ձև է նկատվել գրքերն առանց կազմելու ուղարկելը այլևայլ վայրեր՝ տեղում կազմելու նպատակով։ Այսպես, 1797 թ. հուլիսի 20-ին ուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանին ուղղված նամակում Ղուկաս կարենցին հաղորդում է, որ նրա պահանջով Թիֆլիսի վրայով ուղարկում է 20 չկազմված Ծարակոց²⁵։

Ինչպե՞ս և ի՞նչ ճանապարհով էին ուղարկում գրքերը հեռավոր վայրեր։ Այս մասին ուշագրավ տեղեկություն կա 1788 թ. հունվարի 14-ին նույն Միմաս վարդապետին հասցեագրված նամակում։ Գրված է, թե մի քանի օր առաջ 11 հատ Հովսեփոսի «Պատմագիրք» և 18 նորատիպ «Սաղմոսարան» մի արկղի մեջ դրած և «մուշամպայով պահարանեալ», այսինքն՝ մոմապատված, հավատարիմ «ուղորդ պատահելով» ուղարկում է կարին՝ զործակալ պրն Հայրապետին։ Վերջինս «գիրքն եւ զոմանց տեղեկանացն հանեալ», մնացածը նույն արկղով ուղարկելու էր Բաղդադ պրն Փանոսին, իսկ սա էլ Բասրայի վրայով՝ Հնդկաստան «առ իշխանս ոմանս եւ առ նուիրակն մեր»։ Միաժամանակ ուղարկում է նամակներ երեք առանձին ծրարներով։ Պատվիրում է «մուղայեթ լեր մեծաւ հոգացութեամբ, զի թէ արկղն գրեանց յայդր է ի մաքսարանին քանայեցն, զիրք չպակասիցի, քանզի իւրաքանչիւրն պատուտր անձանց աղազաւ առաքին, եւ ի թուղթս նոցա գրեցեալք են»²⁶։

Ոչ բոլոր ուղարկված գրքերն էին տեղ հասնում։ Օրինակ, 1791 թ. գարնանը Ղուկասի գրած մի նամակից հայտնի է դառնում, որ Նոր Զուղայի եկեղեցիների համար Ատենի ժամագիրք էր ուղարկել, «որոց տանօղ կարաւանն աւազակաց պատահելով, թեպէտ եւ քանիքն յԱտենեացն անբեցեալք կամ վատհեցեալք էին, սակայն շատն հասնաւ եւ ի Զուղայ, որպէս գիտեմք»²⁷։

Զգտելով ավելի հարստացնել տպարանի հրատարակչական կարողությունները՝ Ղուկասը ցանկություն է ունեցել ձեռք բերել Ամստերդամի հայկական տպարանի անգործության մատնված տառերը։ 1788 թ. մայիսի 1-ին Հ. Արղությանին գրած նամակից երևում է, որ վերջինս Ամստերդամի տպարանի համար «զարձակման թուղթ գրեալ է իր խնդրեալ»։ Ժամանակին Սիմեոն Երևանցի Կաթողիկոսն արգելել

²² Ձեռ. 4481, էջ 315ա։

²³ Նույն տեղում, էջ 319ա։

²⁴ Ձեռ. 4501, էջ 1149։

²⁵ Նույն տեղում, էջ 2390։

²⁶ Ձեռ. 4501, էջ 1153։

²⁷ Նույն տեղում, էջ 1483։

էր այդ տպարանի գործունեությունը: Ղուկասը Ջմյունհայում եղած ժամանակ ցանկացել էր, որ տպարանը վերսկսի իր աշխատանքը, բայց Սիմեոնը թույլ չէր տվել՝ պատճառաբանելով, թե «աշխարհականը զի՞մչ հոգացողությամբ պարտիմ առնել սրբագրություն, այլ սխալանք լցուցանելով զգրեանսն, օտարացն ծաղր առնել տալոց են զմեօք եւ նախատինս անեղոց ազգիս մերում»: Դրանից որոշ ժամանակ անց նա Սիմեոնի պատվերով գրում է Ամստերդամ պրն Առաքելին՝ «զի գրոց հայր եւ մայրն ի սուրբ Աթոռս յղեսցեն, որովք աստ գրեանք տպեսցիմ ի յիշատակ մոցա: Սակայն մոքա ոչ կամեցան եւ մնաց գործարանն խափան»: Առաքելի մահից հետո նա միակառության նամակ է գրում նրա որդի Բարադամին և կրկնում վերոհիշյալ առաջադրությունը, բայց դարձյալ բացասական պատասխան է տալով. «Որում նա պատասխանի ես ոչ արար: Ահա յայսքան ժամանակ այն տպարանն ոչ պիտոյացաւ»²⁸:

Ղուկաս Կարմեցիին ձգտում էր էջմիածնի վանքն ապահովել լավորակ թղթով և հրատարակված գրքերը, ինչպես և նամակներն ու կոմպակները վկայում են, որ նա հաջողությամբ էր լուծել այդ խնդիրը: Նամակների մեջ հաճախ է խոսվում թուղթ գնելու անհրաժեշտության մասին, և Կաթողիկոսը բժախնդիր կերպով էր տալիս այդօրինակ հաճմարարություններ և երբեմն էլ պահանջված թղթի նմուշներն ուղարկում էր հասցեատերերին: «Այլե մի օգնայ Պոլսոյ միջակ թաղապայ թուղթ առցես եւ յղեսցես վասն ծաղկելոյ եւ գրելոյ, որոյ տեսակի մի թապաղայի կէսն եղեալ ընդ թղթոյս, յղեսցա վասն օրինակի,- գրում է նա 1788 թ. մայիսի 22-ին Կ. Պոլսի նվիրակ Միմաս վարդապետին և զգուշացնում,- բայց այս չափովս թուղթը զոմ, որք իբրեւ կաշի հաստք են եւ դեղնաշորթ գունով, եւ կոկ, եւ դաստալքն դուպորակերպ ծալեայք, մի գուցէ յայնց առնուցուս, զի այնք վատամիտք են, եւ գրելոյ ամենեւին անձեռնուրք, այլ որք բարակակողմն եւ սպիտակք, եւ անծայք, յայնցանէ լիցի առեալոյ, զոր չունիմք եւ հարկատրապէս պիտոյանայ»²⁹:

Տպագրական թղթի ներմուծումը կապված էր մեծ բարդությունների հետ: Սովորաբար Կ. Պոլսից կամ Ջմյունհայից ուղարկում էին ցամաքի ճանապարհով՝ Կաթինի ու Կարսի վրայով, բայց երբեմն առաքում էին ծովով մինչև Տրապիզոն, այնուհետև՝ էջմիածին³⁰:

Նախորդ տարիների նամակներից մեզ հայտնի է, որ վրաց թագավոր Հերակլ Երկրորդը Թիֆլիսի իր տպարանի համար թուղթ ձեռք բերելու խնդրանքով հաճախ էր դիմում Ղուկաս Կարմեցուն: Եվ վերջինս Կ. Պոլսի ու Ջմյունհայի նվիրակների միջոցով բերել էր տալիս պահանջված թուղթը: Այս անգամ խնդրանքը այլ բնույթի է. վրաց թագաժառանգ Գեորգին Ռուսաստանում եղած վրացական տպարանում գրքեր հրատարակելու առաջադրությամբ այն կողմերն է ուղարկում վրացի Աբրահամ քահանային և, դիմելով Ղուկաս Կարմեցուն, խնդրում ժողովարարական կոմ-

²⁸ Զեռ. 4501, էջ 1165:

²⁹ Նոյմ տեղում, էջ 1368-1369:

³⁰ Կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 357:

դակ տալ նրան՝ «Եւ զի Տերամբ պահպանեցեալ Գեորկին խանն մտադրեալ գոյով զքանի գրեանս տպեցուցանել յայդկոյս իւրեանց տպագրութեամ գրովքն, գոր ունին յայդ երկրորդ, զյիշեալ Տէր Աբրահամ քահանայդ իւրեանց առաքել ի յօրհնեալ երկիրդ այդ, վասն որոյ վստահութեամբ բարեկամութեանն իւրոյ, որ առ սուրբ Աթոռս եւ առ մեզ, աղերսական թղթով խնդրեալ էր ի մենջ՝ շնորհել դմա զթուղթ օրհնութեան ի վերայ օրհնեցելոյ ազգիդ մերոյ յայդր գտանեցելոց, զի ի գալն իւր յայդկոյս, ընկալեալ լիցի ի ձեցջ մարդասիրութեամբ, եւ մի գրոգս նշանութեան կրեցէ» (Հ. Արդարեանին 1787 թ. մայիսի 29-ին ուղղած նամակից)³¹: Ղուկասը հանձնարարում է վերոհիշյալ ժողովարարական նամակը ներկայացնող Աբրահամ քահանային «ուր եւ հանդիպիցի, սիրով ընկալիչիք եւ բարերարչիք առ դա ըստ քնիկ բարեսէր բարուց ձերոց, եւ օժանդակեսիք դմա ըստ կարեաց ձերոց առ առաջադրեալ հոգալի գործն իւր, եւ թէ պակասութիւն ունիցի ի կողմանէ ճանապարհական ծախուց, զկամատր տուրս ողորմութեան նա լիաձեռնութեամբ ընձեռեսիք ի փառս Քրիստոսի»³²:

Ս. Գրիգոր Լուսավորչի անվան տպարանում 1793 թ. հնարավոր եղավ հրատարակել միայն մի գիրք՝ Սիմեոն Երևանցու «Տաղարան փոքրիկ»-ը, որը բաղկացած էր ընդամենը 45 էջից: Այդ գրքի տպագրության ծախսը հոգացել էր Հնդկաստանի Սուրաթ քաղաքում բնակվող «Յօհաննէան Աղայն Յակոբեան Գէրաքեանց»-ը (տե՛ս գրքի հիշատակարանը, էջ 45): Առաջին անգամ «Տաղարան»-ը տպվել էր 1777 թ., բայց քանի որ տպաքանակը սպառվել էր, Ղուկաս Կարսեցին անհրաժեշտ է գտնում վերահրատարակել դա՝ տիտղոսաբերթի վրա տպագրելով հետևյալը. «Դարձեալ վերստին տպագրեցեալ ի սպառնի առաջնոց տպագրեցելոցն, ի թախանձանաց սիրատարի խնդրողաց»:

Նամակներից իմանում ենք, որ Ղուկաս Կարսեցին տպագրական մեծ ծրագրեր ուներ. «Այլեւ կամիմք աստ տպել տալ զԾարական եւ զբուն Մաշտոց, զորս մինչ Աստուած յաջողիցէ»,- գրել է նա գործակալ և մեկնման Հոհաննէան աղային 1789 թ. փետրվարին³³: 1794 թ. սեպտեմբերի 2-ին Ախիշան աղային (վաճ) նա գրել է. «Եթէ տեղդ հին գրուածք լինիցի, մեզ լղեսցես՝ առ ի օրինակս առնել նոր տպեցելոյն»³⁴: Նա ձգտում էր իրականացնել Մովսես Կաղանկատվացու պատմության հրատարակությունը: Ուներ նաև այլ ծրագրեր, որոնց կատարման համար, սակայն, էջ-միածնի զահակալի ապրած ժամանակը հարմար չէր: Արշավանքներն ու կռիվները հաջորդում էին միմյանց և միայն զարմանք պետք է հայտնել, որ այդ դժվարին պայմաններում հնարավոր եղավ տպագրական մամուլի տակից դուրս բերել և աշխարհով մեկ տարածել վերը նշված գրքերը, որոնք ընդհանուր հաշվով կազմում են 2698 էջ: Եթե յուրաքանչյուրի տպաքանակը 800 հաւնարենք, ինչպես, օրինակ, 418

³¹ Ձեռ. 4501, էջ 1212:

³² Նույն տեղում:

³³ Ձեռ. 4881, էջ 286ա:

³⁴ Նույն տեղում, էջ 484ա:

էջից բաղկացած «Սաղմոսարան» էր, ապա այդ գրքերի ընդհանուր տպաքանակը անցել է 5000-ից:

1795 թ. ամռանը Իրանի նորընծա շահ Աղա Մուհամադը հարձակվում է Անդրկովկասի վրա: Կաթողիկոսը մեծամեծ կաշառքներ տալով մի կերպ փրկում է վաճառ թալանից ու ավերմունքից: 1797 թ. գարնանը պարսկական արշավանքը կրկնվում է. «Իսկ կացութիւն երկրիս, - գրել է կաթողիկոսը 1797 թ. մայիսի 5-ին, - լրանցելուն եւ նարդեմիս ի զանազան հարկապահանջութեանց եւ ի պէսպէս ծանր գործառնութեանց՝ ի սանտիկ սղութեմէ հացի եւ ամենայն պիտոյից, ի լետին դառնութիւն, չքատրութեան ժամանակ՝ յոգիս եմ ապաստան եւ կասկածանօց ապառճի վտանգից թախծիմք առ հասարակ»³⁵:

Պատերազմի հասցրած բազմապիսի չարիքներից միանում են հիվանդությունները, որոնք մեծ թվով զոհեր են խլում բնակչությունից: 1797 թ. ժանտախտ է տարածվում Արարատյան երկրում: Ղուկաս Կարանեցին այդ տարվա հոկտեմբերի 20-ին Բաղեշի բնակիչներին գրել է. «Յայսմ ամի աշնան երկրացիքս ըստ մեծի մասին հիւանդացան. եւ սուրբ Աթոռոյս միաբանքն ի մեծաց միմչեւ ցփոքունս ոչ մնաց առանց հիւանդութեան»³⁶:

Ներքին կռիվների ժամանակ տպարանը թալանվում և ավերվում է: Նշելով այդ մասին, Հովհաննես Ծախաթունյանցը գրում է. «Միմչ զի եւ զծուլեալ տառսն տպարանին ի հեռաւոր գնեալ ի գերչացն հայազգի անձիմքն վերադարձուցանէին յԱթոռ»³⁷: Դրանից տարիներ անց՝ Եփրեմ Զորագեղցի Կաթողիկոսը (1809-1830 թթ.) հնդկահայոց նյութական օգնությամբ վերանորոգում և աշխատեցնում է տպարանը: Իր հրատարակած առաջին գրքի՝ «Սաղմոսարանի» հիշատակարանում նշում է, որ Վեհապետը «պայծառացոյց եւ գրեթէ ի հիմանէ նորոգեաց զտպարանն՝ սրբոյ գահիս ... զխանգարեալն ի քազում ամաց հետէ»³⁸:

Դա 1819 թվականին էր: Դրանից հետո Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսավորչի անվան տպարանի համար սկսվում է զարգացման մի նոր ժամանակաշրջան:



³⁵ Ձեռ. 2922, էջ 33ա:

³⁶ «Դիւան հայոց պատմութեան», Բ. Դ, Թիֆլիս, 1895, էջ 659:

³⁷ Յովհաննէս Ծախաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և Ռիմզ գաւառացն Արարատայ, Բ. 2, Էջմիածին, 1842, էջ 100:

³⁸ Սաղմոս Դաւթի: Որ եւ կոչի Սաղմոսարան, Էջմիածին, 1819, էջ 415: Տե՛ս նաև՝ Ծ. Ծառնազարյան, Էջեր Հայաստանի առաջին տպարանի պատմությունից, «Էջմիածին», 1972, դեկտեմբեր, էջ 69:

ՌԻՄԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԻՐՈՒՄՅԱՆ*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

**ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՏԵՐՈՑԵՆՑԻ ՊԱՏՄԱԹԻԼԻՍՈԹԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

(Մեթոդաբանական տեսանկյունների)

Չէ որ ներկա պահի գլխավոր խնդիր-
ներից մեկը դեռևս մնում է պայքարը լու-
սավորականության բնապաշտության
դեմ, ինչը չի հաջողվել վերջնականա-
պես հաղթահարել Կամոսի իդեալիզմին:

Գ. ՌԻԿԵՐՏ

Տերոյենցի պատմափիլիսոփայության հիմքում ընկած է բացարձակ մախա-
սկզբի՝ Աստծո գոյության հիմնադրույթը: Ըստ վերջինիս, Աստված է տնօրինում
բնության, մարդու և հասարակության գոյությունը: Այդ սկզբունքն իր մեջ ներառում
է նաև Աստծո կողմից ստեղծված մյուս բոլոր արարածների համեմատությամբ
մարդու բացառիկության (նրան ներհատուկ բանականության և կամքի շնորհիվ)
մասին դրույթը: Ընդամից, մարդու կենսագործունեության և պատմության ողջ ըն-
թացքը դիտարկվում է ըստ երկու չափումների՝ իրական հասարակական և անդ-
րանցական (տրանսցենդենտ): Դրա հետ մեկտեղ մարդու հասարակական գործու-
նեությունը համարվում է նրա հոգևոր աշխարհի ձևավորման և զարգացման միջո-
ցը: Ուստի, նրա պատմական գոյության նվիրական իմաստը՝ առ Աստված բարձ-
րանալն է: Այս տեսանկյունից է հենց ամհրաժեշտ վերլուծել հոգևոր և աշխարհիկ
իշխանությունների հարաբերակցության մտածողի ըմբռնումը:

Հիշյալ խնդրի Տերոյենցի ջնմարկումը պայմանավորելի է այդ ժամանակա-
շրջանում հայ հասարակության մեջ տիրող մտայնությամբ: Հնչ լուսավորիչների
մախաձեռնությամբ մոր ժամանակի եվրոպական քաղաքական և հասարակական
գաղափարների տարածումը Հայաստանում խզեց հայ տեսական մտքի գաղա-
փարախոսական միանեությունը՝ ծնունդ տալով «լուսավորական» և «պահպանո-
ղական» ուղղություններին: Բարձր գնահատելով քրիստոնեական կրոնի և Հայ Ե-
կեղեցու դերը հայ ժողովրդի անցյալի պատմությունում, լուսավորիչները, սակայն,
չէին ընդունում այդ իրողությունն ազգի ներկայի և ապագայի վերաբերմամբ: Հեր-
քելով կրոնի և Եկեղեցու վճռորոշ դերը ազգի գոյության և առաջադիմության հար-

գում, նրանք անհրաժեշտ են համարում աշխարհիկ կառավարության անկայություն-
նը, աշխարհիկ մշակույթի և լուսավորության զարգացումը: Միաժամանակ Եկեղեց-
յուն նրանք հատկացնում են ազգի հոգևոր-քարոյական դաստիարակչի դերակա-
տարությունը: Լուսավորիչների պնդմամբ, ազգային կեցության աշխարհիկ և հո-
գևոր դաշտերի առանձնացումը (աշխարհիկ դաշտի գերիշխանության պայմանով)
ժամանակի հրամայականն է: Դրա հետ մեկտեղ, հաշվի առնելով այն, որ
քննարկվող դարաշրջանում ազգի անդամների մի մասը կաթոլիկ և բողոքական
էին, նրանք գտնում էին, որ ազգի իրական միասնությանը կարելի է հասնել զուտ
քաղաքական կառույցների միջոցով: Արևմտահայ լուսավորիչների դիրքորոշման
արտահայտությունն էր հենց իրենց կողմից մշակված Ազգային Սահմանադրու-
թյունը (1860 թ.):

Նման պայմաններում առաջ եկավ միմյև օրս ազգային կեցության համար հրա-
տապ հայության միության խնդիրը, որի շուրջ ծավալված բանավեճը հարաբերվում
է նաև իշխանության համակարգից դուրս կրոնի ու Եկեղեցու գոյության և խղճի ա-
զատության հնարավորության և անհրաժեշտության հիմնահարցերին: Տերոյեցցի
պատմափիլիսոփայական հայեցակարգը որակելի է որպես հակազդեցություն հայ
լուսավորական պատմափիլիսոփայական մոդելին, մինչդեռ խնդրո առարկայի նրա
ընկալումը՝ որպես լուսավորիչների վերոհիշյալ դիրքորոշման տեսական հիմքի
(բնական օրենքի, դրա հետ առնչակցվող «իրավունք-պարտականություն» հարա-
բերակցության, ինչպես նաև՝ մարդկանց (և ազգերի) ազատության և իրավահավա-
սարության սկզբունքների լուսավորիչների մեկնաբանման) հակակշիռ²:

Պատմության Տերոյեցցի բանաձևից բխում է, որ երկրային կյանքում մարդը կոչ-
ված է կատարելագործվել որպես հոգևոր էակ, ինչը պայմանավորված է քարոյա-
կան օրենքի աղբյուրի և էության նրա ճանաչումով: Բարոյական սկզբունքներից
տալով աստվածային հեղինակություն, մտածողն, ըստ էության, քրիստոնեական
գաղափարախոսության տեսանկյունից աստվածային (համապարփակ) քարոյա-
կան օրենքը կապակցում է մարդու հասարակական էության հետ: «Աստված, - ցում
է նա, - ստեղծել է մարդուն որպես հասարակական էակ»:

Մարդու արարման հետ մեկտեղ Աստված ստեղծել է հասարակության գոյու-
թյան համար անհրաժեշտ ամրակներ՝ մեծի ու փոքրի տարբերությունը և արդարու-
թյունը, որոնցից առաջինը կապվում է իշխանության, իսկ երկրորդը՝ Օրենքի հետ:
Այդ իսկ պատճառով բնական օրենքն ընկալելի է որպես աստվածային կամքով
ստեղծված հասարակական ամրակների պահպանում. «թե որ ընկերությունը մար-
դոյս էական հանգամանքն է, եւ առանց ասոր մարդ կատարելութեան չհասնի նէ,
ընկերական կեանքի պայմանները սուրբ պահելու համար տրուած օրէնքէն շեղվող
օրէնքը՝ որն որ Նալբանդեանցի զրչից տակը բնական օրէնքի անուն ստացել է,
տիրապէս խօսելով անբնական օրէնք կըլլայ. եւ թուն բնական օրէնքը կըլլայ տաս-
նաբանեալ պատուիրանքը, որ ուրիշի իրաւունքի մօտենալը եւ ընկերական կամ ըն-

տանեկան ցուրտական պայմաններին դրժելը կարգիլէ, սակայն այս օրէնքը մարդկային կանուանէ Նալբանդեանը...»:

Նման կողմնորոշումն անմիջականորեն ուղղված է լուսավորական պատմափիլիսոփայության հիմքում դրված և հասարակական առաջադիմության խորքային իմաստը ներկայացնող՝ անհրաժեշտաբար գործող բնական օրենքի լուսավորիչների և, ի մասնավորի, Մ. Նալբանդյանի, մեկնաբանման դեմ: Ըստ վերջինիս, բնական օրենքով մարդիկ ստեղծված են հավասար իրավունքներով, որոնց պաշտպանության համար անհրաժեշտ է իրավադատության և օրենսդրության ստեղծումը, ինչը, իր հերթին, կնպաստի մի ազգի հասարակական (քաղաքական) առաջադիմությանը: Տերոյենցը, սակայն, գտնում է, որ բնական օրենքն Աստծո իշխանության տակ գտնվող մարդու հասարակականության հիմքն է՝, ինչից հնարավոր է հետևեցնել, որ հասարակական կեցության անհրաժեշտ կանոնները բացարձակ (աստվածային) խորհուրդ են կրում: Խնդրի էությունը դիտելի է լուսավորիչների և Տերոյենցի՝ մարդու մեկնաբանման տարբերության մեջ: Եթե լուսավորիչների համար Մարդն ամենից առաջ անհատ է իր կենսաբանական և սոցիալ-մշակութային նախասկզբների միասնությամբ, ապա Տերոյենցը սահմանում է Մարդուն որպես ոգու՝ անդրանցական նախասկզբի կրող, այսինքն՝ որպես անձնավորություն: Դրանով է բացատրելի Մարդու հոգևոր փորձի հնարավորությունը, նրա՝ որպես հոգևոր էակ կատարելագործվելու ընդունակությունը:

Նշված դիտանկյունից է անհրաժեշտ արժևորել «ազատություն» և «հավասարություն» հասկացությունների մտածողի մեկնաբանումը: Ազատությունը նա սահմանում է որպես մարդու ներքին (հոգևոր) հնարավորություն, ուստի համարում է, որ մարդու արտաքին (գործողությունների) ազատությունը սահմանափակված է Օրենքով. մարդն ազատ է գործել այնպես, ինչպես պետք է գործի և ոչ թե անել ցանկալին: «Ազատությունը այն է, որ օրենքին չի պարտադրած բանը ընելու դրսեւ հարկադրութիւն մը չըլլայ և ինչ բան որ ընելը օրինաց դէմ չ'է՝ այն բանը ընելու խափանում ըլլայ: Եւ այս Ազատութեան հակառակն է գեղութիւն կամ ծառայութիւն, ինչ պատճառով կըլլայ մէ ըլլայ»:

Ստրկությունն ու բռնությունը, այսպիսով, արտաքին, գործողությունների ազատության (բացարձակ) հետևանք է, ինչն անհրաժեշտաբար ենթադրում է ուրիշի ազատության սահմանափակում: Նման իրավիճակը հնարավոր է համարվում այն ժամանակաշրջանների, երկրների և գաղափարախոսությունների համար, որտեղ խախտվում են աստվածային պատգամները: Լուսավորական փիլիսոփայությունն անվանվում է այդ պատգամները ճանգափոխող գաղափարախոսություն. «...փիլիսոփայութեան այն մոր դրութիւնը հայեցողապէս բոլոր իշխանութիւններուն քանդումն է, որ է ըսել՝ անիշխանութիւն: Ազատութիւն այ՝ ինչպէս որ հիմակուան, ազատասերները կը հասկընան, այսինքն՝ անսահման ազատութեան հետամուտ եղողներուն ուզածն այս է...»:

«Հավասարություն» հասկացության Տերոյենցի ըմբռնումը ևս կառուցված է այդ հասկացության լուսավորիչների սահմանման քննադատության վրա: Նրա կարծի-

քով, հավասարությունը լուսավորիչները հանգեցրել են ինչպե՛ս հարաբերությունների (հավասար գույք ունենալու մարդկանց իրավունքին), ինչը խախտում է արդարության բարոյական օրենքը, քանզի Աստված տոեղծել է մարդկանց տարբեր կարողություններով: Մարդկանց հավասարությունը հասարակական կենդանի լինելն է, ինչն ապահովում է Օրենքը: Վերջինիս բացակայության դեպքում հավասարությունն անհետանում է՝ ծնունդ տալով բարբարոսությանը, քաղաքակրթության քայքայմանը:

Մտածողի պնդմամբ, «ազատություն» և «հավասարություն» հասկացությունները լուսավորիչները կիրառում են այնպիսի երևույթների նկատմամբ, որոնք խորթ են այդ հասկացությունների մասնական խորհրդին: Վերջինիս մորոգման ամրաժեշտ միջոցն է կրոնական փոխոտփայությունը, որը կմպաստի աստվածային (քնական) օրենքին մարդկային (դրական) օրենքի համապատասխանեցմանը: «...մարդկային օրենքը միայն գործոց վրայ է, մտքի վրայ է, խորհրդի վրայ օրենք ոչ դրած են մարդիկ, եւ ոչ ալ կրնան դնել: Աստուած միայն է խորհրդոց քննիչ, միմակ անիկայ է սրտագետ, մարդուն սրտին գաղտնիքը գիտցող, ուստի միմակ անիկայ խորհրդոց վրայ օրենք դնելով գործոց վրայ դրուած օրենքը հաստատում կընէ, վասն զի չարութեան խորհուրդները սրտէն կելլեն եւ անոնց արդիւնքն եղած գործերը արգիլելու համար անոնց աղբիւրը եղող սրտին վրայ տիրելու է, եւ այս տիրապետութիւնը Աստուծմէ զատ մէկի մըն ալ բանը չէ»⁴:

Այս տեսանկյունից է նպատակահարմար արժևորել իշխանությունների ընտրովիության լուսավորիչների գովաբանած սկզբունքի Տերոյեցի մերժումը: Ըստ մրա, իշխանության էությունը իշխանապետի և մրա իշխանության տակ գտնվող մարդկանց առկայության և մրաց միջև որոշակի հարաբերությունների՝ պարտքի և իրավունքի (կառավարողների նկատմամբ կառավարչի դրսևորած հոգատարության և կառավարչի նկատմամբ կառավարողների ցուցաբերած հարգանքի) իրագործման մեջ է: Մինչդեռ լուսավորիչների սկզբունքը ճնթադրում է մեկի իշխանության (և համապատասխանաբար՝ իրավունքի) սահմանափակումը մյուսին իշխանություն (իրավունք) տալու նպատակով, որի հետևանքը մի կողմից համարվում է մարդկանց իրավահավասարության մերժումը, մյուս կողմից՝ անիշխանության տարածումը:

Այս հարթության վրա է հարկավոր իմաստավորել ազգային կառավարության էության, Ազգային Սահմանադրության մշանակության, ինչպես նաև՝ Հայ Եկեղեցու կառավարման ձևի ու դրա բարենորոգման փոխկապակցված խնդիրների Տերոյեցի ըմբռնումը: Հեքքեղով լուսավորիչների այն կարծիքը, ըստ որի դարաշրջանի առանձնահատկությունը և հասարակական առաջընթացի նպատակն ազգի ազատության (քաղաքական) ձեռքբերումն է, նա հաստատում է, որ պատմության նպատակը և ժամանակի պահանջն ազգության պահպանումն է: Նշված մոտեցումների տարբերությունը բացատրելի է լուսավորիչների և Տերոյեցի մեկնակետերի տարբերությամբ: Լուսավորիչների տրամաբանությամբ, մի ժողովրդի մեջ որոշ հատկու-

թյունների առկայության պայմաններում է հնարավոր խոսել ազգի ձևավորման մասին: Մինչդեռ Տերոյեցցի համոզմամբ, խնդիրը գոյություն ունեցող ազգի բնութագրման և նրա առկա կեցության պայմաններին համապատասխան զարգացման հնարավորությունների սահմանումն է:

Նշած համատեքստում ազգությունը պահող գլխավոր կապը համարվում է կրոնը՝ «հաատը առ արտաքս յայտնող նշանները»: Հավատն անվանվում է անփոփոխելի, քանզի նրա էությունը Աստծո ճանաչումն է: Հավատի էության հետ սերտորեն կապվում է Աստծո պաշտամունքը, այսինքն՝ հավատի արտաքին կողմը (նշանները): Ելնելով ազգերի ավանդույթների առանձնահատկություններից, մտածողը հաստատում է, որ աստվածապաշտության ձևերը նույնպես պետք է տարբեր լինեն: Ազգերին զանազանող այդ առանձնահատկությունները նա համարում է ազգային կապ. «Հաատը մեկ է, արարողությունները զատ են, եւ քանի որ հաատոյ միութիւնը մէկ կը մնայ՝ կրօնական արարողութիւնները ազգայնութեան կապ կըլլան, վասն զի իւրաքանչիւր ազգ իրենց մէջ անով կը կապակցեն, և ամենը իրարու հետ անոր նշանակած հաատքով կը միանան»⁹:

Դիտարկվող դրույթի տրամաբանական շարունակությունն է մտածողի այն պնդումը, թե ազգային քաղաքականությունը պետք է ուղղված լինի պատմության կողմից կրոնին և Հայ Եկեղեցուն վերապահված առաքելության պահպանմանը: Դրա հիմնավորմանն են ծառայում Տերոյեցցի բերած հետևյալ փաստարկները.

Քաղաքականությունը հիմնված է օրենքի վրա, և երբ այն առանձնացվում է կրոնից (իսկ «աշխարհը քաղաքականութեան տակ խոթողը քրիստոնէութիւնն եղաւ»), գրկվում է պարտադրվող հեղինակությունից և դառնում անգոր:

Առանց իր հոգևոր բնույթին մերհատուկ ավանդույթների, ազգը նախնական «անկրթութեան» մեջ է ընկնում: Այդ իսկ պատճառով հայ ազգը պետք է հավատարիմ մնա մինչև XIX դ. պահպանված ազգային ավանդույթներին, ըստ որոնց, աշխարհի տարբեր երկրներում բնակվող հայերին միավորում է Հայ Առաքելական Եկեղեցին: Ավելին, քաղաքական կառավարությունից զուրկ ազգի ճակատագիրը կարող է տնօրինել միայն կրոնական կառավարությունը. «...հայոց ազգ կըստի մէ՛ ազգ ըսելը քաղաքականօրէն չհասկըցուիր, վասն զի քաղաքականի մասին ինքնագլոխ եւ ամկախ կառավարութիւն չունինք. մեզ իբրեւ իրեն հպատակ ճանցող՝ այն տերութիւնը՝ որում դուն ալ, ես ալ հպատակ ենք, մեր ազգը իբրեւ լոկ կրօնական միութիւն մը կը ճանաչէ, ուստի կրօնական կառավարութիւնը միայն թողած է մեզի, եւ այն մասին ազգերնուս ու քաղաքական գլոխ մը կը ճանչնայ եկեղեցական անձ մը... թէ երբ հրապարակաւ եւ պաշտօնական կերպով կրօնքնիս կորսնցընեմք մէ՛ ազգերնիս իրեն յատուկ եւ առանձին ի՞նչ տեսակ կառավարութիւն կուցենայ»¹⁰:

Կրոնական կառավարությունը հին ժամանակներից գոյություն ունեցող ազգային վարչության հատուկ ձև է, որը մինչև օրս չի լուծարվել տիրող պետության կող-

միջ: Ազգային Սահմանադրությունը «նույն կրօնքի արդիւնքն է», ուստի կրոնի առաքելութեան մեղծումը կհանգեցնի նաև Սահմանադրության վերացմանը»:

Ոչ մի պետություն ինքնակամ կերպով հայերին քաղաքական կառավարության իրավունք չի շնորհի: Միակ հնարավորը գոնե առժամանակ կրոնի և եկեղեցական կանոնների պահանջների համեմատ՝ ներքին կառավարություն ունենալն է: Հատկապես, հայերը քաղաքական ազգ չեն, ուստի նրանց առաջադրանք քաղաքական բնույթի բոլոր պահանջները պետք է համապատասխանեն Օսմանյան (կամ որևէ մի այլ տիրող պետության) օրենքներին: «Քաղաքական ազգ ըլլալու համար անկախութիւն եւ ինքնօրինականութիւն պետք է, այսինքն՝ ուրիշէ կախում չունենալ, ինքն իրեն համար զատ առանձին օրենսգիրք եւ կանոններ ունենալ եւ անոնցով կառավարուիլ»¹: Այդ իսկ պատճառով Հայ եկեղեցու գործող կանոնադրության համեմատությամբ՝ 1860 թ. մշակված Ազգային Սահմանադրությունն ավելի բարեկարգիչ Օրենք չէր կարող տալ (և չի էլ տվել) հայ ազգին²: Ազգային Սահմանադրության իրական մշակությունն ազգային միության կապի վավերացման, ազգի անդամներին ժողովրդավարական ազատությունների և իրավունքների (կարծիք հայտնելու, ուսում ստանալու, ազգային երեսփոխաններ ընտրելու և Ազգային վարչության մեջ ազգային հարցերը մեծամասնության հավանությամբ լուծելու) շնորհման մեջ է: Մինչդեռ ազգի իրական (քաղաքական) անկախությունն իրագործելի է

* Ազգային կառավարության կրոնական բնույթի մասին վկայում են Ռենց Ազգային Սահմանադրության մեջ ամփոփված Ռողվածները. «3. Ազգային վարչութեան պաշտօնական գլուխ՝ Պօյսի Պատրիարքըն է, եւ կեղքօմ՝ Պօյսի Պատրիարքարանը: Ազգային ժողովներն ու խորհուրդները իրենց գլուխ ունելով Ազգին Պատրիարքը՝ Պօյսի մէջ ազգային վարչութեան կննդոտական մասը կը կազմեն, որոյ իշխանութիւնը թոյլը Տաճկաստանի վրայ կը տարածվի... 14. Պատրիարքը Ազգային ժողովոյ մայազահն է եւ անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ» (Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ.Պօլիս, 1860, էջ 8, 12): Նույն սկզբունքները պահպանվում են 1863 թ. Թուրքական կառավարության կողմից վավերացված Ազգային Սահմանադրության տեքստում (տե՛ս Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ. Պօլիս, 1863, էջ 2, 7, 9):

** Այս իրողությունը հստակ ձևակերպել է Սարգիսյանը. «Ազգային Սահմանադրությունն որչափ ազգային, մոլեցափ եւ օսմանան պետական օրենք է» (Սարգիսյան, Հայկական խնդիրն եւ ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910), Ա. հատոր, 1912, Ցառաջարան, էջ Բ): Ինչ վերաբերվում է այդ «իրավակարգի» արդյունքին՝ անձնական, իսկ հետագայում նաև տեղական ինքնավարությանը, ապա այն, ըստ էության, ծնող չի թերվել: Ժամանակին այս մասին վկայել են հայ մտածողները, ինչպես լուսավորիչները, այնպես էլ՝ պահպանողականները: Ահա մի կարծիք ժամանակաշրջանի հայ պարբերականներից մեկում տպագրված մյուսից. «Այս կերպով կառավարութեան ակներև թուլութեան եւ մոլեցա ծածուկ թշնամութեան ջերմիկ, Թուրքիայի քրիստոնեաները ընդհանրապես եւ հայերը մասնատրապես զուրկ են քաղաքական կեանքի ամենակարեւոր տարրից՝ կեանքի և ստացուածքի ապահովութիւնից» (Ազգային տեսութիւն, Հայկական Տաճկաստանի ազատութիւնը և անգլիական մամուլը: «Փորձ», 1877/78, № 2, էջ 376): Համամասն կարծիք հայտնում են նաև այդ խնդիրը ուսումնասիրողները՝ ինչպես օրոյ, այնպես էլ՝ հիմ (տե՛ս Սարգիսյան, Ծշվ. աշխ., էջ 17-19, Ролан-Жекмен, Армения, армяне и трактаты. В кн.: Положение армян в Турции, 2-ое изд-е, М., 1896, с. 18, Ա. Ա. Խառատյան, Արեւմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Ե., 1980, էջ 36-38):

պատմության հետաքննարկում՝ մախ և առաջ մշակութային ինքնության պահպանման միջոցով:

Վերոշարադրյալը հարկ է դիտարկել որպես հակադրում Արևմտյան Հայաստանում 50-ական թվականներին թափ առած Սահմանադրական շարժման գաղափարակիրներ և մրանց խոսակողներ «Մեղու», «Ծաղիկ», մասամբ՝ «Հյուսիսասիայ» հանդեսների վարած քաղաքականության: Ընդհանուր առմամբ այդ քաղաքականությունը հանգում էր Հայ եկեղեցու կառավարման ձևի բարեփոխման պահանջին: Այս առնչությամբ հարկ է մշել, որ 1860 թ. Ազգային Սահմանադրության մեջ արդեն որոշակիորեն սահմանափակվել են արևմտահայ եկեղեցականների և ամիրանների վերնաշերտի արտոնությունները ինչպես նյութական, այնպես էլ՝ վարչական առումներով¹²: Իրավական դաշտում դա արտահայտվել է Ազգային վարչության մեջ երկու առանձին իրավասություններով օժտված ժողովների՝ կրոնական և Քաղաքական, վավերացմամբ¹³: Սակայն, 1861 թ. սկզբից ընդհուպ մինչև 1870 թ. ժողովրդավարական կողմնորոշմամբ առանձնացող մտածողները գաղափարախոսական կատաղի պայքար էին մղում հայ պահպանողականների և Հայ եկեղեցու ու հոգևորականության դեմ¹⁴: Նրանց ցանկությունն, ըստ էության, հանգում էր Ազգային վարչությունից եկեղեցու, իսկ գործադիր իշխանությունից՝ Պատրիարքարանի առանձնացմանը: Արդյունքում եկեղեցին զրկվում էր ազգային կյանքում որևէ ազդեցիկ դեր կատարելու հնարավորությունից¹⁵:

Տեսական մակարդակում այդ ցանկությունը դրսևորվել է հետևյալ խնդիրների՝ ա) խղճի (դավանանքի) ազատության¹⁶, բ) ազգային կառավարության օրինականության չափանիշի՝ ընտրովիության սկզբունքի վրա կառուցված կառավարման ժողովրդավարական ձևի¹⁷, գ) մարդու ազատության, իրավունքների և հավասարության տեսանկյունից եկեղեցու սպասավորներին քաղաքացիական պատասխանատվության հրապիրելու¹⁸, դ) Հայ եկեղեցու կառավարման էության պարզաբանման¹⁹ անհրաժեշտության հիմնավորմամբ: Ինչպես հողվածում արդեն շոշափված խնդիրների, այնպես էլ՝ Հայ եկեղեցու կառավարման բարեփոխման վերաբերյալ Տերոյեանցի հայեցակետը կառուցվում է այդ խնդրի ժողովրդավարականների տեսակետի քննադատության հենքի վրա: Ամփոփ ձևով այն հնարավոր է հանգեցնել հետևյալին:

Տերոյեանցը ելնում է այն մախադրայից, որ կառավարությունը սահմանադրական է, եթե «վարչութեան հաստատուն օրենքներ ունի, ամանկ որ՝ այս կերպ կառավարութեան գլուխը կամ գլուխները իրենց հաճոյիցը հետեւելով՝ այն օրենքներն ուրիւ քան չեն կրնար ընել: Եւ օրենքը ամեն հպատակներուն ծանօթ եւ պարտաւոր-

¹² Այդ ժողովների իրավասությունները վավերացվել է 1-ին հողվածով. «Ընդհանուր ժողովը՝ Ազգին ընդհանրական գործոց տնօրինութիւն իրեն պահելով, սովորական գործոց վարչութիւնը երկու առանձին ժողովներու կը յանձնէ: Կրօնական գործոց մասը՝ Կրօնական ժողովի մը, քաղաքական գործոց մասը՝ Քաղաքական ժողովի մը, իսկ խառն գործոց տնօրինութիւնը՝ այս երկու ժողովոց առնամանակ-եայ մէկ տեղ գալովը ծնագած խառն ժողովի մ կը յանձնէ» (Ազգային Սահմանադրություն հայոց, էջ 7):

դրմանը, որովհետև իրեն ընտրել է առաջ եւ իր մախորդին վախճանէն ետքը դրոշմաւ է առանց կաթողիկոսի, արքիմքմ առանց օրինատր հեղինակութեամբ²։ Մտածողը մերժում է այդ իրավիճակը որպէս ազգային կյանքի հիմքերը խաթկող երևույթ³։

Ընդհանուր առմամբ Տերոյեանցի և հայ լուսավորիչների պայքարը բնութագրելի է որպէս դիմակայություն մրանց պաշտպանած ազգային և համամարդկային մասնակցների միջև։ Լուսավորիչները դիմում էին «բնական մարդուն», «բնական իրավունքին», «գիտական առաջադիմությանը» և այդ հենքի վրա փորձում կառուցել ազգի ապագան։ Տերոյեանցը, ընդհակառակը, ձգտում է պահպանել ազգային կյանքի օրգանական միասնությունը ազգային-մշակութային ավանդույթների (առաջին հերթին՝ կրոնի և Եկեղեցու) պահպանման միջոցով։ Ակնհայտ է, որ ազգային կյանքում որևէ մշակութային մասնակցի մերժումը կամ մշակութային անցանկության անցանկալիությունը խախտում է ազգային կյանքի օրգանական կարգը, որը զգալիորեն թուլացնում է այդ հենքի վրա ձևավորվող ազգային ինքնագիտակցությունը։ Այսօր մեր երկրում հայրենամերժության և տարագրության վտանգի արմատները պետք է որոնել Տերոյեանցի և առհասարակ՝ հայ պահպանողականների ճկատմամբ լուսավորիչների տարած հաղթանակի մեջ։ Մինչդեռ բարոյական հաղթանակի պսակը իրավամբ պետք է հանձնել Տերոյեանցին։

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Այդ մասին տե՛ս Ռիմա Ա. Միրումյան, Կրոնական փիլիսոփայությունը արդի մշակույթի համատեքստում (մեթոդաբանական տեսանկյուններ)։- «Էջմիածին», 2000, № Ե, էջ 69-78։
2. Բնական օրենքի լուսավորիչների ըմբռնման Տերոյեանցի քննադատության հիմնադրույթների մասին տե՛ս Ռ. Ա. Միրումյան, Օրենքի և Կառավարության բնական (աստվածային) խորհուրդը Հովհաննես Տերոյեանցի պատմափիլիսոփայության մեջ (մեթոդաբանական տեսանկյուններ)։- «Էջմիածին», 2001, № Բ-Գ, էջ 55-67։
3. Հ. Տերոյեանց, Նալբանդեանցի մեկ մամակի վրայ։- «Երևակ», 1860, № 87, էջ 91։
4. Տե՛ս Մ. Նալբանդյան, Նամակ «Մեղու»-ի խմբագրին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Ե, 1982, էջ 268-274։

² Ուշագրավ է այն իրողությունը, որ Սահմամադրության համար պայքարող ժողովրդավարականները, կարծես, մոռացել են մատնել Հայ Եկեղեցու իրավասությունները վավերացնող իրենց իսկ մշակված Ազգային Սահմամադրության 21-րդ հոդվածը, որտեղ ասվում է. «Կրոնական ժողովին պաշտօն է՝ ազգային գործը ընդհանուր տեսությամբ։ Իր պարտադրությունն են՝ Ազգին մեջ կրոնական զգացումը զարգացնել, Հայաստանայց Ա. Եկեղեցույ դաւանութիւնն ու ավանդութիւնքը ամխայտ եւ ամարատ պահել, քահանայից կացութիւնը լաւցնելու եւ ապագան ամոքողելու հոգ տանիլ, արժանաւոր եւ բանիբուն եկեղեցականներ հասցնել, եւ Ազգին մեջ ծագած կրոնական վեճերը քննել ու լուծել» (Ազգային Սահմամադրություն Հայոց, էջ 14)։

5. Տե՛ս Հ. Տերոյեճց, Իշխանութիւններուն ծագումը:- «Երևակ», 1864, № 12, էջ 90:
6. Հ. Տերոյեճց, Ըստ առաջին ժամանակի մարդոց կրօնական եւ բարոյական կրթութեանց վրայ, Կ. Պօլիս, 1843, էջ 94:
7. Հ. Տերոյեճց, Իշխանութիւններուն ծագումը, № 13, էջ 98:
8. Հ. Տերոյեճց, Ազգային դաստիարակութիւն:- «Երևակ», 1860, № 88, էջ 114:
9. Հ. Տերոյեճց, Ազգայնութեան վրայ ընդհանուր տեսութիւն:- «Երևակ», 1864, № 34, էջ 266:
10. Հ. Տերոյեճց, «Մեղու»-ի հրատարակչին քանի մը խրատներ:- «Երևակ», 1861, № 97, էջ 17-18, տե՛ս նաև՝ Սահմանադրութիւն և սահմանադրականը:- «Երևակ», 1861, № 109, էջ 15-16:
11. Տե՛ս Հ. Տերոյեճց, «Մեղու»-ի հրատարակչին քանի մը խրատներ, էջ 18, տե՛ս նոյնի՝ Մ. Մ. Այվատեանին ճամակին քննութիւնը Քրիստոսական եկեղեցւոյ կառավարութեանը վրայ, Կ. Պօլիս, 1861, էջ 4:
12. Տե՛ս Ս. Պալասանեան, Պատմութիւն հայոց, Թ., 1895, էջ 737, Убичини А., Де Куннеѣл П., Современное состояние Османской империи, СПб. 1877, с. 209; Luke N., The Old Turkey and the New London, 1955, p. 48, Ա. Հովհաննիսյան, Նալբանդեանը և նրա ժամանակը, հ. I, Ե, 1955, էջ 346-347:
13. Տե՛ս Առեմագրութիւնը Ազգային ժողովոց, Կ. Պօլիս, 1860-70, Ա. Բ. Գ. հատորները:
14. Տե՛ս Ա. Հայկունի, Խղին ազատութիւն:- «Մաղիկ», 1863, № 63, 64:
15. Տե՛ս Հ. Սվաճեան, Ազգային օրինաւոր կառավարութիւն:- «Մեղու», 1860, № 86, էջ 10-11, № 87, էջ 18-21, № 88, էջ 25-27, № 92, էջ 57-60:
16. Տե՛ս Մ. Նալբանդեանց, Երկու տող:- «Մեղու», 1861, № 132, էջ 107-108, № 133, էջ 119-120:
17. Մ. Այվատեան, Եկեղեցւոյ կառավարութիւնը Սահմանադրական է, թե՛ Միապետական:- «Մեղու», 1861, № 124, էջ 35-40:
18. Հ. Տերոյեճց, Մ. Մ. Այվատեանին ճամակին քննութիւնը Քրիստոսական եկեղեցւոյ կառավարութեանը վրայ, էջ 2:
19. Նոյն տեղում, էջ 74:
20. Նոյն տեղում, էջ 21, տե՛ս նաև նոյնի՝ Նալբանդեանցի մէկ ճամակի վրայ, էջ 95:
21. Հ. Տերոյեճց, Մ. Մ. Այվատեանին ճամակին քննութիւնը Քրիստոսական եկեղեցւոյ կառավարութեանը վրայ, էջ 17:
22. Հ. Տերոյեճց, Կաթողիկոսի ընտրութեան լանձնաժողով:- «Երևակ», 1861, № 98, էջ 12:
23. Հ. Տերոյեճց, Բարեկարգութիւն եւ ընտրութիւն կաթողիկոսի:- «Երևակ», 1866, № 104, էջ 60:

ՌԱՖԱՅԵԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Պապմական գիտությունների դոկտոր

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՆԵՐԸ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ

ՄԵԿՆԱԿԷՏԸ

*Սկզբից ի վեր հայությունն ու իր քրիստոնեությունը
ձուլում են ի մի բնություն... Այս երկուսի ճակատագիրը նոյնացած է:
(ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ)*

Մեծ մարդը - դա սպասուելիք օգնությունն է, մխիթարությունը: Մեսիան, որ ժամանակների մայրը երթեմն-երթեմն աշխարհ կ'ուղարկե այս կամ այն ժողովրդի ու մարդկության համար:

(«Մեր յեղափոխության արարիչը» ճառի սկիզբը)

Նա', որ գիտե ճախատեսել անցքերը եւ ցանկալի ուղղություն տալ նրանց, նա', որ փարոսօրէն լուսաւորել գիտե իր ժամանակաշրջանը՝ նոր ուղիներ բանալով իր ժողովրդի մտքի բանուկ ճամփաներէն դուրս...

...Նախ կրողը եւ ուսուցիչն է նա ցեղային բարոյականի...

Նրա մէջ եթէ դեռ չի մեռել, ապա հոգեւարում է եւր: Պարզատես է, վշտակիր, հերոս... Նրան յաջողում է փոխել իր ժողովրդի հոգեբանությունը, ճակատագիրը, պատմությունը: Սահման չէ դրում նրա սիրելու եւ զոհաբերելու կարողութեան...

Առաջնալի սիրտ, իմաստասերի գլուխ, աղամանդէ ճակատ - ահա՛ կատարեալ առաջնորդը:

(«Նոր հայը, վաղուայ առաջնորդը» յօդուածից)

Քաղաքական սուրբեր են նրանք, որոնք իրենց ուսերիմ՝ ի խնդիր իրենց ժողովրդի լուսազոյն ապագայի՝ առնում են անելի ծանր բռն, քան մարդկօրէն կրել կարելի է:

(«Բանտային գրառումներ»)

Գարեգին Նժդեհի մասին անելի ճշմարտացի, քննդգրկում ու խիստ բնորոշում դեռուար է տալ, քան այն, ինչը որ նա բանաձեռել է պետական գործչի ու առաջնորդի մասին իր այս ու բազմաթիւ այլ խոհերում:

Նա քսաներորդ դարի առաջին կէսի համաշխարհային իմաստագիտութեան կարկառուն դէմքերից է, այդ շրջանի պետական ու քաղաքական խոշորագոյն գոր-

ծիշներից եւ ժամանակի մեծ զորահրամամատարներից ու ռազմարուեստի տեսաբաններից մեկը:

Գարեգին Նժդեհը 20-րդ դարի մեր խոշորագույն հրապարակախօսն է, բեմասացը, պետութեան ղեկավարը, հայոց մոր ռազմաճակատաբանութեան հիմնադիրը, 20-րդ դարի հայոց առաջին սահմանադրութեան հեղինակն ու կիրարկողը, հայերէնի լեզուաոճն ու բառապաշարը հարիւրատը մորակերտութիւններով հարստացրած տաղանդաւոր գրող-արուեստագէտը եւ վերջապէս հայոց մակեդոնացի ծնունդ ազգային զաղափարախօսութեան ինքնապաշտպանական համակարգի՝ Մամիկոնեան ուխտի վերածնունդն ու մոր ժամանակներից ազոցող տեսաբան-իրագործը, որի՝ այդ մարգում կատարած վիթխարի դերը մոյճ արժէքն ունի, ինչ որ Կոմիտաս վարդապետի եւ Թորոս Թորամանեանի կատարածը հայ երգի ու երաժշտութեան ու հայոց ճարտարապետութեան ասպարէզներում:

Գարեգին Նժդեհը դարձաւ 20-րդ դ. հայոց ռազմարուեստի խոշորագույն տեսաբանը: Նա վերականգնեց¹, հարստացրեց ու կիրարկեց հայոց կորուսեալ ու մոռացուած մարտաքառապաշարը, յատկապէս վարժանքների ժամանակ հայերէն խրախոյսներն ու կոչ-հրամանները (հաւաճ, շրջաճ, ուղղվիր, ծնկաճ, ցրուվիր, փոկի՛ առ, խոցի՛ր, կրկնակի դա՛րձ եւ այլն):

Հիմնուելով Մամիկոնեանների մշակած ռազմագիտութեան, ռազմարուեստի տեսութեան ու ռազմաճակատաբանութեան վրայ եւ դրանք հարստացնելով Ռուբինեան իշխանների, Լեւոն Մեծագործի, Դաւիթ-Բէկի եւ 20-րդ դ. հայ խոշոր հայդուկապետներ Անդրամիկի, Սեբաստացի Մուրադի, Եփրեմ Խանի, Համազասպի, Քեռու, Խէչօյի եւ ուրիշների մղած կռիւների, յատկապէս Ղարաքիլիսայի հերոսամարտում կիրառուած ռազմարուեստի վրայ, Գ. Նժդեհը բիրեղացրեց, ամբողջացրեց եւ մի մոր բարձունքի հասցրեց հայոց ռազմագիտութիւնը՝ փակելով այն անքայտը, որ առաջացել էր մեր ազգային ռազմարուեստի մէջ՝ Դաւիթ-Բէկի ու Արցախի մեղիքութիւնների հրաշակերտած յաղթանակներից ի վեր:

19-րդ դարի երկրորդ կեսին եւ 20-րդ դարակզբին եւրոպայում մշակուեց փիլիսոփայական մոր ուղղութիւն, որը ճոզելելութեան դիտակէտից ուսումնասիրում էր ազգային զարթօնքի ու վերամորոգչութեան խնդիրները, ժողովրդի, ցեղի ու անհատի յարաբերութիւնները (Տոմաշ Մասարիկ, Ալֆրէդ Ֆուլք, Գրուեդփիգ, Գուստաւ Լը Բոն, Գաբրիէլ Տարդ, Կայզերլինգ, Լէոպոլդ Վիգէ, Ֆաբր դը Օլիվէ, Կարլէլ, Բերգսոն, Ռըման եւ ուրիշներ): Ուսումնասիրելով եւրոպական իմաստասէրների, ընկերաբանների, ճոզելելութեան տեսութիւնները եւ, հիմնուելով հայ բազմադարեան հասարակական-քաղաքական մտքի ու իմաստասիրութեան փորձի ու մտածումների վրայ, Գարեգին Նժդեհը Հայկ Ասատրեանի եւ ուրիշների հետ միասին ստեղծեց փիլիսոփայական, ընկերաբանական ու ճոզելելութեան յիշեալ ուղղութիւնների հայկական դպրոցը, որը, ցաւօք, դեռեւս հիմնաւորապէս ուսումնասիրուած չէ:

¹ Տե՛ս Գարեգին Նժդեհ, Զօրաքաղաքային կամոնադրութիւն, Երևան, 1993, էջ 23-54:

Նրա իմաստասիրական միտքը հիմնականում դրսևորում ու խտանում է փոքր չափերի աստյոթների մէջ: Հարազատներին Տաշքենդից գրած 1955 թ. մարտի 21-ի նամակում նա շեշտում է. «Թուղթ չլինելու պատճառով բանտարկությունն առաջին տարիներին ես ակամայ գրում էի ֆրագմենտալ, իսկ երբեմն՝ աֆորիստիկ*, որոնք ֆրագմենտալ բնույթ ունեն»:

Այս առումով մենք աներկբայ կարող ենք ասել, որ նրա փիլիսոփայությանն ա-տաղծը զուտ ազգային է նաեւ ձեւի առումով, որը կառուցուած է մոյմ սկզբունքնե-րով, ինչ որ մեր քերթութիւնը, խաչքարագործութիւնը, շարականներն ու ղոգետը այլ երգերը, մանրանկարչութիւնը.

- Փոքր չափերի մէջ անընդգրկելի խտացումներ:

Այս տեսակի իր բազմաթիւ աստյոթներով Գարեգին Նժդեհին անվարան կարելի է դասել համաշխարհային աֆորիստիկայի (աստյոթակերտութիւն) խոշորագոյն դէմ-քեր Դեմոսթենեսի, Կոնֆուցիոսի, Սեմէկայի, Բեկոմի, Օոպէնհայմերի, Գեթեի եւ միւսների շարքը: «Նժդեհի ոճը բեկորային է, մտածումը՝ ամբողջական... Բչեր, շա՛տ քչեր մեր կենանքում խօսում, գրում կամ գործում են «արիւնով ու ջղերով».- Նժդեհի փիլիսոփայի մասին գրում է նրա ամենամերձ զինակիցն ու զաղափարակի-ցը՝ 20-րդ դարի հայ խոշորագոյն իմաստասէրներից մէկը՝ Հայկ Ասատրեանը.- բարձր տեմպերամենտի եւ հզօր անհատականութեան ղոգետական տիպարներ են դրանք, որոնք այճի են ընկնում իրենց հարազատած զաղափարներն ու ճշմար-տութիւնները կրօնական խանդաւորութեամբ ապրելու յատկութեամբ եւ իրենց ինքնատիպ ոճով - ընդհանրապէս ֆրագմենտար (կտրատուած) բնութի [եմ]:

Անկասկածօրէն դրանցից մէկն այս գրքոյկի (նկատի ունի Նժդեհի «Յեղի ղոգու շարժը» գիրքը) ղեղինակն է...

Պիտի դիմորոշենք ղեղինակը, այսինքն՝ պարզենք ղոգետը կարգի ա՛յն տուեալ-ները, որոնք պայմանադրում են նրա ցեղաշունչ խօսքը եւ գրութեանը:

Ա. Բարձր խառնուածք.- Ո՛չ միայն Նժդեհի խօսքը, այլեւ նրա գրական ոճը թող-նում են ա՛յն անալլալ տպաւորութիւնը, որ մա բարձր խառնուածքի մի ստեղծա-գործ է. Նա ապաւինում է մերգերբնականին, սակայն սեղական «ես»-ի փնտրման փտանգից սարսափած՝ մերեսում է մի բնական պատուանդան, աստուածացնում մի

* Նամակի ուսերէն բնագիրը գտնում է Լեւոն Տէր-Յարութիւնեանի դստեր՝ Օլիայի թոռների՝ Ջաքարեանների ընտանեկան դիւանում, լուսապատճենները՝ ՀՀ Պատմութեան պետական թանգարա-նում եւ «Նախիջեւան» հայրենակցական միութեան գրադարանում, հայերէն թարգմանութիւնը տե՛ս «Նախիջեւան» պարբերաթիւթ, 2001, թիւ 20, էջ 14: Ջաքարեանների ընտանեկան դիւանում պահպան-ւում եմ թանտից հարազատներիմ գրած Նժդեհի մօտ 50 նամակ, ինչպէս նաեւ զամազամ ատեաններիմ յղած Լեւոն Տէր-Յարութիւնեանի բազմաթիւ դիմումների պատճեններն ու դրանց մի մասի պաշտօնա-կան պատասխանները, որոնց օգոութեամբ բազմաթիւ շտկումներ մտցուեցին Նժդեհի կեանագրութեան բանտային տարիների չուսումնասիրուած կողմերի վրայ: Այստեղ ուզում ենք մշել տիկիմ Դոմարա Ջա-քարեանի (Օլիայի հարսի) թմախնդիր ու հոգատար վերաբերմունքն այդ ձեռագրերի հանդէպ, որոնք մա խմանքով դասդասել, ձրարել, պահում է ընտանեկան դիւանում: Բանտից գրած Նժդեհի քոյր մա-մակները ուսերէն եմ, քանի որ խորհրդային թանտարկեալը իրատունք չուէր ուսերէնից թացի այլ լեզուով նամակ գրել որեւէ մէկին:

համեստ եւ համակուելով կրօնական զգացումով, թափանցում է ենթագիտակցականի մարզում: Համեստը, որ դարձած է Նժդեհի հոգեւոր պատուանդանը, ցեղն է: Սա է շեշտում եւ նրանգատումն նրա խառնուածքը: Ենթագիտակցականը, որում անհատական «եւ-ը հանդիպում է ցեղային համեստ-ի տարերքին, ամեն դեպքում չի հանդիսանում հոգեւոր մեղմնաբույս: Այդ կախումն է նրանից, թե տուեալ խառնուածքը որպիսի՝ դիրքորոշման է սկսում իր անօթին-անհատին, քախողակա՞ն, թե՞ մերդաշնակելի: Առաջին դեպքում՝ ցեղային եւ անձնական «եւ- երի միջեւ ստեղծում է անկամքելի մի վիճ, որի հետեւանքով անհատը մատնւում է մերքին ողբերգութեան: Նրա խառնուածքը սկսում է աղօտանալ եւ ի վերջոյ նա դառնում է սովորական մի եսապաշտ, անձնական փառասիրութեան գերի: Երկրորդ դեպքում՝ երկու «եւ-երի մերդաշնակ ձուլումով կաղապարում է ցեղատիպ մարդու հուժկու անձնատրուփիւնը: Ներհոգեւորի այս բարեբախտ ձուլումով, ահա, կերպարտուած է Նժդեհի էությունն երկրորդ գիծը, - նրա անհատականութիւնը:

Բ. Հզօր անհատականութիւն - Մենք գործ ունենք փոթորկալից անցեալի տէր մի անհատի, հայկական չափանիշներով վերցրած պատմական մի անձնատրուփեան հետ... որն իր ժողովրդի վտանգի պատմական պայմաններին՝ դառնում է նաեւ նրա մարգարէն, գուշակը եւ առաջնորդը...

Գ. Ֆրագմենտարիզմ - Արդէն նկատուեց, որ քարձր տեմպերամենտի ու հզօր անհատականութեան հոգեբանական տիպարին իւրապատուկ է ֆրագմենտար մտածում, որով եւ ո՞ն: Մեր գրականութեան մէջ այսօրինակ ոճն իր կատարելութեանն է հասնում Նարեկացու մօտ, իսկ համամարդկային հոգեւոր ստեղծագործութեան մարզում նրա տիտանը Նիցշէն է:

Նժդեհի ոճն ու մտածումն էլ կրում են ֆրագմենտարիզմի որոշ դրոշմ: Նրա մտածումն արդէն գուրկ է սիստեմների շրջանակում սեղմելու ընդունակութիւնից: Բոլոր ֆրագմենտարիստների պէս նա էլ ստեղծագործում է ո՛չ թէ թելերով, որոնք ի վերջոյ հիստուածքի, այսինքն՝ սիստեմի պիտի վերածուեն այլ հանգույցներով: Ո՛չ թէ խաղաղ զարգացում, այլ խոյանք. ո՛չ թէ երկարապատում եւ զգուշատր շարապարումներ, այլ՝ կարճ խորհրդածութեանց լանկարծօրէն յաջորդող վճռաշունչ քանաձեւումներ- ահա Նժդեհի մտածման եղանակը:

Ֆրագմենտար ոճն ըստ ինքեան ապացոյց է ենթակալի հոգեւոր աշխարհի հարքատութեան եւ խորութեան:

Ֆրագմենտարիստը խուսափում է ձեւերին եւ սովորութեանց կոմպրոմիսներ անել: Զօրեղ է նրա մտքի կաղապարիչ ազդակը: Բնագանցումի արուեստագէտ է նա: Նրա արտայայտութիւնները պատկերատու ընդհանրացումներ են - համադրութիւն եւ այլաբանութիւն միասին: Նրա երեւակայութիւնն անիշխանական մի ուժ ունի, մի ուժ, սակայն, որ միշտ մեր կերպեր է ծնում ֆրագմենտարիստը մորաստեղծ է: Նրա երջանկութիւնն է դառնալ իր ներկայացրած հաւաքական «եւ-ի պատգամախօսը: Այդ է պատճառը, որ մարդկային յարաբերութեանց աշխարհում, հոգեհաղորդ տարրերի համար նա դառնում է անգերազանցելի կազմակերպիչ: Սլաքներ ունի ֆրագմենտարիստի խօսքը, նրա մտքերը պայթուցիկներ են, որոնք ձգտում են

սրտերը հրդեհել, երկարաշունչ չեն նրանք, որովհետև շրթունքի խօսք լինելուց առաջ, սրտի պոռթկումներ են:

Ֆրագմենտար ռեաբանի հոգեբանության այս գիծերը մենք ընդգնշարժում ենք արդեն «Էջեր իմ օրագրեն» ու «Բաց Նամակներ Հայ Մտաւորականութեան գրողականներն, «Որդիների պայքարը հայրերի դէմ» գրքի եւ «Յիշիր պատերազմը» յօդուածաշարքի մէջ: Մենք հանդիպում ենք նրանց մասն ա՛յս գրողական, ինչպէս մասն բոլոր դէպքերում, երբ կարդում եւ մանաւանդ երբ լսում ենք Նժդեհին... Նժդեհը նրանցից է արդեն, որոնք մոլանում են իրենց երկին»²:

Վերջապէս Գարեգին Նժդեհին անվերապահօրէն կարելի է համարել հայոց գրականութեան ու լեզուամշակութի ամենախնայաւոր մերկայացուցիչներից: Նկատի ունենալով միայն նրա զուտ գրական ստեղծագործութիւնները՝ արձակ բանաստեղծութիւնները, որոնք մեր գրականութեան այդ տեսակի լատագուն մոլորներից են (օրինակ՝ «Ռազմիկը չի մեռում» կամ խէչօյին մուրումով՝ «Խոկում է Արարիչը», ինչպէս մասն Գարեգին Դարդուհի եւ studeiosus ստորագրութեամբ «Պատանհի», «Ընկեր», «Խաթաբալա», «Ժայռ», եւ այլ թերթերում 1911-1918 թթ. տպագրած արձակ քերթուածները եւ 1915 թ. փետրուարի 23-ին աւարտած նրա արձակ անտիպ բանաստեղծութիւնները («Մեռնող սրտի հեքիաթը», «Ինչո՞ւ ես տխուր», «Տապանագիր», «Հովուի սերը», «Հաշտութիւնը», «Իմ սերը», «Մեռնող սրտի հեքիաթը»)³, այլեւ իր ամբողջ խոհանմաստասիրական ստեղծագործութիւնն ու հրապարակախօսութիւնը: Հարիւրաւոր ոճեր ու բառեր է ստեղծել, որոնք վստահեցնում, հզօրացնում ու պերճացնում են մեր լեզուն (առավարութիւն, ամապաշխարհ, անապատումակ, անդորրաւետ, անգիղջ, անձնավկայութիւն, աշխարհածուփ, ապագօր, ապառաժահիմն, առհառութիւն, աւանդագահ, աստուածագարդ, արիադաւան, արիւնագօր, բաժանատիրութիւն, բազմադէտ, բնօրէն, բռնամահ, գողուղի, գրավաստակ, գրչամարտ, գոտելոյծ վիճակ, գեղապրեց հայը, դաւամիտութիւն, դիմածոութիւն, դիւալետութիւն, դժօխագգի, դոշատէր, եսաբալի, եսամերժ, երկքաւոդ, քրջանկատու, զօրոյթ, թեւատ, թշուառաբանել, թրքորոյշելիզմ, թընելի, ինքնագօր, ինքնահսկայացում, խեղաբարոյ, խորաթուն, խորհողութիւն, կարճայուշ, կորովաթափ, կրկիսապաշտական, հակառակայորդոր, համահայ, հայրենակրօն, հայրենատէր, հայրենատիրական, հայաբարոյ, հայաթշնամի, հզօրագօր,

² Հ. Ասատրեան, Գ. Նժդեհ «Յեղը եւ տակամը», խորհրդածութիւններ. «Յեղ եւ հայրենիք» կիսամեայ հանդէս, թիւ 2, Սոֆիա, 1936, յունիսի 15, էջ 57: Աւօ, Նժդեհ, Պէրոյթ, էջ 466-470:

³ Տե՛ս եղ. Զարեմցի ամուսն Գրականութեան եւ արուեստի թանգարան, «Հաւաքածոյ» ֆոնդ: Սոֆիայից մօրը եւ եղբորը՝ Լեւոնիմ ուղղում 1906 թ. հոկտեմբերի 15-ի մասնակից տեղեկանում ենք, որ մա շուտով հրատարակելու է իր 70 բանաստեղծութիւնները, որոնց մի մասը գրել է Սոֆիայում (ՀՀ հաստատական-քաղաքական կազմակերպութիւնների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիւ (այսուհետեւ՝ ՀՀ ՀՊԿԵ ԿՊԱ), ֆ. 4047, ց. 3, գ. 1, էջ 553). հայերէն թարգմանութիւնը տպագրում է «Նախընթաց» պարբերաթիւ, 2001 թ., թիւ 20: Նոյն դիւանում պահպանում մէկ այլ փաստաթղթում մշում է. «Բանաստեղծութիւնների տետրը կընդ դատական գործին» (ֆ. 4047, ց. 3, գ. 6, էջ 4409): Նժդեհը «Գ. Դարդուհի», «Գ. Դ.», «Գ.» եւ «Նժդեհ» ստորագրութեամբ 1911-1918 թթ. չափածոյ ու արձակ բանաստեղծութիւններ է հրատարակել Թիֆլիսի, Բաքուի եւ Գիւմրիի թերթերում:

հզօրանք, հոգեիզույժ, հոգեհաշմ, հոգեզհծ, հրաքերան, ճշմարտագանց, մահմեթժո ռզի, մահապատրաստ, մահարուեստ, մահրագործ, մրափողութիւն, յաւերժաշունչ, յաիտեմագիր, յորդեռանդ, մեղհաւատ, մեմզագործ, միթակրօմ, մուաստախոհ, շիմարարել, շմացեղ, ռզեթափ, ռզեսպամ, ռղջապահիկ, ռճրառաւ, չարամեկմեղ, չարարուեստ, չեկայաչարչար, պաշտօնապղծութիւն, պայքառումակ, պատմաճանաչ, պատրապաշտ, պարսաւասէր, պղծադաւան, քանապաշտ, ստամտաւորակամ, ստրկագրաստային, վայմասող, վայրաբանութիւն, վաստակամուր, վսեմարան, վսեմախոհ, տառապապաշտ, տարօնաշունչ, տարօնակամութիւն, տկարոգի, ցանցառաթիւ, ցեղագագացիկ, ցեղախոյս, ցեղակրօմ, ցեղակնիք, ցեղել, ցեղահաղորդ, ցեղահայրոյնութիւն, ցեղահանճար, ցեղամարդ, ցեղամերձ, ցեղաճանաչ, ցեղահայտնութիւն, ցեղապահ, ցեղապսակ, ցեղավար, ցնորապաշտ, ուժապաշտ, ուղեհարթութիւն, փարոսօրէն, փառագարդել, փառատաճար, փառապսակ, փոխառիկ, փութալճիո եւ այլն):

Իր պատկերաստր մտածողութեամբ մահմեթից յիշեցնում է եղիշէ պատմիչին ու Ա. Գրիգոր Նարեկացուն, մտերից՝ Յակոբ Օշականին, յատկապէս Աւետիս Ահարոնեանին, որի հետ ոճի առումով քաւական ընդհանրութիւններ ունի:

Նրա պատկերային մտածողութեան մասին գաղափար տալու համար քերեմք մի քանի օրինակներ.

«Ո՛ր էիր երէկ, երբ դաւադրուած հայութիւնը մի աստուածային խոյանքով Արաբատեան երկիրը վերստին ցեղի տունը դարձրեց:

Իր սեփական տառապանքի մէջ մկրտուած հա՛յն է աշխարհ գալիս... Նո՛ր հայը, որի դրօշակէն վաղը պիտի կախուի մեր ցեղի յաղթանակը:

Մեր կեանքում ամէն կեղծիք մի գերեզման է ճշմարտութեան համար:

Վայ այն ժողովրդին, որի առաջնորդը կատարեալ չէ՝ ապագան բազում խաչեր ունի պահած նրա համար:

Ղարաքիլիսէի օրհասական օրերին թուրք հորդանների հետ մահը կանցնէր Ախտրեանը... Սիւնիքում պանթօրաճանկանները կը մկրտէին յեռնահայութեանը վերածել դիակների կամուրջի՝ թուրք եւ թաթար հայրենիքների միջեւ:

Ընթերցո՛ղ, ես տեսայ հոգով ազատը ստրկութեան մէջ եւ սիրեցի մարդը: Ես տեսայ ստրուկն ազատութեան մէջ եւ զարշեցի մարդէն:

Ժաւօք, Նժդեհի ցեղակրօնութիւնը ոմանց կողմից աղաւաղուել ու սխալ մեկնաբանութիւններով է քարոզուել դեռեւս ստեղծման փուլում:

Քանի որ Նժդեֆը տասնամյակներ շարունակ հայրենիքում փակի տակ եղած հեղինակ է եղել, ցրա աշխատություններն ու մտքերը մեծագիտյալ - սխալ են մերկայացրել մաե մերօրեայ Հայաստանում: Խօսքը յատկապէս վերաբերում է ցեղակրօնութիւնը քրիստոնէութեանը հակադրելու անհեթեթութեանը, որից հասանումանը՝ ցրա մտքերը ամբողջութիւնից կտրելու եւ կամայական կերպով մեկնադրանելու ճանապարհով: Նշուած խեղաթիւրումների համար «հիմք» են ընդունել ցրա երկու աշխատությունները՝ «Ցեղակրօն ուխտեր եւ ցեղակրօնութեան հաւատամքը» (1933 թ.) եւ «Մեր յեղափոխութեան արադիչը» դամբանականը, որ մա խօսել է Քրիստափոր Միքայէլեանի շիրիմի (1924 թ.): Այդ աշխատութիւններից արուած մէջբերումներով էլ բացայայտեմք թիրիմացութիւնն ու թիրըմբոնումը:

Առաջին աշխատութիւնից վկայակոչում են դրա՝ իրենց կողմից խմբագրուած ու մկրատուած տարբերակը (որ տպագրել են մի քանի անգամ) եւ յայտարարում, թէ Նժդեֆը քրիստոնէութեան փոխարէն մոր կրօն է ստեղծել:

Մէջբերեմք ցեղակրօնութեան անհրաժեշտութիւնը հիմնադրող մշուած տեսական աշխատութեան այն հատուածները, որոնց խեղաթիւրումով կատարուեցին վերոյիշեալ հետեւութիւնները. «Ցեղակրօնի համար չկայ աւելի մեծ վատութիւն, քան հոգեւոր խզումը սերունդների միջեւ: Նորահաս սերունդը կտրուեց անցնող կամ անցած սերունդներէն - մա էապէս կտրում է միմյ այդ գոյութիւն ունեցող ցեղի արժէքներէն ու սրբութիւններէն, կրօնէն ու քարոյականէն»:

Ոչ մէկ կասկած, որ սերունդների միջեւ հոգեւոր խզումը աշխարհի ամեմական տբանը համարող Նժդեֆը, որը Ցեղակրօն ուխտերից կոչ է անում չկտրուել «ցեղի սրբութիւններէն, կրօնէն ու քարոյականէն», չէր կարող մի մոր կրօն հիմնել: Այնուհետեւ շարունակում է. «Իսկ եթէ կրօն է դա (ցեղակրօնութիւնը - Ռ. Հ.), ապա դա կրօն է ցեղային հպարտութեան, ուժի եւ արիութեան, դա քր կրօնն է, մորահաս սերունդ» (այս եւ յետագայ ընդգծումներն իմն են - Ռ. Հ.):

Ցեղակրօնութեան «Հաւատամքի» մէջ գրում է. «Եւ ցեղապաշտ եմ, եւ ահա պաշտում եմ մի այլ աստուածութիւն - ցեղի արիւնը, որի անադատութեան մէջ է իմ ցեղի ապագան» (հատուած Դ):

Այս մի քանի մախադասութեան մէջ Նժդեֆը Աստուած-կրօն է համարում.

Ցեղի հպարտութիւնը, արիութիւնը, ուժը եւ արիւնը:

Այսքանից եզրակացնեմք, որ Նժդեֆը քրիստոնէութիւնից հրաժարուել, դարձել է քազմաստուած կամ առնուազն՝ «Արիւնակրօնութիւն» է քարոզում Աստուած հռչակելով ցեղի արիւնը...

Հասկանալի է՝ ընդգծուած մտքերը եւ իր կողմից շեշտող «մի այլ աստուածութիւն» քառակապակցութիւնը չեն անտեսում իր մայր դաւանանքը՝ հայոց քրիստոնէականը, ոչ էլ որեւէ հիմք են տալիս՝ մրան՝ մոր կրօնի հիմնադիր համարելու, ինչպէս «չարամեկնեցից» (իր բառն է) մի քանիսը: Նա ամերիկահայ երիտասարդութեանը քարոզում է ցեղակրօնութիւն, «որով անհայրենիք հայութիւնը հոգեւոր գրահ կը հազնի՝ օտար միջավայրերի այլասերիչ ազդեցութիւններին յաջողապէս դէմ դնելու համար», քարոզում է մայր կրօնից բացի «պաշտել մաե մի այլ աստուածու-

թիւն - ցեղի արիւնը»։ Իսկ «Ճեղակրօնութիւնն իբրեւ յաղթանակի գօրոյթ» աշխատութեան մէջ գրում է, որ ցեղը «ժամանակների վկան է, յաւիտեանական հայր, Աստծոյ գործակիցը»։ Այստեղ եւս նա ոչ միայն մոր կրօն, մոր Աստուած չի ստեղծում-յօրինում, այլ ցեղը բարձրացնելով հասցնում է Աստծուն՝ հռչակելով «Աստծոյ գործակիցը»։ Պատկերատու մտածողութիւն, որով հայերն սովոր ենք շեշտել երեւոյթի գերկարեւորութիւնը, ինչը քնական է մեր լեզուամտածողութեան համար («Քեզ Աստծոյ չափ սիրում են», «Դու իմ Աստուածն ես», «Կարօտից մեռնում եմ», «Մեռա սպասելով», «Հագար տարի չեմ տեսել» եւ այլն)։

Այժմ քննենք «Մեր յեղափոխութեան արարիչը» յօդուածը։

Քանի որ այն ընդամենը երեք էջ է, խաթարիչները չեն համարձակուել քննադիրը հրատարակել կրճատում-աղաւաղումներով, ուստի ամբողջ նախադասութիւնից անջատել են իրենց պէտք եկած մասը, ներկայացրել ու մեկնաբանել իրենց ուզած ձեւով՝ թէ իբր Գարեգին Նժդեհը հայ ժողովրդին ասում է. «Ի՞նչը մղեց քեզ միամտօրէն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վտանգաւոր խօսքին։ Դու խաբուած ես, ժողովուրդ, որ գոհն ես քրիստոնէական քարոյսխօսութեան, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շպար, որպէս քօղ եւ դիմակ՝ ուժեղների հոգու համար»։

Միմչդեւ Նժդեհի խօսքերը ճիշտ մէջբերելու ուղարկում ուրիշ բան է պարզում։ Ահա այդ հատուածը՝ բովանդակութեան նւ մտքի վրայ էականօրէն չանդրադարձող որոշ կրճատումներով.

«Գողգոթայէն՝ Արեւմտահայաստանէն կը բարձրանար աղաղակը հաւաքաւառ խաչեցեալի, - օգնութիւն, փրկութիւն ինձ։ Իսկ մարդկութիւնը՝ յանցաւոր ու անտարբեր, կը պատասխանէր.

- Մարա՜ն ես, արք արցունքդ...

- Կոտորու՜մ ես, որովհետեւ թոյլ ես...

...վաղուց է, ինչ եկեղեցիներիդ զանգերի քաղցր դօղանքը չես լսում, առանց իւտէալի եւ վեհութեան կը սողա՜ս միայն - ստորո՜ւկ ես՝ դո՛ւ ես մեղաւոր, դո՛ւ։ Ի՞նչը մղեց քեզ միամտօրէն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վսեմ, բայց վտանգաւոր խօսքին։ Ո՛վ ասաց, որ թոյլը մեղաւոր չէ, որ թոյլ է...

Դու խաբուած ես, ժողովուրդ, որ գոհն ես քրիստոնէական քարոյսխօսութեան, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շպար, որպէս քօղ եւ դիմակ՝ ուժեղների հոգու համար։ Թշուոյթիւնը, ասում է աշխարհը, ծնուած է սնուցանելու ուժը։ Ուժն է ծնում իրաւունքը...

Այս էր աշխարհը հայկական Գողգոթայի հանդէպ...

Այսպէս կը պատասխանէր մարդկութիւնը մահուան դատապարտուած այս ժողովրդին՝⁴ (Ընդգծումներն իմն են - Ռ. Լ.)

Նախ՝ իրենց խորքում այս խօսքերը քրիստոնէութիւնը ժխտող, մերժող, առաւել եւս «Նոր կրօն» ստեղծելու հիմք հանդիսացող մտքեր չեն, ինչպէս ճգնել են ներկա-

⁴ Գարեգին Նժդեհ, Հատըմտիր, Երեւան, 2001, էջ 306-307։

յացնել: Այստեղ ասում է, որ աշխարհը մեզ համարում է քրիստոնեական բարոյա-
խօսութեան զոհը:

Երկրորդ՝ ամենակարեւորը. սրանք Նժդեհի խօսքերը չեն, այլ «աշխարհի» պա-
տասխանը «մահուան դատապարտում» այս ժողովուրդին:

Դրանք ոչ միայն նրա խօսքերը չեն («մարդկութեան», «աշխարհի» խօսքերն են՝
ուղղում «հաւաքավառ խաչեցեալին»՝ հայ ժողովրդին), այլև իր համար անընդու-
նելի, այսպանելի են, քանի որ այդպէս ասողներին նա յայտարարում է «յանցաւոր ու
անտարբեր»:

Իրօք, եթէ քրիստոնէութեան բարոյախօսութեան մասին նրա մէջբերած խօսքե-
րը համարենք Նժդեհի մտքերը, ապա մոյմ տրամաբանութեամբ նրա խօսքերը պի-
տի համարենք նաեւ «Մարա՛ւ եւ, արբ արցունքդ» միտքը եւ յայտարարենք, որ
Նժդեհը «Մեր լեղափոխութեան արարիչը» դամբանականում հայ ժողովրդին կոչ է
անում ծարաւելիս խմել սեփական արցունքը...

Մինչդեռ այդ ամբողջ ճառի միտք բանին հետեւեալն է. «Քրիստափորը եկաւ, ու
հայ իրականութեան մէջ սկսուեց լեղաշրջում: Ապափնելով սեփական ուժերին, հայ
ժողովրդի «որդիները որպէս ապստամբ կը մետուին լեռները, արհաբար կը չափ-
ուին բանակների հեռ, կանգիտանան վտանգը, կարհամարհեն մահը, ժպիտը երես-
ներին կը բարձրանան կախաղանները... Քրիստափորի շնորհիւ քաղաքական մու-
րացիկը կը դառնա մարտիկ»: Այս ամենի արժէքը եղաւ այն, որ հայութիւնը Քրիս-
տափորի հիմնած կուսակցութեան ծնունդից 28 տարի յետոյ վերականգնեց իր պե-
տականութիւնը:

Կարծես նախագայով, որ մի օր կարող են գտնուել մարդիկ, որ իր խօսքերը պի-
տի մեկնաբանէին իրենց ուզածի պէս, Նժդեհը յիշեալ իր դամբանականի դիտարկ-
ւող հատուածի սկզբում էլ, մէջտեղում էլ, վերջում էլ շեշտում է, որ «յանցաւոր ու
անտարբեր» մարդկութիւնն էր մեզ այդպէս ասում, «պատասխանում»:

Նոյնը վերաբերում է նաեւ մէջբերուած հատուածում նրա օգտագործած՝ «Ուժն
է ծնում իրաւունքը» ասոյթին: Այդ խօսքերը ազատ թարգմանութիւնն են 1896 թ.
Բազելում սիոնականութեան հիմնադիր Հերցելի կարդացած՝ «Սիոնի իմաստուն-
ների արձանագրութիւնները» դասախօսութեան մէկ արտայայտութեան:

Այդ միտքը, որով սկսում է թիւ առաջին արձանագրութիւնը, բառացի թարգ-
մանում է այսպէս. «Իրաւունքը ուժի մէջ է» (ոտներէն թարգմանութեամբ, որով
Նժդեհը ծանօթացել է այդ երկին, այսպէս է՝ «Պրավա վ սիւլ»⁵:

Այնպէս որ, Նժդեհին վերագրւող եւ բազմիցս որպէս նրա ասոյթ մէջբերուած՝
«ուժն է ծնում իրաւունքը» խօսքերի հեղինակը եւս Գարեգին Նժդեհը չէ, այլ օ-
տարների («յանցաւոր ու անտարբեր» մարդկութեան) «պատասխանը» «հաւաքա-
վառ խաչեցեալին»:

Այժմ նրա տարբեր աշխատութիւններից մէջբերենք Քրիստոսի, քրիստոնէու-
թեան եւ իր պաշտամունքներից մէկի՝ Հայ Եկեղեցու մասին արտայայտած բազմա-

⁵ Յե՛ս «Արձանագրութիւնների» ոտներէն հրատարակութիւնը՝ «Սիոնսկիյն պրոտօկոլը», Մոսկուա,
2000 թ., արտոնկոյ թիւ 1, էջ 14:

թիւ մտքերից մի փունջ՝ համոզելու համար. որ եթէ մա նոյնիսկ վերը մէջքերուած՝ ուրիշի անուղղակի խօսքերի հեղինակը եղած լինէր, մենք դարձեալ քարոյական իրաւունք չափիտի ունենայինք մերան ներկայացնելու իբր թէ քրիստոնէութեան ու չայ եկեղեցոյ հանդէպ անմպաստ մտքեր արտայայտած հեղինակ: Մանաւանդ որ այդպէս մտածող ու ներկայացնողները Գ. Նժդեհի՝ հրապարակի վրայ եղած ամբողջ ժառանգութեան մէջ վերոյիշեալ չարչրկուած մտքերից բացի. մի երկրորդ նման միտք չեն կարող վկայակոչել:

«Հեթանոս հայի քարտիւիւնը չը տկարացաւ մանե քրիստոնէական Հայաստանում: Սխրագործելու իր տենչանքին զուգահեռ՝ դա ընդունեց արտայայտման մի նոր ձեւ եւս՝ մահատակութիւնը կանխուր, որմ իր խորքում ոչ այլ ինչ է, բայց եթէ՝ զիտակցական մահուամբ քաջաբար անմահանալու ձգտումը»:

«Եկեղեցին: Դա վերագնահատումի պիտի ենթարկէ քրիստոնէական սիրոյ իր սխալ ըմբռնումը, որպէսզի դադարի թողութիւնը առաքինութիւն համարել եւ սպաննել մեր ժողովրդի կամքը... Սիրում է մա, ով ուծեղ է. Քրիստոսը սիրում էր, որովհետեւ ուծեղ էր... Նա սիրում էր, որովհետեւ սիրելու եւ ներելու չափ հզօր էր: Նրա անձնական կեանքը պիտի դառնա Եկեղեցում ուղեցոյց: Նրա մահուան խորհուրդը - հերոսական զոհաբերութիւն: Նա զոհաբերուեց, որովհետեւ զաղափարի հերոս էր...

Քրիստոնէան մա չէ, ով քրիստոնէական վարդապետութեան տարերքը սխալ է հասկացել, ընկել նախապաշարումների ցանցի մէջ եւ տկարացել կորչելու աստիճան, այլ մա, ում մէջ մի քիչ քրիստոնէութիւն կայ - մի կայծ ամենահզօր Աստուածամարդու հոգուց:

Նա ամենակարողն էր, ամենահզօր - մենք առնուազմ կարող եւ հզօր պիտի լինինք, որպէսզի կարողանանք սիրել եւ զոհաբերել»:

(«Բաց նամակներ հայ մտաւորականութեան»)

«Նազովրեցին կուսուցանէր, թէ մարդուս մէջ ապրող հոգին աւելի արժի, քան ողջ աշխարհը»:

(«Որդիների պայքարը հայրերի դէմ»)

«Ոգու ժողովուրդը ենք եւ այդ իսկ պատճառով այն բոլոր վարդապետութիւնները, որոնք դիմազուրկ ոգու ծնունդ են... - մնում են անմարսելի եւ անհարազատ հայ հոգու համար: Ոգեշումն էր քրիստոնէութիւնը եւ հենց այդ է պատճառը, որ մեր գիրկը նետուողներէն առաքինը՝ եղաւ հայը.

(«Յեղի յափտեմական զէնքը»)

«... Նազովրեցու մեծութիւնը մեր մէջ չէ, որ պատմութեան մէջ մի քանի փաստեր թողեց, այլ որ զգալապաշտ մարդկութեան նոր իտեալներ տուաւ եւ մի այլ աշխարհի կարօտով հոգիները վառեց»:

(«Յեղի ոգու շարժը»)

«Վերացնելով մահուան ու կեանքի միջեւ գոյություն ունեցող անջրպետը, Նա գովրեցին ժխտեց մահը, որովհետեւ հանդիսացաւ յալիտեմական սերմնացանը ոգու հսկաների՝ սուրբերի, մահատակների, հերոսների:

(«Ազատ Հայաստան» թերթ, Բեռլին, 1943 թ.: Հատըմտիր, էջ 402):

«Մեռնում է բուշեիզմը, որովհետեւ ապրել են ուզում երրոպական քաղաքակրթությունը, քրիստոնեությունը եւ մարդկային անունը»:

(«Պատմութեան դատաստանը», «Ազատ Հայաստան» թերթ, Բեռլին, թիւ 2-3, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1943 թ., էջ 5-7)

Այս ամէնին անհրաժեշտ է յաւելել մաեւ այն իրողությունը, որ Գարեգին Նժդեհն իր ամբողջ կեանքում որեւէ գործ չի սկսել կամ ձեռնարկել՝ առանց Աստծոյ անունը տալու:

Նրա թուր արշաւանքները սկսել են եկեղեցուց կամ աղօթքով: Նա եկեղեցիներում է անցկացրել մաեւ Սիւնիքի եւ Լեռնահայաստանի Հանրապետությունների հիմնադիր համագումարները: Իր զէնքերը, մոյնիսկ սպարապետական գօտին օծուել են եկեղեցում: Իր զինտրներից յղած գրեթէ թուր հրամաններն ու կանչերը աւարտում են Աստուած կանչելով. «Մեզ հետ Աստուած եւ Դաւիթ Բէգի վրիժակ հողին», «Մեզ հետ Աստուած եւ մեր մեծ հայորդիների... անհանգիստ հողիները», «Աստուած եւ իմ սէրը քեզ հետ» եւ այլն (տե՛ս «Խոստովանեմ կանչեր»): 1943 թ. հայ ռազմագերիների հետ հանդիպումների ժամանակ նրանց ասում էր. «Մեր հայրենիքի բախտի համար ես բռնել եմ Աստծու փէշից, դուք էլ բռնէք ինձանից»⁶:

Վերջապէս «Ինքնակենսագրականում» (1944 թ.) գրում է. «Եղել եմ խորը հաւատքի եւ էտիկայի մարդ... Հաւատքի եւ պաշտամունքի տաճարում միշտ էլ առաջին տեղերը յատկացուցած են եղել Աստծոյ եւ Հայրենիքին: Հայաստանն է եղել երկրաւոր (յատուկ է շեշտում «երկրաւոր» բառը - Ռ. Հ.) սրբազնագոյնն ինձ համար»:

Վերոյիշեալ ու բազմաթիւ այլ իրողությունները մկատի առնելով, անվարան կարելի է պնդել, որ 20-րդ դարի հայոց պատմութեան այդ բազմահանճար անհատականութեան բարոյա-գաղափարական մեկնակէտը հայոց քրիստոնէականն է:

⁶ Տե՛ս Վահան Սարգսեանի յուշերը Նժդեհի մասին, «Նախիջեւան», 2001 թ., թիւ 19, Սահմի (մարտ), էջ 11:

ՀՈՎԱՍԵՓՅԱՆ Մ. Մ.

ԵՊՀ ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի
ամբիոնի վարիչ, դոցենտ

ՍՓՅՈՒՌԷԻ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀԱՆՐԱՅԻՆ) ՌԱԴԻՈՑՈՒՄ

Այս տարի լրացում է Բանրային (Բանրապետական) ռադիոյում Սփյուռքի համար տրվող հաղորդումների խմբագրության հիմնադրման հիսունհինգամյակը: Արդեն հիսունհինգ տարի «եթերային» կամրջի միջոցով հաստատում կապ է ստեղծված Մայր Հայրենիքի և աշխարհասփյուռ հայության հետ: Ամեն օր ռադիոյի «Հայաստանի ձայն» գործակալությունը (այժմ այսպես է կոչվում Սփյուռքի համար տրվող հաղորդումների խմբագրությունը) 12 լեզուներով 9 ժամ հաղորդումներ է պատրաստում արտերկրի ռադիոուձնկողիների համար, նրանց պատմում Հայաստանի Հանրապետության տնտեսական, սոցիալական, գիտական ու մշակութային կյանքի, մեր հին ու նորօրյա պատմության, Հայրենիք-Սփյուռք առնչությունների ու դրանց սերտացման կենսական մշամակության մասին:

Արտերկրի համար հաղորդումներ պատրաստող ներկայիս «Հայաստանի ձայն» ռադիոգործակալությունը ամեն օր 9 ժամ տևողությամբ 12 լեզուներով հաղորդումներ է ձայնասփռում հայ և այլազգի ռադիոուձնկողիների համար: Հայերեն հաղորդումները տևում են 1,5 ժամ: Ծնորհիվ այս հաղորդումների այժմյան «Հայաստանի ձայն» գործակալության աշխատակիցները, որոնց թիվն առաջին օրերին 11-ն էր, իսկ ներկայումս անցնում է 70-ից, աշխարհի չորս ծայրերում սփռված հայությանը և այլազգի ռադիոուձնկողիներին 50 երկրներում ամեն օր հաղորդակից են դարձնում Հայաստանում տեղի ունեցող կարևոր դեպքերին ու իրադարձություններին:

Ամեն ինչ, սակայն, սկսվեց դեռևս 1944 թվականին, երբ Բանրապետական ռադիոն առաջին անգամ գերկարճալիք եթերով փորձնական հաղորդումներ պատրաստեց Մերձավոր Արևելքում ապրող մեր հայրենակիցների համար: Առաջին փորձնական հաղորդումները բավականին հաջող էին: Սփյուռքի մեր հայրենակիցներն առաջին անգամ լսեցին Մայր Հայրենիքի ձայնը, որը նրանց համար հնչեց իբրև երազ, իբրև կարոտ ու խաբրիկ: Խորհրդային կառավարությունը, հաշվի առնելով Հայրենական մեծ պատերազմում սփյուռքահայերի գործունե աջակցությունը ու նյութական օգնությունը, թույլատրեց եթերակապ հաստատել Մերձավոր Արևելքում ապրող մեր հայրենակիցների հետ:

- Երևա՛ցն է խոսում, Երևա՛ցն է խոսում,- այսպես սկսվեցին սփյուռքի մեր հայրենակիցների համար տրվող առաջին ռադիոհաղորդումները, որոնք հետագայում

դարձան մշտական «եթերային» կամուրջ, օպերատիվ լրատվական կապ հաստատելով Մայր հայրենիքի հետ՝ դառնալով մեր հայրենակիցների առօրյայի անբաժանելի մասը, պապերի օրրանի հետ հաղորդակցվելու միջոց:

Եթերի բացման առաջին խոսքի /«Երևա՛նք է խոսում» մախադասությամբ/ պատիվն է ունեցել Հայաստանի ժողովրդական արտիստուհի, բոլորի կողմից սիրված, տիկին Հրաչուհի Զինաջյանը: Հետագայում մա այնքան է սիրվել սփյուռքահայ ուղիորդների կողմից, որ մեր շատ հայրենակիցներ, ի դեմս մրա հանրածանոթ դարձած ծայրի, տարիներ շարունակ իրենց կարոտն են առել հայրենիքից, հարազատներից, ոսկեղենիկ մայրենիից՝ մրա ծայրը ընդունելով իբրև Հայաստանի ծայրի խորհրդանշիչ: Այդ են վկայում դերասանուհուց հասցեագրված հազարավոր մամակները: Տիկին Հրաչուհու «եթերային» կյանքում ուշագրավ էր հետևյալ եղելությունը. 1962 թվականին, երբ մա այցելել էր Սփյուռք, Երևանի ուղիորդայանի ունկընդիրների հետ հանդիպման, ներկաներից մեկը, տպավորված լինելով հաղորդավարուհու աշխատանքով, խնդրել է՝ «Կաղաչեմք Երևանց է խոսում, ըսեք»: Ահա այս սրտառույ միջադեպը մեկ անգամ ևս փաստեց, որ սփյուռքահայության համար տրվող հաղորդումները ոչ միայն անհրաժեշտ են, այլև պարտադիր ամենօրյա «եթերային» կապ ունենալու Սփյուռքի մեր հայրենակիցների հետ:

1946 թ. հունիսի 27-ին հանրապետական ուղիորդ ողջունեց զանգվածային հայրենադարձության առաջին քարավաններից, որին հաջորդեցին մի շարք հաղորդումներ՝ նվիրված ներգաղթին: Ընդառաջելով հանրապետության բնակչության և սփյուռքահայության ցանկություններից՝ ՀԿԿ Կենտկոմը օգոստոսի 8-ին որոշում ընդունեց արտասահմանում ապրող հայության համար մշտական հաղորդումներ պատրաստելու մասին: Սփյուռքահայության համար հաղորդումներ պատրաստող խմբագրության անդամիկ թողարկումը եթեր հետարձակվեց 1947 թ. սեպտեմբերի 10-ին, ժամը 19.00-ին, կարճալիք հաստուկ ծրագրով: Այդ օրը մեր հայրենակիցներին շնորհավորեցին Ավետիք Իսահակյանց և Վահրամ Փափազյանը: Ամսա Կոմիտասի «Գարուն ա» երգի՝ հայի հոգու խորքը թափանցող մեղեդու կոչմակներով բացվող ուղիորդի ծայրը մտավ Լիբանանի, Սիրիայի, Իրանի, Քուվեյթի, Թուրքիայի, Եգիպտոսի, Կիպրոսի, Հորդանանի հայկական տները, մշակույթի և ուսումնական հաստատությունները:

- Չեմ կրնար թաքցնել ուրախությունս, անընդհատ կուլամ, երբ կլսեմ Հայաստանի ուղիորդայանեն Երևանի ծայրն ու երգերը: Այդ պահուն հպարտ կզգամ ինքզինքս զգալով, որ հայրենիք մը ունիմ, որ օր օրի կառաջադիմեմ¹: Հայեպահայ Ներսես Գալֆայանի խոսքը կարծես խտացում էր մեր հազարավոր հայրենակիցների իղձերն ու կարոտը, սերը վերագտած հայրենիքի նկատմամբ:

Սփյուռքի համար տրվող հաղորդումների խմբագրությունն աստիճանաբար ընդլայնեց ուղիորդողությունների աշխարհագրությունը: Օտուով բացվեց արաբե-

¹ Ոսկամյամ Վ., Երևանն է խոսում, այսպես սկսվեց 1947 թ. սեպտեմբերի 10-ը, «Եթերում է Երևանը», 1969 թ., 5 ապրիլի:

րեն լեզվով հաղորդումների բաժինը: Հայաստանի ձայնը թափանցեց արաբական երկրներ: Ամենօրյա մեկժամյա այդ ծրագիրը, որը պատրաստում ու ձայնասփռում էին խմբագրության աշխատակիցները, միլիոնավոր արաբ ունկնդիրներին պատմում էր Հայաստան աշխարհի, հայ-արաբական կապերի մասին:

Սփյուռքի հետ կապը մերձեցնելու համար 1957 թ. ստեղծվեց արտասահմանի համար հեռարձակվող հաղորդումների վարչություն, որի հիմքի վրա 1983 թ. ստեղծվեցին երկու գլխավոր խմբագրություններ՝ հաղորդումների ընդհանուր ծավալը հասցնելով 6,5 ժամի, իսկ 1993 թ. խմբագրությունները միավորվեցին «Արաբս» ռադիոգործակալության մեջ, որն այժմ կոչվում է «Հայաստանի ձայն» գործակալություն:

1955 թ. սկսվեցին կանոնավոր հաղորդումներ եթեր հեռարձակվել եվրոպական երկրներում ապրող մեր հայրենակիցների համար: Հայրենիք-Սփյուռք կապերի «ոսկի կամրջի» իր առաջելությունը ռադիոն տարեցտարի ավելի մեծացրեց՝ ծրագրերում ընդգրկելով և եթերաժամ հատկացնելով ոչ միայն օտարերկրյա զբոսաշրջիկներին ու Հայաստան այցելած պատվիրակությունների անդամներին, այլև Մայր Հայրենիքում ամեն տարի կատարվող գործվելու եկած սփյուռքահայ ուսուցիչներին, տարաշխարհի հայ գրականության, մշակույթի, մամուլի, ռադիոյի աշխատակիցների ելույթներին:

Տարիներ անց, 1962 թ. օգոստոսի 5-ին, Հայաստանի ձայնը հասավ Հյուսիսային և Հատինական Ամերիկա²:

Երևանի ռադիոյի հաղորդումներին իրենց մասնակցելով և թղթակցություններով մասնակցում էին մասն Սփյուռքի մեր շատ հայրենակիցներ: «Խոսում են մասնակցներ», «Մեր ունկնդիրների հետ», «Ռադիոխոսողի պատվերով» հաղորդաշարերն ավելի հետաքրքիր, անմիջական ու լսելի են դարձնում եթերաժամը: Դատելով ստացված մասնակցներից, որոնց թիվը տարեկան կազմում է ավելի քան 4000 /2001 թ. տվյալներով/, հաղորդումների լսելիությունը բավարար չէ Հյուսիսային Ամերիկայում և Մերձավոր Արևելքի առանձին երկրներում:

Այդ բացը լրացնելու, երաժշտասեր հայրենակիցներին հետաքրքրասիրությունը բավարարելու նպատակով «Հայաստանի ձայն» գործակալությունն ամեն տարի արտասահմանի հայկական ռադիոժամերին, մշակութային կազմակերպություններին, ինչպես մասն անհատ ունկնդիրներին մեծ քանակությամբ հայկական երաժշտություն և գրական-գեղարվեստական հաղորդումների ձայնագրություններ է առաքում: Մոնտեվիդեոյի «Ռադիո Արմենիայի», Բոստոնի «Հայկական անկախ ձայնասփյուռքի», Բեյրութի «Վանա ձայնի», ԱՄՆ-ի, Կանադայի, Բրազիլիայի, Ֆրանսիայի, Ավստրալիայի, Կիպրոսի մի շարք ուրիշ ռադիոժամերի տնօրենները սերտ կապեր են հաստատել «Հայաստանի ձայն» գործակալության հետ, որն էլ սիրով կատարում է նրանց խնդրանքը՝ պատրաստելով և եթեր հեռարձակելով

² Տե՛ս Հովսեփյան Մ. Մ., Հայաստանի ազգային ռադիոյի ժամանակակից փուլը, Ժուռնալիստիկա /տեսություն և պրակտիկայի հարցեր/, պրակ Բ, Երևան, 2001, էջ 67.

Ռոզևոր-կրոնական թեմաներով հաղորդումներ, այն, ինչը դժվար, հաճախ՝ ամենար էր անել Հայաստանի ունկնդրի համար: Ինչպես վկայում են Սփյուռքի համար տրբվող հաղորդումների երկարամյա աշխատակիցները, այդ քայլը խրախուսվում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից, որը սփյուռքահայության համար շարունակում էր և այսօր էլ մնում է հայրենիքի կարևորագույն խորհրդանիշներից մեկը:

Գործակալությունը առանձնակի ուշադրություն էր դարձնում նաև երաժշտական ծրագրերի բազմազանությանը, ծայնասփռում էր հայ երգահանների ստեղծագործություններ, դասական երաժշտություն, հայկական ազգագրական, հայրենասիրական ու գուսանական երգեր: Այս հաղորդումների մի մասը պատրաստվում և եթեր էր հեռարձակվում «Երաժշտական հանդես» ամենշաբաթյա հաղորդաշարով:

Հայրենիք-Սփյուռք առնչությունների արդյունավետ զարգացման, հայ ժողովրդի հայրենի և սփյուռքյան հատվածների միավորման ասպարեզում մեծ է Հայ եկեղեցու դերը: Այդ նպատակով գործակալությունը ռադիոյի արտերկրի համար հաղորդումների ծրագրում այսօր էլ մեծ տեղ է հատկացնում ազգային ու Ռոզևոր միջոցառումներին: Հատկապես մեծ թվով հաղորդումներ պատրաստվեցին քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն Ռոչակյան 1700-ամյակի առթիվ, լայնորեն լուսաբանվեցին Հայաստան ժամանած բազմաթիվ պատվիրակությունների այցերը, Ս. Էջմիածնում և Երևանում կազմակերպված մեծաթիվ տոնակատարություններն ու միջոցառումները:

«Հայաստանի ձայն» գործակալությունն իր ծրագրերում մեծ տեղ է հատկացնում Ս. Էջմիածնի Մայր Տաճարից ծայնասփռված արարողություններին, պարբերաբար մերկայացնում եկեղեցական ավանդական տոները և ծեսերը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդի հայրապետական և Ռովապետական գործունեությանը: Քրիստոսի Ծննդյան և Հարության տոներին նվիրված քարոզներից բացի, ունկնդիրներին մերկայացվում են հարցազրույցներ Վեհափառ Հայրապետի հետ: Ստեղծվել է «Գանձասար» Ռոզևոր ռադիոհանդեսը, որի հաղորդումները ջերմ արձագանք են գտնում ունկնդիրների շրջանում:

Առանձնակի ջերմությամբ ու հանգամանորեն լուսաբանվեցին քույր եկեղեցիների կրոնապետների և աշխարհի Ռոզևոր հայտնի գործիչների, հատկապես՝ Կաթողիկ եկեղեցու առաջնորդ, Հռոմի Պապ Հովհաննես Պողոս Երկրորդի և Համայն Ռուսիայի Պատրիարք Ալեքսի Երկրորդի և Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ի այցերը Հայաստան:

Հայրենի հաղորդումների ամենամեծ ծրագիրը գործակալությունը պատրաստում է Մերձավոր և Միջին Արևելքի հայության համար, որտեղ հայաճիւղ զանգվածը մեծ տոկոս է կազմում, ու ամուր կապ կա Մայր Հայրենիքի հետ: Այդ տարածաշրջանի հայության համար պատրաստվող հաղորդումները բաժանվում են երկու խոշոր մասերի՝ հասարակական-քաղաքական և գրական-գեղարվեստական հաղորդումների:

Գրական-գեղարվեստական հաղորդումների բաժինները մեծ աշխատանք են կատարում արտերկրի մեր հայրենակիցներին հասցնելու, քարոզելու մեր ազգային

ու հոգևոր արժեքները, ինչպես նաև հաղորդելու հայաստանյան մշակութային կյանքի առավել ուշագրավ մոտությունները: Սեփական մշակույթի խոր իմացությունը և ազգի ու հայ ժողովրդի կյանքում նրա խաղացած դերի կարևորության գիտակցումը՝ գրական-գեղարվեստական բաժնի հաղորդումների կառուցման անկյունաքարն են: Դարեր շարունակ հայ մարդու ստեղծարար մտքի ու ճարտար ձեռքի արգասիք նյութեղեն ու ոգեղեն արժեքները իրենց շուրջն են համախմբել ու համախմբում, իրենց հովանու տակ առել ու առնում միլիոնավոր հայերի թե՛ Հայաստանում և թե՛ ի սփյուռն աշխարհի: Այդ արժեքների ըստ արժանվույն քարոզումն ու լուսաբանումը գործակալության գրական-գեղարվեստական հաղորդումների ռիմակամ ուղղությունն է:

Բաժնի օրակարգից չի ջնջվում Ռիմնախնդիրներից է նաև մայրենի լեզվի քարոզը, սփյուռքահայությանը մայրենին ողջ հմայքով հասցնելը, նրա գեղեցկությունն ու հարստությունը հավուր պատշաճի ներկայացնելը: Ժանկալի արդյունքին հասնելու համար գործակալության լրագրողները եթերից հնչեցնում են միայն ու միայն մաքուր ու ամաղարտ հայերենը: Բաժինը այդ հարցում անում է հնարավորը: Հաղորդումներ են պատրաստվում թե՛ արևելահայերենով, թե՛ արևմտահայերենով, զգալի տեղ են հատկացվում հայոց լեզվի, լեզվաբանության, հայ գրականության ու գրականագիտության հարցերին:

Վերջին տասնամյակների ընթացքում ռադիոգործակալությանը հաջողվել է ստեղծել հարուստ ձայնադարան, և պատահական չէ, որ ազգային-հայրենասիրական երգեր առաջին անգամ հնչեցվել են այս բաժնի պատրաստած հաղորդումներում: Այսօր էլ դրանք մեծ տեղ ունեն ծրագրերում: Բաժինը պարբերաբար ձայնասփռում է նաև հայ միջնադարյան և ժամանակակից պոեզիայի գոհարներ՝ հանրապետության լավագույն ասմունքողների կատարմամբ:


Հետարձակվող հաղորդումներում բավականին տեղ է հատկացվում ինչպես սփյուռքահայ ժամանակակից բանաստեղծ-գրողներին, այնպես էլ հայ դասականներին: Հայ մշակույթի ճանաչված գործիչները, ազգագրագետները մշտական կապի մեջ են այս բաժնի աշխատակիցների հետ: Նրանց ձայնը, խոսքը, ստեղծագործությունը Սփյուռքի ունկնդրին հասցնելու գործում մեծ է գրական-գեղարվեստական բաժնի դերն ու գործունեությունը:

Գործակալության գրական-գեղարվեստական բաժնում մեծ ծավալի աշխատանք է կատարում «Կուռնկ» երիտասարդական ծրագիրը, որը գործում է այդ բաժնի համակարգում: Այս ծրագրով ներկայացվում են առավել համրամատչելի, հետաքրքիր, ժամանակի ոգուն համահունչ թեմաներ: Ռադիոլրագրողներն իրենց հաղորդումները պատրաստելիս հաշվի են առնում սփյուռքահայ երիտասարդության հետաքրքրությունները: «Կուռնկ» ծրագիրը եթերային մեծ ժամանակահատված է հատկացնում հատկապես հայ ժողովրդական, զուսմանական, ազգագրական երգերին, իսկ դասական երաժշտությունը մատուցվում է ընտրությամբ: Ծրագրում հաճախակի են հնչում արժեքավոր ձայնագրություններ ձայնադարանի հարուստ ֆոն-

դերից: Երաժշտությունից զատ, երիտասարդությանը հետաքրքրում են նաև գրականության, արվեստի, պոեզիայի, սպորտի մասին մոտությունները: «Կոռուկը» հաճախակի հնչեցնում է հայ դասական և ժամանակակից գրողների ստեղծագործություններ /հատվածներ/, կազմակերպում են «պոեզիայի ժամեր»։ Հանրապետության մարզական կյանքը լուսաբանելու համար ծրագրում հիմնադրվել է «Մարզական կյանք» ռադիոհանդեսը, որը պարբերաբար ներկայացնում է ոչ միայն հայաստանյան մարզիկների հաջողությունները, այլև պատմում Սփյուռքի հայազգի մարզիկների և նրանց հաջողությունների մասին: Սակայն չի կարելի ասել, թե «Կոռուկը» իր ընդգրկման շրջանակներում անդրադառնում է երիտասարդությանը հուզող, հետաքրքրող բոլոր հարցերին, և կամ տվյալ հաղորդումները զուտ երիտասարդական բնույթի են. բացթողումներ, իհարկե, կան և այն էլ՝ ոչ քիչ: Սա զալիս է, ամշուշտ, սփյուռքահայ երիտասարդությանը լավ չճանաչելուց, լսարանի թույլ պահանջկոտությունից:

«Կոռուկի» գրույցը իր երիտասարդ ունկնդիրների հետ պետք է լինի անմիջական, անբռնազբոս, անկեղծ: Երիտասարդական հաղորդումներն ունեն Սփյուռքի երիտասարդությանը ուծացումից փրկելու, ազգային արմատներին մոտեցնելու, ճշմարիտ հայ ու հայրենասեր դարձնելու, դաստիարակելու մեծ առաքելություն /Սփյուռքի երիտասարդության մի զգալի մասը հայերեն չգիտի ու չի խոսում/: Փաստը մեկ անգամ ևս հուշում է, թե որքան օրախնդիր է այսօր սփյուռքահայ երիտասարդ սերնդին ուղղված նպատակային հաղորդումների պատրաստումը:





ԱՆՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱՐՑԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԹԵՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՈՒՄ (1813 - 1933 թթ.)

Հայ Առաքելական Եկեղեցու՝ իբրև ազգային կարևոր կառույցի պատմությանը, նրա աղբյուրներին մվիրված աշխատությունները արժեքավոր են ինքնին: Սակայն Հայ Առաքելական Եկեղեցու պատմությունը սերտորեն միախլուսված է հայ ժողովրդի ընդհանուր պատմությանը, և յուրաքանչյուր մոր՝ Եկեղեցուն վերաբերող հրապարակում, լինի դա հետազոտություն թե վավերագրերի ժողովածու, գալիս է լրացնելու, հարստացնելու և ամբողջացնելու այն: Նաև այդ տեսանկյունից կարելի է արժեքավորել ու գնահատել բանասեր, Հայ Եկեղեցու պատմաբան Ս. Բեհրուդյանի կազմած «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» մատենաշարը, որի ծավալում ու ծանրակշիռ ութ գրքերը հրատարակվել են, իսկ վերջերս, հովանավորությամբ Արցախի հայոց թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի, լույս է տեսել 9-րդը՝ «Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.)» (Երևան, 2001 թ.):

Ժողովածուն ներկայացնում է ավելի քան մեկ դար ընդգրկող ժամանակաշրջան, որը հարուստ է հայ ժողովրդի համար քաղաքական բախտորոշ իրադարձություններով: Հատկապես 19-րդի դարասկիզբը. Արցախը միացավ Ռուսական կայսրությանը, մեկուկես տասնամյակ անց ողջ Արևելյան Հայաստանն անցավ կայսրության տիրապետության տակ: Արցախի ավանդական հիմք մեղիքությունների երազանքները՝ վերականգնելու տոհմական իրավունքները, չիրականացան, սակայն երկրամասի բնակչության համար ստեղծվեցին ֆիզիկական ապահով պայմաններ, իսկ Հայ Առաքելական Եկեղեցին ամրապնդեց իր դիրքերն ու հեղինակությունը և

հատկապես կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Ամենայն Հայոց Կաթողիկոսության հետ, որը մասամբ թուլացել էր քաղաքական վայրիվերումների պատճառով: Այս խնդրում նշանակալից էր 1836 թ. մարտի 11-ին ուսական արքունիքում ընդունված Հայ Եկեղեցու կանոնադրությունը, որը հայտնի է ուղղակի «Պոլոժենի» անվամբ:

Բազմաբնույթ են մատենաշարի 9-րդ գրքում ներկայացված վավերագրերում ու նյութերում արձանվոր խնդիրները, թեև մեծամասամբ առնչվում են Եկեղեցուն:

Արցախի թեմը կազմավորման ժամանակ՝ 19-րդ դարի սկզբին, ինչպես վկայում են ժողովածուի վավերագրերն ու նյութերը, ընդգրկել է Արցախի մահաճգի, Օաքիի և Թալիշի գավառների, Գանձակի գավառի լեռնային գյուղերի հայ առաքելական եկեղեցիներն ու վանքերը: 1837 թ. տվյալներով թեմն ուներ 53 եկեղեցի, 32 ժամատուն, 3 վանք և 3 դպրոց, իսկ Օաքիի հոգևոր կառավարությունը՝ 45 եկեղեցի, 2 վանք, 1 դպրոց (վավ. № 23): Ներկայացված վավերագրերի համաձայն, ութ տասնամյակ անց՝ 1909 թ. թեմում կային 221 եկեղեցի, 9 վանք, 65 եկեղեցական-ծխական դպրոց (վավ. № 314): Ինչպես տեսնում ենք, եկեղեցիների թիվը գրեթե կրկնապատկվել է, մի հանգամանք, որը ցույց է տալիս, թե ինչի է ընդունակ հայ մարդը համեմատաբար խաղաղ, բարենպաստ պայմաններում, ինչպիսի նվիրվածությամբ ու ստեղծագործ աշխատանքով կարող է զարգացնել իր հոգևոր ու կրթական-լուսավորական կյանքը: Թեմում ոչ միայն ավելացավ պաշտամունքային օջախների թիվը, այլև հների, խարխլված, հանգածների տեղը կանգնեցվեցին մոր, շքեղաշուք տաճարներ՝ Ամարասի վանքի Ս. Գրիգոր (1858 թ.), Օուշիի Ղազանչեցոյ Ամենափրկիչը (1888 թ.):

Մատենաշարի 9-րդ գրքում ներկայացված մի խումբ ստվարաթիվ վավերագրեր ու նյութեր վերաբերում են վանքապատկան կալվածներին, թեմի ներքին տնտեսական կյանքին:

Հայտնի է, որ այլազգի ու այլադավան նվաճողները քաջ գիտակցում էին, որ պետականությունից զուրկ հայ ժողովրդի համար Հայ Առաքելական Եկեղեցին միակ ազգային կառույցն է, որ պատվար է հանդիսանում ժողովրդի ֆիզիկական գոյությանը: Եվ թշնամին իր հիմնական հարվածն ուղղում էր Եկեղեցու դեմ ոչ միայն բռնի միջոցներ կիրառելով, այլև զրկելով նրան գոյությանը նյութական աղբյուրներից: Արցախում Փանահ խանը ու նրա հետնորդները զանազան դավերով, կեղծ փաստաթղթերով տեր դարձան ոչ միայն մելիքների տոհմական տիրույթներին, այլ նաև Գանձասարի, Խոթա, Ամարասի վանքերի խոշոր կալվածքներին ու երկրամասի էթնիկ կազմը փոխելու նպատակով քոչվոր, ավազակաբարոց ցեղերին բնակեցրին բռնազավթած տարածքներում: Արցախի թեմի վանքապատկան հարստությունները իսկական տերերին վերադարձնելու, իրավաբանորեն վերահաստատելու գործում բացառիկ հետևողականությունն է ցուցաբերել ու անձանձիր ջանքեր թափել թեմի առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանը (1829 - 1854 թթ.): Բնորոշ են այս առումով Ամարասի վանքի մասին վավերագրերը (վավ. №№ 152, 153): Բաղդասար մետրոպոլիտին վերջապես հաջողվում է վանքին վերադարձնել նրան պատկանող հարստությունները՝ հողատարածությունները, որին ա-

աօրինաբար տիրացել էին, և ողջ շինությունը, որը մինչ այդ զբաղեցնում էր ոռոսական մաքսատունը: Իսկ թե ինչ են ներկայացնում վաճառական կալվածքները, վկայում են ժողովածուում գետնելված վավերագրերն ու նյութերը: «Ղարաբաղի թեմի կալվածները» գրում է թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը 1911-1912 թթ. կազմած տեղեկագրում, - 60-70 հազար դեյալտին տարածություն են ներկայացնում և արծառի են առանձին ուշադրության. այդ կալվածների մեջ կան ընդարձակ կուսակաճ անտառներ, արոտատեղեր, վարելահողեր, հարուստ և բազմատեսակ հանքեր, հանքային ջրեր և նման բազմաթիվ հարստություններ պարունակող հողամասեր, որոնք դժբախտաբար մինչև օրս ամուլադիր են մնացել շնորհիվ մասամբ հաղորդակցական, աշխարհագրական աննպաստ հանգամանքների և պայմանների» (վավ. № 386): Խոսքը 20-րդ դարի մասին է, վիճակը ավելի վատթար էր 19-րդի առաջին կեսին: Թեմի վաճառական ունեցվածքները շահագործելու, հաշվառելու, բարեկարգելու և շահութաբեր դարձնելու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրահանգով 1839 թ. ստեղծվում է վանական կառավարությունը (վավ. № 33): Չնայած այդ մարմնի գործադրած միջոցներին, ջանքերին, հարուստ ու ընդարձակ կալվածքները, նրանցում եղած հանքային հարստությունները թեմին այդպես էլ չոչափելի եկամուտ չբերեցին (վավ. №№ 358, 359, 398, 399 և այլն), իսկ քաղաքական երեւրում ժամանակներում պետական քարձր հարկերի պատճառով հաճախ միայն վնաս էին բերում (վավ. №№ 332, 335, 365, 386 և այլն):

Ուշագրավ է վավերագրերի այն խումբը, որը վերաբերում է Արցախի թեմի և Ամենայն Հայոց Կաթողիկոսության փոխհարաբերություններին: Դարեր շարունակ, քրիստոնեությունը ընդունելուց ի վեր, Արցախական աշխարհի հոգևոր առաջնորդները ընդունել են Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերակայությունը, պահպանել են եկեղեցու ներքին կարգն ու օրենքները, քարծրաստիճան հոգևորականների օժանդակարգ: Երկրամասի հոգևոր իշխանությունը, կրելով Աղվանից Կաթողիկոսություն անունը, իր իրավասության ներքո ունեցել է ավելի լայն աշխարհագրական սահմաններ ընդգրկող հայկական բնակավայրեր, քան 1836 թ. կանոնադրությամբ նախատեսվածը: Աղվանից Կաթողիկոսությունը, սակայն, վայելել է համեմատական ինքնուրույնություն, մի հանգամանք, որը պայմանավորված էր երկրամասի աշխարհագրական՝ ծայրամասային դիրքով, քաղաքական հանգամանքներով և ընդհանրապես Հայոց աշխարհի մասնատվածությամբ: Արցախը Ռուսաստանին կցվելուց հետո ոռոսական արքունիքը վերացրեց Աղվանից Կաթողիկոսությունը, վերջին հոգևոր առաջնորդին՝ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանին տրվեց մետրոպոլիտ կոչում-աստիճանը: Այն, սակայն, վերացավ հաղթասար արքեպիսկոպոսի մահվամբ (1854 թ.): Այնուհետև Արցախի թեմի հոգևոր պետերը սկսեցին անվանվել վիճակավոր, թեմակալ առաջնորդ, ատենապետ կոնսիստորիայի:

Արցախի հոգևոր առաջնորդների և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի փոխհարաբերությունների վերաբերյալ խոսում են այն ստորագրությունները, որ առկա են վավերա-

գրերում և դրվում էին զանազան, հատկապես կաթողիկոսներից ուղղված գրությունների մերքո. «խոնարհ որդի և ծառա», «որդիական սիրով», «Ջերդ վեհափառության ամենախոնարհ որդի առաջնորդ Արցախի», իսկ Բաղդասար մետրոպոլիտը հավատարիմ իր տոհմական ազնվական ավանդներին, երբեմն գրում էր «Աղվանից Հայոց արքեպիսկոպոս Բաղդասար Հասան-Ջալալյան», «Հայոց Աղվանից մետրոպոլիտ Բաղդասար»: 1829 թ. նա իրեն անվանում է «Հարազատ որդի եւ միաբան սրբոյ Աթոռոյդ» (վավ. № 18): Փոխհարաբերությունների բնույթի առումով ուշագրավ փաստաթուղթ է Բաղդասար մետրոպոլիտի երդմնագիրը՝ մատուցած էջմիածնում եպիսկոպոս օծվելու ժամանակ (վավ. № 6). «Եւ վերջապէս, եթէ վարիցեն եւ ներհակ այսմ ուխտի եւ պայմանի իմոյ, եւ արարից զիմէ եւ իցէ ընդդէմ օրինաց եւ ծիսից Հայաստանայց Եկեղեցւոյ, մնանապէս եւ ընդդէմ Առաքելական եւ Հայրապետական օրինաց, եւ կամ մշմարեալ եղէց յանհաւատարմութեան առ սուրբ Աթոռն եւ Նորին միաբանութիւնս, այլեւ՝ եթէ եղէց ներհակ Սրբազմաստուրբ Կաթողիկոսին եւ Հայրապետին եւ կամ քարծրագոյն խորհրդոց սիմօթական կառավարութեան Արարատեան Աթոռոյն, յայժմայն համաձայն օրինաց ենթարկեցից զիս դատապարտութեան, որոյ վասն իսկական ձեռագրութեամբ իմով ստորագրեմ ահա աստէն եւ կնքեմ»:

Ուշադրության են արժանի հետևյալ փաստերը. Բաղդասար մետրոպոլիտի կտակի համաձայն նրա անձնական կնիքը առաքվում է Մայր Աթոռ (վավ. № 160), 1871 թ. էջմիածին է ուղարկվում նաև Աղվանից Կաթողիկոսության խորհրդանիշ փղոսկրյա գավազանը (վավ. № 235):

Ավելի բնորոշ է Արցախի ժողովրդի վերաբերմունքը դեպի Ամենայն Հայոց Հայրապետը: Ինչպես վկայում են վավերագրերն ու նյութերը, տասնամյակներ շարունակ գտնվելով Ռուսաստանի տիրապետության ներքո, դժվարին պայմաններում, նա իր հայացքն ուղղում է դեպի ազգի հոգևոր առաջնորդը: «Հայտնի է անցյալից և նույնիսկ պատմությունից Ջերդ Օծության, որ երբ Հայ ազգը ամբողջովին կամ նույնիսկ նորա մի մասը այլևայլ հանգամանքների տակ տառապանքների և մեղությունների մեջ է ընկել, նա ամփջապես յուր հայացքը դարձրել է դեպ Հայաստանայց Եկեղեցւոյ Պետը, որից աղաչել և խնդրել է օգնություն ու ողորմություն: Դոցա խնդիրքը, աղաչանքը արձագանք է գտել Հայրապետների սրտում», - գրում են շուշեցիները Մակար Կաթողիկոսին ուղղված մի համախոսականում 1889 թ. (վավ. № 250):

Արցախի հոգևոր առաջնորդները, հավատացյալների գերակշռող մասը մշտապես հավատարիմ է եղել Հայ Առաքելական Եկեղեցու ավանդներին, հարկ եղած դեպքում պայքարել են հանուն իրենց հավատի անաղարտության: Արժանաբիշատակ են մի շարք վավերագրեր ու նյութեր, որոնք վկայում են, թե ինչպիսի ջերմե-ռանդությամբ է արցախահայությունը պաշտպանել իր պաշտամունքային օջախները, չնայած զրկանքներից՝ վերանորոգել հնձրը, կառուցել մոլերը (վավ. №№ 56, 95, 175, 198, 204, 290; 390-393 և այլն):

ժողովածուում ներկայացված մի խումբ փաստաթղթեր ու վավերագրեր վկայում են թեմի հոգևոր դասի՝ այլադավանության և աղանդների դեմ անցվելու դիրքորոշում ունենալու մասին: 19-րդ դարի 20-ական թվականներից Օուշիում հաստատված Բազելի բողոքական միսիոներների գործունեության վերաբերյալ հետևյալն էին գրում Արցախի հոգևոր ու աշխարհիկ դասի ներկայացուցիչները. «Վակայն և ուրա ընդ կաթին գիտութեան ջամբեմ մանկանց զարիւմ հերետիկոսութեան, ըստ որում եմ իմքեանք» (վավ. №№ 19, 20): Բողոքական միսիոներները դարոց ու տպարան հիմնեցին Օուշիում, բայց ի վերջո հարկադրված եղան թողնել Արցախը, իշխանությունների ճնշման ներքո, որոնց դիմել էին ոչ միայն հոգևորականները, այլև քաղաքի հասարակությունը: Նույն բախտին արժանացան նաև բապտիստները, որոնք հայտնվել էին Արցախում 20-րդ դարի սկզբներին (վավ. №№ 415, 417, 418): Նշված վավերագրերում ուշագրավ է մի հանգամանք. դիմելով իշխանությունների օգնությանը, հեղինակները թե՛ բողոքականների, թե՛ բապտիստների վարդապետության քարոզչությունը վնասակար էին համարում ոչ միայն Հայ Եկեղեցու համար, այլև ներհակ պետության պաշտոնական դավանանքին. «Կայսերական Սուրբ Եկեղեցու» (վավ. № 20) և հակաօրինական (վավ. №№ 413 - 415):

Ժողովածուում ներկայացված վավերագրերի ու նյութերի մեծաթիվ մի խումբ վերաբերում է դարոցին ու կրթությանը:

Համաձայն տեղեկագրի, Արցախի թեմում 1837 թ. գործել են 3, Նուսիի փոխանորդությունում՝ 1 դարոց (վավ. № 23): 1911 թ. տվյալներով թեմն ուներ 55 ծխական-եկեղեցական դարոց, Նուսիի փոխանորդությունը՝ 8, չհաշված պետական, իգական և մասնավոր դարոցները (վավ. № 386):

Արցախի թեմի կրթական գործը, ըստ ժողովածուի նյութերի, կենտրոնացված է եղել Օուշիի հոգևոր թեմական դարոցի շուրջը: Այն եղել է Արցախի հոգևոր իշխանությունների ու ողջ հասարակության մտահոգության, ուշադրության առարկան: Օուշիի թեմականը բացվել է 1838 թ. Բաղդասար մետրոպոլիտի ջանքերով, համաձայն կանոնադրության՝ պոլոժենիայի (վավ. № 27 և այլն): Գրքում գետեղված վավերագրերն արժեքավոր տեղեկություններ են պարունակում հոգևոր դարոցի, եկեղեցական-ծխական դարոցների շուրջ 80-ամյա գործունեության, ուսուցչական կազմի, դասավանդվող առարկաների, հոգաբարձուների, մվիրատուների և բազում խնդիրների մասին, որոնց պատմագիտական արժեքը չի խամրում անգամ համբավավոր Լեոնի՝ թեմականին մկրված աշխատության կողքին (Պատմություն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դարոցի, Թիֆլիս, 1914):

Այսօր մեզ համար պատմության գիրկն են անցել Նուսիի և Արեշի գավառների հայաբնակ, չեն ու հարուստ բնակավայրերը, հոգևոր-մշակութային հուշարձաններն ու շինությունները: Այդ տեսակետից հատուկ արժեք են ներկայացնում Ռիշյալ գավառներին վերաբերող վավերագրերն ու նյութերը, որ տեղ են գտել ժողովածուում: Հիշյալ գավառների 47 բնակավայրերում 20-րդ դարի սկզբներին ապրել են 47.800

Ռայ և Ռայադավան ուտի: Դարեր շարունակ գտնվելով Աղվանից, Գանձասարի, իսկ 19-րդ դարում՝ Արցախի Ռոզնոր իշխանությունների իրավասության ներքո, Ռիշյալ զավառների քրիստոնյա բնակչությունը պահպանել է Ռավատարմությունը Հայ Առաքելական եկեղեցուն: 1910-ական թվականներին այստեղ գործել են 56 եկեղեցի, 3 վանք, եկեղեցական-ծխական 10 դպրոց (վավ. № 314):

Ընալեթի և Գիսի Սուրբ Եղիշեն Առաքյալի վանական համալիրները Ռայական միջավայրում մեծ համբավ են վայելել իրոք Ռոզնոր, մշակութային կենտրոններ, իսկ Ընալեթի վանքը 15-16-րդ դարերում եղել է նույնիսկ Աղվանից Կաթողիկոսության աթոռանիստը: Արցախի Ռոզնոր պետերը, ինչպես Ռադորդում են վավերագրերը, մշտապես Ռոզ են տարել Նուխիի և Արեշի պաշտամունքային օջախների ու դպրոցների մասին, իսկ բնակչությունը եղել է նախանձախոհոր Հայ Առաքելական եկեղեցուն ու դավանանքին (վավ. №№ 390, 391, 397):

«Վավերագրերը» առատ նյութ են տալիս Ամենայն Հայոց Կաթողիկոսների ու Ռոզնոր-եկեղեցական գործիչների՝ Արցախի Ռեն ունեցած առնչությունների մասին: Այս շարքում իր գործունեությամբ առանձնանում է Բաղդասար մետրոպոլիտ Ասպետ արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը: Ժառանգելով Գանձասարի Կաթողիկոսությունը, նա բնածին խելքով ու ամսպառ եռանդով, Ռետամուտ իր ժողովրդի, Ռայեմիքի պահպանությանը, բարեկարգմանն ու զարգացմանը շուրջ կես դար տևած գործունեությամբ, Ռարմարվելով ժամանակի պահանջներին, Ռիրավի իրագործեց մի շարք միջոցառումներ, որոնց նշանակությունը դժվար է գերազնահատել:

Մայր Աթոռում 1820 թ. եպիսկոպոսության աստիճան ստանալով և Ռավատարմության երդումնազիր տալով (վավ. № 6), նա փաստորեն նպաստում էր ոչ միայն Հայ եկեղեցու, այլև քաղաքական հանգամանքներով մասնատված Ռայեմիքի միասնականության ամրապնդմանը: Ինչպես վկայում են ներկայացված նյութերը, նրա ջանքերն ուղղվում են թեմի վանքերում ու եկեղեցիներում կարգ ու կանոն հաստատելուն, վանքապատկան ունեցվածքը արդյունավետ ու եկամտաբեր դարձնելուն, թեմի ժողովրդի Ռոզնոր ու կրթական պահանջմունքները բավարարելուն: Կանոնադրության համաձայն ստեղծվում է կենտրոնական Ռոզնոր իշխանություն՝ կոնսիստորիա, թեմը բաժանվում է գործակալությունների:

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Ռոզնորականների դեմ անուր հալածանք է սկսվում նաև Արցախի թեմում. «Վերջին երկու տարվա ընթացքում փակվելով թեմիս բոլոր եկեղեցիները», - գրում է թեմի առաջնորդը (վավ. №№ 688, 682) 1927 թ. դրությամբ (վավ. № 682) թեմում եղած 11 եկեղեցիներից 27-ը փակման առաջ են կանգնած, 79-ը՝ գրավված և վերածված դպրոցի, շտեմարանի, խրճիթ-ընթերցարանի, 6-ը կիսավեր վիճակում են»: Ամհայտ պատճառաբանությամբ բանտ նետվեց թեմի Ռոզնոր առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը, որը մոտ երեք տարի Օուշվա բանտի դժմի պայմաններում տառապելուց հետո (վավ. №№ 700, 694, 699 և այլն), զալիս է Էջմիածին և, չնայած իր կոչման հանդեպ ունեցած հաստատակամությամբ, այլևս չի վերադառնում Արցախ. «Ադրբեյջանի կառավարությունը առաջ-

նորդական պաշտոնավարությունը Ադրբեյջանում ընդհանրապես ընդունելի չի համարում Ջեր առաջ».- հայտնում են մրան (վավ. № 792):

Այսպես է փակվում Արցախի թեմի մեկդարյա պատմությունը ընգրկող վավերագրերի ժողովածուն:

Հավելենք, որ Արցախի քաղաքական պատմությամբ, ազգագրությամբ, բարբառով, տնտեսական հարցերով զբաղվողների համար ժողովածուն որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Հրավիրում ենք մաս երկրաբանների ուշադրությունը, որոնք հնարավորություն ունեն ճշգրտելու իրենց տվյալները, համեմատելով վավերագրերի տվյալների հետ, ինչպես մաս աշխարհագրագետների, որոնց համար վաճառական կալվածագրերում հիշատակված բազում տեղանունները կարող են ոգտակար լինել:

Ինչպես ասացինք, «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» մատենաշարի մասորդ 8, մաս 9-րդ գրքերը կազմել, ծանոթագրել և առաջաբանը գրել է բանասեր, պատմաբան Ս. Բեհրուդյանը: Գրախոսվող գիրքը պարունակում է 792 միավոր վավերագիր ու մյուս. ըստ որում գերակշիռ բաժինը քաղված է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի կաթողիկոսական դիվանի, ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվի ֆոնդերից, այնուհետև՝ տպագիր աղբյուրներից: Ընդարձակ առաջաբանում աշխատասիրողը լուսարանում է Արցախի թեմի պատմությանն ու 19-20-րդ դարերի գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր: Գրքին կցված են ծանոթագրություններ, ամձնանունների բառարան:

«Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» մատենաշարի գրախոսվող «Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1813 - 1933 թթ.)» 9-րդ գրքի վերաբերյալ ունենք որոշ նկատառումներ:

Կարծում ենք, «Վավերագրերում» ճիշտ կլինեն ներկայացնել թեմի բոլոր առաջնորդների նշանակման ու աղծակման ստույգ տարեթվերը, ինչը կարելի էր անել կոնդակների միջոցով, ինչպես մաս ծանոթագրություններում մրանց մասին կենսագրական տվյալներ:

Տեխնիկական և այլ պատճառներով գրքում տեղ են գտել ցավալի վրիպումներ, սխալներ (վավ. №№ 5, 10, 152 և այլն), ինչպես օրինակ «Լեոնային Ղարաբաղ» տեղում ինը գործածության մեջ է մտել 20-րդ դարի 20-ական թվականներից (վավ. № 213, 1870 թ.) և այլն:

Անտարակույս «Վավերագրերի» 9-րդ գրքի նյութերի մի մասը ծանոթ է մասնագետներին, սակայն այսպես ամբողջական ու համախոս, ժամանակագրական դասակարգմամբ այն ներկայացվում է առաջին անգամ, և դա ժողովածուի կարևոր արժանիքն է և կազմողի ծառայությունը:



ՄԱՅՐ ԱՅԹՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՄԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՆՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅՅԻ ՏՈՆԻՆ

Ս. Սյրեփաննոս Նախավկայի փոնին սարկավագական ու դպրական ձեռնադրությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում արդեն ավանդույթ են դարձել: 2001 իտերնյանագարդ թվականին, այս խորհրդանշական օրը, սարկավագական ասփրիճանին արժանացան գլխավորաբար Գևորգյան Նոգևոր Ճեմարանի շրջանավարտ այն սաները, ովքեր հաջողությամբ էին հանձնել սարկավագական քննությունները և քննական հանձնաժողովի կողմից, որի նախագահն էր Մայր Աթոռի դիվանապետ Նոգեշնորի Տ. Արշակ վարդապետը հաջատրյանը, թույլտվություն էին ստացել դառնալու Ս. Մեղանի սպասավորները:

Տոնախմբությունն սկսվել էր դեռևս դեկտեմբերի 24-ին, Ս. Սյրեփաննոսի նախափոնակին, երբ Մայր Աթոռի Միածնաէջ Ս. Մեղանի առջև, Արմավիրի թեմի բարնխնամ առաջնորդ Գերաշնորի Տ. Միոն եպիսկոպոս Արամյանի ձեռամբ, դպրության առաջին չորս ասփրիճաններն ստացան Գևորգյան Նոգևոր Ճեմարանի Բ լսարանի թվով քսանհինգ սաները, որից հետո Ճեմարանի և Վագգենյան Նոգևոր Դպրանոցի հինգերորդ լսարանի փասնութ ուսանողներ, իբրև խրախուսանք իրենց բարձր առաջադիմության, ստացան ուրար կրելու իրավունք: Իսկ քննությունները հաջողությամբ հանձնած երեսուներկու սարկավագացուները, որոնցից քսանութը Գևորգյան Նոգևոր Ճեմարանի, երկուսը՝ Վագգենյան Նոգևոր Դպրանոցի սաներ էին, իսկ երկուսն էլ՝ թեմերից ընտրված, ստացան կիսասարկավագության ասփրիճան:

Երեքշաբթի օրը, առավոտյան ժամերգությունից հետո, երեսուներկու ընծայացուները Մայր Աթոռի միաբանների, Ճեմարանի փեսայության ու Ճեմարանականների ուղեկցությամբ մեկնեցին Երևանի սրտում վեր խոյացած և մեր ժողովրդի 1700-ամյա հավաքը խորհրդանշող Ս. Գրիգոր Լուսավորիչ նորակառույց եկեղեցի, որտեղ, ի դեպ, ձեռնադրություն առաջին անգամ էր կատարվելու: Նորակառույց եկեղեցին լի էր հավաքաղալներով, որոնք եկել էին մասնակից ու հաղորդակից դառնալու 32 նորընծաների նվիրումի ուրախությանը:

Մինչ Պատարագի սկսվելը, 32 նվիրյալները մեկ առ մեկ խոստովանեցին իրենց հոգևոր ուսուցչի ու դասփրարակի՝ Գևորգյան Նոգևոր Ճեմարանի փեսուչ Արժանապատիվ Տ. Շիլիշ ավագ քահանա Մարգարյանի մոտ և, ստանալով նրա հայրական

օրենսդրությունը, կանգնեցին նորած Ս. Մեղանի առջև՝ Ս. Ղոզու ամենագոր շնորհներն ստանալու ակնկալությամբ:

Ժամը 11.00-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի նախագահությամբ սկսվեց Մուրբ և անմահ Պատարագը: Օրվա պատարագիչն ու ձեռնադրող Սրբազանն էր Շիրակի թեմի առաջնորդ Ս. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: Եկեղեցու հրաշագարո՞ւ ու խնկաբույր կամարների ներքո, երաժշտությամբ զմայլված ունկնդիր ներկաներն ականջալուր եղան խարավիլականեր՝ Ղոզեշնոր Ս. Արարկ վարդապետ Տիգրանյանի և Ս. Սահակ արեղա Շաքարյանի կողմից ընթերցվող սաղմոսներին, որոնց ուղեկցությամբ ընծայացումները բարձրացան խորան՝ «առ օրս» ձեռնադրող Սրբազան Ղոր, և «Ի տես ժողովրդեանն եւ ի վկայութիւն անձանց իրեանց» ուխտեցին ամբողջանվեր ծառայելու Հայաստանյայց Մայր Եկեղեցուն: Դատնալով դեպի հավատացյալ ժողովուրդը՝ վեր բարձրացրեցին իրենց ձեռքերը՝ ի նշան Աստծո և Եկեղեցու հանդեպ ամբողջական նվիրումի ու աշխարհից երաժարման: Այնուհետև Սրբազան Հայրը, իր շնորհաբաշխ աջը դնելով նորընծաների գլխին, փոխանցեց նրանց Ս. Ղոզու շնոհագարող պարզները՝ տալով սարկավագության դժվարին, բայց և միևնույն ժամանակ պարզաբեր ու պարասխանաբուր աստիճանը: Այս նվիրական կարգն այլևս կյանքի էր կոչում իրենց սուրբ ու նվիրական երազանքներից մեկը, այն է՝ եկեղեցում խնկարկություն կատարել, Տիրոջ Կենաց խոսքն ընթերցել, ինչպես նաև Փրկչի նորոգող ներկայությունը խորհրդանշող սկիհի վերաբերում կատարել:

Ս. Պատարագի ընթացքում իր խոսքն ուղղելով նոր ձեռնադրվածներին՝ Միքայել Սրբազանը ասաց.

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Ղօզոյն Մորոյ, ամէն»:

Այս նվիրական պահին, երբ այս սքանչելագործ եկեղեցում հավաքվել ենք Ս. Մարկիանոսի տունը նշելու և 32 հոգու սարկավագական աստիճան շնորհելու, մեր սրտից նախնառաջ անհուն աղոթք է հնչում և գոհություն մմենակալին, մեր Տիրոջ՝ Դուռս Զրիստոսին, որ նորանոր սպասավորներ է հասցնում մեր Եկեղեցվո պայծառության համար: Այս սքանչելի եկեղեցին, որի մեջ պատարագելու պարիվը ունենք, և որի մեջ 32 սարկավագներ ձեռնադրվեցին, վկան էր մեր ժողովրդի և մեր Եկեղեցու հաշտության, շոշափելի քարեղեն արտահայտությունը այդ վերածննդյան: Իսկ 32 ընծայյալ սարկավագները իրական արտահայտություն են այս պահին Մուրբ Խորանի վրա: Եվ փառք ենք վերընծայում մմենակալ Տիրոջ, որ մեկ անգամ ևս ապացուցում է մեր պատմության ընթացքին, որ եթե լինենք Աստծո հեղուկ մեկը՝ չի կարող լինել մեզ հակառակ:

Մեր սրտի երկրորդ խոսքը ուղղված է անշուշտ, Ազգիս Վեհափառ Հայրապետին՝ երեսպագիտության և շնորհակալության անկնդդ որդիական զգացումներով, որ մեզ տվեց պարիվն այսօր մեր տկար ձեռքով 32 սարկավագներով համայնելու մեր 1700-ամյա Եկեղեցին:

Գիտենք, և դո՛ւք գիտեք, սարկավագներ, թե որքան բծախնդրությամբ և ամենայն մանրակրկիտությամբ է մտրեմում Վեհափառ Հայրապետը հոգե-

վոր յուրաքանչյուր աստիճանի շնորհմանը: Եվ եթե այսօր 32 հոգի արժանի են համարվել սարկավագության աստիճանին, դրա համար մեկ անգամ ևս մենք և դուք պարտինք որդիական խոնարհությամբ ի համբույր մարչելու ազգիս Վեհափառ Հայրապետի Սրբազնասուրբ Աթին: Այս առիթով շնորհավորում ենք նաև մեր սիրելի Հայրապետին, որ 32 հոգիներով համալրվում են Մայր Աթոռի միաբանության շարքերը:

Մեր սրտի երախտագիտական խոսքը նաև բոլոր նրանց, վարդապետներին և ուսուցիչներին, որոնք ջանք և նոսնոց ջնջալեզին ձեզ տարիներ շարունակ կրթելու, դաստիարակելու և հասցնելու սարկավագության այս աստիճանին: Թող Աստված Իր Երկնառաջ շնորհներով մշտապես հեղի ձեր ուսուցիչների վրա, ձեր վարդապետների վրա, ձեր առաջնորդների վրա, որպեսզի կարողանան ապագային ևս իրենց օգտակար խորհուրդներով, բարի մտածումներով ու ցուցումներով գործավիզ լինել ձեզ և առաջնորդ ձեր կյանքի ճանապարհին:

Եվ, վերջապես, սիրելիներ, մեր խոսքը՝ ուղղված ձեզ՝ 32 նորընծա սարկավագներիդ: Հայ Եկեղեցին, զօրները, երբևիցե ունեցնի՜ է նման առիթ 32 սարկավագների ձեռնադրության ականապես լինելու և այն էլ այսպիսի խորախորհուրդ և այսպիսի սքանչելի պահի: Մենք, որպես Մայր Աթոռի միաբան, անհուն հրճվանքի և ուրախության մեջ ենք, որովհետև մեր թիկունքը ապահովված ենք զգում, մեր ապագան տեսլաշատ ենք տեսնում և մեր ներկան պայքարի, այսօրվա պայքարի մեջ գործավիզ և ապավին ենք տեսնում ձեզ ունենալով:

Երանի՜ ձեզ, 32 սարկավագներ, որ կարողացաք այսօրվա աշխարհի թո՛ռ ու բո՛հի մեջ, երբ որ աշխարհի պատրանքներն ու խաբեություններն ամեն օր և ամեն պահ քախում են ձեր մարմի և հոգու դռները, ուրանալու, այդ աշխարհը ուրանալու քաջությունը ունեցաք, երբ ձեզ բերեցին նվիրաբերելու Հայաստանյայց Եկեղեցու Սուրբ Սեղանին, Ժուժկայության կոչելով ձեզ և Ժուժկայության օրինակ դառնալով նաև մյուս երիտասարդներին և բոլորիդ մեր Հայաստան աշխարհում և նաև այնպեղ, որպեղ ձեր սպասավորությունը կնարուցեք:

Երանի՜ ձեզ, որ աշխարհում, երբ որ ահավոր մրցավազք է տեղի ունենում հարստության մոլուցքի, դուք մերժեցիք ոսկե հողթթը և ձեր ուսերին վերցնելով Զրիստոսի քաղցր լուծը՝ որոշեցիք հեղնել Երկնավոր Վարդապետի օրինակին՝ աղքատության ուխտը այսօրվանից անելու պարտաստականությամբ, այսօրվանից այս աշխարհում ոչինչ չունենալու հաստատականությամբ և այդ ոչինչ չունենալով ամեն ինչ ձեռք բերելու նրանավեր խոստմամբ:

Երանի՜ ձեզ, որ այս պահին հնազանդության ուխտ եք կատարում, պարտաստ եք հնազանդությամբ ենթարկվելու ձեր Եկեղեցվո մեծավորների և ամենից առաջ, ազգիս Վեհափառ Հայրապետի հրահանգներին և

պարզամեկտիկ։ Առօրյա մեր իրականության մեջ հնազանդությունը կարծես թե մերժված մի առաքելություն է։ Եվ ձեր 32-ի ընծայաբերումով ցույց եք տալիս հնազանդությանը բարձրանալու և հնազանդությանը Եկեղեցին զոռացնելու ձեր պարտաստակալությունը։ Առաքիկայում ես, այն 32 տեղերում ուր էլ որ ծառայեք պետք է լինեք հնազանդ ձեր մեծավորներին, ձեր առաջնորդներին և ազգիս հայրապետին։

Երանի՛ ձեզ, սիրելի երիտասարդներ, որ ձեր երիտասարդության խառնը և ետևողը ողջախոհությամբ զգեստավորեցիք։ Դարձյալ այսօրյա պայմանները հաշվի առնելով, զիտենք թե որքան շատ երիտասարդներ մոլորության և խաբկանքի մեջ են իրենց ժամանակավոր ցանկություններին հուզուրդ տալով։ Եվ, սակայն, դուք Աստուծո Մուրք Սեդակի առջև ուխտեցիք ողջախոհ ընթացք ունենալ այս աշխարհում, որպեսզի գայթակղություն չլինեք ուրիշների համար, այլ օրինակ։

Աստվածապաշտությունը մեր Եկեղեցվո հոգևոր առաջին աստիճանն է։ Առաջինն է, բայց ոչ ամենանվագ կարևորը։ Երբեք այն մտածումը մի ունեցեք, թե որպես հայ Եկեղեցվո ամենաստորին աստիճանի վրա գրկվող սպասավոր առաքելություն չունեք այս Եկեղեցում։ Մի թերացեք ձեր պաշտոնի մեջ և ձեր հովիվների, ձեր մեծավորների թերացումները, նայելիս, պատճառ մի դարձրեք ձեր թերացումները արդարացնելու, այլ փորձեք այդ թերացումները շրկել, ուղղել, ինքներդ ձեր մեջ և դրանով օրինակ ծառայելով ուրիշներին։ Միևնույն ժամանակ երբեք մի հպարտացեք թե արդեն սարկավագ եք, կարևոր մի պաշտոն և պարտականություն եք զբաղեցնում Եկեղեցում, այլ եղեք համեստ, խոնարհ սպասավորները մեր բազմապարզար, բայց և մանավանդ, հարուցյալ Եկեղեցու։

Մեր Եկեղեցվո ցանկացած սպասավոր, նախառաք, Աստուծո ծառան է, Աստուծո սպասավորը, Աստուծո պարզամեկտիկ թարգմանիչը մեր կյանքում մեր ժողովրդի կրակնու։ Եվ ձեր օրինակով պետք է կենդանի քարոզ լինեք մեր ժողովրդի զավակների համար։ Եվ արդեն իսկ այս ձեր թիվը՝ 32, կարծում եմ, որ լավագույն քարոզը պետք է լինի այսօր այն բոլոր թերահավատների համար, այն բոլոր երկնորդների համար, որոնք կարծում են, թե մեր Եկեղեցին ձգնաժամի մեջ է։ Այո՛, այսօրյա հարափոփոխ պայմաններում երբեմն ծանր պահեր ենք ապրում յուրաքանչյուրս որպես հոգևորական։ Բայց ձեր կամքը, ձեր մտայնությունը և ձեր արևելակալությունը և ընծայաբերումը թող լավագույն քարոզը լինի բոլոր երկնորդներին և թերահավատներին, որոնք թերևս տարանետմի մեջ են հայ Եկեղեցու ապագայի նկատմամբ։

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, Մուրք Սրեփաննոսի այս ուրախ տոնի առիթով, երբ մեր Եկեղեցին նորանոր սպասավորներով է համալրվում, աղոթենք մեզանից յուրաքանչյուրս, որպեսզի Աստված ձեռնադրությամբ ստացած շնորհները բազմապարկի մեր սիրելի սարկավագ եղ-

քայրենների մեջ, որպեսզի նրանք կաշտողական ծառայել մեր Եկեղեցուն և լինեն մշակներ առանց ամոթո: Եվ թող Աստված իր երկնային շնորհները առաքապես հեղի մեզանից յուրաքանչյուրի վրա, այժմ և հավիտյանս ամեն:

Պատարագից հետո, համաձայն Մայր Աթոռում ընդունված ավանդույթի, ձեռնադրող Սրբազան Հայրն իր անդրանիկ 32 ձեռնասուրճների հետ, Ճեմարանի փեսուհի Ս. Եղիշե ավագ քահանա Սարգսյանի և լուսարարապետի պաշտոնակատար Ս. Արտակ վարդապետ Տիգրանյանի ուղեկցությամբ, ներկայացան Վեհարան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օրհնությունն ստանալու: Նորին Սրբությունն իր օրհնությանն արժանացրեց նոր ձեռնադրվածներին և պատվիրեց՝ իրենց վստահված հոգիի համար լինել անձնուրաց հոգևորականներ: Նաև շնորհավորեց Սրբազան հորը իր կատարած անդրանիկ ձեռնադրությունների առիթով՝ նշելով, որ այսօրվա փոքր դուռն է եկել եկեղեցու շրջանակներից և փարածվել ողջ ժողովրդի վրա: Վկան՝ ներկա հավատացյալներն էին ու ձեռնադրվածները, որոնց փսնելով մենք մեր թիկունքը ապաստված ենք զգում: Ուրախ էր Հայոց Հայրապետը, որովհետև դեռևս փսնելից փարի առաջ Ճեմարանի սաների թիվն այնքան էր, ինչքան որ այս փոքրին ձեռնադրվածներինը: Սա նս մի հավաստումն է, որ 1700-ամյա մեր Մայր Եկեղեցին պիտի շարունակի համախմբել իր հոգին՝ մեկ ազգ, մեկ հովիվ ու մեկ Եկեղեցի գաղափարով:

Ս. Ստեփաննոս Նախավկայի փոքրին սարկավագական ձեռնադրություն ստացան:

Արդյուն սրկ. Ավետիսյան

Ծնվել է 1977 թ. Գյումրիում:

1994 թ. ավարտել է Վանաձորի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1994-2000 թթ. սովորել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը և աշխատանքի անցել Մայր Տաճարի թանգարանում:

2000-2001 թթ. սովորել և ավարտել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի մենեջմենտի դասընթացը: Ամուսնացած է:

Արմենակ սրկ. Բաղդասյան

Ծնվել է 1976 թ. Արմավիրի մարզի Մուսալեռ գյուղում:

1993 թ. ավարտել է փեղի միջնակարգ դպրոցը:

1994-2000 թթ. սովորել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը և աշխատանքի անցել ԲԴ-ԲԵ-ում, այնուհետև փեղափոխվել «Էջմիածին» ամսագրի խմբագրություն:

Խաչիկ սրկ. Ավետիսյան

Ծնվել է 1977 թ. Արմավիրի մարզի Մուսալեռ գյուղում:

1994-ին ավարտել է Այգեկ գյուղի միջնակարգ դպրոցը:

1994-1999 թթ. սովորել է Մևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում, իսկ 1999-2000 թթ. ուսումը շարունակել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ծննդարանը, 2000 թ. նշանակվել է Ս. Գեղարդի վանքի ավագ լուսարար:

2001 թվականից սովորում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում:

Հարություն սրկ. Ղազախեցյան

Ծնվել է 1977 թ. Վանաձորում:

1994 թ. ավարտել է տեղի թիվ 11 միջնակարգ դպրոցը:

1994-2000 թթ. սովորել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ծննդարանը և անցել աշխատանքի Մայր Աթոռի հաշվապահությունում, այնուհետև տեղափոխվել ԲԴԶԿ:

2000-2001 թթ. սովորել և ավարտել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի մենեջմենտի դասընթացը:

Գևորգ սրկ. Հարությունյան

Ծնվել է 1973 թ. Արարատում:

1990 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1993-1994 թթ. ծառայել է ՀՀ ազգային բանակում:

1995-2001 թթ. սովորել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ծննդարանը, որից հետո աշխատանքի անցել ԲԴԶԿ-ում:

Հովիկ սրկ. Հովհաննիսյան

Ծնվել է 1975-ին Երևանում:

1989 թ. ավարտել է տեղի թիվ 160 միջնակարգ դպրոցը:

1989-1993 թթ. սովորել է Երևանի սննդի արդյունաբերության տեխնիկումում:

1993-1995 թթ. սովորել և ավարտել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1995-2001 թթ. սովորել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ծննդարանը:

Այժմ ծառայում է Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում:

Հակոբ սրկ. Հակոբյան

Ծնվել է 1979 թ. Էջմիածնում:

1995 թ. ավարտել է տեղի թիվ 7 միջնակարգ դպրոցը:

1995-2001 թթ. սովորել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, որից հետո աշխատանքի անցել Մայր Աթոռի Մկրտարանում:

Նարեկ սրկ. Հակոբյան

Ծնվել է 1977 թ. Մաղրիում:

1994 թ. ավարտել է Կոտայքի մարզի Առինջ գյուղի միջնակարգ դպրոցը:

1995-2001 թթ. սովորել և ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը և աշխատանքի անցել Մայր Աթոռի Գանձարանը:

Արմեն սրկ. Առաքելյան

Ծնվել է 1975 թ. Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղում:

1990-ին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1992-1994 թթ. ծառայել է ՂՀ ազգային բանակում:

1996 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Արտակ սրկ. Խաչիկյան

Ծնվել է 1975 թ. Գյումրիում:

1992 թ. ավարտել է տեղի թիվ 28 միջնակարգ դպրոցը:

1993-1996 թթ. սովորել և ավարտել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1996 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Մհեր սրկ. Ծափուրյան

Ծնվել է 1975 թ. Արմավիրում:

1992-ին ավարտել է տեղի թիվ 8 միջնակարգ դպրոցը:

1993-1996 թթ. սովորել և ավարտել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1996 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Սամվել սրկ. Բրուսյան

Ծնվել է 1976 թ. Էջմիածնում:

1993 թ. ավարտել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1993-1996 թթ. սովորել և ավարտել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1996 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Մարգիս սրկ. Կիրակոսյան

Ծնվել է 1976 թ. Մեծամորում:

1993 թ. ավարտել է Կեդի թիվ 3 միջնակարգ դպրոցը:

1993-1996 թթ. սովորել և ավարտել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1996 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Վահե սրկ. Հովհաննիսյան

Ծնվել է 1976 թ. Երևանում:

1993 թ. ավարտել է Մուսալեռ գյուղի միջնակարգ դպրոցը:

1993-1996 թթ. սովորել և ավարտել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1996 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Վախթանգ սրկ. Առաքելյան

Ծնվել է 1976 թ. Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղում:

1993 թ. ավարտել է Կեդի միջնակարգ դպրոցը:

1993-1996 թթ. սովորել և ավարտել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1996 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Վարազդատ սրկ. Քոչարյան

Ծնվել է 1978 թ. Ապարանում:

1995 թ. ավարտել է Կեդի միջնակարգ դպրոցը:

1995 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Գոռ սրկ. Գրիգորյան

Ծնվել է 1977 թ. Արմավիրում:

1993 թ. ավարտել է Կեդի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1993-1996 թթ. սովորել և ավարտել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանը:

1996 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Վաղինակ սրկ. Հովհաննիսյան

Ծնվել է 1978-ին Եղեգնաձորում:

1995 թ. ավարտել է Կեդի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

1996 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Անդրանիկ սրկ. Պաղոսյան

Ծնվել է 1978-ին Երևանում:

1995-ին ավարտել է Կոնստանտինոպոլի միջնակարգ դպրոցը:

1996-2001 թթ. սովորել է Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Արթուր սրկ. Պետրոսյան

Ծնվել է 1978 թ. Էջմիածնում:

1996-ին ավարտել է Կոնստանտինոպոլի միջնակարգ դպրոցը:

1996-2001 թթ. սովորել է Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Կարեն սրկ. Զարամյան

Ծնվել է 1979 թ. Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղում:

1996 թ. ավարտել է Կոնստանտինոպոլի միջնակարգ դպրոցը:

1996-2001 թթ. սովորել է Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թ. մարտի ամսից սովորել է Ռուսինիայի Յաշ թաղաքի «Սվ. Նիկոլայն» Էկո-մենիկ ինստիտուտում:

2001 թ. սեպտեմբերից ուսումը շարունակում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Ծերուն սրկ. Մկրտչյան

Ծնվել է 1979 թ. Արմավիրի մարզի Առաքաշեն գյուղում:

1996 թ. ավարտել է Կոնստանտինոպոլի միջնակարգ դպրոցը:

1996 թ. մինչև 2000 թ. հունվար ամիսը սովորել է Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000 թ. հունվարից ուսումը շարունակում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Արիստակես սրկ. Նավասարդյան

Ծնվել է 1979 թ. Երևանում:

1996 թ. ավարտել է Կոնստանտինոպոլի միջնակարգ դպրոցը:

1996-1997 թթ. սովորել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

1997 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Արմեն սրկ. Ավագյան

Ծնվել է 1979 թ. Արագածոտնի մարզի Օշական գյուղում:

1996 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1996 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Գևորգ սրկ. Մակարյան

Ծնվել է 1979 թ. Արմավիրի մարզի Առաքաշեն գյուղում:

1996-ին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1996-2001 թթ. սովորել է Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Հովհաննես սրկ. Ադամյան

Ծնվել է 1979-ին Էջմիածնում:

1996-ին ավարտել է տեղի թիվ 10 միջնակարգ դպրոցը:

1996-2001 թթ. սովորել է Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Վաչիկ սրկ. Զարգարյան

Ծնվել է 1979 թվականին Հրազդանում:

1996-ին ավարտել է Արմավիրի մարզի Առաքաշեն գյուղի դպրոցը:

1996-2001 թթ. սովորել է Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թվականից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Գառնիկ սրկ. Կիրակոսյան

Ծնվել է 1980 թ. Արագածոտնի մարզի Մելիք գյուղում:

1996 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1996-ից սովորում է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

Արթուր սրկ. Պետրոսյան

Ծնվել է 1981-ին Երևանում:

1997 թ. ավարտել է տեղի թիվ 20 միջնակարգ դպրոցը:

1997 թվականից սովորում է Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

Արման սրկ. Պարսամյան

Ծնվել է 1981 թ. Երևանում:

1997 թ. ավարտել է տեղի թիվ 65 միջնակարգ դպրոցը:

1997 թվականից սովորում է Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

Սամվել սրկ. Զարգարյան

Ծնվել է 1974 թ. Էջմիածնում:

1991 թ. ավարտել է Կոնդի թիվ 12 միջնակարգ դպրոցը:

1991-1992 թթ. սովորել է Երևանի բժշկական ինստիտուտում:

1993-1996 թթ. սովորել է Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1997-1999 թթ. ծառայել է ՀՀ ազգային բանակում:

1999 թվականից ծառայում է Սանկտ Պետերբուրգի Ս. Կապերիկոն եկեղեցում:

Լևոն սրկ. Աղոսյան

Ծնվել է 1978 թ. Էջմիածնում:

1984-1992 թթ. սովորել է Կոնդի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1992-1997 թթ. սովորել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում և ընծայարանում:

1998-2000 թթ. որպես ազատ ունկնդիր սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000 թվականի օգոստոսից ծառայում է Արագածոտնի թեմում: Ամուսնացած է, ունի որդի:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՒՐԱՐԱԿԻՐ ԳՈՒՄՐՈՒՅԱՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆԻ
Ե ԼՍԱՐԱՆԻ ՍԱՆ**

ՕԾՎԵՑ ԿԱՊԱՆԻ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

«...Ձի առանց նաաակադեաց օրհնութեան եւ օծման՝
յոկ քուն է եւ ոչ առագաստը եւ հարսնարան Բանին Աստուծոյ...»:
(Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱՒԻ)

Դեկտեմբերի 1-ին, Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների փոնի օրը, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրեղին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, օծվեց ու սրբազործվեց Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին:

Առավոտը վաղ Նորին Սրբությունը մեկնեց Սյունյաց թեմ: Եվ քանի որ Հայոց առաջին լուսավորիչների փոնը Հայոց Եկեղեցում նվիրական էր դարձել ոչ միայն իր խորհրդով, այլև որպես կիրակնօրյա դպրոցների ուսուցչաց օր, ուստի Վեհափառ Հայրապետը, մինչ Կապան ուղևորվելը, այցելեց Միսիան և Գորիս քաղաքներ՝ հանդիպելու փոնի կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների հետ:

Միսիան քաղաք փանդ ճանապարհին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը, Սյունյաց մարզպետ Էդիկ Բաղսեղյանը, Միսիանի քաղաքապետը և պաշտոնադար այլ անձինք, ովքեր էլ Նորին Սրբությանը պետք է ընկերակցեին դեպի Կապան ուղևորության ընթացքում:

Միսիանում թեմի քահանա հայրերը, կիրակնօրյայի ուսուցիչներն ու հավաքացյալներն աղ ու հացով ողջունեցին Հայոց Հայրապետի այցը Սյունյաց թեմ:

Տեղի փոխառաջնորդարանում Նորին Սրբությունը հանդիպեց քաղաքի կիրակնօրյա դպրոցի ուսուցիչների հետ, որի ընթացքում ողջույնի և բարի-գալստյան խոսքով հանդես եկավ մարզպետարանի կրթության և գիտության բաժնի ղեկավարը, ապա վիճակի կիրակնօրյա դպրոցների ուսուցչաց գործունեությունը ներկայացրեց առաջնորդ Սրբազան Հայրը:

Թեմակալ առաջնորդի խոսքից հետո, Իր հայրապետական օրհնության ու գնահատանքի խոսքը ներկաներին ուղղեց Վեհափառ Հայրապետը. «Շատ ուրախ եմ, որ այսօր Աստված մեր քայերն առաջնորդեց դեպի Հայաստանի հաղավային շրջան, դեպի Սյունյաց աշխարհ, այսպիսի գեղեցիկ մի ծրագրով՝ հանդիպելու Սյունյաց աշխարհի բնակավայրերի և քաղաքների ուսուցիչների հետ, նրանց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունը բերելու և նաև՝ կոչ ու պաշտոն հղելու, որպեսզի նախանձախնդրորեն շարունակեն իրենց ուսուցչական գործը, իրենց աշխատանքը՝ նվիրումով, սիրով մեր գավալների կրթության, դաստիարակության համար»:



ԿԱՊԱՆԻ ՆՈՐԱՐՈՅ Ս. ՄԵՄՐԻԿ ՄԱՇՏՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Այնուհետև Հայոց Հայրապետն այցելեց Միսիանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, որտեղ հանդիպեց մանուկ հավատացյալների հետ՝ բաշխելով իր օրհնությունն ու սերը. «Մնացե՛ք բարի, մնացե՛ք ուրախ, կայսրա՛ռ, և թող միշտ ձեր շրթունքների վրա աղոթք հնչի, որպեսզի ձեր հայացքների մեջ միայն ու միայն բարություն լինի և այն ճառագի ձեր հայացքներից:

...Այրե՛ք, շափ ապրե՛ք. շափ ուրախ եմ, շափ երջանիկ եմ այսօրվա համար, այս ուրախ պահի համար»:

Գործում ևս Նորին Սրբությանը դիմավորեցին աղ ու հացով, և «Հրաշափառ»-ի երգեցողությամբ՝ մանկության թափորը Հայոց Հովվապետին առաջնորդեց Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցի՝ առ Աստված գոհաբանական աղոթք վերառաքելու:

Սյունյաց առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը հանդիպեց ու զրուցեց վիճակի կրոնի ուսուցիչների պատրաստման լսարան հաճախողների հետ և իր օրհնությունը բաշխեց նրանց:

Կեսօրից հետո Նորին Սրբությունը, իրեն ընկերակցողների հետ միասին, ուղևորվեց Կապան՝ նախագահելու նորակառույց եկեղեցու օծման ու սրբազորման արարողությանը, որով կատարվում էր ոչ միայն Սյունիքի՝ թվով քսաներորդ եկեղեցու նավակալիժը, այլև կապանցիների առջև պիտի բացվեին Աստծո փառ շնորհաբաշխ դռները՝ աստվածային ու երկնային օրհնությամբ ողողելով նրանց հոգիները:

Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու եիմնարկեքը կատարվել էր դեռևս 1996 թ.՝ հոգելույս Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ: Եկեղեցու կառուցման հովանավորությունն ստանձնել էր Սյունյաց մարզպետարանը, որի ներդրումն ամբողջացրել էր ժողովրդյան աջակցությունն ու բարեպաշտ մի քանի հայրդիների նվիրավորությունները:

Եկեղեցու օծման և սրբազորման արարողությանը ներկա էին Սյունյաց թեմի մարզպետ Հեղիկ Բարսեղյանը, նախկին մարզպետ Սուրեն Աբրահամյանը, Միսիանի, Գորիսի և Կապանի քաղաքապետերը, ԱԺ պատգամավոր Գրիգոր Հարությունյանը, «Զանգեզուրի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» պետական ՓԲԸ փնթեքն Մաքսիմ Կակոբյանը և մարզային այլ պաշտոնատար անձինք:

Հայոց Հայրապետի ձեռամբ նախ օծվեց ու սրբազորվեց Ս. Մեղանը և Ս. Խորանը, ապա թեմակալ առաջնորդն օծեց մկրտության Ս. Ավագանը: Օծման արարողությանն իրենց մասնակցությունն էին բերել նաև Գեղարքունյաց թեմի առաջնորդական փեղապառ Ս. Դերենիկ վարդապետ, Դավթյանը և Սյունյաց թեմի քահանայից դասը:

Օծման շնորհաբաշխ արարողությունից հետո՝ նորած եկեղեցու բակում հավաքված կապանցիներին իրենց գոհունակության, երախտագիտության ու շնորհավորանքի խոսքն ուղղեցին Սյունիքի մարզպետը, Կապանի ուսուցչաց կողմից՝ Մովսես Էջանանցին և Սյունյաց թեմի առաջնորդ Ս. Աբրահամ եպիսկոպոսը: Սրբազան Հայրն իր խոսքի մեջ հատկապես շեշտեց. «Վեհափառ Տեր, անհաղի երախտապարտ ենք, որ առաջին իսկ օրվանից քաջալերեցիք այս շինարարությունը, որ եկաք

այսօր հանդիսապես լիովին օժան արարողությանը և մեր ժողովրդի հետ կիսելու այս ուրախությունը»:

Այնպես իր խոսքը կապանցիներին ուղղելով՝ թեմակալ առաջնորդն ասաց. «Թող որ այսօր հետևելու այս եկեղեցին դառնա ձեր հավատքի, ձեր մշակույթի, ձեր ազգային ապրումների հավաքարեղին: Անավասիկ մեր ազգային փոխը, անավասիկ մեր եկեղեցին, որ մեր ժողովրդին առաջնորդել է դարեր շարունակ»:

Կապանցիներին հայրապետական օրհնության իր խոսքն ուղղեց Նորին Սրբությունը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՆՍՓԱՌ ՎԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱՏ ԿԱՊԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Միտելի բարեպաշտ հավատացյալներ, սիրելի կապանցիներ.

Այս պահին Մենք զգում ենք այն բերկրանքն ու ցնծությունը, որ պարել է ձեր սիրտն ու հոգին: Կապանում, երկար տարիների տրեւոյունից հետո, բացվել են դռները նորակառույց Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու: Այս առիթով նաև հրավիրել եք ձեր Հայրապետին, որպեսզի բերի ձեզ իր օրհնությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, որպեսզի զա կիսելու օրվա ուրախությունը ձեզ հետ: Եվ Հայրապետիս սիրտը լեցուն է ձեր ուրախությամբ ու ցնծությամբ: Քանզի ձեր ուրախությունը գոռությունն է մեր Եկեղեցու և գոռությունն է մեր կյանքի: Մենք Մեր գնահատանք ենք բերում ձեզ, սիրելի կապանցիներ:

Անցնող տասնամյակներում մեծ թափով իրագործվեց եկեղեցաշինությունը, կառուցվեցին բազում մատուռներ, սրբավայրեր, եկեղեցիներ՝ մեծ և փոքր, կառուցվեցին նախնային հովանավորների շնորհիվ, առանձին բարերարների ազնիվ ներդրումներով:

Կապանի եկեղեցին թերևս այն առաջին եկեղեցին է, որ կառուցվել է ձեր ազնիվ վաստակով, յուրաքանչյուրիդ անձնական ներդրումով: Եվ այսօր փառաշուք այս եկեղեցին վկայությունն է ձեր հավատքի՝ հանդեպ ձեր սուրբ հայրերը, հանդեպ ձեր անցրալի նվիրական պատմությունը: Սա նաև վկայությունն է ձեր լավատեսության, դեպի մեր ժողովրդի վաղվա պայծառ օրը:

Այսօր Հայաստանյայց Եկեղեցին տոնախմբում է Ս. Թադևոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների փոխը, որոնք հիմնադիրները եղան Հայ Առաքելական Եկեղեցու: Տիրոջ առաքյալների սերմանած հունդերը Հայոց պարարտ հողում անցին ու առատորեն բարի բերք տվեցին: Եվ 301 թ. մեր առաջին Հայրապետ, մեր երկրորդ Լուսավորիչ Սուրբ Գրիգորի ջանքերով և Հայոց Տրդատ արքայի որոշումով Հայաստանում քրիստոնեությունը հրդեհակն պնդական կրոն: Այս տարի մենք տոնախմբեցինք և շարունակում

ենք Կոնստանդնուպոլսի 1700-ամյակը քրիստոնեական մեր հավատքի պեղարկանքի հոգևորական, որ ուղեկցվեց նաև ցեծությամբ, բերկրանքով և ուրախությամբ Հայոց անկախ պետականության վերահաստատման փառանքավարությամբ:

Մեր ժողովրդի ուրախությունն այս փառքով բազում էր, բազմազան միջոցառումներ, ցուցահանդեսներ, գիտաժողովներ, մատուցողների ու եկեղեցիների վերաբացումներ, մեր հայրենական կյանքում նորանոր իրազդեցությունների ու նախաձեռնությունների նոր սկիզբ: Այս ամենը Երկնքից, մեր Երկնավոր Հորից կարծես թե իջնում է մեր ազգին որպես վարձատրություն՝ 1700-ամյա իրենց հաստատումն հավատքի համար, իրենց հավատարմության համար դեպի մեր Տեր Հիսուս Քրիստոս:

Մենքույ Մաշտոց անունն է կրում Կապանի այս նոր եկեղեցին Մենք հավատում ենք, որ այս եկեղեցու մանրակերպ պիտի կառուցեք ձեր հոգիներից ներս, որպեսզի յուրաքանչյուր հայրդի, Կապանի յուրաքանչյուր զավակ ապրի մենքոպաշունչ հոգով և իր կյանքը նվիրաբերի, անմնացորդ կերպով, հայրենիքի շինության, մեր երկրի բարեզարդման, մեր ժողովրդի բարձր կյանքի կերպման նվիրական գործին:

Սիրելիներ,

Այս առիթով մենք մեր գնահատանքի խոսքն ենք ուզում բերել Մյունխաց թեմի առաջնորդին՝ Արքահամ Արքազանին, ով օրհնելուս փրկում է որպեսզի քրիստոնեական մեր հավատքն ամուր կերպով հաստատված լինի Հայաստանի հարավային այս փառածքում, Մյունխաց ժողովրդի հոգուց ներս: Մենք Մեր գնահատանքն ենք բերում այս շրջանի պետական այրերին՝ մարզպետին, քաղաքապետին, բոլոր նրանց, ովքեր իրենց նպաստն են բերել այս եկեղեցու կառուցման սուրբ գործին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Մենք բերում ենք 1700-ամյա օրհնությունը մեր սուրբ հայրերի, որպեսզի այն ձեզ հովանի լինի, պահապան ձեզ և զորակից ու օգնական, որպեսզի կյանքի նոր ընթացքը մեր անցնենք նույն հավատարմությամբ առ Քրիստոս և առ մեր սուրբ հայրերը:

Իսկ այժմ Հայրապետական Մեր գնահատանքի գրով ուզում ենք պատվել և Մեր օրհնությունը բերել այն հայրդից, որոնք անմիջականորեն իրենց ներդրումն են ունեցել, նախաձեռնել են այս շինարարությունը և ավարտին հասցրել: Մինչ օրհնության գրի ընթերցումը, սիրելի բարեպաշտ հավատացյալներ, կանգնած այս զեղեցկակառույց եկեղեցու առջև, խորհրդդ ինքդ Ս. Թադևոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների փոխի, հայացքի և ոգու առջև Ս. Մենքույ Մաշտոցի, եկեք աղոթք բարձրացնենք երջանկահիշատակ, լուսահոգի մեր նախորդ Հայրապետի՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոգովույն համար, որ հիմնել օրհնեց այս եկեղեցու և իր աղոթքն առ Աստված բարձրացրեց, որպեսզի Երկնավորի բարի հայացքի

ներքո քաղաքացիական իրավունքներն ապահովող Միջազգային Մարտի 1-ին օրը հանդիսանալու և իր անհատականությանը հարգանքներ ցուցաբերելու օրը:

Թող հեղինակները օրհնությունը միշտ ձեռք բերեն, ձեռք բերեն, որոնք ունենան հեղինակներին՝ փառասիրտներին քայլերու դեպի նոր, պայծառ ու լուսավոր կյանքի օրերը մեր ժողովրդի:

Նորին Սրբությունն աշխատելու ընթացքում Հայրապետական գնահատանքի ու օրհնության գիրք՝ ուղղված Սյունյաց ներկա մարզպետ Էդիկ Բարսեղյանին և նախկին մարզպետ Սուրեն Աբրահամյանին, իսկ հեղինակներին Հաղորդության սրբազան սկիհ:

Ս. Միսրոպ Մաշտոց հեղինակներն օծման և սրբազորման շնորհաբաշխ հանդիսությունն ավարտվեց մարտի օրհնությամբ և ժողովրդական փոխախմբությամբ:

«Թագաւոր Երկնաւոր, զհեղինակներն և անշարժ պատեա, եւ զհաւատացեալս անուանդ և պատեա ի խաղաղութեան»։ ամեն:

ԱՐԹՈՒՐ ՄՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՂԱԼԲԻԼԻՍԱ ԳՅՈՒՂՈՒՄ ՕԾՎԵՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ղեկորներին 1-ին, Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների փոխին, Վիրախայոց թեմի Ծաղկայի (նախկինում Ծաղկա) փարածաշրջանի Ղալբիլիսա (Կարմրավանք) գյուղում, Արամյան ընտանիքի բարերարությամբ, օծվեց Ս. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 1874 թվականին:

Օծման հանդիսավոր արարողությունը կատարվեց ձեռամբ Վիրախայոց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Մերայդարյանի: Ներկաների թվում էին Սամցխե-Ջավախքի առաջնորդական փոխանորդ Տ. Բաբկեն արք. Սալքիյանը, սարկավագներ, փեղական իշխանությունների ներկայացուցիչներ, մեծաթիվ երավիրյալներ Մոսկվայից, Ջավախքից, ինչպես նաև՝ Հայաստանից:

Երկար փորհների ընդմիջումից հետո, ի վերջո, Արամյան ընտանիքի բարի կամքով ու ջանքերով, գյուղի և փարածաշրջանի քրիստոնյա հայաքոյինների առջև իր դռները հյուրընկալորեն բացեց գյուղի գողտրիկ եկեղեցին:

Էկեկտրականությունից, ամենատվորական կենցաղային պայմաններից ու լրավամիջոցներից զուրկ այս երկրամասում հայը շարունակում է մեծ ջանքերի գնով պահպանել հայրերից ավանդվածը՝ իր ազգությունն ու հավատը: Անա թն ինչու Արամյանների ընտանիքը թեև հեռավոր, օտար ավերում որոնեց ու գտավ իր այսօրը, սակայն շարերի նման չմոռացավ հող հայրենին, ծննդավայրը, հայրենի փոխն ու համագյուղացիներին: Ամեն անգամ, երբ անհրաժեշտություն զգացվեց, օգնության ձեռք մեկնեց, իսկ երբ պարեհ առիթ եղավ, առանց նրկմբելու վճռեց վառ պահել նաև հարազատ գյուղի աղոթատունը, նրան կրկին շունչ ու կենդանություն փալ, որպեսզի համագյուղացիներն ամուր կառչած մնան հարազատ Եկեղեցում ու առաքելախիմն հավատին:

Այժմ արդեն իրականությամբ է զգեստավորվել Արամյանների նվիրական երազանքը, շնորհիվ որի փարածաշրջանի 13 հայկական գյուղերն այսօր արդեն ունեն մեկ նորածն եկեղեցի, ռը կատարվում են Ս. Մկրտության, Ս. Պսակի խորհուրդներ, հանդիսավորաբար նշվում եկեղեցական փոները: Տեղի հայ բնակչությանը, երիտասարդ սերնդին ու մանուկներին իր հոգևոր սպասավորությունն է բերում Գևորգյան Հոգևոր Ծննդարանի նախկին սան, ղզքիլիսեցի Սանասար դպիր Ղուկկյանը՝ ներկայիս միակ սպասավորը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, որ ջանք ու եռանդ չի խնայում՝ իր հայրենակիցների հոգում վառ պահելու քրիստոնեական հավատքը՝ իր աշխատանքն ամենուր սկսելով հոգևոր «այբուբենի», նրգերի, փաղերի ու շարականների ուսուցումից:

ԼՎԱՑՈՒՄ ԵՎ ՕՇՈՒՄ

Ժամը 11.30-ին սկսվեց եկեղեցու լվացումը՝ համաձայն նախնյաց սրբազան արարողակարգի: Ըստ այդմ լվացվեց ողջ աղոթատունը նախ սովորական ջրով, ապա՝ գինով: Որից հետո հանդիսավորաբար կատարվեց օծումը: Հավուր պապշաճի ղեկավարված հոգևորականաց դասը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Ս. Գևորգ արքեպս. Մերայդարյանի գլխավորությամբ, թափոր կազմած և «Ուրախ լիր» շարականի երգեցողությամբ առաջնորդվեց դեպի եկեղեցու դուռը և համաձայն «Մաշտոց» ծիսարանի սկսեցին ընթերցվել Սուրբգրային հապավածներ և համապատասխան սաղմոսներ:

«Բաց մեզ, Տեր» շարականի երգեցողությունից հետո, մրննելով փաճար, դարձյալ Սուրբգրային ընթերցվածներով, սաղմոսասացությամբ և շարականների երգեցողությամբ, ձեռամբ Գևորգ Սրբազանի, կատարվեց աղոթատան օծումը: Սրբալույս Մյուռեմով համապատասխանաբար օծվեցին եկեղեցու չորս անկյունները, սյուները, դուռը, սեղանը, խորանը և մկրտության ավազանը:

Ս. Աստվածածին եկեղեցու օծումը, որին ներկա էին մեծաթիվ ուխտավորներ և հայրենակ մյուս գյուղերից, ավարտվեց ժամը 12.30-ին:

ՄԵՂԻՍԵՍԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Օծման հանդիսավոր արարողությունից անմիջապես հետո սրբագործված փաճարում մատուցվեց անդրանիկ Ս. Պատարագը: Օրվա պատարագիչն էր Սամցխե-Ջավախքի առաջնորդական փոխանորդ Ս. Բաբկեն արք. Սալքիյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պապշաճի քարոզ խոսեց հանդիսագիր Սրբազան Հայրը՝ ներկաներին մեկնելով օրվա խորհուրդը՝ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների պատմական դերը Հայոց Եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում, եկեղեցու վերաբացմամբ գյուղաբնակ հավաքագյալներին ընձեռնվող հնարավորության կարևորությունը, ապա նաև՝ քրիստոնեական հավաքի և բարեգործության խորախորհուրդ նշանակությունը յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքում: Իր խոսքի վերջում Գևորգ Սրբազանը աղոթք առաքեց առ Ամենակարող Տերը՝ եկեղեցին կառուցողների, վերակառուցողների նախնյաց հոգիների խաղաղության ու հիշատակի պաշտամության, ինչպես նաև Արամյան ընտանիքի անդամների արևշապտության ու բարգավաճ կյանքի համար:

Ս. Պատարագից հետո, ժամը 15.00-ին, նորած Ս. Աստվածածին եկեղեցում կատարվեց անդրանիկ Ս. Մկրտությունը: Սուրբ խորհրդով Աստծու որդեգիրները դարձան չորս ղզլքիլիսեցիներ:

Տոնական պրամադրությունը շարունակվեց նաև եկեղեցուց դուրս: Այնուհետև կատարվեց մատաղօրհնություն և տրվեց սիրտ ճաշ՝ ազգապե: Եկեղեցու բակում թընդում էր ավանդական դեռ-գոտնան, ինչում երգն ու երաժշտությունը, որը համեմվում էր ներկաների աշխույժ պարով: Տոնախմբությունը նախ եկեղեցու բակում, ապա և բարերարների փանը շարունակվեց մինչև ուշ երեկո:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԵՐԸ. Տ. ՀՈՒՄԻԿ ԱՐՔԵԴՍ. ՍԱՆԹՈՒՐՅԱՆԻ ՔԱՎԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ 45-ԱՄՅԱԿԸ ՆՇՎԵՑ ԱՄՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄՈՒՄ

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի հրավերով, էյուրաբար Արևմտյան թեմ այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախկին լուսարարապետ Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը:

Բարձրաստիճան էյուր հոգևորականը Լոս Անջելես ժամանեց 2001 թ. նոյեմբերի 21-ին և, թեմակալ առաջնորդ Սրբազան Հոր հրավերով, ուրբաթ և շաբաթ օրերին, նոյեմբերի 23-ին և 24-ին, մասնակցեց Հայց. Եկեղեցվո Երիտասարդաց Կազմակերպության փարեկան համագումարին, որը փեղի ունեցավ Գոսթա Մեսայի Ս. Աստվածածին եկեղեցում:

Կիրակի օրը, նոյեմբերի 25-ին, էյուր հոգևորականը առաջնորդ Սրբազան Հոր հրավերով պատարագեց և քարոզ խոսեց Գոսթա Մեսայի Ս. Աստվածածին եկեղեցում: Քարոզից առաջ առաջնորդ Սրբազան Հայրը հավատալիքներին ներկայացրեց պատարագից Սրբազան Հորը, ով այսքան երկար փարիներ ամենայն խղճմտությամբ ու նվիրումով ծառայել է Հայոց Եկեղեցուն:

Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը մի քանի անգամ այցելեց Առաջնորդարան, մերժմիկ գրույց ունեցավ առաջնորդ Սրբազան Հոր հետ և ծանոթացավ Առաջնորդարանի աշխատակազմին ու նրանց առօրյա աշխատանքներին:

Առաջնորդ Հոր հրավերով Հուսիկ Սրբազանը կիրակի օրը, դեկտեմբերի 2-ին, Ս. Պատարագ մատուցեց և քարոզ խոսեց Վեն Նայսի Ս. Պետրոս եկեղեցում: Եկեղեցու հոգևոր հովիվը՝ Արժ. Տ. Շնորհք քեհ. Տեմիրճյանը, հավատալիքներին ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երիցագույն միաբան Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանին և խոսեց Սրբազան Հոր կատարած երկարամյա նվիրյալ ծառայությունների մասին: Հյուր հոգևորականը ոգևորիչ քարոզ խոսեց և հուսալից փեղեկություններ հաղորդեց Մայր Հայրենիքից:

Բարձրաստիճան էյուր հոգևորականն իր խորին շնորհակալությունը հայտնեց առաջնորդ Սրբազան Հորը՝ ի պատիվ իրեն փրկած այս ճաշի և իր ձեռնադրության 45-ամյակի նշման առթիվ, ինչպես նաև իր այցելության ընթացքում Սրբազան Հոր կողմից արժանացած բարձր ուշադրության և էյուրընկալության համար:

Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը երեքշաբթի օրը, դեկտեմբերի 4-ին, վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

**ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ
ԴԻՎԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ**



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՍԵՆԱՅՆ ՎՅՅՈՑ ՎՅՅՐԱՊԵՏԸ ՎԵՐԴԱԴԵՑ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՏ

Դեկտեմբերի 2-ին, Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնի հաջորդ օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհաքառնի դահլիճում, Կաթողիկոսի Վատիկանյան Հայաստանի տարբեր թեմերում գործող կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների հանդիպումը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի հետ:

Արդեն ավանդույթ դարձած այս հանդիպումը կազմակերպվում է դեռևս երջանկահիշարակ Գարեգին Ա Կաթողիկոսի գահակալության շրջանից: Երանաշնորհ Հայրապետը Հայոց առաջին լուսավորիչներ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների ոգեկոչման փոքր հոգևոր ժառանգորդներ կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների և քրիստոնեական դաստիարակության օրժրված քարոզչության և առաքելության խորհրդի ոգեկոչում: Եվ ահա, արդեն մի քանի տարի, այն նշվում է մեծ հանդիսավորությամբ: Հայաստանի տարբեր մարզերից եկած հոգևոր դպրոցների ուսուցիչները, ստանալով Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը, վերադառնում են թեմեր՝ Միածնի Իջման Ս. Վայրից առ Մարված առաքած աղոթքներով գորացած:

Հանդիպման գեղեցիկ մասն էր կազմում Էջմիածնի կիրակնօրյա դպրոցների սաների ջանքերով կազմակերպված հանդիսությունը, որի ընթացքում մանուկների շուրթերից հնչեցին հոգևոր երգեր ու աղոթքներ: Ելույթ ունեցան մահ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Բրիտանական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի կամերային նվագախումբը և ջութակահարների քառյակը:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՄՊԱՆԸ ՆՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՎՅՈՑ ՎՅՐԱՊԵՏԻՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսին հրաժեշտ փալու նպաստակով դեկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց հայաստանում դիվանագիտական իր առաքելությունն ավարտած Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրան:

Նոթին Սրբությունը բարձր գնահատեց դեսպանի դերը հայ-ֆրանսիական կապերի սերտացման գործում: Անդրադառնալով երկու երկրների միջև ջերմ հարաբերություններին, Վեհափառ Հայրապետը երախտագիտությամբ նշեց Ֆրանսիայի ներդրումը դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործում, ինչպես նաև Ֆրանսիայի կողմից 1915 թ. հայոց ցեղասպանության ճանաչումը:

Հանդիպման ընթացքում խոսվեց առաջիկա օրերին Նոթին Սրբության Ֆրանսիա կատարելիք հովվապետական այցի մասին՝ այն վստահությամբ, որ այդ այցը նույնպես իր նպաստը կբերի երկու երկրների միջև կապերի զարգացմանը:

Հրաժեշտ փալով պրն Լեգրային, հայոց հայրապետը հաջողություն մաղթեց նրան դիվանագիտական եեւագա առաքելության մեջ:



«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (1984-2000 թթ.)

1992 Ա - Բ - Գ

1327. Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Ս. ՎԱԶԳԷՆ Ա-ի Սուրբ Ծընըդեան քարոզը՝ արտասանուած Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում (6 յունուար 1992 թ.): 3-5

1328. Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Ս. ՎԱԶԳԷՆ Ա-ի քարոզը Մայր Տաճարում (հունվարի 12-ին): 6-8

1329. Վեհափառ Հայրապետի քարոզը Ա. Էջմիածնի Մայր Տաճարում (22 մարտի 1992 թ.): 9-11

1330. Ամանորի և Փրկչի Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Ս. Ս. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 12-14

1331. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ընդհանրական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին: 15-16

1332. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և միջազգային եկեղեցական հաստատությունների միջև փոխանակված հեռագրեր Հեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ: 17-28

Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի, Նիկո Կույեմանի, Ժան Ֆիշերի, Դիտրիխ Եպերլինգի, Էմիլիո Կաստրոյի, Ներսես Պողոսյանի նամակները:

1333. Ամանորը Մայր Աթոռում: 29-37

1334. Սուրբ Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում: 38-39

* Սկիզբը տե՛ս 2001 թ., Դ, էջ 104-118, Ե, էջ 112-126, Զ-Է, էջ 112-126, Ը, էջ 118-135, Ժ-ԺԱ, էջ 156-169:

1335. Քառանյայական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: 40-42

Քառանյայական ձեռնադրությունն են ստացել Գեմադի Մնացականյանը (Մանուկ քահանայ), Հրանտ Բարսեղյանը (Եղիշե քահանայ), Արմեն Մելիքյանը (Ստեփանոս քահանայ), Խորեն Մարությանը (Խորեն քահանայ), Լևոն Խսայանը (Հարություն քահանայ), Լուսեղեն Համբարյանը (Թադեոս քահանայ), Հրանտ Հովհաննիսյանը (Հովհաննես քահանայ):

1336. Տ. Մանուկ քահանա Մնացականյան: 43-44

1337. Տ. Եղիշե քահանա Բարսեղյան: 45

1338. Տ. Ստեփանոս քահանա Մելիքյան: 46

1339. Տ. Խորեն քահանա Մարության: 47

1340. Տ. Հարություն քահանա Խսայան: 48

1341. Տ. Թադեոս քահանա Համբարյան: 49

1342. Տ. Հովհաննես քահանա Հովհաննիսյան: 50

1343. Սրբոց Վարդանանց տոնակատարությունը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում: 51-59

1344. Մովսես Խորենացու «Հայոց պետություն» 1500-ամյակին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթ Հոգևոր Ընթարանում: 60-70

1345. ՍՈՒՐԱ ԷԶՄԻԱՄԻՆ: Եկեղեցական բեմ. լուրեր: 71-74

1346. Տ. Միքայել վարդապետ Աջապահյանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում (29 մարտի 1992 թ.) 75-77

1347. ԱՎԵՏԻՍ քահանա ԴԱՆԻԵԼԹԱՆ, Կիրակոս Երզնկացու կենսագրությունը և մատենագրական վաստակը: 78-89

1348. ՀԱԿՈՐ Հ. ՔՅՈՍԵԹԱՆ, Մամբրե Վերծանողի «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառը: 90-98

1349. ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԹԱՆ, ԱԶԱՏ ԲՈԶՈԹԱՆ, Հարգանքի տուրք հայազեռի հիշատակին: 99-100

Կիմ Մուրադյանի մասին

1350. Կիմ Մուրադյանի աշխատությունների մատենագիտություն: 100-101

1351. ԿԻՄ Մ. ՄՈՒՐԱԴԹԱՆ, Գրիգոր Նազիանզացու «Թաղաք աշխատասիրութեան» ճառի հայերեն թարգմանությունը: 102-140

Դ - Ե

1352. Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի Զատկական քարոզը՝ արտասանուած Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում (19 ապրիլ 1992): 3-5

1353. Մեծի Տաճն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսի քարոզը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում (17 մայիս 1992): 6-9

1354. Փրկչի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 10-12

1355. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի Հրաշափառ Սուրբ Հարու-

թյան տոմի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին: 13

1356. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ: Հոգաբարձուների խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյան, «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հայտարարությունը: 14-15

Հիմնադրամին աջակցություն ցուցաբերելու մասին

1357. «Հայաստան» համահայկական հիմնադրամի տեղական հանձնախմբերի ստեղծման և գործունեության կարգը: 16

1358. ՎԱԶԳԷՆ Ա., Հրահանգ Հայ Առաքելական եկեղեցու թեմակալ առաջնորդներին: 17-18

«Հայաստան» Համահայկական հիմնադրամին աջակցելու հորդոր

1359. Խորհրդակցական ժողով Մայր Աթոռում: 19-20

Հիմնադրամի ծրագրին աջակցելու մասին

1360. Հաղորդագրություն: 21

Մայր Աթոռի Դիվանի հաղորդագրությունը «Հայաստան» համահայկական հիմնադրամին աջակցելու նպատակով նվիրապետական Աթոռների բարձրատիժան հոգևորականների խորհրդակցություն հրավիրելու մասին

1361. Սուրբ Հարության տոմը Մայր Աթոռում: 22-26

1362. Մեծ եղեռնի տարելիցը Մայր Աթոռում: 27-29

1363. Սուրբ Էջմիածին: Եկեղեցական բով. լուրեր: 30-33

1364. ՎԱԶԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, Վեհափառ Հայրապետի «Ժամանակագրությունը»: 34-38

1365. ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ, Միջայել նալբանդյանը և Հայոց եկեղեցու նվիրապետության հարցերը: 39-52

1366. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԷՄՄԱ, Ցարական կառավարությունը և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունները: 53-62

1367. Լ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, Շարակնոցի երգերի եղանակները և նրանց ստորաբաժանումները: 63-86

1368. ԼԵՎՈՆ ԶՈՒԳԱՍՉՅԱՆ, Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագիր զանգերը: 87-94

1369. ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏՅԱՆ, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին: 95-118

Զ - Է

1370. Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի Կոնդակը «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծման առթի: 3-5

1371. Մեծի Տանն Կիլիկիոյ Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի Կոնդակը «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծման առթի: 6-9

1372. ՎԱԶԳԷՆ Ա., Տօց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի: 10

1373. Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի խօսքը՝ ուղղուած հայ ժողովրդին Երևանի հեռուստատեսութիւնից (17 յուլիս 1992): 11-14

1374. Վազգէն Ա, Կարգազրկման հայրապետական վճիռ: 15

Մարտիրոս քահանա Չիլինգիրյանին և Դավիթ քահանա Զելվեյանին կարգազուրկ անելու մասին

1375. ՎՈՒՈՂԹԱ ԱՐԱՆՆԱՄԹԱՆ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ: 16-19

1376. Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ունեմարանի 1991-1992 ուսումնական տարվա փակման հանդեսը: 20-26

1377. ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ: Եկեղեցական բեռ. լուրեր: 27-28

1378. Ծաֆե արքեպիսկոպոս Աճեմյանի քարոզը Մայր Տաճարում (7 հունիս 1992 թ.): 29-32

1379. Ներսես արքեպիսկոպոս Պոզապայանի քարոզը Մայր Տաճարում (21 հունիսի 1992): 33-36

1380. Ներսես արքեպիսկոպոս Պոզապայանի քարոզը Մայր Տաճարում Վարդավառի տոնին (26 հուլիսի 1992 թ.): 37-40

1381. ԹՂԹԱԿԻԾ, Սուխումիի Ա. Հարություն աղոթատան օծումը: 41-42

1382. ՀԱԿՈՐ ԲՅՈՍԵԹԱՆ, Սրբալույս Մյուռոն: 43-45

1383. ՊԻՈՆ Հ. ՀԱԿՈՐԹԱՆ, Հայոց վկայաբանությունների ուսումնասիրությունների մի քանի հարցեր: 46-69

Կից՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Հ. Տաշյանի մամակները «Վկայքն Արևելից» հուշարձանի հրատարակության առթիվ

1384. ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆԹԱՆ, Մովսես Խորենացին «Արարատ» և «Էջմիածին» ամսագրերում: 70-84

1385. ՊԱՐՈՒԹՐ ՄՈՒՐԱԴԹԱՆ, Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» բնագրական հետքերը 6-7-րդ դարերի երկերում: 85-98

1386. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» նոր մատենագիտություն: 99-100

Ը

1387. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ: Մի դժբախտ «Թուղթ շրջաբերական»: 3-5

1388. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Կոնդակը համայն Հայ Եկեղեցու հոգևորականությանը: 6-9

Դժվարությունները հաղթահարելու հորդոր:

1389. ԳԱՐԵԳԻՆ Բ, ՎԱԶԳԷՆ Ա, Հայրական խոսք հայ ժողովրդին: 10-19

Հայ Եկեղեցու առաքելության մասին

1390. Մեծի Տանն Կիլիկիո Գրեգին Բ Կաթողիկոսը Մայր Աթոռում: 20

1391. ՎԱԶԳԵՆ Ա, ԵՀԼ զխավոր քարտուղար, դոկտ. Էմիլիո Կաստրոյին: 21

Արցախյան հարցի առիթով

1392. ՎԱԶԳԵՆ Ա, Մեծաֆարզ տիար Գազիկ Հարությունյան՝ փոխնախագահ Հայաստանի Հանրապետության: 22

Ծնորհավորանք հանրապետության փոխնախագահի նշանակվելու առթիվ

1393. ՎԱԶԳԵՆ Ա, Մեծաֆարզ տիար Խոսրով Հարությունյանի՝ վարչապետ Հայաստանի Հանրապետության: 23

Ընդդիմադրանք համրապետության վարչապետ ճշանակվելու առթիվ

1394. ՀՀ վարչապետ տիրա խոսրով Հարությունյանի այցելությունը Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետին: 24

1395. ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆ: Եկեղեցական թեմ. լուրեր: 25

1396. Ս. Հովհան Ոսկեբերանի աղոթքն ի դեմս Սուրբ Երրորդության: 26-31

Աշխարհաբար թարգմանությունը Միքայել վրդ. Աջապահյանի

1397. ԴԱՎԻԹ ԳԹՈՒՐԶԻՆՅԱՆ, Եկեղեցական կյանքին առընչվող կացարանների ամսվանումները: 32-37

1398. ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և քաղաքամայր Ամին: 38-45

Օար. տես թիվ 1426, 1458 և 1583

1399. Պրոֆ. ՎԱՐՍԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Խորամ լուստ և հավատի: 46-54

Պատմության մոր փուլում Եկեղեցու դերի մասին: Օար. տես թիվ 1449

1400. Հանգիստ Տ. Ռուբեն ավագ քահանա Մարտիրոսյանի: 55-56

Թ - Ժ - ԺԱ.

1401. Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետի Կոմդակը Գերմանիայում Հայ Եկեղեցու ինքնուրույն թեմ հռչակվելու մասին: 3-4

1402. Խմբագրության խոսքը: 5-6

Հովհաննես-Պետրոս պատրիարքի «Վերադարձ Հայաստան գրքի մասին

1403. Հ. ԶԱՎԵՆ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ, Հայաստանյայց առաքելական Մայր Եկեղեցին: 7-10

Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի մասին

1404. ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ. Ոչ-Կաթողիկե: 11-12

Հոռմեականության ժխտական դերի մասին հայոց մեջ

1405. ԴԻԻԱՆ ՄԱԹՐ ԱԹՈՒԻ, Հերքում Սուրբ Էջմիածնից: 13

«Ազգ» թերթում տպված Երվանդ Ազատյանի հոդվածի մասին:

1406. Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը Մայր Աթոռում: 14

1407. Մեծի Տանն Կիլիկիո Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի քարոզը Մայր Տաճարում (1 նոյեմբերի 1992): 15-19

1408. Հաղորդագրություն: 20

Տ. Հուսիկ Պաղտասյանի, Տ. Տարոն Ընդերյանի, Տ. Գարեգին Պեքեյանի և Տ. Վիգեն Ալազյանի եպիսկոպոսական ձեռնադրության մասին

1409. Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: 21-31

1410. Տ. Հուսիկ եպիսկոպոս Բաղդասյան: 32-33

1411. Տ. Տարոն եպիսկոպոս Ընդերյան: 34-35

1412. Տ. Գարեգին եպիսկոպոս Բեքեյան: 36-37

1413. Տ. Վիգեն եպիսկոպոս Ալազյան: 38-39

1414. Հոգևոր Ընտարանի վերաբացման հանդիսությունը: 40-44

1415. ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆ: Եկեղեցական թեմ. լուրեր: 45-48

1416. Տ. Մեսրոպ եպիսկոպոս Մուրաֆյանի քարոզը Մայր Տաճարում (11 հոկտեմբեր 1992 թ.): 49-51

1417. Տ. Վաչե ծ. վ. Իզմատիոսյանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում (18 հոկտեմբերի 1992 թ.): 52-54

1418. Զափանայական ձեռնարկությունը Նյու Յորքի Ս. Վարդան Մայր Տաճարում: 55-56

Վազգեն սրկ. Պեդրպերյանը աթեղա է ձեռնադրվել՝ վերանվանվելով Նարեկ

1419. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ: Եվրոպայի եկեղեցիների համաժողովը: 57-58

1420. ԳԱՐԵԳԻՆ քառանյալ ԳԱՍՊԱՐԵԱՆ, Նորօրեայ առաքելությունը: 59-62

Իր քառանյալագործության փորձառության մասին

1421. ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Էջմիածին: 63-64

Ուսանավոր

1422. Պրոֆ. ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Նվիրյալ ծառայությունը Մայր Աթոռին: 65-73

Արժրուն Գալիկյանի 80-ամյակի առթիվ

1423. Տ. ԳԵՎՈՐԳ եպիսկոպոս ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ, Գավազանագիրք Վրաստանի հայոց թեմի: 74-93

Շար. տես թիվ 1436

1424. ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ, Հոգևոր բանաստեղծության ճանապարհը: 94-101:

Ներսես Պոզապայանի գրական ուղու վերլուծություն

1425. ԱՐՏԱԾԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, Թարգմանչաց Ավետարանը: 102-114

1426. ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և քաղաքամայր Ամին: 115-125

Սկիզբը տես թիվ 1398

1427. ԳԱՌՆԻԿ Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Երզնկայի վանքերը: 126-137

Շար. տես թիվ 1437 և 1459

1428. ՀԱԿՈՐ Հ. ՔՅՈՍԵՅԱՆ, Հին եկեղեցական աստվածաշտական աստվածաբանության հիմնական գծերը: 138-148

1429. ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ, Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի պատվիրած մի նկարի մասին: 149-156

1430. Հանգիստ արժանապատիվ Տ. Օշական ավագ քառանյալ (1917-1992): 157-158

ԺԲ

1431. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Կոնդակը Օվեցարիայում Հայ եկեղեցու ինքնուրույն թեմ հռչակելու մասին: 3-4

1432. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Կոնդակը Եկեղեցիների միության հարցի վերաբերյալ: 5-9

1433. Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը Երևանի թղթակիցներին (11 դեկտ. 1992 թ.): 10-13

1434. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայաստանի ու ցեղքին ախյուտքի թեմական-եկեղեցական կազմակերպությունների գործունեության մասին 1989-1992 տարիների ընթացքում: 14-23

1435. ՍՈՒՐԵ ԷԶՄԻԱՇԻՆ: Եկեղեցական թեմ. լուրեր: 24-25

1436. Տ. ԳԵՎՈՐԳ եպիսկոպոս ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ, Գավազանագիրք Վրաստանի հայոց թեմի: 26-38

Սկ. տես թիվ 1423

1437. ԳԱՌՆԻԿ Խ. ՍՏԵՓԱՆ-
ՅԱՆ, Երգակայի վամբերը: 39-49

Սկ. տես թիվ 1430

1438. ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆ-
ՅԱՆ, «Բրիստոս» ամվան բառա-
կազմական արժեքը հայերեմուս: 50-
56

1993

Ա - Բ - Գ

1439. Ամենայն Հայոց Կաթողի-
կոս Տ. Տ. Վազգէն Ա-ի Ս. Ծմողեան
քարոզը՝ խօսուած Ս. Էջմիածնի
Մայր Տաճարում (6 յունուար 1993
թ.): 3-4

1440. Ամանորի և Փրկչի Հրաշա-
փառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ
Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատ-
րիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ
Օծույթուն Տ. Տ. Վազգէն Ա Հայրա-
պետի և քույր Եկեղեցիների հոգևոր
պետերի միջև փոխանակված ողջույ-
նի հետազոտում ու գրությունները: 5-7

1441. Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետի շնորհավորական գիրը
Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների
առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Ե-
կեղեցու նվիրապետական երեք Ա-
թոռներին, թեմակալ բոլոր առաջ-
նորդներին և եկեղեցական համայնք-
ներին: 8-11

1442. Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետի և պետական բարձրաս-
տիճան անձնավորությունների միջև
փոխանակված հետազոտ Ամանորի
և Սուրբ Ծննդյան տոների առթիվ: 9-
11

1443. Ամանորը Մայր Աթոռում:
12-18

1444. Դիվան Մայր Աթոռի, Վե-
հափառ Հայրապետի ուղևորությունը
Մոսկվա (20-23 հունվար 1993 թ.): 19-
40

1445. Պատմական փաստա-
թուղթ: Խրիմյան Հայրիկի և Բաքվի
Ծելխ ու իսլամի համատեղ կոչը հայ
և ադրբեջանցի ժողովուրդներին 1905
թվականին: 41

1446. ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍԻՆ: Եկե-
ղեցական բեմ. լուրեր: 42-45

1447. ԱՆԴՐԱՆԻԿ ԺԱՄՄՈՉ-
ՅԱՆ, Սուրբ Ծննդյան տոնը Վրաս-
տանի հայոց Ս. Գևորգ Մայր եկեղե-
ցում: 46

1448. Աթոռակալության համդի-
սություններ Բյուզուն: 47-48

1449. Պրոֆ. ՎԱՐԱԶԳԱՏ ՀԱ-
ՐՈՒԹԵՑՈՒՆՑԱՆ, Խորան լուսո և
հավաստի: 49-52

Սկ. տես 1402

1450. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕԻՐԱԶ,
Եկեղեցին իմ հայոց: 53-55

Պիտի հավատաա: 55

Բանաստեղծություններ

1451. Հոգևոր երգի մեծ կորուստը:
56-58

*Հուսին Զաքարյանի մահվան
առթիվ*

1452. ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ,
Հոգեհամգիստ: 59

Բանաստեղծություն

1453. ԵԶՆԻԿ վարդապետ ՊԵՏ-
ՐՈՍՅԱՆ, Հայ եկեղեցու քրիստո-
սաբանությունը: 60-80

1454. ԱՐԷԼ ԱՐԵՂԱՅ, Հայ եկե-
ղեցու սարկաւագումները կանոնա-
կան տեսանկյունից դիտուած: 81-96

1455. ՍԻՓԱՆ քառամա ՄԸԽԱՆ, Սիրոյ առաքելալը՝ Յովհանն-
նէս: 97-101

1456. ՀԱԿՈՐ Հ. ՔՅՈՍԵՅԱՆ, Նորաբայտ ճառ Սուրբ Հաղորդու-
թյան մասին: 102-104

1457. ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍ-
ԹԱՆ, Թարգմանչաց Ավետարանը: 105-118

1458. ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍԹԱՆ, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը
և քաղաքամայր Ամին: 119-134

Սկ. տես թիվ 1398

1459. ԳԱՌՆԻԿ Խ. ՍՏԵՓԱՆ-
ԹԱՆ, Երզնկայի վանքերը: 135-143

Սկ. տես թիվ 1427

1460. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱ-
ՅԵԼԹԱՆ, Հայկական եկեղեցիներ
Ֆրանսիայում միջին դարերում: 144-
154

1461. ՀՐԱԶ ԱՂՎԱՆԻ ՍՏԵ-
ՓԱՆԹԱՆ, Հայ ժողովրդի պայքա-
րին ընդդէմ թաթար-մոնղոլ յոճա-
կայների կրոնական հալածանքների:
155-160

1462. Զ. ՖԱՆԹԱՆ, Մի էջ մեր
պատմությունից: 161-166

*Դումայ-Դմետրի հայկական ցա-
ղութի մասին*

1463. Հանգիստ հոգեշնորհ Տ.
Պողոս վարդապետ Տեր-Նշանյանի
(1887-1992): 167-168

Գ - Ե - Զ

1464. Ամենայն Հայոց Կաթողի-
կոս Տ. Տ. Վազգէն Ա. Հայրապետի
գատկական քարոզը Սուրբ Էջմիած-
նի Մայր Տաճարում (11 ապրիլ 1993):
3-5

1465. Վեհափառ Հայրապետի
քարոզը Մայր Տաճարում Կաթողի-

կե Սուրբ Էջմիածնի տոնին (13 հունի-
սի 1993): 6-8

1466. Փրկչի Հրաշափառ Սուրբ
Հարության տոնի առթիվ Ամենայն
Հայոց Մայրագույն Պատրիարք և
Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն
Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի և քույր
եկեղեցիների հոգևոր պետերի միջև
փոխանակված ողջույնի հեռագրերն
ու գրությունները: 9-11

1467. Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետի շնորհավորական գիրը
Փրկչի Հրաշափառ Սուրբ Հարու-
թյան տոնի առթիվ՝ ուղղված Հայաս-
տանյայց եկեղեցու Ավիրապետա-
կան երեք Աթոռներին, թեմակալ
քույր առաջնորդներին և եկեղեցա-
կան համայնքներին: 12-13

1468. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ,
Հաղորդագրություն: 14-15

*Քենթրբերիի արքեպիսկոպոս
Զորջ Քերիի Մայր Աթոռ ժամանելու
մասին*

1469. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ,
Հաղորդագրություն: 16-17

*ԱՄՆ դեսպան Հերի Գիլմորի
Էջմիածնի այցելելու մասին*

1470. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ,
Հաղորդագրություն: 18

*Քիշնուս հայկական եկեղեցու
նորոգման մասին*

1471. Քենթրբերիի արքեպիսկո-
պոս, նորին գերաշնորհություն դոկտ.
Զորջ Քերիի քարոզը Սուրբ Էջմիած-
նի Մայր Տաճարում (2 մայիսի 1993
թ., Կարմիր կիրակի): 19-21

1472. Գերաշնորհ Տ. Օմեհ արք-
եպս. Աճեմեանի քարոզը Մայր Տա-
ճարում հոգեգալստեան տոնին (30
մայիս 1993): 22-25

1473. Ավարտաճառերի պաշտ-
պանություն և Հոգևոր Շնորհաբանի

1992-1993 ուսումնական տարվա փակման համդիսություն Հոգևոր Ըն-
ժադանում: 26-29

*Ավարտաճառեր են պաշտպանել
Տ. Հովհաննես քահանա Շահնազար-
յանը, վարուժան սրկ. Տերտերյանը,
Հարություն սրկ. Սարգսյանը, Հա-
կոբ սրկ. Նալբանդյանը*

1474. ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ: Եկե-
ղեցական բեմ. լուրեր: 30-35

1475. ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ,

Սուրբ Էջմիածին: 36

Հորդոր: 37

Գարնան անձրև: 38

Բանաստեղծություններ

1476. ՀԱԿՈՐ Հ. ՔՅՈՍԵՅԱՆ,
Սուրբ գրային վկայակոչումները
Կորյունի «Վարք Մաշտոցում»: 39-49

1477. [ՀԱԿՈՐ Հ. ՔՅՈՍԵՅԱՆ],
«Վկայությունք ի պետս քարոզու-
թեանց»: 50-59

Շար. տես թիվ 1491

1478. ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ,
Պողոս վարդապետ Տեր-Մարգար-
յանը Հաղարծնի բարենորոգող: 60-
71

1479. ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ,
Հոռոմոսի վանքի պատմության մոր
էջեր (ԺԴ-ԺԹ դդ.): 72-79

1480. ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐԶԻՆ-
ՅԱՆ, «Քրիստոս» անունը հայերեն
կայուն բառակապակցություններում:
80-87

1481. Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Ազ-
գային ինքնորոշման գաղափա-
րը դավանաբանական թղթերում: 88-
106

1482. ՍՐԱՊ-ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՍ-
ՏԱՆՅԱՆ, Կուտիմահայությունը և

ճրա մի մորաֆայտ ձեռագիրը: 107-
122

Է - Ը

1483. Սուրբ Աստվածածին կի-
րակնորայ վարժարանի 1992-1993 ու-
սումնական տարվա փակման համ-
դեսը: 3-7

1484. ԴԻԻԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ,
Հաղորդագրություն Ա. Էջմիածնից: 8-
11

*Հուրեր Հյուսիսային Կովկասից՝
հայկական եկեղեցիների մասին*

1485. ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ: Եկե-
ղեցական բեմ. լուրեր: 12-15

1486. Գերաշնորհ Տ. Շահն ար-
քեպս. Աճեմեանի քարոզը Մայր Տա-
ճարում՝ Վարդավառի տոնին (18 յու-
լիս 1993 թ.): 16-19

1487. Ներսես արքեպիսկոպոս
Պոզապայանի քարոզը Մայր Տա-
ճարում՝ Ա. Աստվածածնի վերա-
փոխման տոնին (15 օգոստոս 1993):
20-23

1488. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ: Վի-
րահայոց թեմում: 24-25

1489. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԻՐԱ-
ՔԻ ՀԱՅՈՑ, Կուսակրոն քահանայա-
կան ձեռնադրություն եւ օծում Իրաքի
հայոց թեմէն մերս: 26-27

*Հրաչ սրկ. Հակոբյանը արքեպս է
ձեռնադրվում՝ վերանվանվելով Տա-
թև*

1490. Հոգեշնորհ Տ. Տաթև
արքեպս Յակոբեան: 28

1491. [ՀԱԿՈՐ Հ. ՔՅՈՍԵՅԱՆ],
«Վկայությունք ի պետս քարոզու-
թեանց»: 29-40

Այլ տես թիվ 1477

1492. ԳԱՌՆԻԿ Խ. ՍՏԵՓԱՆ-
ՅԱՆ, Երզնկայի վանքերը: 41-54

Այ. տես թիվ 1427

1493. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՋԱ-
ՅԵԼՅԱՆ, Եգիպտաճայ գաղութը Ժ-
ԺԲ դարերում և հայկական եկեղեցի-
ները: 55-69

Օտր. տես թիվ 1528

1494. Ս. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ, Գըտ-
չա վանքի Առաքել վարդապետը: 70-
77

1495. ՍԼԱՎԱ ՍԱՐԳՍԺԱՆ, Թի-
կաքար բերդը և շրջակայքի հուշար-
ձանները: 78-94

Թ - Ժ

1496. Հայաստանի Հանրապե-
տության Նախագահի շնորհավորա-
կան ուղերձը Ամենայն Հայոց Վեհա-
փառ Հայրապետին՝ ծննդյան 85 -ամ-
յակի առթիվ: 3

1497. Հայաստանի Հանրապե-
տության Գիտությունների ազգային
ակադեմիայի ողջույնի ուղերձը: 4-5

*Վեհափառ Հայրապետի ծննդյան
85-ամյակի առթիվ*

1497. Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության մայրության հիմ-
նադրամի նախագահության շնորհա-
վորական հեռագիրը Նորին Սուրբ Օ-
ծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն
Հայոց Կաթողիկոսի ծննդյան 85-ամ-
յակի առթիվ: 6

1498. Գիտական մատաշոքան
Հայաստանի Հանրապետության Գի-
տությունների ազգային ակադեմիայի
միստերի դահլիճում մվիրված Նո-
րին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն
Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծը-
ննդյան 85-ամյակին: 7-11

1499. ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ, Ամե-
նայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազ-
գեն Առաքիճի գիտահետազոտական
վաստակը: 12-28

1500. Հ. ԹՈՒԹՈՒՆՋՅԱՆ, Ամե-
նայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-
ի հոգեբանական աշխատություննե-
րը: 29-36

1501. Գրիգոր Խամջյանի շնոր-
հավորական խոսքը Ամենայն Հայոց
Վեհափառ Հայրապետի ծննդյան 85-
ամյակի առթիվ: 37-40

1502. Պրոֆ. ՎԱՐԱՋԴԱՏ ՀԱ-
ՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մեր շինարար
Կաթողիկոսը: 41-46

1503. ՄԱՆՅԱ ՂԱՅԱՐՅԱՆ, Ա-
մենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն
Ա-ի թանգարանային գործունե-
ությունը: 47-50

1504. ՀԱԿՈԲ ՓԱՓԱՋՅԱՆ,
Մեծագործ Հայրապետը: 51-57

1505. ՀՀ Գրողների միության
նախագահ Վահագն Դավթյան, Նո-
րին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն
Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին:
58-59

1507. Սիլվա Կապուտիկյանի
խոսքը առ Հայրապետն Հայոց: 60

1508. ՆԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ-
ՅԱՆ, Ամենայն Հայոց Կաթողիկոս
Վազգեն Առաքիճը մանկավարժ: 61-
69

1509. ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆ,
Կյանք՝ համուն մեծ գոյամարտի: 70-
73

1510. Հոգևոր Ըմնարանի վերա-
բացման հանդիսությունը: 74-75

1511. ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆ: Եկե-
ղեցական բեռ լուրեր: 76-79

ԺԱ - ԺԲ

1512. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ: Ի խնդիր ոգեղեցի: 3-5

1513. Ս. Ստեփանոսի տոմը և սարկավագական ձեռնադրություն: 6-9

1514. ԱՆԴՐԱՆԻԿ սարկավագ ԺԱՄԿՈՉՅԱՆ, Սարկավագական ձեռնադրություն Ս. Աստվածածին եկեղեցում: 10-11

1515. ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆ: Եկեղեցական քեմ. լուրեր: 12-14

1516. ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍԹՈՒՆՅԱՑ ԹԵՄԻՑ: Հիմնարկեք Ս. Տրդատ եկեղեցվո: 15

1517. ՎՈՒՆԴԹԱ ԱԲՐԱՀԱՄ-ԹԱՆ, Բողոքանովկայի Ս. Սարգիս եկեղեցու: օծումը: 16-17

1518. Հաղորդագրություն Ուկրաինայի հայոց հոգևոր հովվությունից: 18-20

1519. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏ-ԹԱՆԻՑ: Սաղմոս Ա.: 21-23

Թարգմանությունը Երվանդ Մեղճոնյանի

1520. Անցյալի լուսավոր էջերից: 24-30

Կարապետ եպիսկոպոս Տեր-Մըկրտչյանի մասին

1521. Գեղաշնորհ Տ. Հովման արքեպիսկոպոս Տերտեղյանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում: 31-33

1522. ԱՐՇԱԼՈՒԹՅ ՂԱԶԻՆ-ԹԱՆ, Նարեկացու զմահատությունը դարերի հոլովություն: 34-43

1523. ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍԹԱՆ, Անի քաղաքի հոգևորականությունը: 44-53

Այ. տես թիվ 1398

1524. ԳԱՌՆԻԿ Խ. ՍՏԵՓԱՆ-ԹԱՆ. Երզնկայի վանքերը: 54-64

Այ. տես թիվ 1421

1525. ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿԹԱՆ, Ժողովրդական երազանքի խորհրդրանիքը (Սասունցի Դավիթ Էպոսի գրառման 120-ամյակը): 65-69

1526. ՍԱՐԳԻՍ ԹԱՓՈՒՋԹԱՆ, Բաբկեց կյուլեսերյան (1868-1936): 70-74

1527. Պրոֆ. ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԹԱՆ, Ծնվել էր ճարտարապետ լինելու համար: 75-80

Ռաֆայել Իսրայելյանի մասին

1528. ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱ-ԹԵԼԹԱՆ, Եգիպտահայոց գաղթը ԺԺԲ դարերում և հայկական եկեղեցիները: 81-92


Այ. տես թիվ 1493

Կազմեց ԱՆԴՐԱՆԻԿ
ԶԵԹՈՒՆՅԱՆԸ

ՀՈՐԵԼ ՅԱՆԱԿԱՆ

ԼԱՎ ԳՈՐԾԻ ՈՒ ԲԱՐԻ ԱՆՎԱՆ ԼՈՒՅՍԸ

(Մանկավարժ-դասախոս Արտաշես Բալաբանյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)



Մայրավանքի Գևորգյան Հոգևոր ճեմարանն Արտաշեսն ավարտեց հաջողությամբ և որոշեց ստանալ նաև երաժշտական կրթություն: Երգն ու երաժշտությունը, ազգագրական պարերը ապուսպապերի սիրած գրադնունքներն են եղել, և նրանք շրջապատում մըշտապես վայել են մեծ հարգանք, եղել ցանկալի հյուրամեն մի հարկի ներքո: Սակայն երաժշտական ուսումնարան նրան ընդունվել չի հաջողվում, պարճառը հանրակրթական դպրոցի վկայական չունենալն էր:

Գործին չի օգնում նաև ճանաչված երգսեան Դանիել Ղազարյանի միջնորդությունը: Արտաշեսը չի ընկճվում, սովորում և ձեռք է բերում նաև հանրակրթա-

կան դպրոցի վկայական: Այնուհետև ավարտում է Երևանի պետիստատարանի ուսանողներմանական բաժինը և որպես անգլերեն լեզվի ուսուցիչ աշխատանքի անցնում դպրոցում: Հայոց լեզվի ուսուցիչը նրա դպրոցական տեղերում թողել էր հետևյալ գրառումը. «Տիշիր, սիրելիս, սրբությամբ պահիր դարերի փորձը, հավերժ է ապրում մեկ լավ անունը, մեկ բարի գործը»: Լուսավոր պարզամի պես այս միտքը մնաց նրա հիշողության մեջ, նրա կեսդարյա մանկավարժական գործունեության և ողջ կյանքի խորհուրդը եղավ: Բարի գործ կատարելու ամենամեծ իմաստը նա հասկացավ մարդ կրթելու և դաստիարակելու մեջ: Մարդ, անթերի ու նվիրյալ, որ պետք լինի հանրությանը, լինի կյանքը վերափոխող ու նորոգիչ:

Մանկավարժական իր առաջին մկրտությունը նա ստացավ Էջմիածնի շրջանի Արագած, Աղավնատուն, Շահումյան և Այգեշապ գյուղերում: Այնուհետև երկար տարիներ քաղաքի և. Արուստանի և Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոցներում վայելեց աշակերտների սերն ու համակրանքը, փորձառու և հեղինակավոր ուսուցչի բարի անունը: Թեև նա դասավանդում էր անգլերեն լեզու և գրականություն, սակայն աշակերտներից պահանջում էր, որ կատարյալ սովորեն մայրենին: Չէ՛ որ բոլոր լեզուների իմացության բանալին մայրենի լեզուն է, գիտելիքներ ձեռք բերելու հզոր կոճակը: Օտար լեզվի միջոցով դարձյալ նա սերմանում էր մեր դարավոր չարամության ու մշակույթի հանդեպ սերը: Շուտով նրան է վստահվում քաղաքի ժողկրթբաժնի օտար լեզվի արտահաստիքային տնտոջի պարտականությունները: Կազմակերպում է նաև առաջավոր փորձի տարածման դպրոց, հասնում նկատելի հաջողությունների: Նրա արդյունավետ փորձը արժանանում է հանրապետության ուսուցիչ-

ների կարարեագործման ինստիտուտի փնտրիչության ուշադրությանը՝ փարածում գտնելով և հանրապետության դպրոցներում:

Արտաշես Բալաբանյանը ծնվել է Մուսալեռան Բիթիաս գյուղում: Հայրը՝ Մովսես Բալաբանյանը, Մուսալեռան հերոսամարտի քաջարի մասնակիցներից մեկն էր: Հաստատներին Արտաշեսը հաճախ էր անդրադառնում այդ դյուցազնամարտի դրվագներին, սաներին ուսուցանում ֆիդայական երգեր, ամրապնդում հայրենասիրության ոգին: Քաղաքի Կոմիտասի անվան մշակույթի պալատում կազմակերպում է «Մուսալեռ» երգի-պարի համերգախումբը, որը հիացմունք է պարծառել հանդիսատեսներին փառամականեր շարունակ: Ամեն փարի սեպտեմբերին, երբ Մուսալեռան բարձունքում սկսվում է փոռախմբությունը, պարահանդես է մտնում նրա դեկավարած համերգախումբը՝ հնչեցնելով մուսալեռցիների ավանդական ու խրախուսիչ, անգուցական ու վեհացնող պարն ու երաժշտությունը: Այսպես նա հոգում է, որ չմոռացվի նախնիների հերոսական ոգին, պահպանվեն երգն ու պարը, նորից օգտագործվեն երաժշտական այն գործիքները, որոնք առանձնահատուկ երանգներ են հաղորդել ազգային երաժշտությանը:

Արտաշես Բալաբանյանը «Մուսալեռ» հայրենակցական-բարեգործական միության հիմնադիր անդամներից է, Էջմիածնի բաժանմունքի պարասխանատու: Այնուհետև նա հրավիրվեց Գևորգյան Հոգևոր Ընմարան, աշխարելու որպես անգլերեն լեզվի դասախոս: Ընմարանում ժամանակին անցել էին իր ուսումնառության առաջին փորձերը, և այսպես եկավ սիրով ու պարտաստականությամբ: Այս լսարաններում ուսանել են մեր հոգևոր կյանքի, մշակույթի ու գիտության ականավոր ու սրբացած շատ գործիչներ:

Այս լսարանները մտնող սաներն ու դասախոսներն ամեն անգամ զգացել են նրանց ոգևորիչ շունչն ու զգաստացնող ներկայությունը: Ընմարանում քննություններ հանձնելիս ներկա են եղել երջանկահիշատակ Գևորգ Զ Չորեքչյանը, վարպետը՝ մեծն Ավետիք Իսահակյանը, անվանի շատ դեմքեր: «Այդ փորձերն իմ ամենապայծառ ու ոսկեղեն հուշերն են պահել իրենց մեջ», ասում է Բալաբանյանը: Լույսի այս փառարը, հավատի այս խորանը նա երկյուղածությամբ ու պարկառուքով է մտել ավելի քան 20 փարի: Եկել, ավարտել ու մեկնել են՝ ամեն մեկն իր հոգու մեջ փանելով ուսացի լուսավոր ու բարի կերպարը: Նրանց սերն ու կարողը արտա-հայտվել են բազում այն նամակ-բացիկներում, որ առաքվում են արտերկրից ու փարքեր բնակավայրերից: Եվ նրանց փողերը թաթախված են սիրագործ ու ջերմ արտահայտություններով, երախտագիտության խորունկ զգացմունքներով:

Միոված դասախոսը, որը վերջերս հրաժեշտ փվեց ճեմարանին, բոլորեց իր ծննդյան 75-ամյակը: Այս առիթով ճեմարանի փնտրիչության, դասախոսների և ողջ սաների անունից շնորհավորելով նվիրյալ դասախոսին, ցանկանա՜նք, որ նրա անվան ու լավ գործի լույսը երբեք չմարի:

ՄՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ



ՆԱՅ ԵԿԵՂԵՑԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՂԸ

Կյանքի 85-րդ տարում ի Տեր հանգյալ բազմավաստակ և արդյունաշատ ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը:

Ծնվել է 1916 թ. հունվարի 1-ին Միսիանի շրջանի Մազրա (այժմ՝ Բարձրավան) գյուղում:

Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրի դպրոցում: 1936 թ. ավարտել է Երևանի Ալեքսանդր Թամանյանի անվան շինարարական տեխնիկումը, 1938 թ. ընդունվել Պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական բաժինը: Երբ սկսվում է Նայրենական Մեծ պարերազմը, մեկնում է բանակ և մարտերով հասնում մինչև Բյուրխքերդ: Զորացրվելով, 1946 թ. շարունակում է ընդհատված ուսումը և ինստիտուտը ավարտում 1946 թ.:

Բաղդասար Արզումանյանը հեղինակ է Երևանում և հանրապետության մի շարք քաղաքներում կառուցված համալիրների և շենքերի նախագծերի, որոնց համար արժանացել է պետական բարձր պարգևների:

Ազգային շեշտված դրոշմ կրող այս կառույցներով Բ. Արզումանյանը գրավում է և Վազգեն Առաքինի ուշադրությունը: Երջանկաեիշատակ Նայրապետը երան հրավիրում է աշխատելու Մայր Աթոռի ճարտարապետական հանձնախմբում, և ճարտարապետի համար սկսվում է գործունեության մի նոր շրջան, արդեն հայ եկեղեցաշի-

նություն տեսարեցում, որին ամբողջապես նվիրվեց հայրկապես կյանքի վերջին րոշանում:

Բաղդասար Արզումանյանի նախագծերով են կառուցվել Մայրավանքի Վանստույն-հյուրանոցը, Գանձարունը, որի համար արժանացել է բարերարի՝ Ալեք Մանուկյանի շնորհակալագրին, ինչպես նաև Վեհարանի բակի «Մվյուռք» հուշակոթողը և մի աղբյուր-հուշարձան: Իր նախագծով աղբյուր-հուշարձաններ են կառուցվել նաև Գեղարդավանքի և Արարափյան թեմի առաջնորդարանի բակում:

Բ. Արզումանյանը ոչ միայն ճարտարապետ էր և փորձառու ինժեներ-շինարար, այլև նկարիչ և կիրառական արվեստի փարբեր գործերի հեղինակ: Նրա նախագծով է պատրաստվել կաթողիկոսական օնիքսե գառը Նոր Վեհարանի գահասրահում, կապարել է կաթողիկոսական գավազանագլխներին, աստաներին, եկեղեցական սպասքի ու հանդերձանքի, Ս. Էջմիածնի շքանշանների բարձրարվեստ ձևավորումները: Նա հեղինակ է նաև ոսկուց պարարապատված «Հայկական Աբրահեմի», «Ռսկե խաչի» և Խորեքդային Հայաստանի զինանշանի, որին այնուհետև եավելեց նաև Հայաստանի Հանրապետության զինանշանը:

